4894
847
ЗКП1
Ч-79

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (ԲՈՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վ. ՎՈԼՈՍԵՎԻՉԻ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, 1927

848

847
ЗКП
Ч-79
847
333

Վ. ՎՈԼՈՍԵՎԻՉ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (ԲՈՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ)

ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

3444

ԽՍՀՄ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ. 1927

04 NOV 2009
15 JUL 2005

12 AUG 2013

4894

Ռուս. յերկրորդ բարեփոխված յեվ լրացրած հրատարակությունից թարգմանեց Հե. Հրանս:
Խմբագրությունը—Վ. Աբրամյանի:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ
Гос. Библиотека
ЭССР-Арм ССР
Н. им. А. ...
Г. ЕРЕВАН

4833-88

Главлит 82426. Тираж 4.000
Типография Госиздата „Красный Пролетарий", Москва, Пименовская, 16.

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՋԱԲԱՆԻՑ.

Հեղինակի առաջ մի բավական դժվար խնդիր եր դրված—տալ մեր պրոլետարիատի կուսակցության պատմության (սկզբից մինչև մեր որերը) վորքան կարելի յե կարճ և՝ ամենաանպատրաստ ընթերցողի համար՝ մատչելի շարադրությունը:

Գրքի ծավալը կրճատելու նպատակով հեղինակը հարկադրված եր տեղ չտալու այնպիսի կարևոր բաժիններին, ինչպես են՝ կոմինտերն, կոմսոմոլ, բանվորուհիների շարժում և այլն:

Այնուհետև, ընթերցողի ամբողջ ուշադրությունը հիմնականի վրա դրավելու համար, հարկ յեղավ մեր կուսակցության զարգացման ամեն մի շրջանում ծանրանալ միայն ամենաեական մոմենտների վրա, առանց վորոնց պարզաբանության անհնարին և ըմբռնել վոչ ուսումնասիրության յենթակա շրջանը և վոչ էլ կարելի յե առաջ գնալ կուսակցության պատմության հետագա ուսումնասիրության խնդրում:

Սակայն անպատրաստ ընթերցողի համար նշանակված այս գրքույկը, շատ հասկանալի պատճառներով պահանջում եր, վորպեսզի շարադրությունը անմիջական առարկայի սահմաններից անցնի պատմության շրջանն ընդհանրապես և հեղափոխական շարժման պատմության շրջանը մասնավորապես, վորովհետև հեղինակը չի կարող յենթադրել, վոր այն պատմական պարագաները, վորոնց մեջ գործել և զարգացել է կուսակցությունը, արդեն ծանոթ են ընթերցողին:

Հետևաբար դյուրացնել Համամիութենական Կոմունիստական Կուսակցության (բոլշևիկների) պատմության ուսումնասիրության սկիզբը և այդ ուսումնասիրությունը մատչելի դարձնել ամենաանպատրաստ ընթերցողի համար —ահա այս գրքույկի նպատակը։

Ուստի և առաջին գրույցների շարահյուսությունը այնպես է տրված, որ սկսնակի համար վոչ մի դժվարություն չի ներկայացնում։

Կարգացած ամեն մի գրույցի բարեխղճորեն յուրացումը միակ անհրաժեշտ պայմանն է հետագա գրույցները հասկանալու համար, որոնց շարահյուսությունը հետզհետե բարդանում է՝ արդեն բացատրած տերմինների գործածությամբ և նախընթաց գրույցներում ծանոթացած փաստերի հիշատակությամբ։

Այդպիսով այս գրքույկը ուշադրությամբ կարդացողը անհրաժեշտ պատրաստություն կունենա ավելի հիմնավորապես ծանոթանալու աշխարհիս միակ պրոլետարական կուսակցության պատմության հետ, կուսակցության, որի ղեկավարությամբ բանվոր դասակարգը սոցիալիստական հասարակություն և կառուցում յերկրագնդի մի վեցերորդ մասի վրա։

Նյութերի բաշխումն ըստ գրույցների—նույնպես անհավասար է կատարված։ Քանի ավելի խորն և ուսումնասիրվում առարկան, այնքան ավելի շատ նյութեր են հաղորդվում գրույցների մեջ, ըստ որում վերջին տասը տարվան վերաբերող գրույցներում հեղինակը նպատակահարմար է գտել ավելի մանրամասն կանգ առնելու, ի նկատի ունենալով անհրաժեշտությունն՝ ըմբռնելու համար այն չափազանց բարդ սոցիալական-քաղաքական պրոցեսները, որոնց մեջ գործել է կուսակցությունը։

Վ. Վ.

Այս գրքի ռուս. II հրատարակության մեջ հեղինակը հաշվի առնելով մեր կուսակցության կենտրոնական որդանի քննադատության արած ցուցմունքները, մի շարք փոփոխություններ և հավելումներ է մտցրել. այսպես՝ վերջին գրույցին կցել է մի նոր գլուխ («XIV համագումարից հետո»), որ նվիրված է յերկրի ինդուստրացման հարցին և «նոր ոպպոզիցիայի» հայացքների՝ դեպի տրոցկիզմի կողմը կատարված եվոլյուցիային։ Այդ եվոլյուցիան ավելի լավ պարզաբանելու համար, նախորդ գրույցներին ևս որոշ հավելումներ է արել՝ ընթերցողի ուշադրությունը դարձնելով այն տարաձայնությունների վրա, որոնք 1917 թ. հեղափոխության մինչոգին ծագեցին «նոր ոպպոզիցիայի» առաջնորդների և կուսակցության մեծամասնության մեջ։ Այսպիսով հեղինակը կուսակցության պատմությունը հասցնում է մինչև մեր որերը—XV կոնֆերենցիան*)։

---

*) Այդ կոնֆերենցիայի մասին կարդա—ինչ որոշեց կուսակցության XV կոնֆերենցիան» հանրամատչելի և ամփոփ գրքույկը. հրատ. ՅՍՀՄ Մ[illegible]ության ժող. կենտր. Հրատարակչության, Մոսկվա, 1927 թ.։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Վ. Վ. ՎՈԼՈՍԵՎԻՉԻ «Հմ. կ. կ. (բ) ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԳՐՔՈՒՅԿՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՑՆ ԿԵՐՊՈՎ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Մեր կուսակցության պատմությունը շատ և հետաքրքրում վոչ միայն մեր կուսակցության անդամներին, այլ և մեզ հարազատ՝ անկուսակցական բանվորների լայն խավերին։ Վ. Վոլոսևիչի գրքույքը գրված և շատ հանրամատչելի կերպով, ուստի և կարելի յե հանձնարարել նաև I ու II աստիճանի դպրոցներն ու կրուժոկները ավարտած ընկերներին։

Ուսումնասիրության հեշտացնելու համար, Վ. Վոլոսևիչի գրքույկը մենք բաժանում ենք 5 մասերի։

1. *Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցության կազմվիլն ու նրա մեջ բոլշևիկների և մենշևիկների ֆրակցիաների առաջ գալը։ (Առաջին 4 գրույցը)։*

2. *Կուսակցության պայքարը 1905 թ. հեղափոխության մեջ։ (Գրույց 5, 6 և 7)։*

3. *Կուսակցության գործնեությունը յերկու հեղափոխության (1905 և 1917) միջանցքում և վերջնական խզումն բոլշևիկների ու մենշևիկների միջև։ (Գրույց 8 և 9)։*

4. *Թե ինչպես բոլշևիկների կուսակցությունը 1917 թվի հոկտեմբերին իշխանությունն իր ձեռքն առավ և, չնայած ներքին և արտաքին ուժեղ թշնամիների գրոհներին, հաղթող դուրս յեկավ հետագա քաղաքացիական պատերազմում։ (Գրույց 10 և 11)։*

5. *Կուսակցության գործնեությունը «նեպի» շրջանում։ (Գրույց 12 և 13)։*

Ծանոթանալով այս բաժանման հետ, դուք սկսում եք կարդալ։ Կարդալիս միշտ ձեռքի տակ ունեցեք մատիտ և թուղթ։ Սկսեք կարդալ անպայման առաջին շրջանից։ Չանցնեք հետագա շրջանների ընթերցման, մինչև վոր պարզ և վորոշ չյուրացնեք նախընթացը։ Ամեն մի շրջան կարդալիս, անպայման ծանոթացեք այդ շրջանի բնորոշմանը (քարակտերիստիկային)՝ այս մեթոդական ցուցմունքներում (տես ստորև)։ Ամեն մի հատված կարդալուց հետո անմիջապես գրավոր պատասխաններ տվեք այդ հատվածին վերաբերող հարցերին։ (Տես ստորև)։

ԳՐՔՈՒՅԿԻ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԸՍՏ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՐՑԵՐ.

Ի նկատի առնելով նախընթաց ցուցմունքները—անցեք հետևյալին։

I ՇՐՋԱՆ.—Ս.-Դ. Բանվ. Կուսակցության կազմվիլն ու նրա մեջ բոլշևիկների ու մենշևիկների ֆրակցիաների առաջ գալը։

Այստեղ դուք նախ կծանոթանաք, թե ինչ բնույթ եր կրում հեղափոխական շարժումը Ս.-Դ. կուսակցության յերևան գալուց առաջ։ Ուշի՛ց եր նա բաղկացած, հասարակական վո՞ր դասակարգերի վրա յեր նա հենվում և թե ինչու նա պարտություն կրեց։

Յերկրորդ.—Դուք ծանոթանում եք բանվորական հեղափոխական շարժման առաջին քայլերին, տեղեկանում եք, թե ինչպես յերևան են գալիս առանձին բանվորական կրուժոկներ, և վերջապես «Աշխատանքի Ազատագրման» խմբակի ծագման և Ռուսաստանում մարքսիզմի ու Ս.-Դ.

կուսակցության զարգացման մեջ նրա կատարած դերի մասին։

Ցերտով.—Դուք տեղեկանում եք, թե ինչ դժվարություններով և ինչ փուլեր է անցել իսկական բանվորական բոլշևիկյան կուսակցության կազմակերպման պրոցեսը և թե ինչո՞վ է դա բացատրվում։

Այս հատվածը մշակելիս պետք է առանձին ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, թե ինչո՞ւ առաջին հեղափոխականները, այսպես կոչված նարոդնիկները—դյուղացիությունը համարում էին սոցիալիզմի գլխավոր հաղորդիչ, իսկ պրոլետարիատն անտես էին առնում, և ապա այն հանգամանքի վրա, թե ինչո՞ւ առհասարակ ծագեց նարոդնիկությունը, ինչո՞ւմն էր կայանում նրա հիմնական մոլորությունը և թե ինչո՞ւ նարոդնիկությունը աստիճանաբար ի չիք դարձավ։

Առաջին պարապմունքն առանձնապես բարդ է, ուստի և մենք տալիս ենք մի շարք հարցեր, որոնց կարիք չկա գրավոր պատասխանելու։ Այդ հարցերի նպատակն է — նպաստել ձեզ՝ առաջին գլխի բովանդակությունը վերականգնելու։

1. Ձե՞րը առաջ չեկավ մեզ մոտ արդյունաբերության։

2. Ինչո՞ւ միայն 70-ական թվերին ծագեց իսկական բանվորական շարժումը։

3. Ումի՞ց էր բաղկացած այն ժամանակվա հեղափոխականների մեծ մասը, ինչի՞ էին ձգտում նրանք և ինչո՞ւ նրանք իրենց նպատակին չհասան։

4. Ձե՞րը են բանվորները սկսում ստեղծել իրենց առաջին սոցիալիստական կազմակերպությունները և ինչո՞ւ հենց այն ժամանակ չի հաջողվում նրանց իրենց կուսակցությունը հիմնել։

5. Ի՞նչ էր պատճառը բանվոր դասակարգի շահերը

պաշտպանող առաջին գործարանային որենքների առաջ գալուն։

6. Ի՞նչը ստիպեց նարոդնիկների մի մասին 80-ական թվերին մարքսիստներ դառնալու։

7. Ձե՞րը և ինչո՞ւ ծագեց հեղափոխության շարժման մեջ պրոլետարիատի հեգեմոնիայի իդեյան։

8. Ի՞նչ էր պատճառը մարքսիստական խմբերի աճման,—90-ական թվերին։

9. Ինչո՞ւ այսպես կոչված «լեգալ մարքսիստները» սոցիալ-դեմոկրատների դաշնակիցներ էին համարվում՝ նարոդնիկության դեմ մղած պայքարում, և ինչու այդ դաշնը ժամանակավոր էր։

10. Ի՞նչ նշանակություն ուներ կուսակցության կյանքում առաջին համագումարը։

11. Ինչո՞ւմն էր կայանում եկոնոմիզմի ջնասը, և նրա սկզբի հաջողությունների պատճառը։

12. Ի՞նչ դեր կատարեց 900-ական թ. թ. կրիզիսը՝ եկոնոմիստների վրա իսկրայականների տարած հաղթանակում։

13. Զուբատովշչինայի էությունն ու ծագման պատճառները։

14. «Իսկրայի» առաջ դրված խնդիրները և «Իսկրայի» կատարած գործը։

15. Լենինի դերը «Իսկրա» թերթում։

16. II համագումարի աշխատանքներն և թե ինչո՞ւ առաջ չեկավ յերկրորդ համագումարում պառակտումը։

Առաջին պարապմունքի բովանդակությունը վերականգնելուց հետո (մեր կուսակցության պատմության առաջին շրջանը), դուք գրավոր պատասխան եք տալիս հետևյալ հարցերին։

1. Ի՞նչ ընդհանուր բան կար լեգալ մարքսիստների և եկոնոմիստների հայացքներում։

2. Ինչո՞ւ 900-ական թվերին կուսակցությունն ստեղծելու խնդիրն անհետաձգելի պահանջ դարձավ, և Լենինն ի՞նչպես էր մտածում կուսակցությունը կազմակերպել։

3. Ինչո՞ւ հեղափոխական շարժման մեջ պրոլետարիատի հեգեմոնիայի իդեյան հիմնական էր համարվում, որով հեղափոխական մարքսիստները բաժանվում էին մյուս բոլոր հոսանքներից։

4. Լենինի դերը սոցիալ-դեմոկրատիայի հեղափոխական մասի (հին-իսկրայական-բոլշևիկների) կազմակերպման խնդրում։

II ԶՐՑԱՆ.—*Կուսակցության պայքարը 1905 թ. հեղափոխության մեջ.*

Այստեղ դուք իմանում եք—նախ՝ կազմակերպչական տարաձայնությունների եությեան մասին, որի շնորհիվ II-րդ համագումարը բաժանվեց բոլշևիկների և մենշևիկների, և թե ինչպես համագումարից հետո մենշևիկները իրենց ձեռքը գցեցին «Իսկրա» թերթը, իսկ կուսակցությունը բաժանվեց 2 ֆրակցիայի, որ հետզհետե ավելի ու ավելի էին իրարից հեռանում։

Յերկրորդ.—Թե ինչպես 1905 թ. հունվարի 9-ի հեղափոխական շարժումն դարձավ հեղափոխություն, թե ինչպես հոկտեմբերին բանը հասավ ընդհանուր գործադուլի և բանվորական պատգամավորների խորհրդի կազմակերպման, իսկ դեկտեմբերին՝ զինված ապստամբության, և թե ինչու ինքնակալությունը սկզբում, որ հարկադրված էր քայլ առ քայլ զիջողություններ անելու, վերջիվերջո հաղթող հանդիսացավ։

Յերորդ.— Թե ինչո՞վ էր տարբերվում հեղափոխության շարժիչ ուժերի՝ բոլշևիկների տված գնահատությունը մենշևիկների գնահատությունից։

Այստեղ հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքի վրա, թե ինչո՞ւ բուրժուական-դեմոկրատական հեղափոխության մեջ պրոլետարիատը դեկավարող էր (հեգեմոն), և թե՞ ինչու բուրժուազիան չէր կարող դեկավարող լինել. ինչպես նաև՝ ինչո՞ւմն են կայանում 1905 թ. հեղափոխության պարտության պատճառները և թե ի՞նչ դասեր պետք է առնել դրանից։

Չորրորդ.—Դուք կիմանաք, թե ինչո՞ւ կուսակցության մեջ հաղթող հանդիսացավ յերկու ֆրակցիաները միավորելու ձգտումը, որ հանգեց IV միացուցիչ համագումարին, և թե ի՞նչ հետևանք ստացվեց IV-րդ համագումարից։

Հինգերորդ.—Ի՞նչ տակտիկա յեր բանեցնում կուսակցությունը Դումայի ընտրությունների վերաբերմամբ։

Վեցերորդ.—Կուսակցության V համագումարի աշխատանքը և մենշևիկների նկատմամբ ունեցած տարաձայնությունները կազմակերպչական, տաքտիկական ու ծրագրային հարցերում։

Գրքից այս հատվածը կարդալուց հետո դրավոր պատասխան տվեք հետևյալ հարցերին.—

1. Ի՞նչ իմաստով և ինչո՞ւ 1905 թվի հեղափոխությունը բուրժուական էր։

2. Ինչո՞ւ բուրժուազիան համաձայնության յեկավ ինքնակալության հետ՝ ընդդեմ հեղափոխության։

3. Ինչո՞ւ միայն պրոլետարիատն էր ընդունակ բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելու։

4. Ո՞ւմ տեսակետը՝ հեղափոխության բնույթի և նրա շարժիչ ուժերի մասին՝ արդարացրեց 1905 թվի դեպքերի ընթացքը—բոլշևիկների՞, մենշևիկների՞, թե՞ Տրոցկու։

5. Ի՞նչ ընդհանուր բան կար մենշևիկների և եկոնոմիստների հայացքներում՝ կուսակցության դերի մասին հեղափոխության մեջ։

III ԶՐՑԱՆ:— *Կուսակցության գործունեությունը յերկու հեղափոխությունների միջանցքում (1905—1917 թ. թ.) յեվ*

վերջնական իշխանը բոլշեվիկների ու մենշեվիկների միջև։

Այստեղ ռեակցիայի շրջանն ուսումնասիրելիս դուք կիմանաք—

Նախ—թե ի՞նչպես ինքնակալությունն իրեն ամուր դգալով, փոխում է Պետ. Դումայի ընտրողական որենքը, և թե նա ո՞ր դասակարգերի վրա է փորձում հենվել։

Յերկրորդ.—թե ի՞նչպես եյին սոց.-դեմ. ներքին տարբեր հոսանքները ռեակցիայի շրջանում վճռում Պետական Դումային մասնակցելու հարցը, և թե նրանցից ո՞վ իրավացի դուրս յեկավ։

Յերրորդ.—թե ի՞նչ հոսանքների լուծվեց կուսակցությունը 1905 թ. հեղափոխության պարտությունից հետո և ի՞նչ կուսակցական խնդիրներ կային կանգնած այն ժամանակ բոլշևիկների առաջ։

Վերելքի շրջանն ուսումնասիրելիս, դուք ուշադրություն դարձրեք նախ—հեղափոխական շարժման վերելքի պատճառների վրա. յերկրորդ—թե ի՞նչպես բոլշևիկները ոգտագործեցին լեգալ մամուլը և մանավանդ «Պրավդա» թերթը՝ բանվոր դասակարգը կուսակցության շուրջը հավաքելու և կազմակերպելու համար. յերրորդ—թե ի՞նչպես 1912 թվին բոլշևիկները Պրագայի կոնֆերենցիային կուսակցությունից վերջնականապես դուրս համարեցին լիկվիդատորներին. չորրորդ—թե ի՞նչպես դրանից հետո բոլշևիկները հաջող անցկացրին IV Պետ. Դումայի ընտրությունները, առանձին բոլշևիկյան ֆրակցիա ստեղծեցին այնտեղ և մասսաների մեջ գործելով բանվորական շարժման ղեկավարությունը իրենց ձեռքն առան։

Իմպերիալիստական պատերազմն ուսումնասիրելիս դուք կիմանաք—

Նախ—թե ի՞նչպես սոցիալիստական կուսակցությունների մեծամասնությունը պատերազմի հայտարարությամբ խայտառակ կերպով անանկացան՝ դավաճանելով իրենց բազմից տված խոստումներին՝ պատերազմի դեմ պայքարելու։

Յերկրորդ—թե ի՞նչ հոսանքների լուծվեց II Ինտերնացիոնալը պատերազմի ժամանակ և թե ինչպես հիմնավորեց բոլշևիկների դիրքը Լենինը, բնորոշելով իմպերիալիզմը՝ վորպես փտող կապիտալիզմ։

Յերրորդ—թե ի՞նչպես եյին բոլշևիկները պայքարում պատերազմի դեմ և ինչ լոզունգ առաջ բերին նրանք այն ժամանակ։

Չորրորդ—թե ի՞նչպես ռուս բոլշևիկների աջակցությամբ III Ինտերնացիոնալն ստեղծելու առաջին քայլերն արվեցին, և թե ի՞նչպես Փետրվարյան հեղափոխությունը արագացրեց նրա կազմակերպումը։

Այս հատվածը կարդալուց հետո պատասխան տվեք հետևյալ հարցերին—

1. Ի՞նչպես եյին գնահատում լիկվիդատորներն 1905 թվի հեղափոխության հետևանքները և բանվորական շարժման հեռանկարները։

2. Ինչով եր տարբերվում ոտզովիստների և վպերիոդովցիների դիրքը լենինիստների-բոլշևիկների դիրքից։

3. Ի՞նչ դեր կատարեց բանվորական շարժման վերելքը 1910—1911 թվերից հետո—բոլշևիկների ֆրակցիան բոլշևիկների կուսակցություն դառնալու խնդրում։

4. Ինչո՞ւմն եր կայանում բոլշևիկների և մենշևիկների՝ պատերազմի մասին ունեցած հայացքների տարբերությունը։

IV ԶՐՈՒՅՑ.—*1917 թվին բոլշևիկներն իշխանությունը գրավում են յեվ իշխանությունը իրենց ձեռքում պահում քաղաքացիական պատերազմի շրջանում։*

Այս մասը կարդալիս դուք կիմանաք—

Նախ—թե ի՞նչպես 1917 թվի փետրվարին մասսաները տապալեցին ինքնակալությունը՝ կանխելով բուր-

ժուպիայի դավադրությունը, որը ձգտում էր՝ վերևից հեղափոխելով, ներքևից հեղափոխման առաջն առնել, և թե ի՞նչպես, չնայած որ դեռքը խորհուրդներ կազմած ժողովրդի ձեռքին էր—իշխանությունը, մենշևիկների և եսերների աջակցությամբ, անցավ բուրժուազիայի ձեռքը, որը աշխատում էր խորհուրդների դերը ի չիք դարձնել։

Յերկրորդ.—Թե ի՞նչ խնդիրներ առաջադրեց Լենինը Ռուսաստան վերադառնալով և թե ինչպես 1917 թ. դեպքերի ընթացքը հաստատեցին բոլշևիկների տեսակետի ուղիղ լինելը։

Յերրորդ.—Թե ինչպես կուսակցությունը կարողացավ կազմակերպվել և իշխանությունն իր ձեռքը դցել 1917 թ. հոկտեմբերին, հակառակ մենշևիկների ու եսերների կամքի, և թե ի՞նչպես իրագործեց իր լոզունգները։

Չորրորդ.—Թե ի՞նչպես հետո, քաղաքացիական ծանր պատերազմի պայմաններում բոլշևիկները կարողացան այդ իշխանությունը պահպանել, և թե ինչ դեր են կատարել քաղաքացիական պատերազմում կուսակցության համադումարները այդ ժամանակաշրջանում։

Կարդալուց հետո դրավոր պատասխան տվեք հետևյալ հարցերին—

1. *Ի՞նչ տակտիկա էին բանեցնում բոլշևիկները 1917 թվին՝ մասսաներին նվաճելու համար։*

2. *Ինչո՞ւ 1917 թվի հեղափոխությունը անխուսափելիորեն սոցիալիստական պետք է դառնար։*

3. *Ինչո՞ւ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը ժամանակավոր բնույթ էր կրում։*

V ՁՐՋԱՆ.—*Կուսակցության գործունեությունը «նեպի» շրջանում.*

Այստեղ կխմանաք նախ—թե ինչո՞ւ քաղաքացիական պատերազմի վերջանալուց հետո մենք պետք է անցնեյինք նոր տնտեսական քաղաքականության (նեպ-ին), յերկրորդ—այն,

որ նեպն իրագործելիս մենք ստիպված եյինք մի շարք փուլեր անցնել, նախ՝ նահանջ, հետո՝ ուժերի վերախմբավորումն, և այժմ—առաջխաղ՝ տնտեսական դիրքերն մեկը մյուսի յետևից նվաճելու համար, որով ապացուցվում է նեպին անցնելու ուղիղ լինելը, յերրորդ—թե ի՞նչպես կուսակցությունն իր համագումարներին ուղիղ էր նշում յերկրում առաջ յեկած հերթական խնդիրների լուծումը, հաջողությամբ պայքարելով նեպի վտանգների դեմ, չորրորդ—թե ի՞նչ դրության մեջ էր մեր տնտեսությունը XIV կուսկոնֆերենցիայի և XIV համագումարի ժամանակ, մեր փոխադարձ հարաբերությունները մեզ շրջապատող կապիտալիստական պետությունների հետ, և թե ի՞նչ նոր խնդիրներ եյին մեր առաջ ծառանում տնտեսական բնագավառում։ Հինգերորդ—այդ խնդիրների լուծման դժվարությունը, ոպպոզիցիայի գործած սխալներն և սխալ հաշիվները։

Առանձին ուշադրություն դարձրեք այստեղ այն հարցին, թե XIV համագումարին ինչումն էր կայանում ոպպոզիցիայի սխալների վտանգը։

Կարդալուց հետո պատասխանեցեք այս հարցերին.—

1. *Ի՞նչ խնդիրներ պետք է վճռեր նոր տնտեսական քաղաքականությունը և ինչ վտանգներ եյին կապված նրա իրականացման հետ։*

2. *Ի՞նչու XIV կուսկոնֆերենցիան և XIV համագումարը անհրաժեշտ համարեցին դյուրդում «ռազմական կոմունիզմի» մնացորդները վերացնել։*

3. *Ի՞նչ էր պատճառը, որ ոպպոզիցիան հանդես յեկավ XIV համագումարին, և ովքո՞նք են ոպպոզիցիայի սխալները։*

4. *Ի՞նչպես վերաբերվեց դեպի ոպպոզիցիան XV-րդ կուսկոնֆերենցիան։*

Ռուսերեն գիտցողներին խորհուրդ է տրվում, այս գիրքն ընթեռնելիս, զուգընթացաբար ոգտվել հետևյալ աշխատությունից—«Хрестоматия по исшории классовой борьбы в России», сост. М. Н. Коваленский, С. С. Кривцов, Е. А. Мороховец и Н. Г. Тарасов. Москва, 1925 г.

Վ. Վոլոսևիչի այս պատմության I-ին գրույցից հետո կարդալ վերոհիշյալ քրեստոմատիայի 174—182 յերեսները: II-րդ գրույցից հետո—նույն գրքի 135—138, 143—145, 183—185: III-րդ գրույցից հետո—138—140, 188—198: IV-ից հետո—140—143, 198, 199—202: V-ից հետո—217—219, 246—248, 226—258, 276—283: VI-ից հետո—235—243: VII-ից հետո—243—246, 295—302: VIII-ից հետո—330—332, 337—342: IX-ից հետո—344—355: X-ից հետո—363—368, 384—388, 394—396, 401—404, 406—412: XI-ից հետո—418—420: XII-ից հետո—421—428: Այնուհետև կարդալ — «Программа Р.С.-Д.Р.П., принятая на втором с'езде партии» (կարդալ IV-րդ գրույցից հետո). «Резолюция III-го с'езда Р.С.-Д.Р.П. об отнашении к крестьянскому движению» (կարդալ VI-րդ գրույցից հետո). «Ленинский проект аграрной программы, предложенный VI-ому с'езду». Լենինի հոդվածները—«К лозунгам», «Надо взять власть» (X-րդ գրույցից հետո), «Новые времена, старые ошибки в новом виде» (կարդալ XI և XII գրույցներից հետո):

Այս աշխատանքը կատարելուց հետո, Հմ. Կոմկուսի (բ) պատմության մեջ ավելի խորանալու համար—ձեռք բերել և կարդալ՝ Н. Н. Попов—«Очерк истории Российской Коммунистической Партии (большевиков)».

1. ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Վո՞ր ժամանակից պիտի սկսել կուսակցության պատմությունը.—Համամիութենական Կոմունիստական Կուսակցությունը բանվոր դասակարգի կուսակցությունն է: Նշանակում է կուսակցությունը կարող եր կազմվել միայն այն ժամանակ, յերբ Ռուսաստանում առաջ յեկան բանվորներ, այսինքն՝ այնպիսի մարդիկ, որոնք չունեյին վոչ գործիքներ և վոչ էլ հարկավոր նյութեր, որպեսզի իրենք կարողանային վորևե արհեստով պարապել: Նրանք վող էլ չունեյին, վորով կարողանային անհրաժեշտ նյութեր և գործիքներ գնել: Յեվ վորպեսզի կարողանային ապրել, նրանք աշխատելու համար վարձվում եյին նրա՛նց մոտ, ովքեր արտադրության համար ամեն բան ունեյին—գործարան, մեքենա, հում նյութ և այլն:

Ռուսաստանում ֆաբրիկաներ և գործարաններ գոյություն ունեյին դեռ մինչև Պյոտր I (սրանից մոտ 250 տարի առաջ), իսկ Յեկատերինա II-ի որով դրանց թիվը արդեն յերեք հազարից անց եր և այդ ֆաբրիկաներում շատ բանվորներ եյին աշխատում:

Միայն թե այդ ֆաբրիկաներն այսորվա իմաստով իսկական ֆաբրիկաներ չեյին, վորովհետև նրանցում մեքենաներ չկային և աշխատանքը ձեռքով եր կատարվում. ասենք բանվորներն էլ իսկական բանվորներ չեյին. այն ժամանակվա բանվորները ճորտ գյուղացիներ եյին, վորոնք

Ч 833 -Вр

2002-Арм ССР

ֆաբրիկայի աշխատանքը համարում էին ժամանակավոր զբաղմունք. նրանց շահերն էլ նույնն էին, ինչ որ ձնացած ճորտ գյուղացիության շահերը և նրանք իրենց գլխավոր թշնամին համարում էին ազնվական կալվածատերերին:

Ռուս բանվորները միայն այն ժամանակ ունեցան իրենց բանվորական հատուկ շահերը, յերբ վերացավ ճորտատիրական իրավունքը: Այդ ժամանակից նրանք արդեն սկսեցին կամաց-կամաց գյուղից կտրվել և իսկական պրոլետարներ դառնալ, վորոնք վոչինչ չունեն:

Ֆաբրիկանեըն էլ այդ ժամանակները իսկական ֆաբրիկանների վերածվեցին. ձեռքով կատարվող աշխատանքը տեղի տվեց մեքենայի աշխատանքին:

Ինչպես հայտնի յե, ճորտատիրական իրավունքը վերացվեց 1861 թ.: Յեվ դրանից միայն տասը տարի անց, սկսվում է իսկական բանվորական շարժում և շուտով յերևան են գալիս այնպիսի բանվորներ, վորոնք մտածում են հիմնել բանվորական կուսակցություն, վորպեսզի կարողանային դեկավարել բանվոր դասակարգի պայքարն ընդդեմ կապիտալիստների և նրանց պետության. ահա թե ինչու Ռուսաստանի պրոլետարիատի կուսակցության պատմությունը պիտի սկսել յոթանասնական թվականներից, յերբ բանվորները նոր էին սկսում կազմակերպվել իրենց ուժա բանվորական շահերի համար պայքարելու նպատակով:

2. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅՈԹԱՆԱՍՆԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ.

Բանվորների դրությունը յեվ նրանց գործադրության պայքարը 70-ական թվականներին.—Ծանր եր բանվորների դրությունը 70-ական թվականներին: Արդյունաբերությունը կանգ եր առած. կապիտալիստներն անխղճորեն նեղում և շահագործում էին բանվորներին.—տուգանում էին ամեն մի չնչին բանի համար, յերբեմն էլ ուղղակի առանց պատճառի. բանվորներին ստիպում էին փոած ապրանքները յերեք անգամ ավելի թանգ գնով գնել իրենց խանութներից, աշխատավարձը ժամանակին չեյին վճարում կամ բանվորների հետ հաշիվը մաքրում էին ապրանքներով կամ ավելի հեռավոր ժամկետներով տրված կրոններով: «Որական 17 ժամյա աշխատանք, և հազիվ կարելի յեր 40 կոպեկ վաստակել»—ահա թե ինչպես էին աշխատանքի պայմանները, վորոնց մասին պատմում է այն ժամանակվա Ջուլհակ, հեղափոխական բանվոր Պյոտր Ալեքսեյևը:

Կապիտալիստների նեղություններին բանվորները պատասխանում էին գործադուլներով: Այդ գործադուլները պաշտպանողական բնույթ էին կրում և համարյա միշտ էլ վերջանում էին անհաջողությամբ:

1865 թ. մինչև 1877 թ. Ռուսաստանի զանազան քաղաքներում գործադուլ էին արել մինչև 20.000 բանվոր:

1878 թ. մինչև 1880 թ. արդյունաբերության մեջ

վորող աշխուժացում է նկատվում, գործադուլային շարժումն ուժեղանում է։ Պետերբուրգում 1878 թվին բռնկում է 2.000 բանվորների գործադուլը Նոր Բամբակագործարանում, այնուհետև կենդիզի մանվածագործարանում, իսկ մեկ տարի անց, գործադուլը նորից բռնկում է Նոր Բամբակագործարանում։

Ընդամենը յերեք տարվա ընթացքում գործադուլի 29 դեպք է յեղել, և գործադուլավորների թիվը հասնում էր 30—35 հազարի։

Գործադուլները շարունակում են պահպանել իրենց պաշտպանողական բնույթը, սակայն հաճախ վերջանում են բանվորների ոգին։

Գործադուլների միջոցին զանազան ֆաբրիկանների բանվորները յերբեմն միանում են՝ կապիտալիստների դեմ պայքար մղելու համար, և իրենց շրջանում փող հավաքելով՝ ոժանդակում են գործադուլավորներին։

Ի՞նչպես եյին պայքարում բանվորները մյուս յերկրներում.—*Մյուս յերկրներում բանվորներն արդեն պայքար եյին մղում կապիտալիստների ամբողջ դասակարգի դեմ և պրոֆեսիոնալ միություններ եյին կազմակերպում, որպեսզի արգելք հանդիսանան ֆաբրիկանտներին՝ իրենց աշխատավարձն իջեցնելու և կամ բանվորական որը յերկարացնելու, իսկ ավելի գիտակից բանվորները հասկացել եյին, որ իրավացի չեն սոցիալիստները, որոնք ասում եյին, թե այդպիսի պայքարը բավական չե, որպեսզի բանվորները բռնագրավելով պետական իշխանությունը, փոխեն հասարակական տիրող կարգերը. այնպիսի կարգեր պիտի մտցնել,—ասում եյին սոցիալիստները,—որ չլինեն վոչ կապիտալիստներ և վոչ էլ բանվորներ, իսկ դրա համար հասարակության ընդհանուր սեփականությունն պիտի դարձնել բոլոր ֆաբրիկաներն ու գործարանները, բոլոր*

մեքենաները և արտադրության մյուս զանազան հարմարությունները։ Այդպիսի կարգերում վոչ մեկը չի կարող ստիպել մյուսին իր համար աշխատելու, իսկ ինքը վոչինչ չանի։

Աշխատանքն այդպիսի հասարակական ֆաբրիկանեերում և գործարաններում ընդհանուր ուժերով կտարվի, միատեսակ պլանով՝ ամբողջ յերկրի համար։ Այդպիսի հասարակակարգը կոչվում է սոցիալիզմ։

Այդ ամենը մյուս բոլոր բանվորներին պարզաբանելու և հետո հոգուստ սոցիալիզմի պայքարի հանելու համար, ամեն մի յերկրի առաջավոր բանվորները միանում եյին, վորպեսզի գործեն միասին, ու հիմնում եյին սոցիալիստական կուսակցություններ։

Իսկ Ռուսաստանում բանվորները դեռ չունեյին վոչ պրոֆեսիոնալ միություններ և վոչ էլ կուսակցություններ։

Առաջին ռուս սոցիալիստները յեվ նրանց հիմնական սխալը.—*Սոցիալիստական ուսմունքը մյուս յերկրներից Ռուսաստանում տարածվել է նախ և առաջ կրթված յերիտասարդության շրջանում։ Այդ առաջին ռուս «սոցիալիստները» կոչվում եյին «նարոդնիկներ»։ Ռուսաստանում այդ ժամանակ շատ քիչ բանվորներ կային, նրանք է դեռ նոր եյին սկսում գործադուլային պայքարը, այդ պատճառով նարոդնիկները համարյա թե չեյին նկատում բանվոր դասակարգին և կարծում եյին, վոր Ռուսաստանում սոցիալիստական կարգեր կարող են առանց բանվորների յել մտցնել գյուղացիները։ Այդ մեծ սխալ եր։ Գյուղացիները սոցիալիզմի համար պայքարի յեն յելնում միայն այն ժամանակ, յերբ նրանց այդ պայքարը ղեկավարում է բանվոր դասակարգը։ Նարոդնիկները այդ բանը չեյին հասկանում և ըստ եյության նրանք սոցիալիստներ չեյին, քանի վոր նրանց ուսմունքը չեր կարող*

սոցիալիզմին հասցնել։ Գյուղացիները այն ժամանակ սոցիալիզմը բոլորովին չէին կարող հասկանալ։ Նրանք միայն ուզում էին իրար մեջ բաժանել կալվածատիրական հողը, վորպեսզի իրենցից յուրաքանչյուրն իր ընտանիքով աշխատեր այդ հողի վրա առանձին, և վոչ թե միասին։

Ահա թե ինչու գյուղացիները չէին հասկանում նարոդնիկներին և սոցիալիզմի համար պայքարի չէլան։ Նարոդնիկների այն հույսերը, վոր համառուսական գյուղացիական խռովություն կբռնկի՝ չարդարացավ։

Բանվորների կազմակերպությունները. — Մինչ այդ, ճիշտ է, մի քանի բանվորներ, այն էլ միայն յերկու քաղաքներում—սկզբում Ոդեսայում և ապա Պետերբուրգում կազմակերպվելու արդեն առաջին փորձերն էին անում՝ սոցիալիզմի համար պայքար մղելու նպատակով։

«Հարավ-Ռուսական Բանվորների Միությունը». — Դեռ 1872 թվի վերջերին Ոդեսայում մեքենագործ 15 բանվորներից մի կրուժոկ էր կազմակերպված։ Նրանք սկզբում այդ կրուժոկը կազմակերպել էին միայն նրա համար, վորպեսզի մի քիչ բան սովորեն։ Միասին գրքեր էին կարդում, հետո գրադարան հիմնեցին, վորից ոգտվել կարող էին նաև կրուժոկի մեջ չմտնող բանվորները։

Հաջորդ տարին նրանք հիմնեցին կոոպերատիվ հիմունքներով մի բաղանիք։ Բացի այդ, կրուժոկի անդամները սկսեցին Ոդեսայի մյուս բանվորների մեջ էլ նման կրուժոկներ կազմակերպել։

1874 թվին այդ կրուժոկի անդամները փոխադարձ ոգնության դրամարկղ հիմնեցին, իսկ նույն տարվա վերջն արդեն գոյություն ունեին մոտ տասը կրուժոկ, յուրաքանչյուրը 6—7 անդամից բաղկացած։

Այն ժամանակ այդ բոլոր կրուժոկները միացան մի

ընդհանուր կազմակերպության մեջ, վորը կոչվում եր «Հարավ-Ռուսական Բանվորների Միություն»։ Միությունը գնալով աճում եր և նրա անդամներն աշխատում էին կապվել հարավային ուրիշ քաղաքների հետ—Ռոստովի, Տագանրոգի, Կերչի և այլն։

Նրանց հաջողվեց Ռոստովում «Միության» բաժանմունք հիմնել։ Միության անդամների թիվը հասնում եր 150—200 հոգու, վորից միայն յերկուսն էին ինտելիգենտ, այսինքն՝ վոչ բանվորական միջավայրից և լավ կրթություն ստացած։ Մնացածները բոլորը բանվորներ էին։ Հիշյալ յերկու ինտելիգենտներից մեկը քիչ եր գործունյա, իսկ մյուսը՝ Յեվգենիյ Ոսիպովիչ Զասլավսկին՝ «Միության» իսկական պարագլուխն եր։

Նա արդեն այն ժամանակ հասկանում եր, վոր սոցիալիզմի համար մղվող պայքարում բանվոր դասակարգին չի կարելի գյուղացիությունով փոխարինել և վոր պիտի պատրաստել բանվորներին՝ ապագա սոցիալիստական հեղափոխության համար։

Այդ պատճառով էլ «Հարավ-Ռուսական Բանվորական Միության» կանոնադրության մեջ ասված է. «Միությունը բանվոր դասակարգի մեջ տարածելու յե այն միտքը, վոր բանվորները կարող են ազատագրվել կապիտալի լծից. դրա համար էլ միությունն ուզում է համախմբել Հարավ-Ռուսական շրջանի բանվորներին և նրանց պատրաստել ապագա պայքարի համար՝ ընդդեմ գոյություն ունեցող տնտեսական ու քաղաքական կարգերի»։

Բանվորներն ազատագրվել կարող են միայն «բռնի հեղաշրջումով», այսինքն՝ հեղափոխության միջոցով։

Այդ միության գոյությունը յերկար չտևեց։ 1875 թ. վերջին ժանդարմները ջարդ ու փշուր արին այն։ Զասլավսկին դատապարտվեց 10 տարվա տաժանակիր աշխատանքի. մյուսներից՝ վոմանք հինգ տարվա տաժանակիր

աշխատանքի, վոմանք՝ Սիբիր աքսորի, վոմանք էլ դատապարտվեցին բանտարկության մի քանի տարով։

Բանվոր Վիկտոր Ոբնորսկին.—1873 թ. վերջին Ոդեսայում ապրում և նրա գործարաններից մեկում աշխատում էր վականագործ Վիկտոր Ոբնորսկին։ Նա նշանավոր բանվոր էր։ Նա շատ էր կարդում և շատ մտածում այն մասին, թե ինչպես ոգնի բանվոր դասակարգին։ Դեռ առաջները, Պետերբուրգում նա նարոդնիկների մի կրուժոկի անդամ էր, իսկ Ոդեսա գալուց հետո մտավ Զասլավսկու կրուժոկը։ Ոբնորսկին Ոդեսայում ապրեց միայն մի քանի ամիս, բայց բանտարկությունից զերծ մնաց։ Նա յերեք անգամ յեղել էր արտասահմանում և իր սեփական աչքերով տեսել, թե ինչպես են պայքարում ուրիշ յերկրների բանվորները իրենց ազատագրության համար։ Նա հասկացել էր, վոր ռուս բանվորներն էլ պիտի պայքարեն այնպես, ինչպես վոր պայքարում են նրանց արտասահմանյան ընկերները, այսինքն՝ նա հասկացել էր, վոր սոցիալիզմի համար մղվող պայքարը հաջող կընթանա, յեթե բանվոր դասակարգը նախ և առաջ քաղաքական ազատություն ձեռք բերի և վոր ինտելիգենտ նարոդնիկները սխալվում են, յերբ ասում են, թե առանց սոցիալիզմի՝ քաղաքական ազատությունը աշխատավոր դասակարգերին վոչինչ չի տա։

Յերբ Ոբնորսկին վերջին անգամ արտասահման գնալուց հետո Ռուսաստան վերադարձավ և բնակության համար այս անգամ Պետերբուրգում հաստատվեց, նա այստեղ հանդիպեց մի ուրիշ գործունյա և շատ զարգացած բանվորի՝ Սաեփան Խալտուրինին։

«Հյուսիս-Ռուսական Բանվորական Միություն».—Յեվ ահա վականագործ Ոբնորսկին և հյուսն Խալտուրինը Պետերբուրգում հիմնադրեցին «Հյուսիս-Ռուսական Բանվորական Միությունը»։ Այդ Միությունը մոտ 200 անդամ ուներ։ Բոլորն էլ բանվորներ էին։ Ինտելիգենտներին չէին ընդունում, բայց այնուամենայնիվ նրանցից վերցրել էին գյուղացիության և սոցիալիզմի նկատմամբ ունեցած իրենց հիմնական հայացքները։ Սակայն «Հյուսիս-Ռուսական Միության» բանվորները ընդունում էին, վոր անհրաժեշտ է քաղաքական պայքար վարել, և այդ առթիվ վիճում էին ինտելիգենտ-նարոդնիկների հետ։

Նրանք իրենց ծրագրի մեջ մի շարք քաղաքական պահանջներ էին մտցրել և ամենից առաջ պահանջում էին խոսքի, մամուլի, ժողովների և հավաքույթների ազատություն։ Ինտելիգենտ-սոցիալիստներին նրանք իրենց պահանջներն այսպես էին բացատրում.

«Մենք—գրում են նրանք—վոչինչ չունենք ուտելու, տեղ չունենք ապրելու, և մենք պահանջում ենք սնունդ ու բնակարան մեզ համար...բայց մենք նույնպես գիտենք, վոր քաղաքական ազատությունը կարող է մեզ և մեր կազմակերպության համար յերաշխիք լինել իշխանության քմահաճույքներից, մեզ հնարավորություն կտա ճիշտ զարգացնել մեր աշխարհայացքը և ավելի հաջողությամբ տանել պրոպագանդի գործը»։

«Հյուսիս-Ռուսական Բանվորական Միությունն» ուզում էր՝ նախ միացնել ամբողջ հյուսիսային Ռուսաստանի բանվորական կրուժոկները և ապա նաև ամբողջ յերկրի, սակայն նրան յերկար կյանք չէր վիճակված։ Միությունը բոլորովին ձևակերպվեց 1878 թ. վերջին, իսկ 1879 թ. փետրվարին ու մարտին վոստիկանությունը միությանն ուժգին հարված տվեց։ Շատ բանվորներ ձերբակալվեցին, նրանց թվում նաև Ոբնորսկին, վորը հետո դատապարտվեց տասը տարով տաժանակիր աշխատանքի։ Իսկ մեկ տարուց հետո արդեն բռնվեց Միության տպարանը և բռնե-

նագրավվեց նրա որդան «Ռաբոչայա Զարյա» (բանվորական արշալույս) թերթի առաջին համարը։

Ժելտուբլինը բանտարկությունից խուսափեց և դարձավ տեռորիստ։ Մենք հիմա կտեսնենք, թե այդ ինչ է նշանակում։

Նարոդնիկները փոխում են պայքարի ձևը.—Մինչ այդ ժամանակները նարոդնիկներն արդեն նկատել էին, որ իրենց աշխատանքը դյուղում մի առանձին արդյունք չի տալիս։ Նրանք դեռ չէին հասկացել իրենց սխալը և կարծում էին, թե իրենց ոչինչ չի հաջողվում անել միայն այն պատճառով, որ իշխանությունը հետապնդում է իրենց, խանգարում է մոտենալ ժողովրդին և նրան մեկնաբանել ինչպես հարկն է՝ թե ինչ է սոցիալիզմը։

Իսկապես որ՝ Ալեքսանդր II-ի կառավարությունը անողոք էր հաշիվ տեսնում նարոդնիկների հետ. նրանց դատապարտում էին մահվան, տաժանակիր աշխատանքի, տարիներով բանտում պահում։

Եվ ահա, ցարական հետապնդումներից պաշտպանվելու և իրենց նկատմամբ գործադրած խստությունները հակահարված տալու համար, նրանք որոշում են սպանել ցարի ստորաքարշ մարդկանց, այսինքն՝ մատնիչներին, ժանդարմներին, նահանգապետներին, մի խոսքով բոլոր նրանց, ովքեր աչքի էին ընկնում հեղափոխականների նկատմամբ գործադրած իրենց դաժանություններով։ Պայքարի այդպիսի յեղանակը կոչվում է տեռոր, կամ, այլ կերպ, անաբեկման յեղանակ, իսկ այն հեղափոխականները, որոնք գործադրում են պայքարի այդպիսի ձևը, կոչվում են տեռորիստներ։

«Զեմլյա ի Վոլյա»-ի պառակտումը. «Չորնիյ Պերեդել» յեվ «Նարոդնայա-Վոլյա».—1879 թ. աշնանը նարոդնիկների մեծ մասը անհրաժեշտ էր գտնում պայքարել Ալեքսանդր II-ի կառավարության դեմ, վորպեսզի այդպիսով հարկադրեն ցարին ժողովրդի ներկայացուցիչներին հրավիրելու՝ յերկիրը կառավարելու համար. նշանակում է, վոր նարոդնիկների այդ մասը ընդունում էր քաղաքական պայքարը, և նարոդնիկների կուսակցությունը, վոր առաջ «Զեմլյա ի Վոլյա» էր կոչվում, բաժանվեց յերկու կուսակցության—«Չորնիյ Պերեդել»-ի և «Նարոդնայա Վոլյա»-ի։

Առաջինի մեջ մտնում էին նրանք, ովքեր չէին ուզում փոխել պայքարի նախկին յեղանակները։

«Զեմլյա ի Վոլյայի» անդամների մեծ մասը մտավ «Նարոդնայա Վոլյայի» մեջ և վորոշեց ցարին սպանել։ Այդ կուսակցության գործադիր կոմիտեն մեկը մյուսի յետևից մահափորձեր էր կազմակերպում։

«Նարոդնայա Վոլյայի» վերջը յեվ Ստեփան Խալտուրինի վիճակը.—Հենց այս կուսակցության մեջ մտավ Ստեփան Խալտուրինը և 1880 թվի փետրվարի 5-ին Ձմեռային պալատում պայթյուն առաջացրեց, իսկ 1882 թ. նա մի ուրիշ տեռորիստի՝ Ժելվակովի հետ միասին՝ Ոդեսայում սպանեց դատախազ Սորեյնիկովին, վորը հատուկ խստությամբ էր հետապնդում հեղափոխականներին։

Սրանք յերկուսն էլ իսկույն բանտարկվեցին և հետևյալ որը մահվան դատապարտվեցին։

Յերկար չտևեց «Նարոդնայա Վոլյայի» հեղափոխական գործնեությունը։

Ճիշտ է, կուսակցությանը հաջողվեց 1881 թ. մարտի 1-ին հասնել իր նպատակին. սպանվեց Ալեքսանդր II-ը. բայց այդ պայքարում արդեն հյուծվել էին կուսակցության ուժերը. նրա լավագույն անդամներն ընկան, և կուսակցության աշխատանքը սկսեց շնչատվել։

Ձեզրակացություն.—70-ական թվականներին բանվորական շարժումը դեռ նոր էր սկիզբ առնում։ Բանվորական կուսակցություն դեռ չկար և չէր էլ կարող լինել։ Դեռ գոյություն չուներ ճիշտ հասկացողություն այն մասին, թե ինչպիսին պիտի լինի բանվորական կուսակցությունը։ Սակայն հրապարակի վրա եկին յերկու փորձ՝ տնտեսական ու քաղաքական պայքար մղելու համար ստեղծելու բանվորական միայուն կազմակերպություն։ Վորովհետև բանվորական շարժումը դեռ շատ թույլ էր, ուստի և կառավարությանը հաջողվեց խափանել բանվորական կազմակերպության այդ առաջին սաղմերը։ Այնուամենայնիվ պիտի ընդունել, վոր 70-ական թվականներին բանվորական կուսակցության իդեյան արդեն սկսում է առաջ գալ։

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԻԴԵՅԱՅԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՊՐՈՊԱԳԱՆԴԸ.

(80-ական թ. սկզբներից մինչև 90-ական թ. կեսերը)

Բանվորների դրությունը յեվ գործադուլային շարժումը 1880 թ. մինչև 1893 թ.—80-ական թվականների սկզբին ռուսական արդյունաբերությունն ուժեղ կրիզիս ապրեց, այսինքն այնպիսի դրություն, յերբ գնորդներ չունենալու պատճառով ֆաբրիկաներում պատրաստվող ապրանքները ծնում եյին պահեստներում դարսված. կապիտալիստները ձեռս են տեսնում. նրանցից վոմանք սնանկանալով՝ փակում են իրենց ֆաբրիկաները. մյուսները թեպետ և շարունակում են աշխատեցնել ֆաբրիկաները, բայց արտադրությունը մեծ չափով կրճատում են և ավելորդ բանվորներին ճանապարհ են դնում։ Այսպես, 1881 թվին Պետերբուրգի չորս մեծ ֆաբրիկաներում աշխատող 6.700 բանվորներից կրճատվում են 4.300։ 1882 թ. վարշավայում 20.000 գործադուրկներ կային։

Ավելի ծանրացավ բանվորների դրությունը և կապիտալիստները սկսեցին առաջվանից ավելի շատ նեղել նրանց։

Բանվորները պաշտպանվում եյին գործադուլների միջոցով. բայց կրիզիսի միջոցին գործադուլները սովորաբար վերջանում են ֆաբրիկանտների հաղթանակով. այդպես եր և այդ ժամանակ. համարյա յուրաքանչյուր գործադուլը վերջանում եր բանվորների պարտությամբ։

Բայց առաջվա համեմատությամբ գործադուլների թիվը արդեն շատ ավելի չեր։ Հորս տարվա ընթացքում, սկսած 1881 թ. մինչև 1885 թ., տեղի ունեցավ մոտ 50 գործադուլ, որոնց մասնակցեցին 80.000 բանվոր, մինչդեռ դրանից առաջ, 15 տարվա ընթացքում, գործադուլավորների թիվը հասնում էր միայն 50.000-ի։

Յեվ դրա հետևանքով, որպեսզի բանվորներին հանդստացնի և գործադուլային շարժման ծավալման առաջն առնի, կառավարությունը պետք է հրատարակեր ֆաբրիկային հատուկ օրենքներ։ Այդ օրենքներն արգելում էին կապիտալիստների ոգին տուգանումներ անել, բանվորների աշխատավարձն ուշացնել և կամ դա ապրանքով ու կտրոններով վճարել. այդ օրենքների կիրառման վրա հսկելու համար ֆաբրիկային տեսուչներ կարգվեցին։ Այդ օրենքներից ամենակարևորը հրատարակվեց 1886 թ., Որեխովո-Զույևի խոշոր արդյունաբերող Սավվա Մորոզովի մանուֆակտուրայում տեղի ունեցած մեծ գործադուլից մեկ տարի անց։

Գործադուլ արին 8.000 բանվոր։ Գործադուլը ղեկավարում էին բանվորների դործին նվիրված և գործունյա յերկու ջուլհակներ—Պյոտր Մոսյեենկոը (նրան հաճախ կոչում են՝ Մոսյեենկո կամ Մոիսյեենկո) և Վասիլիյ Վոլկովը։ Նախ քան գործադուլ հայտարարելը, այս ղեկավարները, գործողությունների և պահանջների ծրագիրը մշակելու համար յերկու անգամ խորհրդակցություն հրավիրեցին, որին մասնակցում էին քսանական մարդ։

Թեպետ և վոստիկանների ու կոզակների հետ բռնված կռվում բանվորները պարտվեցին և գործադուլը տանուլ տվին, բայց տուգանումներին և կապիտալիստների այլ նեղումներին վերաբերող նրանց պահանջները Ռուսաստանի բոլոր բանվորների համար բավարարվեցին 1886 թ. օրենքով։

Ֆաբրիկային օրենքները—դա 80-ական թվականների գործադուլային շարժման խոշոր հաղթանակն է*)։

1887 թվին սկսվում է արդյունաբերական վերելք. ապրանքները արդեն հեշտությամբ են ծախվում, ավելանում է ֆաբրիկանտների շահույթը և հիմա արդեն անորեն միջոցներով բանվորներին նեղելու նրանք ավելի քիչ էյին դայթակղվում։ Գործադուլների թիվը շատ պակասեց։

Բայց 1891 թ. յերկրում սոսկալի սով առաջացավ. հաջորդ 1892 թիվը նույնպես անբերրի յեր։ Սոված գյուղացիները թողնում էյին իրենց գյուղը և քաղաք էյին շտապում աշխատանք փնտռելու համար։ Կապիտալիստներն, իհարկե, ոգովեցին քաղաք թափված բանվորական ավելորդ ձեռքերից և սկսեցին վատացնել աշխատանքի պայմանները ֆաբրիկներում։

Գործադուլների թիվը նորից ավելանում է, սակայն պայքարի այդպիսի աննպաստ պայմաններում հաղթում էյին, իհարկե, ֆաբրիկանտները։ Այն ամենից, ինչ ասվեց այս գլխում, պարզ է, որ ինտելիգենտ-նարոդնիկներն այլևս չէյին կարող չնկատել բանվոր դասակարգին ու նրա մղած պայքարն իր բանվորական շահերի համար։

Նախկին նարոդնիկների մի մասը ուղղում է իր ուսմունքը.—Զարմանալի չէ, որ հենց այդ ժամանակներն ինտելիգենտների շրջանում սկսում են կազմվել խմբակներ, որոնք սկսել են հայտարարում նարոդնիկների՝ գյուղացիության նկատմամբ ունեցած հայացքը, գյուղացիու-

*) Այդ օրենքների հրատարակմանը նպաստեց նաև այն, որ նրանք ձեռնտու էյին խոշոր կապիտալիստներին, որոնց ձեռնարկությունները լավ էյին կահավորված։

Մանր և յետամնաց ձեռնարկությունները, մանավանդ կրիզիսի միջոցներին առաջվանը և լավ կահավորված ձեռնարկությունների հետ կարող էյին մրցել միայն շահագործման այն միջոցներով, որոնք արգելվում էյին այդ նոր օրենքներով։

թյան, վորպես հիմնական ուժի՝ սոցիալիզմի համար մղվող պայքարում. այդ խմբակները միաժամանակ ճիշտ են գըտնում ուսմունքը գերմանացի մեծ կոմունիստ Կարլ Մարքսի, վոր բանվորների առաջին միջազգային միության ղեկավարն եր, այսինքն՝ Առաջին Ինտերնացիոնալի առաջնորդը։

Ըստ Մարքսի ուսմունքի, վոր կոչվում է մարքսիզմ, սոցիալիզմի համար մղվող պայքարի հիմնական ուժը հանդիսանում է բանվոր դասակարգը, իսկ դյուղացիությունը կարող է լինել միայն պրոլետարիատին ոժանդակող ուժ։

Ահա այդ ուսմունքը հիմա արդեն սկսում է ճանաչել նախկին «չորնոպերեդելցիների» մի մասը, վորոնցից և կազմվում են ռուսական մարքսիստական առաջին խմբակները։ Այդ խմբակները կոչվում են նաև սոցիալ-դեմոկրատական, վորովհետև այն ժամանակ այդպես եյին կոչվում Արևմտյան Եվրոպայի բանվորական կուսակցությունները։

Հենց այդ իսկ խմբակներում էլ առաջ յեկավ հեղափոխական բանվորական կուսակցության իդեան։

«Աշխատանքի Ազատագրման» խմբակը.—Այդ խմբակների մեջ առաջին տեղը, թե ըստ ժամանակագրության և թե ըստ նշանակության, պատկանում է «Աշխատանքի ազատագրման խմբակին», վորը հիմնվեց Շվեյցարիայում 1883 թ., դրանից մի քանի տարի առաջ այնտեղ փախած ռուս հեղափոխականներից, վորոնք առաջ պատկանում եյին «Զորնիյ Պերեդելին»։ Այդ խմբակը մեծ դեր կատարեց։ Դա սկզբում կազմված եր հինգ մարդուց — Պլեխանով, Աքսելրոդ, Վերա Զասուլիչ, Դեյչ և Իգնատով։

Բայց 1884 թ. գարնանը Գերմանիայում ձերբակալվեց Դեյչը, վորն այնտեղ գնացել եր խմբակի անլեգալ հրատարակությունները Ռուսաստան փոխադրելու գործը կազմակերպելու համար։ Գերմանական իշխանությունը

նրան հանձնում է ռուսական կառավարությանը։ Դատի հանձնվելով՝ Դեյչը դատապարտվեց 13 տարվա և 4 ամսվա տաժանակիր աշխատանքի։

Իսկ 1885 թ. մեռնում է Իգնատովը։

Այսպիսով խմբակում մնացին յերեք հոգի, վորոնք սակայն շատ մեծ աշխատանք կատարեցին Ռուսաստանում բանվորական կուսակցություն ստեղծելու համար։ Նրանց ջանքերի շնորհիվ շատ բանվորներ կարողացան ճիշտ հասկացողություն ձեռք բերել այն մասին, թե ինչպիսին պիտի լինի իրենց կուսակցությունը և ինչ նպատակներ նա պիտի ունենա։

Պլեխանովի այնպիսի նշանավոր յերկերը, ինչպիսին են՝ «Սոցիալիզմ և քաղաքական պայքար» ու «Մեր տարաձայնությունները»,—ինչպես նաև ուրիշները, ոգնեցին բանվորներին շատ սխալներից խուսափելու։ «Աշխատանքի ազատագրման խմբակը» իր հրատարակած գրքերում և բրոշյուրներում ապացուցում եր, վոր սոցիալիզմի համար մղվող պայքարի գլխավոր հեղափոխական ուժը հանդիսանում է բանվոր դասակարգը և վոր միայն նա՛ կարող է լինել կոմունիստական շարժման ղեկավարը (այստեղ, ի դեպ նկատենք, վոր այն ժամանակները «կոմունիզմ» և «սոցիալիզմ» բառերը գործ եյին ածվում միևնույն իմաստով)։

Պիտի հասկանալ—գրում եյին նրանք,—վոր սոցիալիզմը բանվոր դասակարգի իդեյան է, և վոչ թե մանր արտադրող-դյուղացու, ինչպես այդ կարծում եյին նարոդնիկները, և այն ժամանակ պարզ կլինի, վոր ռուս սոցիալիստները պիտի պայքարեն քաղաքական ազատության համար և միևնույն ժամանակ հետզհետե նախապատրաստեն բանվորական սոցիալիստական կուսակցության ստեղծումը։

Պիտի պայքարել սոցիալիզմի համար, միաժամանակ պիտի քաղաքական պայքար մղել ինքնակալության դեմ։

«Աշխատանքի ազատագրման խմբակի» խոշոր ծառայությունը նաև այն է, որ նա բանվորական կուսակցության մարքսիստական իդեայի հետ միասին ընդունեց նաև պրոլետարական դիկտատուրայի իդեան, այսինքն ուժեղ, խիստ իշխանություն, որը ռուսական պրոլետարիատը կենսագործեց Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, և որպիսին նա պահպանում է մինչև այսօր։

Այդ միտքը Պլեխանովն արտահայտել է իր «Սոցիալիզմ և քաղաքական պայքար» գրքում։

Բացի այդ, Պլեխանովն առաջին անգամ արտահայտեց բացառիկ կարևորություն ունեցող այն միտքը, որ ինքնակալության դեմ մղվող պայքարում հեղափոխության հաղթանակը հնարավոր կդառնա միայն այն դեպքում, եթե հեղափոխության դեկավարը լինի բանվոր դասակարգը։

Այդ—պրոլետարիատի հեգեմոնիայի (այսինքն՝ դեկավարության) իդեան է՝ բուրժուական հեղափոխության մեջ։

«Հեղափոխական շարժումը Ռուսաստանում կարող է հաղթանակել միայն որպես բանվորության հեղափոխական շարժում։ Մեզանում այլ ելք չկա և չի կարող լինել»—ասաց Պլեխանովը՝ Յերկրորդ Ինտերնացիոնալի առաջին կոնգրեսում արտասանած իր ճառում, 1889 թ. Փարիզում (այսինքն՝ 21 յերկրների սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչների առաջին համագումարում)։

Բլագոյևի խմբակը.— Ռուսաստանի ներսում յեղած մարքսիստական խմբակներից թվենք 1883 թվին Պետերբուրգում հիմնված Բլագոյևի խմբակը, որն իրեն կոչում էր «Ռուսական սոցիալ-դեմոկրատների կուսակցություն»։ Այս խմբակը դեկավարում էին Պետերբուրգի համալսարանի ուսանող բուլղար Բլագոյևը (սա հետագայում

Բուլղարիայի Կոմունիստական կուսակցության գլուխն անցավ և մեռավ միայն մոտիկ անցյալում), Լատիշևը, Բլագոսլավովը, Ֆարիտոնովը և ուրիշները. սրանց մեծ մասը նախկին չորնոպերեդեվցիներ էին։ Խմբակի անդամները աշխատում էին քաղաքում ցրված բանվորական մի շարք կրուժոկներում։

Այս խմբակը Մարքսի ուսմունքն այնպես լավ չէր յուրացրել, ինչպես «Աշխատանքի ազատագրման խմբակը», որը ձգտում էր «Ռուսական սոցիալ-դեմոկրատների կուսակցության» հայացքների սխալ կողմերն ուղղել։ Բլագոյևցիների լրագրում՝ «Ռաբոչիյ»-ում (բանվոր) տպվում էին Պլեխանովի և Աքսելրոդի հոդվածները։

1885 թ. բանտարկվեց և արտասահման աքսորվեց Բլագոյևը, իսկ 1887 թ. խմբակն արդեն դադարեց գոյություն ունենալուց, որովհետև 1885, 1886 և 1887 թ.թ. սկզբին խմբակի ամենագործունյա անդամներից բանտարկվեցին մոտ քառասուն մարդ։

Տոչիսկու ընկերությունը.— Այդ նույն ժամանակները Պետերբուրգում գոյություն ուներ մի փոքրիկ կրուժոկ, որը կոչվում էր «Ս.-Պետերբուրգի արհեստավորների ընկերություն»։ Նրա կազմակերպողը մի ինտելիգենտ էր, որը հետո բանվոր դարձավ—Տոչիսկին։ Տոչիսկու կրուժոկը գոյություն ունեցավ մոտ յերեք տարի։

Բոտանևեվի կազմակերպությունը.—80-ական թվականների վերջին Պետերբուրգում ստեղծվեցին զուտ բանվորական կրուժոկներ՝ վոստիկանության ձեռքով ցաք ու ցրիվ տված Բլագոյևի և Տոչիսկու խմբակների մնացած անդամներից։ Այդ կրուժոկների դեկավարները նույնպես բանվորներ էին, որոնցից առանձնապես աչքի էին

ընկնում Ն. Դ. Բոգդանովը, Ե. Ա. Աֆանասև-Կլիմանովը և Վ. Ա. Շելգունովը։

90-ական թվականների սկզբին Պետերբուրգում կար մոտ 20 բանվորական կրուժոկ։ Այդ կրուժոկները կապված էին 15 հոգուց բաղկացած ինտելիգենտների մի խմբակի հետ, որի գլուխն էին կանգնած Բրուսնևը, Գոլուբևը և Ցիվինսկին։

Բանվորական այդ կրուժոկները ինտելիգենտական կազմակերպության հետ միասին կազմում էին Բրուսնևի կազմակերպությունը։

1891 թ. մի շարք այլ ընկերների հետ միասին Բրուսնևը Մոսկվայում կազմակերպում է մի խմբակ։

Բայց դա յերկար չտևեց։

1892 թ. Բրուսնևի յերկու խմբակներն էլ—Պետերբուրգինը և Մոսկվայինը—ցաք ու ցրիվ յեղան բանտարկությունների հետևանքով։

Պետերբուրգից և Մոսկվայից բացի, 80-ական թվականների վերջերին և 90-ական թվականների սկզբներին իրենց սոցիալ-դեմոկրատական անվանող խմբակներ և կրուժոկներ գոյություն ունեյին Տուլայում, Կիյևում, Նիժնի-Նովգորոդում և ուրիշ քաղաքներում։ Այդ խմբակները կապ էյին պահպանում Մոսկվայի և Պետերբուրգի բրուսնևյան խմբակների հետ։

Ցեզրակացություն.— 80-ական թվականներին և 90-ական թվականների սկզբներին արդեն կար բանվորական կուսակցության ճիշտ ըմբռնում։ Պրոլետարական հեղափոխական կուսակցության իդեյան տարածվում էր բանվորական փոքրաթիվ կրուժոկներում, որոնք կազմակերպվում էյին Ռուսաստանի բոլոր գլխավոր, քաղաքներում, սակայն այդ կրուժոկներն իրար հետ սերտ կապված չէյին։

Սոցիալիզմի իդեյան բանվորական լայն շրջաններում

տարածելու աշխատանք, կամ ինչպես ասում են, մասսայական ագիտացիա դեռ չէր տարվում։

Բացի դրանից, այդ նույն ժամանակամիջոցում ծնունդ առավ ելի մի շատ կարևոր իդեյա, այն է՝ պրոլետարիատի հեգեմոնիայի իդեյան՝ ինքնակալության դեմ մղվող պայքարում։

———

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՎԵԼԸ.

(1894 թ. մինչև 1899 թ.)

Բանվորների դրությունը յեվ նրանց գործադուլները.— 1893 թվի վերջերից Ռուսաստանում սկսվում է վոչ մի յերկրում չտեսնված արդյունաբերական վերելք: Կառուցվում են նոր, հսկայական գործարաններ, յերկաթուղագծեր, ուժգին ավելանում է բանվորական ձեռքերի պահանջը:

Բանվորների՝ իրենց դրությունը բարելավելու նպատակով մղվող պայքարի համար, ստեղծվում են ավելի նպաստավոր պայմաններ, քան առաջ եյին:

Յեվ բանվորները սկսում են պաշտպանողական դրությունից անցնել հարձակման: Նրանց գործադուլները հարձակողական բնույթ են կրում, այսինքն՝ իրենց գործադուլներով բանվորները աշխատում են նոր, ավելի լավ պայմաններ ձեռք բերել:

Այդ գործադուլները մեծ մասամբ հաջողությամբ են վերջանում:

Գործադուլավորների թիվը տարեց-տարի արագ աճում է. 6 տարում (1894-ից մինչև 1899 թիվը) նրանց թիվը հասնում է 451.000-ի:

Այդ ժամանակամիջոցում ամենանշանավոր գործադուլը Պետերբուրգի 30.000 յուլհակների գործադուլն եր,

վոր տեղի ունեցավ 1896 թվին: Գործադուլի հայտարարումից առաջ տեղի ունեցան զանազան ֆաբրիկանների ներկայացուցիչների խորհրդակցություններ և գործադուլն անցավ հանդիստ ու կանոնակերպված: Սոցիալ-դեմոկրատ բանվորները գործադուլին ցույց տվին ակտիվ մասնակցություն, հավաքույթներում հանդես յեկան առանձին ճառերով, գործադուլավորների պահանջները առանձին թերթիկներով հրատարակեց Պետերբուրգի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը, վոր կոչվում եր՝ «Բանվոր դասակարգի ազատագրման համար պայքարող միություն»:

Վոստիկանության ողնությամբ գործադուլը ճնշվեց, սակայն 1897 թ. հունվարին նա նորից սկսվեց և այս անգամ վերջացավ բանվորների մասնակի հաջողությամբ. 13 ժամյա բանվորական որվա փոխարեն ֆաբրիկանտները 11½ ժամյա բանվորական որ սահմանեցին և գնահատումը բարձրացրին 7 տոկոսով:

Նույն տարվա հունիսի 2-ին մի որենք հրատարակվեց, վորի համաձայն սահմանվում եր 11½ ժամյա բանվորական որ, իսկ շաբաթ և նախատոն որերին՝ 10 ժամյա:

Սոց.-դեմոկրատների պայքարը ընդդեմ նարոդնիկական թեորիայի մնացորդների.— Արդյունաբերության և բանվորական շարժման այդպիսի չտեսնված աշխուժացումը այն նշանակությունն ունեցավ, վոր սոցիալ-դեմոկրատական իդեյանները սկսեցին հեղափոխական ինտելիգենցիայի դիտակցությունից դուրս վանել նարոդնիկական թեորիայի մնացորդները:

Հիմա արդեն անհնարին դարձավ հաջողությամբ պաշտպանել նարոդնիկների ունեցած հայացքները՝ Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման վերաբերյալ: Նարոդնիկներն ասում եյին, վոր Ռուսաստանում կապիտալիզմը չի

զարգանա և, հետևաբար, մեզանում բանվորական շարժում չի լինի։

Ինքը կյանքն ապացուցեց նրանց սխալը։ Իսկ 1895 թվին էլ լույս տեսան այնպիսի նշանավոր դրքեր, վորպիսին են Լենինի անլեգալ բրոշյուրը՝ «Ովքեր են ժողովրդի բարեկամները» և ինչպես են նրանք կռվում սոցիալ-դեմոկրատիայի դեմ» և Բելտովի (Պլեխանովի) «Մոնիստական պատմահայեցողության զարգացման շուրջը» դիրքը։

Լենինի գիրքը նշանավոր է նրանով, վոր նրանում յերիտասարդ Իլյիչը ցայտուն գծերով պարզաբանեց պրոլետարիատի հեգեմոնիայի իդեյան ցարիզմի դեմ մղվող պայքարում։

Այդ գրքում Լենինը գրում եր, վոր ռուս բանվորը բոլոր դեմոկրատական տարրերի գլուխն անցնելով կբտապալի աբսոլյուտիզմը (այսինքն՝ ցարական ինքնակալությունը) և պրոլետարիատին կառաջնորդի դեպի հաղթական կոմունիստական հեղափոխություն։

«Լեգալ-մարխիզմ».—Սոցիալ-դեմոկրատները գնդհարվեյին մի նոր գաղափարական թշնամու հետ, վորը շատ ավելի վտանգավոր եր, քան նարոդնիկությունը։

Բանն այն է, վոր նարոդնիկների թեորիայի դեմ իրենց մղած պայքարում սոցիալ-դեմոկրատների համար դաշնակիցներ ճարվեցին, վորոնք իրենց նույնպես Մարքսի ուսմունքի կողմնակիցներ եյին համարում։ Այդ մարդիկ պրոֆեսորներ և բուրժուական գիտնականներ եյին, վորոնք նարոդնիկներին իրենց թշնամի եյին համարում միայն այն պատճառով, վոր նրանք ժխտում եյին կապիտալիզմի զարգացումը։ Նարոդնիկների դեմ գրած իրենց յերկերում այդ գիտնականները նկատում եյին կապիտալիզմի հաջողությունները Ռուսաստանում, ապացուցում, վոր նրա զարգացումն անխուսափելի յե և վոր նույնիսկ բանվորների շահերի տեսակետից չպիտի խանգարել այդ զարգացմանը, քանի վոր այդ ժամանակ բանվորները ավելի շատ եյին տառապում շահագործման հին յեղանակներից, վորոնք կվերացվեն միայն զարգացած կապիտալիզմի որոք. բայց այդ գիտնական-պրոֆեսորները շատ քիչ եյին խոսում կապիտալիզմի անխուսափելի կործանման մասին և այն մասին, վոր նրան փոխարինելու յե սոցիալիզմը. իսկ յերբ նրանք այդ մասին խոսեցին, ապա սկսեցին ապացուցել՝ կապիտալիզմից սոցիալիզմին խաղաղ ճանապարհով անցնելու հնարավորությունը և ժխտել սոցիալիստական հեղափոխության հնարավորությունը։ Մի խոսքով, նրանք վոչ միայն չեյին ցուցահանում, այլև հենց սկզբից ջանում եյին սքողել կապիտալիզմի զարգացման հեղափոխական կողմը, վոր կայանում է նրանում, վոր նա ինքը ստեղծում է պրոլետարիատ, վորը կտապալի կապիտալիստական հասարակակարգը և բոլոր աշխատավորներին կազատի ամեն տեսակի շահագործումից։

Քանի վոր այդ գիտնականների յերկերի հրատարակությունը չեր արգելվում և տպվում եր լեգալ կերպով, ապա նրանք «լեգալ մարքսիստներ» կոչվեցին։

Լենինը միանգամից զգաց այդ դաշնակիցների բուրժուական վոգին և շատ սուր կերպով դուրս յեկավ նրանց դեմ պայքարելու։

Դրանից հետո «լեգալ մարքսիստները» հրապարակով դուրս յեկան Մարքսի հեղափոխական ուսմունքի դեմ և սոցիալ-դեմոկրատների յերդվյալ թշնամիները դարձան։

Նրանց ճաշակին չեր համապատասխանում մանավանդ պրոլետարիատի հեգեմոնիայի իդեյան՝ հեղափոխական շարժման մեջ. նրանք կգերադասեյին տեսնել բանվոր դասակարգին՝ բուրժուազիային յենթարկված, ինչպես այդ տեղի յե ունեցել մյուս յերկրներում՝ բուրժուական հեղափոխությունների ժամանակ։

«Լեգալ մարքսիստների» մեջ ամենից շատ աչքի էին ընկնում Ստրուվեն և Տուգան-Բարանովսկին։

Կրուժոկայնությունից դեպի մասսայական աշխատանքի.—Սոցիալ-դեմոկրատները այդ տարիներին հեղափոխական աշխատանքի նոր ձևերի անցան—կրուժոկային պրոպագանդից (այսինքն՝ կրուժոկներում բանվորների հետ պարապելուց) անցան մասսայական ագիտացիայի (այսինքն՝ սկսեցին սոցիալիստական իդեյանները տարածել բանվորական մասսաների մեջ, բանվորներին կոչ անել՝ կազմակերպվելու, պայքարի պատրաստվելու)։

1894 թ. լույս տեսավ Վ. Իլյինսկու սոցիալ-դեմոկրատների դրած՝ «Ագիտացիայի մասին» բրոշյուրը և արագ տարածվեց բոլոր քաղաքների սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ընդհանուր։

Այդ բրոշյուրը շատ ոգնեց՝ որ բանվորական լայն խավերում ագիտացիայի անցնելը կատարվի բավական արագ։

Կիևի սոցիալ-դեմոկրատներից մեկը մասսայական աշխատանքի ձեռնարկելու անհրաժեշտությունը արտահայտեց հետևյալ կերպ. «ավելի լավ է մասսաներին բարձրացնել մեկ դյույմ, քան մեկ մարդուն՝ յերկրորդ հարկը»։

Մասսաների մեջ նման աշխատանքի ձեռնարկելու շնորհիվ, բանվորական շարժումը սկսում է ձուլվել սոցիալիստականի հետ։

Պետերբուրգի՝ «Բանվոր Դասակարգի Ազատագրման Պայքարի Միության».— Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները այդ ժամանակներն արդեն խիստ լայնացել էին։ 1895 թվին, որինակ, Պետերբուրգի կազմակերպությունն արդեն ուներ շրջանային կոմիտեներ։ Նրա հիմնական կորիզը կազմում էին 17 մարդ՝ Լենինի գլխավորությամբ։ Քաղաքը բաժանված եր յերեք ռայոնի, վորոնցից յուրաքանչյուրի գլուխն կանգնած եր 4—5 ընկերներից կազմված խմբակը։

Ամբողջ աշխատանքը ղեկավարելու համար ընտրված եր բյուրո՝ հինգ մարդուց—Լենին, Կրժիժանովսկիյ, Մարտով, Ստարկով և Վանեև։ 1895 թ. դեկտեմբերին, Լենինի և բյուրոյի բոլոր անդամների (բացի Մարտովից) բանտարկությունից հետո կազմակերպությունը հետևյալ անունն ընդունեց՝ «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միություն»։

Բանվորների շրջանում, վորոնց ոժանդակությամբ այդ խմբակը կատարում եր իր աշխատանքը, հատկապես աչքի էին ընկնում՝ Բաբուշկինը, Շելգունովը, Բորիս Զինովյևը և ուրիշները։

Կուսակցության պատմության մեջ Պետերբուրգի «Պայքարի Միության» նշանակությունը շատ մեծ է։ Ղեկավարվելով ընկ. Լենինի կողմից, նա շուտով լայն աշխատանքի անցավ մասսաների մեջ, և ինչպես մենք արդեն տեսանք, այն ժամանակվա գործադուլային շարժմանը ամենագործոն մասնակցություն ցույց տվեց։

«Պայքարի Միությունը» կապված եր «Աշխատանքի ազատագրման խմբակի» հետ։ Այդ կապը սահմանեց ընկեր Լենինը՝ 1895 թ. ամառը՝ յերբ նա մեկնեց արտասահման։

«Պայքարի Միությունը» ձգտում եր բոլոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները համախմբել համառուսական մասշտաբով։ «Պայքարի միության» կողմից ընկ. Կրուպսկայան 1896 թ. այցելեց մի շարք պրովինցիային կազմակերպությունները, համառուսական լրագիր հիմնելու և համառուսական համագումար հրավիրելու մասին սրանց հետ բանակցելու նպատակով։

Այլ քաղաքների սոցիալ-դեմոկրատական գլխավոր կազմակերպությունները 1897 թվից հետևյալ ընդունում

են՝ «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միություն» անունը։

Առաջին հանագումարը.— 1898 թ. արդեն գոյություն ունեին չորս «Պայքարի Միությունը»— Պետերբուրգում, Մոսկվայում, Կիևում և Եկատերինոսլավում. գոյություն ուներ նույնպես Արևմտյան շրջանի հրեա սոց.-դեմոկրատների մի խոշոր միություն, որը կոչվում էր «Բունդ» (հրեական լեզվով բունդ նշանակում է միություն). բացի այդ, Ռուսաստանի զանազան քաղաքներում կային սոց.-դեմոկրատների ավելի թույլ խմբակներ։

Բոլոր այդ սոցիալ-դեմոկրատական ցիրուցան կազմակերպությունները ձգտում էին միանալ և ամբողջ ՅԵրկրի համար մի ղեկավար կենտրոն ստեղծել, այլ կերպ ասած՝ ստեղծել միասնական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն։ Վերջապես նրանց հաջողվեց այդ անել։ 1898 թվի մարտի 1-ին, Մինսկ քաղաքում կայացավ ամենախոշոր կազմակերպությունների ներկայացուցիչների համագումարը։

Ընդամենը ինը պատգամավոր հավաքվեցին հետևյալ վեց կազմակերպություններից—Պետերբուրգի, Մոսկվայի, Կիևի և Եկատերինոսլավի «Պայքարի միություններից», ինչպես նաև «Բունդի» և «Բանվորական թերթի» կողմից։

«Բանվորական թերթը» լույս էր տեսնում Կիևում, սակայն նա համառուսական լրագիր էր և համագումարի հրավիրման համար ամենից շատ այդ թերթն աշխատեց։ Նա կապվել էր մյուս քաղաքների սոցիալ դեմոկրատական կազմակերպությունների, ինչպես նաև «Աշխատանքի ազատագրման» արտասահմանյան խմբակի հետ։ Ահա թե ինչու այդ թերթը համագումարին առանձին էր ներկայացված Կիևի «Պայքարի Միության» կողմից։

Վեց կազմակերպությունների ներկայացուցիչների այդ համագումարն իրեն հայտարարեց որպես բանվորական կուսակցության առաջին համագումար և կուսակցությանը՝ «Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցություն» անունը տվեց։ Այնուհետև համագումարը ընդունեց մի շարք վորոշումներ, վորոնք վերաբերում են կուսակցության կառուցմանը, այլ կերպ ասած՝ նա մշակեց կուսակցության համառոտ կանոնադրությունը։ Ընտրվեց յերեք ընկերներից կազմված կենտրոնական կոմիտե, իսկ «Բանվորական թերթն» հայտարարվեց կուսակցության կենտրոնական որգան։

Համագումարը ծրագիր չմշակեց. նա վորոշեց առայժմ հրատարակել մանիֆեստ, վորի մեջ ասվելին ապագա ծրագրի մասերը։ Վորոշվեց յերկրորդ համագումարը հրավիրել վեց ամսից հետո։

Համագումարը տևեց յերեք որ (1898 թ. մարտի 1-ից մինչև 3-ը)։

Պատգամավորները դեռ հաղիվ կարողացել էին ցրվել, յերբ ամբողջ Ռուսաստանում մեծ ձերբակալություններ սկսվեցին։ Բանտարկվեցին 500-ից ավելի մարդ, վորոնց թվում՝ առաջին համագումարի բոլոր անդամները, բացի Ռադչենկոյից, վորը շտապեց իրագործել համագումարի վորոշումը Կուսակցության մանիֆեստի մասին։ Այդ մանիֆեստը գրեց մեզ արդեն հայտնի «լեգալ մարքսիստ» Պյոտր Ստրուվեն։

Այդ ժամանակ Ստրուվեն իրեն դեռ համարում էր սոցիալ-դեմոկրատ և նույնիսկ ասում, վոր իր և Պլեխանովի միջև տարաձայնություններ գոյություն չունեն։

Մանիֆեստը կուսակցության վերջնական նպատակը հայտարարում է սոցիալիզմի հաստատումը, այսինքն՝ «այնպիսի հասարակակարգ սահմանելը, ուր մարդը չի կարող մարդուն շահագործել»։

Մոտակա նպատակը հայտարարվում է ինքնակալության տապալումը։

Չնայած վոր շուտով կուսակցությունը սոսկալի չարդի ենթարկվեց, այնուամենայնիվ առաջին համագումարի նշանակությունը մեծ է։

Մանիֆեստը և առաջին համագումարի վորոշումներն իդեալական ամուր դրավումներ էին, վորոնց և վոչ մի ժամադարմ չկարողացավ վոչնչացնել և վորոնց շուրջը նորից սկսվեցին համախմբվել հեղափոխական սոցիալ-դեմոկրատները։

«Եկոնոմիզմը» յեվ նրա դեմ մղվող պայքարի սկիզբը.—Հեղափոխական սոցիալ-դեմոկրատներին առաջին համագումարի մանիֆեստի իդեյաների շուրջն համախմբելու կոչ արեց 1899 թ. ընկ. Լենինը, վորն այդ ժամանակ գտնվում եր Սիբիր աքսորում։ Պետք է հիշել, վոր այդ ժամանակ, այսինքն 90-ական թվականների վերջերին, յերևան յեկան ուրիշ սոցիալ-դեմոկրատներ՝ վոչ հեղափոխական։ Այդ վոչ հեղափոխական սոցիալ-դեմոկրատները կոչվում էին «եկոնոմիստներ»։

Նրանց «եկոնոմիստներ» էին կոչում, վորովհետև նրանք կարծում էին, թե սոցիալ-դեմոկրատները այդ ժամանակ բանվորներին քաղաքական պայքարի չպետք է կոչեին, այլ միայն պիտի ոգնեին բանվորներին եկոնոմիական (տնտեսական) պայքար մղելու։

Սոցիալ-դեմոկրատական կուսակցության համար այդ մի ջոգին դժվար եր բանվորներին ինքնակալության դեմ մղվող պայքարի մեջ գրավել, վորովհետև բանվոր դասակարգին հաջողվում եր գործադուլների միջոցով ստիպելու ֆաբրիկանտներին դիջումներ անելու—բարձրացնել աշխատավարձը և կրճատել բանվորական որը։

Յեվ բանվորները կարծում էին, թե միայն այդպիսի պայքարը իրենց ոգուտ կբերի. նրանք այդ ոգուտը զգում

և վորձով տեսնում էին, իսկ թե ինչ կարող եր նրանց տալ քաղաքական պայքարը—այդ ավելի դժվար եր հասկանալ։

Ինքնակալության դեմ պայքար մղելու իմաստի և անհրաժեշտության պարզաբանման դժվարությունների հանդեպ շատ սոցիալ-դեմոկրատներ թուլացան և լքեցին իրենց դիրքերը։ Մասսաներին առաջնորդելու և նրանց ճանապարհ ցույց տալու փոխարեն, նրանք գերադասում էին իրենք մասսայի յետևից գնալ, նրա պոչից կպչել։ Այդ իմաստով էլ նրանք գրում էին «Ռաբոչայա Միսլ» (բանվորական միտք) իրենց լրագրում.

«Ցանկալի յե այն պայքարը, վոր հնարավոր է, իսկ հնարավոր է այն, վորը տարվում է այս րոպեին»։

Իսկ այն ժամանակ բանվոր դասակարգը պայքարում եր միայն իր տնտեսական պահանջների համար։

Հին-հեղափոխական սոցիալ-դեմոկրատների մեծ մասը գտնվում եր աքսորում և կամ բանտերում, իսկ յերիտասարդները, վորոնք նոր էին մտել սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մեջ, վոչ «ծերերի» փորձն ունեին, և վոչ էլ թեորետիկ լավ պատրաստություն, ուստի և շուտով յենթարկվեցին «եկոնոմիստների» ազդեցությանը։

Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մեծ մասն ընդունեց «եկոնոմիզմի» թեորիան։ Բացի Ռուսաստանում լույս տեսնող «Ռաբոչայա Միսլ» թերթից, արտասահմանում եկոնոմիստներն հրատարակում էին նաև «Ռաբոչեյե Դելո» (բանվորական գործ) հանդեսը, վորը նույն իդեյաներն եր տարածում, բայց ավելի քողարկված ձևով։

«Եկոնոմիզմի» հիմնական միտքն իր արտահայտությունը գտավ «Կրեդո» (նշանակում է «հավատքի սիմվոլ») ծրագրային հոդվածում։

Այդ հոդվածում ասվում է, վոր սոցիալ-դեմոկրատները պիտի ոգնեն բանվորների տնտեսական պայքարին,

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԻԴԵՅԱՅԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՑՈՒՄԸ ԿՅԱՆՔՈՒՄ.

(1900 թ. մինչև 1903 թ.)

Բանվորների դրությունը յեվ նրանց պայքարը.— Դեռ 1897 թ. ընկ. Լենինն իր «Ռուս. սոցիալ-դեմոկրատների անելիքները» հոդվածում նախատեսում եր, վոր ռուսական արդյունաբերության չտեսնված ծաղկումը շուտով կրիզիսի պիտի փոխարկվի և վոր այն ժամանակ բանվորների տրամադրությունը կփոխվի, քանի վոր նրանք իրենց սեփական փորձով կտեսնեն, վոր առանց քաղաքական պայքարի, մենակ տնտեսական գործադուլներով չի կարելի իրենց դրությունը հաստատ կերպով բարելավել։

Իրականությունը ցույց տվեց, վոր ընկ. Լենինը ճիշտ եր։ Արդյունաբերական վերելքը կրիզիսի փոխվեց։ 1900 թ. մինչև 1903 թ. մոտ յերկու և կես հազար արդյունաբերական ձեռնարկություններ՝ 110.000 բանվորներով՝ դադարեցին աշխատելուց։ Իսկ այն ֆաբրիկաներն ու գործարանները, վորոնք չփակվեցին, մեծ չափով կրճատեցին իրենց արտադրությունը և հազարավոր բանվորների ճանապարհ դրին։ Որինակի համար, Պետերբուրգում, Պուտիլովյան գործարանում 1898 թ. կար 12 հազար բանվոր, իսկ 1902 թ. մնաց միայն 8 հազար։

Յերկաթուղագծերի կառուցումը համարյա բոլորովին կանգ առավ։

քայց չպետք ե ինքնուրույն քաղաքական պայքար մղեն, այլ միայն մասնակցեն այն պայքարին, վոր կմղի բուրժուազիան։ Այդ նշանակում ե, վոր նրանք դեմ չեյին քաղաքական պայքարին, միայն թե այդ պայքարի ղեկավարությունը (հեգեմոնիան), նրանց կարծիքով, պիտի պատկանի բուրժուազիային։

Իլյիչը «Կրեդո»-ի ծրագիրը «լիբերալ-բուրժուական» անվանեց, իսկ «եկոնոմիզմի» եյությունը բնորոշեց հետևյալ խոսքերով. «բանվորներին՝ տնտեսական, լիբերալներին — քաղաքական պայքար»։ (Լիբերալ կոչվում ե նա, ով բուրժուական իրավակարգում չափավոր քաղաքական ազատության կողմնակից ե, բայց սոցիալիզմի և պրոլետարական հեղափոխության թշնամի)։ Այլ կերպ ասած, «եկոնոմիստներն» ևս, «լեգալ մարքսիստների» նման, պրոլետարիատի հեգեմոնիայի իդեյային դեմ եյին։

Իսկ քանի վոր «եկոնոմիզմի» իդեյաները կողմնակիցներ գտան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների շրջանում, ուստի այդ իդեյայի վտանգն սկսեց շատ ավելի լուրջ դառնալ։ Ահա թե ինչու «եկոնոմիզմի» վրա շատ սուր կերպով հարձակվեցին Պլեխանովը արտասահմանից և Լենինը՝ աքսորի վայրից։

Յեզրակացություն.— Բանվորական կուսակցության իդեյան իրականություն դարձավ կուսակցության առաջին համագումարում։

Բայց ցարական կառավարությունը նորածին կուսակցությանն ահարկու հարված հասցրեց, վորից նա շուտով չեր, վոր վոտքի կանգնեց։

Յարիզմի դեմ մղվող պայքարում պրոլետարիատի հեգեմոնիայի իդեյան դեռ վերջնականապես չամրացած, մեծ վտանգի առաջ կանգնեց։ Այդ վտանգը նրան ներսից եր սպառնում.— սոցիալ-դեմոկրատների մի մասը դուրս յեկավ վոր վարակված են բուրժուական աղեցությամբ։

Աշխատավարձն ուժեղ կերպով իջավ, տեղ-տեղ յերկու և նույնիսկ ավելի անգամ։ Ֆաբրիկանտները դադարեցին կիրառել 11½ ժամյա բանվորական որվա որենքը և սկսեցին ստիպել բանվորներին շատ ավելի յերկար աշխատելու։

«Կառավարչության հայեցողությամբ» նորից սկսեցին աշխատավարձից զանազան գումարներ պեղչել և նույնիսկ աշխատավարձն ապրանքով վճարել։

Կրիզիսի սկզբին գործադուլների քանակը խիստ կըրճատվեց, բայց հետագայում արագ ավելանալ սկսեց և այս անգամ արդեն գործադուլները սկսում են քաղաքական բնույթ կրել։

Բանվորները վողոց եյին դուրս գալիս, ցույցեր կազմակերպում, վորոնք հաճախ իսկական կռվի եյին վերածվում վոստիկանության ու պինվորների հետ։ Այսպես, որինակ, 1901 թ. մայիսի 7-ին Պետերբուրգի բանվորները կոզակների և վոստիկանների հետ բռնված կըռվում կարողացան 9 ժամ շարունակ դիմադրել. այս դեպքն «Ոբուխովի պաշտպանություն» անունը ստացավ։

1902 թ. նոյեմբերին սկսվեց Ռոստովի հռչակավոր գործադուլը, վորն արագ կերպով համարյա ընդհանուր գործադուլ դարձավ։ Բացօդյա բազմամարդ ժողովներ եյին տեղի ունենում, վորտեղ սոցիալ-դեմոկրատները ճառեր եյին արտասանում և իրենց թերթիկները տարածում։

1903 թ. ամառը բռնկեց Հարավ-Ռուսաստանի և Կովկասի ընդհանուր գործադուլը, վորին մասնակցում եյին Ոդեսայից մինչև Բագու ընկած զանազան քաղաքներից մոտ 225.000 բանվորներ։

Ռոստովի՝ 1902 թվի և ամբողջ հարավի՝ 1903 թվի գործադուլները, ընդհանուր գործադուլի անդրանիկ փորձն եյին հանդիսանում, 1905 թ. հոկտեմբերյան համառուսական ընդհանուր գործադուլի նախապատրաստումը։

Զարժումն ազգաբնակության այլ խավերի մեջ.— Բայց այդ ժամանակ միայն բանվոր դասակարգը չեր, վոր պայքարի յելավ։

Ուժեղացել եյին գյուղացիական հուզումները։ Նրանք ուժեղ թափ ստացան մասնավորապես 1902 թ. գարնանը։ Նրանք դեռ քաղաքական բնույթ չունեյին, սակայն նրանց արագ աճումը լավ բան չեր նախագուշակում ինքնակալության համար։ Գյուղացիական շարժման արագ աճման պատկերը տալիս են հետևյալ թվերը. հինգ տարվա ընթացքում 1890 մինչև 1895 թ., գյուղացիական խլրտումներ նկատված են միայն ութ նահանգում, հետևյալ հինգ տարում—1896 թվից մինչև 1900 թիվը այդ խլրտումներն ընդգրկեցին Յեվրոպական Ռուսաստանի արդեն 42 նահանգները։

Քաղաքներում սրվել եյին ուսանողական «անկարգությունները»։ Վաղուց և ինչ ուսանողություններ, սակայն նրա շարժումը քաղաքական չեր։ Հիմա արդեն, 1900 թ. սկզբին, բարձրագույն դպրոցների ուսանողությունը այլևս չեր սահմանափակվում իր դպրոցների համար ազատ կարգեր և ուսանողական կազմակերպությունների համար իրավունքներ ստանալու պահանջով։ Ուսանողությունը քաղաքական պահանջներ է առաջադրում, պայքարը փողոց է փոխադրում, ուր կարմիր դրոշակներով ու հեղափոխական յերգերով ցույցեր են կազմակերպում։ Այդ ցույցերն անցնում են «կորչի ինքնակալությունը» ընդհանուր լոզունգի տակ։

«Իսկրան» յեվ Լենինի «Ինչ անել» բրոշյուրը «նկռնամիզի» դեմ մղվող պայքարում.— Լենինն իր՝ «Ռուս սոցիալ-դեմոկրատների անելիքները» բրոշյուրում գրում եր, վոր սոցիալ-դեմոկրատները պիտի հոգան այն մասին, վորպեսզի ռուս բանվոր դասակարգն ընդունակ լինի գլխա-

վորելու ցարական ինքնակալության դեմ տեղի ունեցող շարժումը։

Բայց վորպեսզի սոց.-դեմոկրատները կարողանան իրագործել այդ խնդիրը, անհրաժեշտ եր ամենից առաջ կըռվել «եկոնոմիստների» դեմ, վորոնք խանգարում եյին պրոլետարիատին՝ մոտեցող հեղափոխության մեջ իր դեկավար դերն ըմբռնելու։

1900 թվին, Լենինը մի քանի այլ սոցիալ-դեմոկրատների հետ միասին վերադարձավ աքսորից, և նրա առաջին գործը յեղավ՝ կուսակցության վերականգնման աշխատանքը և կուսակցության զոռումը՝ «եկոնոմիզմի» բուրժուական իդեալներից։ Դրա համար նախ և առաջ անհրաժեշտ եր ստեղծել համառուսական սոցիալ-դեմոկրատական թերթ, վորը պայքարեր «եկոնոմիստների» դեմ, հեղափոխական թեորիայի շուրջը համախմբեր սոցիալ-դեմոկրատական ցիրուցան յեղած կազմակերպությունները և այդպիսով նախապատրաստեր կուսակցության նոր համագումարը։

Նույն՝ 1900 թվի դեկտեմբերին լույս տեսավ այդպիսի լրագրի առաջին համարը։ Դա հրատարակվում եր արտասահմանում և կոչվում եր «Իսկրա»։ Լրագրի խմբագրությունը կազմում եյին վեց հոգի, յերեքն՝ «Աշխատանքի Ազատագրման» խմբակից (Պլեխանով, Աքսելրոդ և Վերա Զասուլիչ) և յերեքն էլ Պետերբուրգի նախկին «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միությունից» (Լենին, Մարտով և Պոտրեսով)։ «Իսկրան» սկզբում անհյուրընկալ ընդունելություն գտավ «եկոնոմիզմով» վարակված կազմակերպությունների կողմից, սակայն կարճ ժամանակից նա շարքային սոցիալ-դեմոկրատների և բանվորների շրջանում շատ կողմնակիցներ ունեցավ և «եկոնոմիստների» ազդեցությունը սկսեց թուլանալ։ Մանավանդ ուժեղ հարված հասցրեց «եկոնո-

միստներին» Լենինի «Ի՞նչ անել» բրոշյուրը, վոր լույս տեսավ 1902 թ. սկզբին։

Այդ բրոշյուրը մանրամասնորեն հիմնավորում է այն մտքերը, վորոնք Լենինը համառոտ արտահայտել եր «Իսկրայում»։ Նա բրոշյուրում ցույց եր տվել ամբողջ վնասակարությունը «եկոնոմիզմի», վորն ուզում է, վոր ռուսական բանվորական շարժումը զարգանա այնպես, ինչպես Անգլիայում։ Անգլիայում բանվորները «տերերի ու կառավարության դեմ միայն անտեսական» պայքար եյին մղում, այսինքն ձգտում եյին բարելավել իրենց աշխատանքի պայմանները՝ կապիտալիստական հասարակակարգում, բայց այդ հասարակակարգի տապալմանը և նրան կոմունիստականով փոխարինելու նպատակը չեյին հետապնդում։ Այսպիսի պայքարը միայն ձեռնտու յե բուրժուազիային։ Ուրեմն «եկոնոմիստներն» աշխատում են հոգուտ բուրժուազիայի, առանց այդ գիտակցելու։ Ուրեմն Անհրաժեշտ է նրանց դեմ իդեյական անողոք պայքար մղել։

Լենինի այդ գիրքը խոշոր ազդեցություն ունեցավ սոցիալ-դեմոկրատ բանվորների վրա և «Իսկրայի» իդեյաները (Ռուսաստանում կոչում եյին «Լենինյան Իսկրա») շուտով տիրապետել սկսեցին կուսակցական կազմակերպությունների շրջանում։

«Իսկրան» յեվ ղիրեկտիվները.—«Եկոնոմիստների» դեմ կատաղի պայքար տանելով, «Իսկրան» միաժամանակ արձագանքում եր յերկրի քաղաքական կյանքի բոլոր յերեվույթներին։

Պարզ է, վոր նա մեծ ուշադրություն եր դարձնում բուրժուական և մանր բուրժուական կուսակցությունների ձևավորման վրա, վոր սկսվեց «Իսկրայի» յերևան գալուց քիչ անց։

1902 թվին ամառը արտասահմանում հրատարակվել սկսվեց «Ազատագրություն» հանդեսը։

Խոշոր և մինչին բուրժուազիայի առաջավոր տարրերի որգանն եր այդ հանդեսը։ Հանդեսի խմբագիրը մեզ ծանոթ Պյոտր Ստրուվեն եր, վորն այդ ժամանակ «լեգալ մարքսիստից» արդեն դարձել եր անլեգալ լիբերալ։

«Իսկրան» դիմակազերծ եր անում ռուս լիբերալների հակահեղափոխական էությունը, վորոնց ծրագիրը իրենից ներկայացնում եր չափից դուրս սահմանափակ պահանջներ, ավելի ճիշտ՝ ցանկություններ՝ դեմստվոներից և խոշոր քաղաքներից «վոչ դասային ժողովրդական ներկայացուցչություն» հրավիրելու։

Այլ կերպ ասած, լիբերալները ուզում էին, վոր խոշոր կալվածատեր - ճորտատերերի կառավարությունը, վորպեսին հանդիսանում եր ինքնակալությունը, բուրժուազիայի հետ բաժանի իշխանությունը։

Բայց քանի վոր «ազատագրականները» հենց սկզբից իրենց հայտարարեցին «հակառակորդներ ամեն տեսակի բռնության, վորտեղից էլ վոր նա ծայր առնի, վերևից, թե ներքևից», ապա դրանով նրանք հանդես բերին միայն իրենց վախը հեղափոխությունից և նրա վերաբերմամբ ունեցած թշնամությունը։ «Իսկրայի» կարծիքով նրանց ծրագիրն ըստ էության կառավարությանը առաջադրվող մի պայման է, վորի հիման վրա լիբերալ բուրժուազիան համաձայն կլինի ոժանդակել կառավարությանը, հեղափոխության դեմ նրա մղած կռվում։

«Իսկրան» յեվ եսերները.—1901 թվի վերջին ձևավորվեց նաև մանր-բուրժուազիայի կուսակցությունը, վորը «սոցիալիստ-հեղափոխականների կուսակցություն» անունն ընդունեց, կամ կրճատ՝ «եսերների»։ Նա կազմվեց իրար մերձավոր հինգ կազմակերպությունների միացումից, վո-

րոնք առաջ էին յեկել արտասահմանում և Ռուսաստանում՝ 1899—1901 թ. ժամանակաընթացքում։

Այդ կուսակցության թեորիան իրենից ներկայացնում եր հին նարոդնիկական պատրանքների (որինակ, ռուս գյուղացիության սոցիալիստական բնույթի մասին) և՝ դասակարգային պայքարի նկատմամբ՝ մարքսիստական ազավաղված հայացքների մի խառնուրդ։

Կապիտալիստների դասակարգին նա հակադրում եր վոչ թե պրոլետարիատին, այսինքն վարձու բանվորների դասակարգը, այլ «բոլոր աշխատավորների» միասնական դասակարգը, վորի մեջ նա առանց խտրության մուծում եր բոլոր գյուղացիներին, բոլոր բանվորներին և բոլոր ինտելիգենտներին։ Այլ կերպ ասած, եսերները թե իրենց պահանջներում և թե կազմակերպչորեն, վորպես մի ամբողջություն, համախմբում էին բնակչության մանր-բուրժուական տարրերն ու պրոլետարիատը։

«Իսկրան», իհարկե, սուր կերպով եր հանդես գալիս՝ դիմակազերծ անելով այդ կուսակցության մանր-բուրժուական էությունը, ապացուցելով, վոր նրա սոցիալիստական ֆրազայի տակ թագնված է մանր սեփականատերերի շահերը պաշտպանելու համար պրոլետարիատին ոգտագործելու ձգտումը։

Եսերների ուժմունքը բանվոր դասակարգի վրա բուրժուական ազդեցությունը տարածելու լայն հնարավորություն եր ստեղծում, քանի վոր այդ ազդեցությունը գլխավորապես մանր-բուրժուազիայի միջոցով և անցնում պրոլետարական մասսաներին։

«Իսկրան» պայքարում եր այդ կուսակցության նաև տեռորի վերաբերմամբ ունեցած հայացքների հետ, ապացուցելով, վոր տեռորի ճանաչումը, վորպես պայքարի և ագիտացիայի մեթոդի, խանգարում է ժողովրդական մասաների ինքնագործնեության զարգացմանը։

Միաժամանակ «Իսկրան» ինայտ եր բերում եսեր-ների անհետևողականությունը նաև վորպես բուրժուական դեմոկրատների, և իր քննադատությամբ աշխատում եր նրանց ազատել լիբերալների ազդեցությունից։

Զուբատովշչինա.—Անհրաժեշտ է այն ժամանակվա ռուսական քաղաքական կյանքի մի այլ հետաքրքիր յերևույթ ևս հիշել, վորի վրա չեր կարող «Իսկրան» ուշադրություն չդարձնել։

Հասարակության բոլոր դասակարգերի անբավականության աճումը նկատելով, ինքնակալությունը վորոշում է փորձ անել՝ բանվոր դասակարգի կողմից ոժանդակություն գտնելու։

Այդ իդեյան իրագործողը—կառավարության գլխավոր գործակալը՝ Մոսկվայի ախրանկայի նշանավոր պետ Զուբատովն եր, վորը «վոստիկանական սոցիալիզմի» մի ամբողջ թեորիա յեր մշակել, վոր «զուբատովշչինա» անունը ստացավ։

Ըստ այդ թեորիայի, ինքնակալությունը ներկայացվում եր կառավարչության ամենալավ ձևը, քանի վոր նա միայն արդարության-ճշմարտության շահերով և ղեկավարվում և նրա համար թանգ են բոլոր դասակարգերի շահերը։ Դրա համար էլ, բանվորների վատթար դրությունը տեսնելով, ինքնակալությունը նրանց ոգնության և հասնում, պաշտպանում է նրանց շարժումը, վորի նպատակն է բարելավել բանվորների կյանքի ու աշխատանքի պայմանները։

Այդ ապացուցելու համար, Զուբատովն ու նրա դործակալները ամենատարբեր արդյունաբերական կենտրոններում պաշտպանում եյին բանվորների տնտեսական դործադուլները և յերբեմն էլ իրենք եյին այդպիսին կազմակերպում։

Բանվորության գործադուլային շարժմանը գուտ տընտեսական պայքարի ուղղություն տալ և պրոլետարիատին յետ պահել քաղաքական պայքարից—ահա զուբատովշչինայի հիմնական իդեյան։

«Իսկրան» առիթ բաց չեր թողնում այդ իդեյայի և «եկոնոմիզմի» իդեյաների ակնհայտ կապակցությունը ցույց տալու։ Իհարկե «եկոնոմիստներն» ինքնակալությանը պաշտպանելու մտադրություն չունեյին, բայց իրականում նրանց թեորիան ու պրակտիկան հեշտացնում եր Զուբատովի գործնեյությունը, վորը ինքնակալությանը պաշտպանելու նպատակն եր հետապնդում։

Այսպիսով «եկոնոմիստների» սխալի վնասակարությունն ավելի ակնհայտ է դառնում։ Յեվ ավելի քան ակնհայտ է դառնում նրանց հետ պայքարելու անհրաժեշտությունը։

«Իսկրայի» այդ ամբողջ գործնեյությունը,—վորի մեջ գլխավոր ղեկավարող դերը կատարում եր ընկ. Լենինը,—սոց.-դեմոկրատական կազմակերպությունների իդեյական համախմբումը նախապատրաստեց, իսկ այդ վերջինն իր հերթին հեշտացնում եր «Իսկրայի» կատարած աշխատանքը՝ կուսակցությունը կազմակերպչորեն համախմբելու ուղղությամբ։

Յերկրորդ համագումարը.—1903 թ. ամառը կայացավ յերկրորդ համագումարը։ Նա իր աշխատանքները սկսեց Բելգիայի մայրաքաղաք Բրյուսելում, իսկ հետո փոխադրվեց Լոնդոն։

Այդ համագումարին 26 կազմակերպություններից ներկա եյին 42 ներկայացուցիչ, վորից 8-ը՝ «եկոնոմիզմի» կողմնակիցներ եյին։ Համագումարը 37 նիստ ունեցավ, և հակայական աշխատանք կատարեց. նա ընդունեց կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը և մի

շարք այլ բանաձևերով ամենակարևոր և դժվարին հարցերին պատասխան տվեց։

Կուսակցության ծրագիրը.—Ծրագիրը նախապես մշակել էր «Իսկրայի» խմբագրությունը։ Ընչին փոփոխություններով համագումարն այն հաստատեց։

Ծրագիրն սկսվում էր սոցիալ-դեմոկրատական կուսակցության ուսմունքի հիմնական մաքերի շարադրությամբ և բաժանվում յերկու մասի. ծրագիր-մաքսիմումի և ծրագիր-մինիմումի։

«Մաքսիմում» խոսքը նշանակում է առավելագույն— ամենից շատ, ուրեմն ծրագիր-մաքսիմումը պիտի պարունակի իր մեջ կուսակցության առավելագույն պահանջը, այսինքն դրա մեջ կուսակցությունն արտահայտում է իր վերջնական նպատակը։

Ինչպես առաջին համագումարի մանիֆեստում, այնպես էլ յերկրորդ համագումարի կողմից ընդունված ծրագրում վերջնական նպատակ է հայտարարվում՝ պրոլետարական հեղափոխության միջոցով սոցիալիստական կարգերին հասնելը, միայն հիմա— հակառակ «եկոնոմիստներին» առարկության,— ավելացնում է, վոր սոցիալիզմի հաղթանակի համար անհրաժեշտ է պրոլետարիատի դիկտատուրա։

Ծրագիր-մինիմումը թվում է կուսակցության մոտակա պահանջները, վոր հնարավոր եր իրագործել այն ժամանակները։

Իր հերթին ծրագիր-մինիմումը բաժանված եր յերեք մասի. քաղաքական, բանվորական և ագրարային։

Քաղաքական մասի գլխավոր պահանջն եր՝ դեմոկրատական հանրապետության հիմնավորումը։

Ծրագիր-մինիմումի բանվորական մասի կարևորագույն պահանջը՝ բանվորական որվա սահմանափակումն եր 8 ժամով։

Ծրագրի ագրարային մասում, այսինքն՝ գյուղացիությանը և նրա հողաշինարարությանը վերաբերող մասում (ագրարային բառը նշանակում է հողային) կուսակցությունն առաջադրում է մի շարք պահանջներ, վորոնց նպատակը ճորտատիրական կարգերի բոլոր մնացորդների վերացումն եր։ Կուսակցությունը ամբողջ հողը գյուղացիությանը հանձնելու պահանջ դեռ չեր առաջադրում, այլ պահանջում եր, վոր նրան հանձնվին այսպես կոչված 1861 թ. «ազատագրման» միջոցին նրանից խլված հողերը։

Սրանն 1905 թվին, յերրորդ համագումարում, ծրագրի այդ մասը լրացվում է հատուկ բանաձևով, վորի մեջ կուսակցությունը հայտարարում է, վոր ինքը կպաշտպանի գյուղացիության պահանջը— ամբողջ հողը գյուղացիությանը հանձնելու պահանջը։

Յեզրափակման մասում ասվում է, վոր ծրագիր-մինիմումը կարող է իրագործվել «միայն ինքնակալության տապալումով և հիմնադիր ժողովի գումարումով»։

Տարաձայնություններն ակիզբն «իսկրայականների» միջեվ.—Ծրագրի հարցը համագումարը բավականին համերաշխ լուծեց. սակայն այդպես չեր կանոնադրության և մի քանի այլ հարցերի վերաբերմամբ։

Դուրս յեկավ, վոր «Իսկրայի» կողմնակիցների միջև էս տարաձայնություն գոյություն ունի. այդ տարաձայնությունները հետագայում այնքան խոշոր դուրս յեկան, վոր կուսակցությունը պառակտվելով բաժանվեց յերկու մասի, կամ ինչպես ասում են՝ յերկու ֆրակցիայի. կուսակցության մի մասը, վոր իր շուրջը համախմբեց կազմակերպությունների մեծ մասը— «բոլշևիկների ֆրակցիա» կոչումը ստացավ, իսկ մյուսը, վոր իր կողմն ուներ փոքրամասնությանը—«մենշևիկների ֆրակցիա» կոչվեց։

Յերկրորդ համագումարում այդ տարաձայնություն-

նները դեռ նոր նշմարվեցին և վիճաբանությունների տեղիք տվին գլխավորապես կանոնադրության առաջին կետի առթիվ, ինչպես նաև դեպի լիբերալները ունենալիք վերաբերմունքի մասին հանած բանաձևի առթիվ։

Այդ տարաձայնությունների էությունն այն եր, որ ապագա մենշևիկներն արդեն յերկրորդ համագումարում հող էին պատրաստում՝ հետագայում բուրժուազիայի հետ համաձայնություններ կայացնելու համար, այն բուրժուազիայի, որին նրանք ինքնակալության դեմ ուղղված հեղափոխության մեջ անհրաժեշտ ուժ էին համարում։

Սակայն այդ մասին մենք կխոսենք հետևյալ դրույցում, վորտեղ մանրամասնորեն կպարզենք «իսկրայականների», այսինքն «Իսկրայի» կողմնակիցների միջև յեղած տարաձայնությունների էությունը։

Յեզրակացություն.— Պրոլետարական հեղափոխական կուսակցության իդեյան լիովին իրագործվեց։

Յերկրորդ համագումարն ընդունեց կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը և այդպիսով ավարտեց կուսակցության կազմության շրջանը։

Կուսակցությունը հաջողությամբ յեռ մղեց «եկոնոմիստների» կողմից պրոլետարիատի հեգեմոնիայի իդեայային սպառնացող վտանգը, բայց յերկրորդ համագումարում «իսկրայականների» միջև ծագած տարաձայնությունների տակ թագնված եր նոր սպառնալիք՝ այդ իդեայի դեմ։

ՊԱՅՔԱՐ — ՀՈԳՈՒՏ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԵԳԵՄՈՆԻԱՅԻ, ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ (1905 — 1907 Թ.)

1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՈՒՄԸ.

Ի՞նչպիսի կանոնադրություն եր պետք կուսակցությանը.—*Վերջին զրույցից մենք գիտենք, վոր «Իսկրայի» կողմնակիցները յերկրորդ համագումարում մեծամասնություն կազմեցին։*

Սկզբում նրանք համերաշխ եյին գործում և համարյա բոլոր հարցերի քվեարկության միջոցին իրենց կողմն եյին դրավում տատանվողների մեծ մասին։

Իսկ յերբ սկսեցին քննել կուսակցության կանոնադրությունը, ապա պարզվեց, վոր հենց իրենց՝ «իսկրայականների» միջև լիակատար համաձայնություն չկար այն հարցի մասին, թե ինչպես պիտի կառուցել հեղափոխական բանվորական կուսակցությունը։

Ընկ. Լենինը պնդում եր, վոր պիտի կառուցել համերաշխ, լավ միաձուլված և խիստ դիսցիպլինայով կուսակցություն, իսկ դրա համար կուսակցության մեջ պիտի ընդունել միայն նրանց, ովքեր շարունակ աշխատում են կուսակցական վորևե կազմակերպության մեջ, և վոչ թե միայն նրանց, ովքեր յերբեմն են ոգնում կամ ժամանակ առ ժամանակ են վորոշ ծառայություն ցույց տալիս։ Կան

մարդկանց այնպիսի խմբեր, որոնք համակրում են կուսակցությանը, ընդունում են նրա ծրագիրն և դրամական մուծումներով ոժանդակում նրան, սակայն սիրտ չեն անում իրենց ամբողջապես կուսակցության հետ կապել: Դրանք գլխավորապես բուրժուական ինտելլիգենցիայի շրջանից դուրս եկածներն են,—ուսանողներ, պրոֆեսորներ, գրողներ և նման մարդիկ: Աքսելրոդն առաջարկում եր սրանց նույնպես ընդունել կուսակցության մեջ: Նրանց, իհարկե, պետք է ոգտագործել, ասում եր ընկ. Լենինը, նրանցից կուսակցությանը հարող խմբակներ կազմել, բայց չթողնել կուսակցության մեջ մտնել այնքան ժամանակ, քանի դեռ նրանք չեն ազատվի դիսցիպլինայի և կուսակցական կազմակերպության անդամի մշտական պարտականությունները տանելու նկատմամբ իրենց ունեցած վախից:

Կուսակցությունը — դասակարգի մի մասն է միայն.—Դիսցիպլինան բանվորների համար սոսկալի չե. նրանց համար պետք է դյուրացնել կուսակցության մեջ մտնելը, բայց և այնպես, չպետք է «ամեն մի գործադուլավորի» կուսակցության մեջ առնել, ինչպես այդ առաջարկում եր Մարտովը: Գործադուլի մասնակցողներից բոլորը չե, որ հեղափոխականներ են, վոչ բոլոր գործադուլավորներն են արդեն հասկացել, թե ինչպես պիտի պայքարել բանվոր դասակարգի ազատագրության համար: Զե վոր դեռ 1905 թ., այսինքն յերկրորդ համագումարից յերկու տարի անց, Պետերբուրգի գործադուլավորները ցարի մոտ գնացին, նրանից պաշտպանություն խնդրելու:

Սոցիալ-դեմոկրատները պիտի ոգնեն բանվորներին՝ ամենալայն կազմակերպություններ ստեղծելու համար.—պրոֆմիություններ, կոոպերատիվներ, գործադուլային կոմիտեներ և դրամարկղներ: Սոցիալ-դեմոկրատները պիտի աշխատեն, որ այդ կազմակերպություններն ինչքան կարելի յե շատ բանվորներ ընդգրկեն, նրանց հետ ավելի սերտ կապվեն, իրենց իդեյաները նրանց մեջ անցկացնեն, սակայն այդ կազմակերպությունները չեն կարող ղեկավարել ամբողջ բանվորական շարժումը:

Բանվոր դասակարգի պայքարը ղեկավարել կարող է նույն այդ դասակարգի մի փոքրիկ՝ ամենից գիտակից, զարգացած ու վճռական բանվորներից կազմված մասը:

Հենց այդպիսի բանվորներն էլ կազմում են կուսակցությունը և կանգնում ամբողջ պրոլետարիատի գլուխ:

Չի կարելի բանվոր դասակարգի հեղափոխական կուսակցություն կառուցել, յեթե նրա մեջ անարգել կերպով մուտք գործեն ամեն մի գործադուլավոր, պրոֆմիության կամ կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ:

Ինչ է ոպպորտյունիզմը.—Այդպես են կառուցված, որինակ՝ Անգլիայի և Բելգիայի բանվորական կազմակերպությունները, և փորձն արդեն ցույց է տվել, որ այդպիսի բանվորական կուսակցությունները բուրժուազիայի սանձն են ընկնում և այդ նույն ճանապարհով իրենց հետևից տանում են այդ յերկրների ամբողջ բանվոր դասակարգը:

Նրանք կապիտալիզմի տապալման համար չեն պայքարում, այլ սահմանափակվում են միայն նրանով, որ բուրժուազիայից փոքրիկ զիջումներ են կորզում:

Նրանք—սոցիալական ռեֆորմների կուսակցություններն են, նրանք ձգտում են լոկ մասնակի բարելավումների՝ բուրժուազիայի հետ համաձայնություններ կնքելով, ընդամին պահպանելով բուրժուական կարգերը:

Ահա թե ինչու այդպիսի բանվորական կուսակցությունները կոչվում են ռեֆորմիստական կամ համաձայ-

նական, նույնպես և ոպպորտյունիստական։ Ոպպորտյունիստ անվանում են նրան, ով համաձայնվում է հրաժարվել ապագայի իր գլխավոր նպատակից, վորպեսզի հիմա և յեթե մի փոքրիկ գիջում, մի փոքրիկ ռեֆորմ ստանա։ Իսկ այն թեորիան, վոր բանվորներին սովորեցնում է այդպես վարվել, կոչվում է ոպպորտյունիզմ։

Ինչու Լենինը մենշեվիկներին ոպպորտյունիստներ կոչեց.—Բանի վոր յերկրորդ համագումարում Մարտովի, Աքսելրոդի և «իսկրայականների» մի մասի կողմից պաշտպանված ու համագումարի կողմից ընդունված կանոնադրության առաջին կետը վտանգ էր ստեղծում, վոր Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը կարող է անգլիական կամ բելգիական բանվորական կուսակցությունների տիպով կառուցվել և դառնալ ոպպորտյունիստական (համաձայնական) և վոչ թե հեղափոխական,—ապա ընկ. Լենինը այդպիսի կանոնադրության կողմնակիցներին իրավացիորեն կոչեց ոպպորտյունիստներ՝ կազմակերպչական հարցերում, և նրանց դեմ համառ պայքար տարավ։

Դեպի ոպպորտյունիզմ արած այդ առաջին քայլին՝ համագումարից հետո հետևեցին նորերը՝ շատ ավելի լուրջ քայլեր, և այս անգամ արդեն վոչ միայն կուսակցության կառուցման հարցի շուրջը, այլև այն հարցերի մասին, թե ինչպես պիտի գործել հեղափոխության մեջ, այսինքն՝ տակտիկայի հարցի շուրջը։ Ահա թե ինչու պառակտումը շուտով անխուսափելի դարձավ։

Կենտրոնական որգանի խմբագրության ընտրությունը.—Համագումարի վերջում մի անգամ ևս բռնկեց համառ պայքար՝ «Իսկրայի» համար խմբագրական կազմ ընտրելու առթիվ։ (Համագումարը «Իսկրան» հայտարարեց կուսակ-

ցության կենտրոնական որգան)։ Մինչ այդ, ութ «եկոնոմիստներից» յոթը, անբավական ճնշելով համագումարի վորոշումներով, թողել էին և հեռացել համագումարից։

«Իսկրայի» հաստատ կողմնակիցները, դրանից հետո բացարձակ մեծամասնություն կազմելով, խմբագրության կազմի մեջ մտցրին յերեք մարդու. յերկուսը մեծամասնության կողմից,—Լենինին և Պլեխանովին, և մեկը փոքրամասնությունից՝ Մարտովին։

Փոքրամասնությունն ուզում էր թողնել նախկին վեց հոգուց կազմված խմբագրությունը. բացի այդ յերեք ընտրվածներից, նա ուզում էր խմբագրության կազմում թողնել նաև Աքսելրոդին, Վերա Զասուլիչին և Պոտրեսովին։

Թե ինչպես «Իսկրան» մենշեվիկյան դարձավ.—Մենշևիկները վճռեցին չենթարկվել յերկրորդ համագումարի վորոշումներին և սկսեցին խանգարել համագումարի կողմից ընտրված՝ կուսակցության կենտրոնական հիմնարկների աշխատանքը։ Մարտովը հրաժարվեց «Իսկրայի» խմբագրության մեջ մասնակցել, իսկ մյուս նախկին խմբագիրները դադարեցին այդ թերթին աշխատակցել։

Լենինն ու Պլեխանովը մնացին յերկուսով։ Նրանք այդպիսով բաց թողին կենտրոնական որգանի 6 համար։

Բայց մենշևիկները չեյին ընկճվում։ Նրանք ամբողջ գծով կատաղի պայքար եյին մղում բոլշևիկների դեմ։

Պլեխանովը չկարողացավ մինչև վերջը պայքարը տանել և վճռեց զիջել մենշևիկների պահանջին՝ խմբագրության մեջ առնելու նրա նախկին անդամներին։

Լենինը դրա հետ չհամաձայնվեց, բայց քանի վոր Պլեխանովը սկզբում եր, ապա Իլյիչին ճիում եր միայն հեռանալ խմբագրությունից։

Լենինի հեռանալուց հետո, Պլեխանովն «Իսկրայի» խմբագրության մեջ մասնակցելու համար անմիջապես

հրավիրեց Մարտովին, Աքսելրոդին, Վերա Զասուլիչին և Պոտրեսովին։ Թերթում ամենագործօն մասնակցութիւն սկսեցին ունենալ նաև Տրոցկին, Մարխլևովը և Դանը։

Այդ ժամանակվանից վառավոր «Իսկրան» դարձավ մենշևիկյան։

Կուսակցության յերկու մասերի բրիվ անջատումը.— Բոլշևիկները ստիպված եյին նոր թերթ հիմնել։ Դա նրանց հաջողվեց անել միայն 1904 թ. վերջին։ Այս նոր թերթը կոչվում եր «Վպերյոդ» (հառաջ)։

1905 թվին կուսակցությունը վերջնականապես բաժանվեց յերկու՝ միմյանց դեմ պայքարող մասերի։

2. 1905 ԹՎԻ ԿՈՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԴԵՊՔԵՐԸ.

Վորպեսզի ավելի լավ հասկանանք բոլշևիկների և մենշևիկների միջև յեղած տարաձայնությունների եությունը և պարզենք պատճառները, նախ տեսնենք, թե Ռուսաստանում ինչ դեպքեր տեղի ունեցան յերկրորդ համագումարից հետո։

Դեռ 1902 և 1903 թվերին հարավային գործադուլները ցույց տվին, վոր Ռուսաստանն արագ քայլերով դեպի հեղափոխություն է դիմում։

Պատերազմ Յապոնիայի դեմ.—1904 թվի սկզբին ցարական կառավարության հայտարարած պատերազմը Յապոնիայի դեմ միայն արագացրեց հեղափոխության վերածասը։

1903 թ. վերջին արդյունաբերության մեջ վորոշ աշխուժացում եր նկատվում, սակայն պատերազմը խանգարեց դրա զարգացմանը և սկսվեց դադարի մի շրջան։

Բացի դրանից, ինչպես այդ պատահում է յուրաքանչյուր պատերազմի ժամանակ, կյանքը ամեն ամիս սկսում է թանգանալ և բանվորների դրությունը խիստ վատանում է։

1904 թվի ընթացքում, բանվորների սպառման առարկաների գները բարձրացան միջին հաշվով 20 տոկոսով, իսկ նրանց աշխատավարձը ավելացավ միայն յերեք տոկոսով։

Այնուամենայնիվ սկզբում կարող եր թվալ, վոր արդանում են կառավարության մտադրությունները, վորը հույս ուներ, թե բանվոր դասակարգի հայրենասիրական զգացմունքների արթնացումով, պատերազմի հայտարարմանն միջոցին բանվորության մեջ կխլանան հեղափոխական տրամադրությունները։ Յեվ իսկապես, 1895 թ. մինչև 1905 թ., այդ տասը տարվա ընթացքում ամենից քիչ գործադուլավորներ յեղել են 1904 թվին։

Բանվորական շարժումը 1905 թվին։ Յեվ հունվարի 9-ը.—Սակայն այդ միայն մի դադար եր՝ վոտորկից առաջ։ 1905 թ. առաջին իսկ որերը հուչակվեցին Պետերբուրգի հսկայական ընդհանուր գործադուլով։

Գործադուլավորների թիվը հասնում եր 130—140 հազարի։ Հենց այդ գործադուլը անգեն բանվորներին հասցրեց հունվարի 9-ի վայրենի, անողոք գնդակահարմանը. գնդակահարեցին այն բանվորներին, վորոնք ցարի մոտ եյին գնում «ճշմարտության համար»։ Այդ դեպքը բանվորական և ընդհանրապես հեղափոխական շարժման չտեսնված վերելքի առիթ տվեց։ 1905 թ. հունվարի 9-ի «արյունոտ կիրակին» պատմության մեջ մտավ, վորպես հեղափոխության սկզբնադուռ։ Հենց միայն 1905 թ. ընթացքում գործադուլավորների թիվը մի քանի անգամ գերազանցում է մինչ այդ ամբողջ տասնամյակում յեղած գործադուլավորների թիվին, ըստ վորում քաղաքական գոր-

ծաղուլավորներին մասնակցողների թիվը յերկու անգամ ավելի յեր, քան անտեսական։

Գյուղացիության հուզումները.—Բացի բանվորներից, շարժվել սկսեցին նաև գյուղացիները։ Այս անգամ նրանց շարժումն ընդգրկեց Ցեվրոպական Ռուսաստանի 50 նահանգ և անցավ շատ բուռն թափով. բայց նա դեռ բոլորովին անկազմակերպ եր։

Գյուղացիները բռնագրավում եյին կալվածատիրական հողերը, տանում եյին նրանց անասունները, վերցնում եյին պահեստներից հացը, կորում եյին տիրական անտառը, հրաժարվում եյին զինվորագրուներ տալուց և հարկերն ու պարտքերը վճարելուց։ Հեղափոխության միջոցին 2000-ից ավելի կալվածատիրական գույքեր այրվեցին ու ավերվեցին։

«Անկարգություններ» բանակում յեվ նավատորմում.—Հեղափոխական ընդվզումները անմիջական արձագանք գտան նաև բանակում և նավատորմում։ Զինվորական մի քանի մասեր հրաժարվում են խլրտումները հանգստացնելու համար կրակ բաց անել. գորանոցներում և դիսցիպլինար գումարտակներում ծայր են առնում «անկարգություններ»։ Սմառը՝ Սևծովյան նավատորմի զրահակիր «Պոտյոմկին-Տավրիչեսկու» վրա բռնկում է ապստամբություն, որը վայելում է ամբողջ նավատորմի ընդհանուր համակրություն։ Խլրտումներ են սկսվում նաև կրոնշտադտի նավաստիների միջև և հուզումներ տեղի ունենում Լիբավայի նավահանգստում։

Տեղեկություններ պատերազմից.—Պատերազմում գործերը շատ վատ եյին գնում։ Դեռ 1904 թվի դեկտեմբերին ցարական զորքերը հաղթվում են և Պորտարտուր նավահանգիստը ընկնում է յապոնացիների ձեռքը։ Յամաքի վրա Կուրոպատկինը պարտություն-պարտության յետևից եր կրում և վերջապես ամսին, Մուկդենի տակ չարդ ու փշուր յեղած՝ նահանջի ուղին և բռնում, կորցնելով իր զորքերի համարյա կեսը, որոնց մի մասը գերի յեն ընկնում, մնացածները սպանվում և վիրավորվում (300.000-ից 120.000-ը)։ Վերջապես, մարտ ամսին, Յուսիմայի տակ յապոնացիները ովկիանոսի հատակում թաղում են ռուսական նավատորմը։ Կառավարությունը շտապում է հաշտություն կնքել Յապոնիայի հետ և արդեն հուլիսի վերջին սկսվում են հաշտության բանակցությունները։

Կառավարությունը զիջումներ է անում.—Բոլիգինյան Դուման.—Կառավարությունը զիջումներ է անում նաև հեղափոխական շարժմանը։ Օգոստոսի 6-ին հրատարակվեց ցարական մանիֆեստը՝ որենս-խորհրդակցական պետական դումայի գումարման մասին, այսինքն այնպիսի դումայի, որը չկարողանա մյուս յերկրների պարլամենտների նման որենքներ հրատարակել, այլ միայն քննի գրանք և խորհուրդներ տա կառավարությանը՝ գրանք ընդունել թե մերժել։ Այդ դուման կոչվեց Բուլիգինյան, քանի որ գրա նախագիծը կազմել եր մինիստր Բուլիգինը։

Այդպիսի զիջումը և ոչ մի հանդարտություն չմտցրեց։ Հեղափոխական շարժումն ավելի ու ավելի ծավալվեց, ընդունելով կազմակերպված ընթացք։

Կազմակերպվեց «Գյուղացիական Միությունն»։ Սկսեցին կազմակերպվել բանվորների և ծառայողների պրոֆեսիոնալ միություններ։

Հոկտեմբերյան գործադուլը.—Մոսկվայում սեպտեմբերի վերջին բռնկեց տպագրական բանվորների գործադուլը, որին մասնակցում եյին 6.000 հոգի։

Այս գործադուլը սկիզբ դրեց քաղաքական գործադուլների հսկայական ալիքին, որն արդեն հոկտեմբերին համառուսական ընդհանուր քաղաքական գործադուլի վերածվեց։ Կյանքը մեռավ, գնացքները կանգ առան, 40 հազար վերստ տարածության վրա—և ոչ մի յերկաթուղային շարժում, պոստն ու հեռագրատունը դադարեցին աշխատելուց, կանգ առան գործարաններն ու ֆաբրիկանները, դպրոցական հաստատություններում պարապմունքները դադարեցին, փակվեցին բանկերը, խանութները և ընդհանրապես բոլոր արդյունաբերական ու առևտրական հիմնարկները։

Ցարիզմի նոր զիջումը,— հոկտեմբեր 17-ի մանիֆեստը.—Կառավարությունը փորձ արեց ուժով գործել. Տրեպովը տվեց իր հռչակավոր հրամանը զորքին. «Փամփուշտ չխնայել, անգնդակ զարկ չտալ», իսկ 2—3 որից ցարական կառավարությունը վերջնականապես այն համոզմանը յեկավ, որ զորքերն են պետք, այլ զիջումներ։ Հրատարակվեց հոկտեմբեր 17-ի ցարական մանիֆեստը, որն այս անգամ արդեն խոստանում եր որեներդիր պետական դումա և քաղաքական բոլոր ազատությունները։

Բուլիգինյան Դումայի մասին արդեն մոռացել եյին։

Բանվորական պատգամավորների խորհուրդներ.—Հոկտեմբերյան գործադուլը մարտական պրոլետարական կազմակերպության նոր ձև ստեղծեց—Բանվորական Պատգամավորների Խորհուրդներ։ Սրանք կազմվեցին գործադուլին մասնակցող ձեռնարկությունների ընտրովի ներկայացուցիչներից։

Բայց շուտով, խորհուրդները գործադուլային պայքարի որգաններից՝ պրոլետարիատի ամբողջ շարժումը ղեկավարող որգաններն վերածվեցին։ Խորհուրդների մեջ իրենց պատգամավորներն են ընտրում բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները, և ոչ միայն գործադուլին մասնակցողները։

Նման խորհուրդների թիվը ամբողջ Ռուսաստանում հաշվում եր 30-ից ավելի։ Հոկտեմբերի 13-ին հիմնվեց Պետերբուրգի Բանվորական Պատգամավորների Խորհուրդը։ Նոյեմբերի յերկրորդ կեսին Խորհուրդը 281 արդյունաբերական ձեռնարկություններից ու 16 պրոֆմիություններից ուներ ընդամենը 562 պատգամավոր։

Խորհրդի գլուխն եր կանգնած «Գործադիր Կոմիտեն», որը հրատարակում եր իր սեփական լրագիրը—«Բանվորական Պատգամավորների Խորհրդի Լրաբեր» անունով։

Իր ստեղծման առաջին որից նա իր վրա վերցրեց ընդհանուր գործադուլի ղեկավարությունը։ Աստիճանաբար նրա ձեռքն անցավ բանվոր դասակարգի ամբողջ շարժման անմիջական ղեկավարությունը։ Սոցիալ-դեմոկրատները Խորհուրդների միջոցով իրենց իդեյաները տարածում եյին բանվորական մասսաների մեջ։

Պետերբուրգի Բանվ. Խորհուրդը փաստորեն ընդունեց Ռ.Ս.-Դ.Բ.Կ. ծրագիր-մինիմումը և փորձում եր իրագործել նրա կարևորագույն պահանջները։ Վորպես պայքարի միջոց, նա ընդունեց քաղաքական գործադուլը և գինված ապստամբությունը։

Պետերբուրգի Խորհուրդը դարձավ կառավարության սաղմ, սակայն նա այնքան ուժ չուներ, վորպեսզի ցարին ու նրա մինիստրներին տապալի ու իսկական կառավարություն դառնա։

Նրա ամենաթույլ կողմն այն եր, վոր նա միայն բանվորական պատգամավորների խորհուրդ եր։ Համաժողովրդական շարժումը ղեկավարելու ուժ ունենալու համար, Խորհուրդները պետք և իրենց կազմի մեջ առնեյին նաև

գյուղացիների և զինվորների պատգամավորներին։ Վորպեսզի կարողանային հաղթել, Խորհուրդները վոչ միայն հեղափոխական պրոլետարիատի որգաններ պիտի դառնային, այլև՝ հեղափոխական գյուղացիության։

Միայն ամբողջ հեղափոխական ժողովրդի որգաններ հանդիսանալով, այսինքն՝ բանվորների և գյուղացիների, Խորհուրդները կարող էին դառնալ իսկական հեղափոխական իշխանություն, և վոչ թե միայն նրա սաղմը ներկայացնող։

Այդպիսի Խորհուրդներին կհաջողվեր գյուղացիությանը դուրս բերել լիբերալ բուրժուազիայի ազդեցության տակից։

Խարերայության միջոցով լիբերալ բուրժուազիան գյուղացիության մոտ փնտռում է աջակցություն՝ ընդդեմ հեղափոխության.—Լիբերալ բուրժուազիան հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո միայն մի բանի մասին եր մտածում—«խախտել հեղափոխության հիմքերը»։

Այդ նշանակում է, վոր նրանք ուզում էին վերջ դնել հեղափոխությանն, անհնարին դարձնել նրա հետագա զարգացումը։

Գյուղացիությանը նրանք ասում էին, վոր ցարական մանիֆեստը ժողովրդին տալիս է այն բոլորը, ինչ անհրաժեշտ է նրան, ուստի և գյուղացիությունը կարիք չունի այլևս հողի համար պայքարելու։ Պետք է միայն լավ ու ազնիվ մարդկանց ընտրել և Դումա ուղարկել, և այն ժամանակ Դուման նրանց և հող կտա և այն ամենը, ինչ վոր ցանկանան նրա ընտրողները։

Բուրժուազիան խաբում եր ժողովրդին։ Նա ժողովրդի թիկունքում առևտուր եր անում կառավարության հետ՝ իշխանությունը բաժանելու մասին։

Մինչ այդ, կառավարությունը կամաց-կամաց ուշքի էր գալիս հեղափոխության առաջին հարվածներից և սկսում

պայքարի պատրաստվել Բանվորական Պատգամավորների Խորհրդի դեմ։

Սեվծովյան նավատորմի ապստամբությունը.— Կառավարությունը խրախուսվում է մանավանդ Սևծովյան նավատորմի նոր խռովությունը ճնշելուց հետո—նոյեմբերի կեսերին։

Սևաստոպոլի նավատներում մեջ խլրտուքներն սկսվում են նոյեմբերի սկզբից։ Նոյեմբերի 10-ին արդեն կազմված եր ընտրովի պատգամավորների խորհուրդը, իսկ նոյեմբերի 14-ին կարմիր դրոշակ է բարձրացնում «Ոչակով» զրահանավը, վորի վրա յեր գտնվում շարժման ղեկավարությունը ատանձնած լեյտենանտ Շմիդտը։

Այդ զրահանավի որինակին հետևեցին մի քանի այլ զրահանավեր, որինակ՝ «Պոտյոմկինը» (վորը դեռ ամառվա խլրտումից հետո վերանվանվել եր «Պանտելեյմոնի»), «Դնեստրը» և ելի մի քանիսը։

«Սևծովյան փառավոր նավատորմի» անունից Շմիդտը ցարին ուղարկեց մի հեռագիր՝ հիմնադիր ժողով գումարելու պահանջով, և հայտարարելով, վոր նավատորմիղը հրաժարվում է ցարական մինիստրներին յենթարկվել։

Կարմիր դրոշակ պարզած զրահանավերը ամբակոծվեցին մարակոցներից։ «Ոչակովը» ընդդիմադրում եր հարձակմանը, բայց նրա վրա շուտով հրդեհ ծագեց, վոր անհնարին դարձրեց հետագա ընդդիմադրությունը։

Ապստամբությունը ճնշվեց։ Շմիդտը ձերբակալվեց և մի քանի ամսից հետո մահվան դատապարտվեց։

Սևծովյան նավատորմի ապստամբության այդպիսի պարտությունից հետո կառավարությունը վորոշեց ավելի համարձակ գործել։

Նոյեմբերի 26-ին ձերբակալվեց Պետերբուրգի Խորհրդի նախագահը։

Դեկտեմբերի 1-ին հրատարակվեց և հեռագրով հաղորդվեց Ռուսաստանի բոլոր վայրերը՝ հեղափոխական շարժման ղեկավարներին ամենուրեք ձերբակալելու գաղտնի հրահանգը։

«Ֆինանսական մանիֆեստը».—Կառավարության այդ գործողություններին ի պատասխան, Պետերբուրգի Բանվորական Պատգամավորների Խորհուրդը, Համառուսական Գյուղացիական Միության Գլխավոր Կոմիտեյի և Հեղափոխական Կուսակցությունների Կենտրոնական Կոմիտեների հետ միասին դեկտեմբերի 2-ին բաց թողեց հռչակավոր «ֆինանսական» մանիֆեստը, որ կոչ էր անում «հրաժարվել հողերի յեղդնման և պետական բոլոր այլ տեսակի վճարումների մուծումներից։ Պահանջել, որ գործարքների, աշխատավարձի և ռոճիկի վճարումը տրվի վոսկի դրամով, իսկ 5 ռուբլուց պակաս գումարը տրվի լրիվ կշիռ ունեցող հնչյուն փողով։ Խնայողական գանձարկղներից և պետական բանկում պահ տրված գումարները յետ վերցնել, պահանջելով, որ ամբողջ գումարը վոսկով վճարվի»։

Մանիֆեստի վերջում հայտարարվում է, որ պիտի հրաժարվել «վճարել պարտքերը այն բոլոր փոխառությունների դիմաց, որ ցարական կառավարությունը արել է ամբողջ ժողովրդի դեմ ակնհայտ ու բացահայտ պատերազմ մղելու համար»։

Այդ մանիֆեստը այն հեռանկարն ուներ, որ 1905 թ. դեկտեմբեր ամսում բանկերի բաց թողած ամբողջ գումարը, նրանցում պահ տրվող գումարներից 89 միլիոն ռուբլով ավելի չեր։

Կառավարությունը զգաց վտանգը։

Պետերբուրգի Խորհրդի ձերբակալումը.—Հենց հետևյալ որը, դեկտեմբերի 3-ին, ձերբակալվում է Պետերբուրգի Բանվորական Պատգամավ. Խորհրդի Գործ. Կոմիտեն։

Հեղափոխությանը հասցրած այդ հարվածով ցարական կառավարությունը բանվոր դասակարգին պայքարի ձեռնոց է նետում։ Պրոլետարիատն ընդունում է այն։ Արագ կերպով Պետերբուրգում կազմվում է Բանվորական Պատգավորական Խորհրդի նոր գործադիր կոմիտե, և դեկտեմբերի 6-ին վորոշվում է Պետերբուրգում և Մոսկվայում նոր ընդհանուր գործադուլ սկսել։

Պետերբուրգում գործադուլը սկսվում է դեկտեմբերի 8-ին։ Հետևյալ որն արդեն գործադուլին մասնակցում եր 100.000 մարդ, սակայն այնուհետև գործադուլը արագ կերպով թուլանում է։

Մոսկվայի զինված ապստամբությունը.—Այդպես չեղավ Մոսկվայում։ Այստեղ գործադուլը սկսվեց դեկտեմբերի 7-ին, իսկ հետևյալ որն արդեն նա ծավալվեց, ընդհանուր դարձավ։

Բայց հիմա արդեն մենակ լոկ գործադուլը բավական չեր։ Նա հիմա կարող եր հաղթել՝ միայն զինված ապստամբության փոխվելով։ Այդպիսի ապստամբության կոչ էլին անում կուսակցությունը և Մոսկվայի Խորհուրդը։

Ապստամբությունը սկսվեց դեկտեմբերի 9-ին և 11-ին արդեն ամենամեծ չափեր ընդունեց։ Ապստամբները հերոսաբար էլին կռվում բարրիկադների վրա։

Կռվի մեջ իր հատուկ համառությամբ ու հաջողությամբ աչքի չեր ընկնում Պրեսնյան։ Զորքը գործում եր անվճռական և ըստ չերևույթին անհուսալի չեր։ Յեվ ահա Մոսկվա չեն մտնում թարմ գնդեր, նրանց թվում՝ Սեմյոնովսկի գունդը, որը Պրեսնյայի ապստամբությունը ճընշելիս հռչակվեց իր գազանությամբ։

Դեկտեմբերի 17-ին Պրեսնյան ընկավ, իսկ 19-ին ապստամբությունը արդեն վերջնականապես ճնշված եր։

Ապստամբությունը մյուս քաղաքներում.—Մոսկվայից բացի, գինված ապստամբությունը բռնկվեց նաև ուրիշ շատ վայրերում. Ռոստովում-Դոնի վրա, Խարկովում, Սորմովում, Դոնի ավազանում՝ Կրասնոյարսկում և Չիտայում հայտարարվեցին հանրապետություններ (այս տեղերում գործում էին Բանվորական և Զինվորական Պատգամավորների Խորհուրդները)։ Մի քանի քաղաքներում, ուր համարյա չկային գինվորական ուժեր, իշխանությունն առանց կռվի անցավ Խորհուրդներին, որինակ՝ Նովորոսիյսկում, Նիկոլայևում, Պյատիգորսկում։

Այդ ապստամբություններն էլ ճնշվեցին այնպես, ինչպես վոր Մոսկվայում։ Յարիվմը սկսեց վայրենի կերպով վրեժ լուծել պարտվածներից. դաշտային դատարաններ ու կախաղաններ, պատժող եքսպեդիցիաներ, մասսայական գնդակահարություններ։ Ռուսաստանում լայն գետով հոսեց ժողովրդական արյունը։

ՊԱՅՔԱՐ ՀՈԳՈՒՏ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԵԳԵՄՈՆԻԱՅԻ, ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ.

(Շարունակություն)

3. ԲՈՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՈՒ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՅԵՂԱԾ ՏԱՐԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՑՈՒԹՅՈՒՆԸ.

Մեր նկարագրած դեպքերը ցույց են տալիս, վոր Ռ.Ս.-Դ.Բ.Կ. յերկրորդ համագումարից հետո հեղափոխությունն արագ կերպով մոտենում եր, և հասել եր այնպիսի մոմենտ, վոր պետք եր վճռական ու համարձակ գործի անցնել։ Իսկ վորպեսզի կուսակցությունը կարողանար այդպես գործել, անհրաժեշտ եր վոր նա միասնական կամք և միասնական ղեկավարություն ունենար, և հենց այդ եր, վորից նա զուրկ եր։

Կուսակցության յերկու զանգվածներն էլ բոլորովին տարբեր կերպով էին հասկանում բանվոր դասակարգի խնդիրները՝ սկսված հեղափոխության մեջ, և պրոլետարիատին տարբեր ուղիներ էին ցույց տալիս։ Հետևաբար, ֆրակցիաներից ամեն մեկը ստիպված եր մյուսից անկախ գործել և կատաղի կերպով պայքարել մյուս մասի դեմ, վորպեսզի ապացուցի բանվոր դասակարգին իր ընտրած ուղիչի ճշտությունը և նրան տանի իր յետևից։

Վեճ՝ պրոլետարիատի հեգեմոնիայի շուրջը.—Իսկ ինչի՞ մասին էին վիճում իրար հետ բոլշևիկները ու մենշևիկները։ Այդ հարցի համառոտ պատասխանն այս է. վեճը

տարվում եր հին, մեզ արդեն ծանոթ հարցի շուրջը՝ պրոլետարիատի հեգեմոնիայի մասին, միայն թե այժմ վիճում եյին այլ խոսքերով և այլ դրության ու պայմանների մեջ։

Սակայն այս անգամ այլ խոսքերով եյին վիճում, որովհետև թե բոլշևիկները և թե մենշևիկները այդ իդեյայի կողմնակիցները եյին հայտարարում իրենց. չե՞ որ հիմա մենշևիկների գլուխը Պլեխանովն եր կանգնած, որը, ինչպես մենք գիտենք, առաջինն արտահայտեց այդ իդեյան 1889 թ., II-րդ Ինտերնացիոնալի Պարիզյան կոնգրեսին։

Յեվ քանի որ հիմա դրությունն ու պայմանները փոխվել եյին (հեղափոխական կռիվ եր տարվում, որին մասնակցում եյին բնակչության բոլոր խավերը), այդ իդեյան պետք եր ուրիշ, ավելի վորոշ արտահայտություն ընդուներ։

Հեղափոխության ուժերը.—Փոխանակ ասելու, որ բանվոր դասակարգը հեղափոխության գլուխը կանգնի և իր յետևից կտանի հասարակության բոլոր հեղափոխական ուժերին, հիմա արդեն պետք եր պարզ ու վորոշ հայտարարել, թե ռուսական հասարակության վոր ուժերն են իսկապես հեղափոխական և ում կտանի իր յետևից պրոլետարիատը՝ ինքնակալության վրա գրոհ տալու համար։

Այդ հարցին բոլշևիկները այսպես պատասխանեցին. բուրժուազիան, վոր հիմա անբավական և ինքնակալությունից, իր եյությամբ հեղափոխական չե, նա ուզում է միայն հին իշխանության հետ հաշվի նստել, և հենց վոր ցարական կառավարությունն ընդառաջի փոքրիկ զիջումների և բուրժուազիայի հետ բաժանի իր իշխանությունը, ապա բուրժուազիան ցարիզմի հետ դաշինք կկնքի ընդդեմ հեղափոխության։

Չե վոր կուսակցության դեռ առաջին համագումարի մանիֆեստի մեջ ասված եր, թե «վորչափ հեռու դեպի Յեվրոպայի արևելքը,—քաղաքական տեսակետից այնչափ ավելի վախկոտ ու ավելի ստոր է դառնում բուրժուազիան... Ռուս բանվոր դասակարգն իր ուժեղ ուսերի վրա պիտի տանի և կտանի քաղաքական ազատության նվաճման գործը»։

Այլ կերպ ասած, բոլշևիկները վորոշակիորեն հայտարարում եյին.—բուրժուազիան այլևս չի հանդիսանում շարժիչ ուժ՝ նույնիսկ բուրժուական հեղափոխության համար, այսինքն այնպիսի հեղափոխության, վորն իրեն նպատակ է դնում ձեռք բերել քաղաքական ավելի ազատ իրավակարգ (դեմոկրատական հանրապետություն)՝ ընդ սին պահպանելով բուրժուական տնտեսական կարգերը (կապիտալիզմի)։

1905 թ. խոսքը վերաբերում եր այնպիսի հեղափոխության, վոր կարողանար ստեղծել պրոլետարիատին անհրաժեշտ՝ քաղաքական ավելի ազատ իրավակարգ, վորպեսզի նա լայնորեն ծավալեր իր պայքարը հոգուտ սոցիալիզմի։ Պրոլետարիատի պայքարի այդ առաջին ետապը բուրժուական տնտեսական իրավակարգի (կապիտալիզմի) հիմքերին չեր դիպչում, այդ պատճառով էլ այդ հեղափոխությունը բուրժուական հեղափոխություն եր։

Բայց այդ բուրժուական հեղափոխությունը,—ասում եյին բոլշևիկները,—պետք է տանել վոչ թե բուրժուազիայի հետ դաշնակցելով, այլ նրա դեմ՝ յերթե ուզում են հեղափոխությունը «մինչև վերջը» հասցնել, այսինքն՝ մինչև դեմոկրատական հանրապետությունը, համաձայն յերկրորդ համագումարում ընդունված մինիմում-ծրագրի։

Հեղափոխական պայքարում գլխավոր ծանրությունը ընկնում է «ռուս բանվոր դասակարգի ուժեղ ուսերին», բայց և այնպես նա միայնակ չի կարող լուծել այդ խընդիրը, նա չափազանց փոքրաթիվ է Ռուսաստանում։ Բացառիկ պարագաներում, նա կարող է ունենալ մի ուժեղ դաշնա-

կից — բազմամիլիոն ռուս գյուղացիությունը։ Նա նույնպես, ինչպես և պրոլետարիատը, շահագրգռված է նրանում, որ արմատախիլ արվեն ճորտատիրության բոլոր մնացորդները։ Նա — կալվածատիրոջ դարավոր թշնամին է, իսկ կալվածա-հողատիրությունը — դա ինքնակալության գլխավոր նեցուկն է։

Գյուղացիությունը սկսված հեղափոխության մեջ բանվոր դասակարգի հետ կարող է գնալ «մինչև վերջը», բայց կարող է և չգնալ։

Նա քաղաքականապես նվազ գիտակից է և անկազմակերպ։ Նա կարող է յենթարկվել բուրժուազիայի ազդեցությանը և նրա լոզունգների տակ՝ գնալ նրա յետևից, ու կես ճանապարհին կանգ առնել։

Ահա թե ելի ինչու է անհրաժեշտ պրոլետարիատի անհաշտ պայքարը հեղափոխության միջոցին ընդդեմ բուրժուազիայի։ Պիտի խանգարել բուրժուազիային վոր նա չկարողանա գյուղացիական չարժումն իր ղեկավարությանը յենթարկել։

Պրոլետարիատը պիտի ազատի գյուղացիությունը բուրժուազիայի ազդեցությունից և նրան իր յետևից տանի։

Յեթե այդ նրան հաջողվի, ապա միայն այդ դեպքում բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը կհասցվի՝ հոգուտ բանվորների և գյուղացիների շահերի։

Այսպիսով, բոլշևիկները հեղափոխության շարժիչ ուժերը եյին համարում միայն բանվոր դասակարգը և գյուղացիությունը, ըստ վորում պայքարի ղեկավարությունը պիտի պատկանի պրոլետարիատին։

Պրոլետարիատի յեվ գյուղացիության դիկտատուրա.— Գյուղացիության հետ միասին պրոլետարիատը տապալում է հին իշխանությունը և մինչև հիմնադիր ժողովի գումարումը նրա հետ միասին կազմակերպում է ուժեղ և՝ հեղափոխության թշնամիների նկատմամբ անողոք՝ ժամանակավոր հեղափոխական կառավարություն։

Այդ ժամանակավոր հեղափոխական կառավարության իշխանությունը — պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրան յե։

Պրոլետարիատի հեգեմոնիայի իդեայի նոր արտահայտությունը.— Պրոլետարիատի հեգեմոնիայի իդեյան, նոր դրության ու նոր պայմանների մեջ հետևյալ նոր արտահայտությունն է ստանում։

Հեղափոխական շարժումը Ռուսաստանում կարող է հաղթանակել միայն վորպես բանվորների և գյուղացիների հեղափոխական շարժում՝ պրոլետարիատի ղեկավարությամբ։ Հեղափոխության հաղթանակի ու նրա նվաճումների ամրապնդման համար անհրաժեշտ է պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրա։

Ահա թե վորպիսին եյին բոլշևիկների հիմնական հայացքները հեղափոխության ու նրա հաղթանակի վերաբերմամբ։

Ինչ եյին ասում մենշևիկները յեվ ինչպես եյին նրանք գործում.— Բոլորովին այլ բան եյին ասում բանվոր դասակարգին մենշևիկները։ Խոսքով նրանք դեռ չեյին հրաժարվում պրոլետարիատի հեգեմոնիայի իդեայից, բայց գործնականում նրանց թեորիան անխուսափելիորեն հասցնելու յեր — և հետագայում հասցրեց — այդ իդեայից լիովին հրաժարվելուն։

Մենշևիկները բուրժուազիային համարում եյին հեղափոխության անհրաժեշտ շարժիչ ուժ։ Չի կարելի — ասում եյին նրանք — բուրժուական հեղափոխությունը կատարել առանց բուրժուազիայի։

Դրանով է բացատրվում բուրժուազիային խիստ ան-

չափավոր պահանջներով խրատեցնելու նրանց վախը, դրանով և բացատրվում լիբերալ կուսակցությունների հետ համաձայնվելու նրանց փորձերը։

Հանձինս գյուղացիության, մենշևիկները մեծ հեղափոխական ուժ չեյին տեսնում. հետևաբար, պրոլետարիատի ժանդակությունն կարող եր սպասել միայն բուրժուազիայի կողմից։

Գործնականում այդպիսի թեորիան այնտեղը հասցրեց, որ մենշևիկները պրոլետարիատին կոչ եյին անում պաշտպանել բուրժուազիային։

Շարժումը ղեկավարելու փոխարեն, բանվոր դասակարգը հրավիրվում եր հանդես գալու լիբերալ բուրժուազիայի լողունգների տակ։

Առաջնորդի փոխարեն, պրոլետարիատը լիբերալ շարժմանը յենթակա մի կցորդ ուժ եր դառնում։

Պարզ ե, որ բոլշևիկները ու մենշևիկները, սրանց միջև յեղած այդպիսի տարաձայնությունների հետևանքով, այլևս չեյին կարող միասին գործել մի այնպիսի ժամանակ, յերբ անհրաժեշտ եյին վճռական յելույթներ։

Կուսակցության յերրորդ համագումարը.—1905 թ. ապրիլին կուսակցության պատակառումը պատկվեց նրանով, որ Լոնդոնում յերրորդ համագումարին մասնակցում եյին միայն բոլշևիկները, իսկ մենշևիկներն առանձին եյին հավաքվել կոնֆերենցիայի՝ ժընևում։

Համագումարի և կոնֆերենցիայի վորոշումները ցույց են տալիս, որ այդ ժամանակ նրանց միջև տարաձայնությունները այնքան մեծացել ու լրջացել եյին, որ իրականում, նրանց միասնական աշխատանքն այլևս ամենևին հնարավոր չեր։

Յերրորդ համագումարին մասնակցելու յեկել եյին 29 կազմակերպությունների ներկայացուցիչներ, բայց մենշևիկյան 9-ը պատգամավորներ հրաժարվեցին նրա աշխատանքներին մասնակցելուց և մեկնեցին «Իսկրայի» կողմից հրավիրված կոնֆերենցիան։

Համագումարում միացին միայն 20 բոլշևիկյան կազմակերպությունների պատգամավորները։

Համագումարի աշխատանքը.— Ընդամենը 26 նիստ տեղի ունեցավ։ Համագումարն ուղղեց կանոնադրության առաջին կետը,—կուսակցության յուրաքանչյուր անդամ հիմա պարտավոր եր մտնել կուսակցական վորևե կազմակերպության մեջ, և վոչ թե միայն ղրսից ոգներ նրան։

«Իսկրայի» փոխարեն կուսակցության կենտրոնական օրգան հաչակվեց «Պրոլետարիյ» թերթը, վորը համագումարից հետո սկսի փոխարիներ «Վպեյոդ» թերթին։

Գյուղացիական շարժման վերաբերող շատ կարևոր քանաձև ընդունվեց, վոր ծրագրի ագրարային մասին չափազանց եյական հավելումներ եր անում։

Այդ քանաձևի միջոցով համագումարը հայտարարում է, վոր կուսակցությունը կպաշտպանի գյուղացիության հեղափոխական պահանջները «մինչև իսկ կալվածատիրական, պետական, յեկեղեցական, վանքապատկան և կայսերական տանը պատկանող հողերի կոնֆիսկացիան։ Մինչդեռ ծրագիրը, ինչպես մենք ասացինք չորրորդ գրույցում, պահանջում եր գյուղացիներին վերադարձնել միայն նրանից խլված հողամասերը։

Յերրորդ համագումարի գլխավոր ուշադրությունն ուղղված եր տակտիկայի հարցերին։

Տակտիկայի հարցերի մասին ընդունված բանաձևերից (այսինքն այնպիսի վորոշումներից, վորոնք բնորոշում են կուսակցության վարքագիծը՝ ծավալվող հեղափոխության մեջ) ամենից կարևոր եյին ղինված ապստամբության և

ժամանակավոր հեղափոխական կառավարության վերաբերյալ ընդունված բանաձևերը։

Առաջին բանաձևում ասվում է, 1) որ ամբողջ հեղափոխական շարժումը պիտի ղեկավարի պրոլետարիատը, 2) որ ստեղծված ապստամբությունն անհրաժեշտ է, և 3) որ կուսակցությունը բանվոր դասակարգին պիտի պատրաստի և ինքն էլ պիտի պատրաստվի այդ անխուսափելի դինված ապստամբությանը։

Ժամանակավոր հեղափոխական կառավարության մասին ընդունված բանաձևը հայտարարում է, որ այդպիսի կառավարությունը ստեղծվում է հենց հեղափոխության ընթացքում և կհանդիսանա դինված ապստամբության որդան։ Միայն ժողովրդական ապստամբության հաղթանակի դեպքում է հնարավոր դեմոկրատական հանրապետության իրագործումը, մինիմում-ծրագրի այդ հիմնական պահանջը։ Պրոլետարիատը կպահանջի ժամանակավոր կառավարությունից, որ նա կյանքում կիրառի ամբողջ մինիմում-ծրագիրը։ Այդ նպատակով, նմանապես և հեղափոխության բոլոր թշնամիների հետ անողոք պայքար մղելու համար, որոշ պայմաններով թույլատրելի է կուսակցության մասնակցությունը ժամանակավոր հեղափոխական կառավարության մեջ։

Մենշևիկների կոնֆերենցիան.—Մենշևիկները իրենց կոնֆերենցիայում վճռեցին նույն տակտիկական հարցերը, որոնք դրված էին համագումարի որակարգում, սակայն նրանք այդ հարցերը բոլորովին այլ կերպ վճռեցին։

Նրանց կարծիքով, հեղափոխության վճռական հաղթանակը հնարավոր է առանց դինված ապստամբության, նաև առանց ժամանակավոր հեղափոխական կառավարության։ Սոցիալ-դեմոկրատները չպիտի մտնեն ժամանակավոր կառավարության մեջ, եթե անգամ այն ստեղծվի։

Պրոլետարիատը միայն դրսից պիտի նրա վրա ամեն կերպ ճնշում գործի։

Կուսակցության մասնակցությունը ժամանակավոր հեղափոխական կառավարության մեջ թույլատրվում է միայն այն դեպքում, յերթե Ռուսաստանի հեղափոխությունը արևմտյան Յեվրոպայի մյուս յերկրներում սոցիալիստական հեղափոխություն առաջ բերի, այդ դեպքում կուսակցությունը պիտի ամեն կերպ ձգտի իր ձեռքը վերցնել իշխանությունը և աշխատի այն պահել վորչափ կարելի յե յերկար։

Դրանով կուսակցությունը կոզնի մյուս յերկրների բանվորներին՝ հաղթահարելու իրենց բուրժուազիային, իսկ նրանց հաղթանակը հնարավորություն կտա Ռուսաստանում սկսել սոցիալիզմ կառուցելու աշխատանքը։

Հեղափոխության պարտության պատճառները.—1905 թվին բոլշևիկների ու մենշևիկների բոլոր տակտիկական հայացքները լիակատար, վճռական ատուգում չստացան։

Ձինված ապստամբությունը չարդված եր, և բանը չհասավ մինչև իսկական ժամանակավոր կառավարություն կազմելուն։

1905 թ. դեկտեմբերի անցքերը ցույց տվին, վոր իրավացի եյին բոլշևիկները, յերբ ասում եյին, թե ձինված ապստամբությունն անխուսափելի յե։

Բոլշևիկները իրավացի եյին և այն ժամանակ, յերբ ասում եյին, թե բուրժուազիան—հեղափոխական ուժ չե, վոր նա կանցնի հեղափոխության թշնամիների կողմը՝ հենց վոր ինքնակալությունը պատրաստակամություն հայտնի նրան իր իշխանությունից մի քիչ բաժին հանելու։

Բայց և այնպես հեղափոխության պարտության պատճառների մասին կարելի յեր վիճել, և վեճերը շարունակվում եյին։

Բոլշևիկները ապացուցում էին, որ իրենց տակտիկան ճիշտ է եղել։

Հեղափոխությունը չհաղթեց հենց նրա համար, որ ամբողջովին չիրագործվեց հաղթանակի գլխավոր պայմանը, այսինքն այն, որ պրոլետարիատը չղեկավարեց գյուղացիական շարժումը։ Պրոլետարիատին չհաջողվեց գյուղացիական մասսաներին ամբողջովին դուրս բերել բուրժուազիայի ազդեցության տակից։

1905 թվի վերջից գյուղացիությունը նորից ընկավ բուրժուազիայի ազդեցության տակ և հեղափոխական ճանապարհից թեքվեց դեպի սահմանադրական ճանապարհը։

Դրանից հետո շարժումը վարելքով առաջ գնաց։ Ահա թե ինչու Լենինը 1906 թվի և 1907-ի առաջին կեսի ժամանակամիջոցն անվանեց «հեղափոխության սահմանադրական անկման» շրջան։

Բայց չեթե պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական - դեմոկրատական դիկտատուրայի լոզունգը չիրագործվեց 1905 թ.,—այդ դեռ չի նշանակում, որ այն սխալ էր։ Չէ որ բոլշևիկները ասում էին, որ հաղթանակը հնարավոր է միայն այն դեպքում, չեթե այդ լոզունգն իրագործվի։ Հիշյալ գլխավոր պայմանը չիրագործվեց, և շարժումը, ջարդ կրելով, պարտվեց։

Անհրաժեշտ էր պայքարը շարունակել միևնույն դրոշակի տակ։

Ինչ հետևություններ արին մենշևիկները 1905 թ. դեպքերից.—Իսկ մենշևիկները բոլորովին ուրիշ հետևություններ էին անում հեղափոխական տարվա դեպքերից։

Նրանց կարծիքով՝ պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրան չիրագործվեց այն պատճառով, որ դա անհեթեթ լոզունգ է, ուտոպիա է, այսինքն կյանքում անիրագործելի ուսմունք։

Հեղափոխությունը պարտություն կրեց, որովհետև պրոլետարիատն ուզում էր առաջնորդ լինել, դրանով նա խրտնեցրեց բուրժուազիային, որը վախից անցավ հեղափոխության թշնամիների բանակը։

Պրոլետարիատի հեգեմոնիայի իդեյան—ահա, մենշևիկների կարծիքով, պրոլետարական կուսակցության հիմնական սխալը, որ կործանեց հեղափոխությունը։

Միայն 1917 թիվը գործնականում հաստատեց բոլշևիկների տակտիկայի ճշտությունը և ակնհայտնի ցույց տվեց, որ մենշևիկները լոկ բուրժուական ազդեցությունը պրոլետարիատի վրա տարածողներ էին։

———

ՊԱՅՔԱՐ ՀՈԳՈՒՏ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԵԳԵՄՈՆԻԱՅԻ, ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ. (1905 — 1907 Թ. Թ.).

(Շարունակություն)

4. ԴՐԱԿՑԻԱՆԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ՈՒ ՄԻԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԸ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԵՐՈՒՄ.

Ֆրակցիաների մերձեցումը.—Բոլշևիկների և մենշևիկների տարաձայնությունները 1905 թվի վերջին կարծես հարթվել սկսեցին։

Նախ և առաջ, հեղափոխական դեպքերի արագ զարգացումն որակարգից շատ հարցեր հանեց, հարցեր, որ յուրաքանչյուր ֆրակցիա այլ կերպ էր լուծում։ Անց էր կացել ու մոռացվել 1904 թվի գեմոկրի կամպանիան, որի համար մենշևիկները լիբերալ բուրժուազիային պաշտպանելու այնպիսի պլան էին առաջադրել[1]), որ իրենց սեփական առաջնորդների մի մասը՝ Տրոցկու գլխավորությամբ, չդիմացան և նրանցից հեռացան (ճիշտ է՝ կարճ ժամանակով)։ Հոկտեմբերյան գործադուլի հեղափոխական ըրոհով ի չիք էր դարձել Բուլիգինյան Դուման, որը բոլշևիկները վճռեցին առանց այլ և այլի բոյկոտի յենթարկել, իսկ մենշևիկները զուգահեռ ընտրություններից խորամանկ պլան էին մտածել[2])։

Հենց նույն կերպ կյանքում վճռվեցին և որակարգից հանվեցին շատ ուրիշ հարցեր։

Յերկրորդ,— լիբերալ բուրժուազիայի վարմունքը, որի վրա մենշևիկներն այնքան հույս էին դնում, այնպիսին եր, որ նրան պաշտպանել—նշանակում եր հեղափոխությանը ակնհայտ դավաճանել։ Մենշևիկների մեջ գերակշռում եր ձախ թևը, որ գնում եր Տրոցկու յետևից։

Հոկտեմբերյան գործադուլի հաղթանակից հետո, առանց սպասելու կառավարության վրևե կարգադրությանը, մամուլի ազատություն և մտցվում։ Հոկտեմբերի 27-ից բոլշևիկները սկսում են հրատարակել իրենց լեգալ թերթը՝ «Նովայա Ժիզն»-ը, իսկ նոյեմբերի 13-ին լույս տեսավ մենշևիկյան «Նաչալո» թերթի առաջին համարը. Այդ թերթը ղեկավարում եր Տրոցկին։

Տրոցկիզմ.—Տրոցկու թեորիան իրենից ներկայացնում եր մենշևիզմի առանձին տեսակը։

Ինչպես և բոլոր մենշևիկները, նա հանձինս դյուգացիության կարող հեղափոխական ուժ չեր տեսնում։ «Վրևե չափով պրոլետարիատի դերին հավասարազոր հեղափոխական դեր չեն խաղա վոչ գյուղացիությունը, վոչ

1) Այդ պլանի էությունն այն եր, որ բուրժուազիայից անկախ, կառավարության հետ պայքարի յելնելու փոխարեն, բանվորները լիբերալներին կառավարության առաջ մեջնորդ դարձնեին իրենց պահանջների համար։

2) Բուլիգինյան դուման ոգտագործելու մենշևիկյան պլանը կայանում եր նրանում, որ ընտրողական իրավունքից զուրկ ժողովրդական մասսաները կանչվում եին, մի կողմից, որևիցե ընտրողների վրա ճնշում գործ գնելու, մյուս կողմից, վորպեսզի վերջիններն ավելի ձախ ներկայացուցիչներ ընտրեին, մյուս կողմից, վորպեսզի դրան զուգընթաց, որևէ հակառակ, ընտրեին իրենց ներկայացուցիչներին վոչ թե Դումա, այլ ընդհանրապես։

Այդպիսով, առանց վորևէ նպատակով և իշխանության՝ բոլորովին անհասկանալի թեյլովությամբ ընտրված պատգամավորները հետագայում պիտի հավաքվեին մի վորևե քաղաքում և իրենց հաշվեկշիռն հիմնադիր ժողով։

Այդ պլանը պիտի իրագործեր մենշևիկների այն խղճյան, քան վորի առանց գինված ապստամբության և ժամանակավոր հեղափոխական կառավարության, հնարավոր և հեղափոխությունը մինչև իր վճռական հաղթանակին հասցնելը։

քաղքենիությունը, վոչ ինտելլիգենցիան»,—հայտարարում էր Տրոցկին իր քաղաքական նամակներում՝ դեռ 1905 թվի մարտին։

Հետևաբար, հեղափոխության մեջ գյուղացիության էլ այնպիսի աննշան դեր էր հատկացվում, ինչպես և ինտելլիգենցիային։

Տրոցկիզմը (այդպես է կոչվում այդ թեորիան) հարձակվում էր բանվորների և գյուղացիների դիկտատուրայի բոլշևիկյան լոզունգի վրա։ Բայց դրա փոխարեն նա չէր առաջադրում բուրժուազիայի հետ միություն կամ համաձայնություն, այլ առաջադրում էր այս լոզունգը՝ «առանց թագավորի, իսկ կառավարությունը—բանվորական»։

Այդ լոզունգով բանվոր դասակարգը պայքարի մեջ մտնում էր բոլորովին միայնակ։ Կարո՞ղ էր նա հաղթանակել առանց վորևե դաշնակիցների։ Նա բավականաչափ ուժեղ էր, վորպեսզի վորոշ պայմաններում իր ձեռքը վերցներ իշխանությունը, բայց այն իր ձեռքում պահելու համար, նա ուժ չէր ունենա։

Տրոցկին այդ բանը չէր ժխտում։ Նրա կարծիքով, ռուսական հեղափոխությունը պարտությունից կարող էր փրկվել միայն այն դեպքում, յեթե նա առաջ բերի սոցիալիստական հաղթական հեղափոխություն Արևմտյան Յեվրոպայում։ Այն ժամանակ պետական իշխանությունն իր ձեռքը վերցրած յեվրոպական պրոլետարիատը անհրաժեշտ ոժանդակություն ցույց կտա Ռուսաստանի բանվոր դասակարգին։ Նման ոժանդակություն ստանալով, ռուսական հեղափոխությունը արդեն չի սահմանափակվի միայն դեմոկրատական հանրապետության նվաճումով, այլ կձեռնարկի աստիճանաբար սոցիալիզմ կառուցելուն։ Ձուտ բանվորական ժամանակավոր հեղափոխական կառավարությունը կշարունակի հեղափոխությունը մինչև նրա սոցիալիստական վախճանը, դարձնելով այն չընդհատվող։

Տրոցկու թեորիայի (վոր «պերմանենտ», այսինքն՝ չընդհատվող հեղափոխություն անունն է ստացել) այս համառոտ շարահյուսությունից արդեն պարզ է, վոր նա հավատի կործանման էր մատնում ռուսական հեղափոխությունը։ Մենք հիմա գիտենք, վոր վոչ միայն 1905 թվի հեղափոխությունը, այլ և 1917 թվի հեղափոխությունը յեվրոպական պրոլետարիատին հեղափոխության չհասցրեց։

Այնուամենայնիվ, առանց մյուս յերկրների բանվոր դասակարգի «պետական» ոժանդակության, ռուսական հեղափոխությունն արդեն լինը տարի յե դիմանում է և կործանվելու ամենևին մտադրություն չունի։ Պրոլետարիատին ոժանդակելու համար նա բավական զորեղ ուժ զտավ իր, Ռուսաստանի ներսում, և այդ ուժը հանդիսացավ հենց այն գյուղացիությունը, վորի նշանակությունը ռուսական հեղափոխության մեջ չեյին հասկանում բոլոր դույնի մենշևիկները։

Մենշևիկների ժամանակավոր «դոյլեվիկյան թեումը»՝ դեպի լիբերալ բուրժուազիան ունեցած վերաբերմունքի հարցում.—Բայց 1905 թ. հոկտեմբերյան և նոյեմբերյան ազատության որերին առաջին պլանի վրա յե դրվում մի ուրիշ հարց, այն է՝ թե ինչպես պետք է վերաբերվել դեպի լիբերալ բուրժուազիան։

Ինչպես վերևում ասվեց, մենշևիկյան «Նաչալո» թերթին տոն տվողը Տրոցկին էր, իսկ նա ևս, ինչպես և բոլշևիկները, հանձինս բուրժուազիայի՝ հեղափոխության շարժիչ ուժ չէր տեսնում. այդ իսկ պատճառով «Նաչալոն» ուժեղ կերպով թեքվեց դեպի բոլշևիկյան ուղին։ Այդ շատ նպաստեց բոլշևիկների և մենշևիկների մերձեցմանը։

Հակումն դեպի միացում.—Բացի այդ, կուսակցությունը դուրս էր յեկել պաղպոլիայից և թվում էր, վոր յեթե նա գործի բոլորի աչքի առաջ, ապա անհնար կդառ-

նան այնպիսի յերևույթներ, իրշպիսին են փոքրամասնության չյենթարկվելը մեծամասնությանը, կուսակցության կենտրոնական որգաններին (մեծամասնության ընտրած) սաբոտաժի յենթարկելը փոքրամասնության կողմիցև այլն։

Միացում եյին պահանջում նաև իրենք կուսակցական մասսաները և բոյշևիկյան «Նովայա ժիզն» լրագիրը «տեղերում, ստորին խավերում միանալու» լոզունգը տվեց։ Այդ նշանակում եր, վոր լրագիրը առաջարկում եր, վոր յուրաքանչյուր քաղաքում և ամենուրեք, ուր յերկու առանձին կազմակերպություններ կային՝ բոյշևիկյան ու մենշևիկյան, այդ կազմակերպություններն իրենք համաձայնության գային և ի մի ձուլվեյին՝ առանց սպասելու կենտրոնական հիմնարկների ձուլմանը։

Այդպիսի միացումները սկսվեցին և 1906 թ. սկզբին ամենուրեք տեղի ունեցան։ Միացան նուշնպես և կենտրոնները։

Ազատության այդ որերին հաջորդող դեպքերը, մանավանդ վինված ապստամբության պարտությունը, նոր վիճելի հարցեր առաջադրեցին և նորից սրեցին ֆրակցիաների միջև յեղած հարաբերությունները։

Բայց և այնպես, միացման ուղղությամբ ընթացող շարժումը այնքան եր ուժեղացել, վոր այդ նոր վիճերն այն չկարողացրին և վիճելի հարցերը փոխադրվեցին միացյալ համագումարի քննության։

Միացյալ համագումարը.—Այդ համագումարը կայացավ 1906 թ. ապրիլին, Ստոկհոլմում։ Այնտեղ ներկա եյին 111 պատգամավոր՝ 57 կազմակերպությունների կողմից, չհաշված խորհրդակցական ձայնի իրավունքով ներկա գտնված պատգամավորներին, ազգային և ոտարյերկրյա կուսակցությունների ներկայացուցիչներին և հյուրերին։ Ընդհամենը համագումարին ներկա եյին 156 մարդ։

Զինված ապստամբության պարտության հիասթափության հետևանքով համագումարի կազմը գործում եր ընկճված տրամադրությամբ։ Մենշևիկները մի քիչ գերակշռություն ստացան, բոյշևիկներից 12—15 ձայնով ավելի։

Ագրարային ծրագրի փոփոխումը.— Ծրագրի ագրարային մասը փոփոխման յենթարկվեց։ Հիմա արդեն կուսակցությունը պահանջում եր բռնագրավել այն բոլոր հողերը, վորոնք գյուղացիության չեյին պատկանում։ Բոյշևիկների ու մենշևիկների միջև այդ մասին խոշոր վեճեր չկային։ Նրանք յերկուսն էլ, դեռ մինչև համագումարն այդ ուղղությամբ արտահայտվեցին[1])։ Այնուամենայնիվ, տարաձայնություններն ագրարային հարցի շուրջը շատ խորն եյին։

Ագրարային ծրագրի բոյշևիկյան նախագիծը, վոր կազմել և պաշտպանում եր ընկեր Լենինը, նախ և առաջ շեշտում եր գյուղացիության ամենալայն ինքնագործունեության անհրաժեշտությունը հեղափոխության մեջ։

Այդ պատճառով նա ծրագրի մեջ եր մտցնում գյուղացիական հեղափոխական կոմիտեներ հիմնադրելու մասին առանձին կետ՝ կալվածատիրական հողատիրությունն ու գյուղում կալվածատիրական իշխանությունն հիմնովին վոչնչացնելու համար։

Մինչև հիմնադիր ժողովի կողմից հողաշինարարության ընդհանուր կանոնադրության մշակելը, բռնագրավված հողերի վերաբերմամբ կարգադրություն անելու իրավունքն անցնում եր հիշյալ կոմիտեներին։

Այդ կետը հետևաբար մի կոչ եր՝ գյուղում գյուղացիների ինքնագլուխ հեղափոխական իշխանություն հաս-

[1]) Թեև մենշևիկները մի մասն ուզում եր բանաձևի մեջ «կոնֆիսկացիա» բառը փոխարինել «սեփականության բարձում» (отчуждение) տերմինով, վոր յենթադրում և հնարավորություն՝ հողը գյուղացիներին հանձնելու, յուր գնման (հողի գլխագին վճարելու) պայմանով։

տատեղու՝ կալվածատերերի հետ հաշիվ տեսնելու և հողի նկատմամբ կարգադրություններ անելու գործում։

Յերկրորդ.—ընկեր Լենինի նախագիծը ամենասերտ կապ էր ստեղծում գյուղացիության հիմնական պահանջի՝ հողի բռնագրավման, և հեղափոխության հիմնական քաղաքական նպատակի՝ դեմոկրատական հանրապետության նվաճման միջև։

«Մենք պետք է,—ասում էր ընկ. Լենինը համագումարում,—գյուղացուն ասենք. հողը վերցնելով, դու պետք է առաջ գնաս... Չի կարելի հողը վերցնել և այն իր ձեռքում պահել՝ առանց նոր քաղաքական գրավումների, առանց նոր, և էլ ավելի վճռական հարված հասցնելու ընդհանրապես հողի մասնավոր սեփականության»։

Կալվածատիրական հողի գրավումից հետո շարունակելով իր վճռական պայքարը մինչև դեմոկրատական հանրապետության հիմնավորումը, այլ կերպ ասած, հեղափոխական պայքարը մինչև վերջը տանելով, միայն այդ դեպքում գյուղացիությունն ամուր կերպով կամրապնդի իր գրավումները։

Հեղափոխության այդպիսի վճռական հաղթանակի դեպքում, հետևաբար, քաղաքական հասարակակարգի լրիվ դեմոկրատիզացիայի (և միայն այդ պայմանով) դեպքում, «կուսակցությունը պիտի ջանա հասնել այն վիճակին, որ վերացվի հողի մասնավոր սեփականությունը և բոլոր հողերն դարձնվի ամբողջ ժողովրդի ընդհանուր սեփականություն», այսինքն՝ հողը ազգայնացման յենթարկի։

Հետևաբար, հողի ազգայնացման պահանջը կախում ուներ հեղափոխության լրիվ հաղթանակի իրագործումից, իսկ այդպիսի հաղթանակ, ինչպես մենք գիտենք, հնարավոր էր միայն պրոլետարիատի և գյուղացիության միջև ամուր դաշինքի իրագործումով, պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի լոզունգի իրագործումով։

Իսկ մենշևիկները նորից հայտնաբերեցին իրենց անհասկացողությունը՝ հեղափոխության մեջ գյուղացիության նշանակության մասին՝ և գյուղացիական կոմիտեների կազմակերպման ու հողի ազգայնացման դեմ արտահայտվեցին։ Ոգևորվելով համագումարում իրենց ունեցած գերակշռող ձայնից, նրանք անցկացրին մունիցիպալիզացիայի իրենց պահանջը, այսինքն՝ բռնագրավված հողերը տեղական ինքնավարության որգաններին տրամադրությանն հանձնելը։

Համագումարի այլ վորոշումները.—Այդ նույն մենշևիկյան վոգով ընդունվեց նաև բանաձևը զինված ապստամբության մասին։ Նման ապստամբության և ընդհանրապես ամբողջ հեղափոխության նպատակ հայտարարվում է ինքնակալ կառավարության ձեռքից իշխանությունը խլելը, և վոչ թե դա պրոլետարիատի կողմից գրավելը՝ գյուղացիության հետ միասին։ Բանաձևի մեջ նաև անց է կացվում մենշևիկներին շատ սիրելի այն միտքը, վոր ժողովրդին պիտի զինել վոչ թե հրացաններով և ուրիշ տեսակի զենքերով, այլ միայն «զինելու անհրաժեշտության վառ գիտակցությամբ»։

Վերջապես, համագումարը վորոշում է մասնակցել պետական դումայի ընտրություններին և այնտեղ սոցիալ-դեմոկրատական ինքնուրույն ֆրակցիա կազմակերպել։ Բոլշևիկները պնդում էին Դուման բոյկոտելու վրա։

Դումայի վերաբերյալ հարցը կազմում է ուրիշ ավելի ընդհանուր հարցի մի մասն, այն մասին, թե այն միջոցին ինչ մոմենտ էր ապրում ռուսական հեղափոխությունը, և միայն ճիշտ վճռելով այդ մեծ հարցը, կարելի չէր ճիշտ վճռել և կուսակցության՝ դեպի Պետական Դուման ունեցած վերաբերմունքի հարցը։

Սակայն այդ մեծ հարցը, «ներկա մոմենտի և պրո-

լետարիատի դասակարգային անելիքների մասին», դրվեց միայն Միացյալ Համագումարում, բայց չվճռվեց։ Նա ուժեղ վեճեր առաջ բերեց, բայց տաք բանավեճից հետո, մենշևիկների ձայներով վորոշվեց այդ հարցի մասին վոչ մի բանաձև չընդունել։

Մոմենտի բոլշևիկյան գնահատումը յեվ Առաջին Դումաև բոյկոտելը.— Նոր տարաձայնությունների եյությունը հետևյալն եր։ Բոլշևիկներն ասում եյին, վոր մենք ապրում ենք հեղափոխական մոմենտ, և կուսակցության անելիքները ծնում են նախկինը։ Կուսակցությունը պիտի պատրաստվի հեղափոխական նոր վերելքի, իսկ Դումայի նպատակն և հեղափոխությունը մարել, սքողել ժողովրդի գիտակցությունը, դա թուլնավորելով կեղծ իղեայով,—վոր հիմա հեղափոխական պայքար այլևս պետք չե, վոր հիմա բոլոր խնդիրները կարող են լուծվել պարլամենտական խաղաղ ճանապարհով։

Այդ սահմանադրական իլյուզիաները, այսինքն խաբուսիկ իղեաներն այն մասին, վոր Ռուսաստանում արդեն հաստատվել և ամուր սահմանադրություն (պարլամենտական կարգ), վորը ժողովրդին կարող և տալ այն ամենն, ինչ նրան պետք և,—հատկապես ուժեղ եյին դյուղացիության մեջ։ Դյուղացիները Դումա ուղարկեցին բավական թվով կադետներ և հայացքներով այդ վերջիններին մոտ կանգնած անկուսակցական պատվիրակներ, վորոնց տրված հրահանգ-ցանկությունների մեջ իրենց միամիտ հավատն եյին արտահայտում Դումայի վերաբերմամբ։

Ահա, որինակի համար, ինչ ենք կարդում այդպիսի հրահանգներից մեկում. «Մեր հույսը—Պետական Դուման և, և միայն նրանից ենք մենք ամնիստիա, հող և ազատություն խնդրում»։

Այդպիսի պայմաններում, մասնակցելով ընտրություններին, Լենինի խոսքով ասած, մենք ակամայից կպաշտպանենք ժողովրդի՝ դեպի Դուման ունեցած հավատը։ Պետական Դուման պարլամենտ չե, այլ ինքնակալության սարքած թակարդ։

Սոցիալ-դեմոկրատների պարտականությունն և—հիմքից վերացնել այդ «սահմանադրական իլյուզիաները», իսկ դրա իրագործմանն ամենից լավ կարելի յեր հասնել միայն ընտրություններին ակտիվ բոյկոտ անելով։

Բոյկոտը պիտի լինի ակտիվ,—այդ նշանակում և, վոր սոց.-դեմոկրատները չպիտի սահմանափակվեն միայն ընտրություններին ձեռնպահ մնալով, այլ վորքան կարելի յե լայն ագիտացիա պիտի տանեն, պարզաբանելով Դումայի եյությունը, և պետք և վոչ միայն կոչ անեն ընտրությունների կոմեդիային մասնակցելուց հրաժարվել, այլև Դումայի պատերից դուրս պետք և հեղափոխական միջոցներով պայքարեն։

Մենշևիկների հայացքները նույն հարցի մասին.— Սկզբում մենշևիկները նույնպես կողմնակից եյին Դումայի բոյկոտի յենթարկելուն, բայց անհրաժեշտ եյին գտնում ընտրություններն ոգտագործել, ուստի և կոչ եյին անում մասնակցելու առաջին աստիճանի ընտրություններին, այսինքն մասնակցելու այն ընտրական ժողովներին, վորտեղ նախորոք ընտրվում եյին միայն ընտրողներ, և վոչ պատգամավորներ։

Շուտով նրանք փոխեցին իրենց հայացքները և արտահայտվեցին Դումայի բոլոր աստիճանի ընտրություններին մասնակցելու ոգտին։

Զինված ապստամբության պարտությունից հետո, մենշևիկները շուտով հարեցին այն հայացքին, վոր հեղափոխությունը վերջացած և, և պրոլետարիատը պետք և

եվրոպական այլ յերկրների որինակով անցնի պայքարի պարլամենտական մեթոդներին։

Հեղափոխության վրա բռնած կուրսը յեվ Դումաև բոյկոտելը հեղափոխական կուսակցության միակ ընդունելի տակտիկան եր.—Ո՛վ եր ճիշտ։ Հետագա դեպքերը ցույց տվին, որ հեղափոխական նոր վերելքի վոխարեն շարժումը վարկյանի գծով ընթացավ։ Նոր վերելքը պարզ նըշմարվեց միայն 1902 թվին, և 1905 թիվը հիշեցնող դեպքերը ծավալվել սկսեցին միայն 1914 թվին, պատերազմի հենց նախորյակին։

Հետևաբար, ճիշտ եյին բոլշևիկները, յերբ պնդում եյին, որ հեղափոխությունը դեռ չի վերջացել։

Նրանց սխալը միայն ժամկետի վերաբերյալ եր և ակնհայտնի դարձավ միայն հետագայում։ Այդ մի փոքր և հեշտ շտկվող սխալ եր,—գրում եր ընկեր Լենինը հետագայում, «Ձախությյան յերեխայական հիվանդությունը կոմունիզմի մեջ» իր գրքում։

Ժամանակի վերաբերյալ անխուսափելի սխալները լավ հեղափոխականների կողմից միշտ ել արվում են՝ նոր վերելքի շուտափույթ սկսման ուղղությամբ։ Իսկ խաղաղ ռեֆորմների կողմնակիցները միշտ ել յերկարացնում են շա ժման կանգառման պերիոդները և միշտ ել աշխատում են որքան կարելի յե դրանք շուտ սկսել։

1906 թվին, առավել ևս նրա առաջին կեսին, բավարար ոյժերը չկային հաստատելու համար, որ հեղափոխական նոր պայթյունը տանյակ տարիներով հետաձգվում է։

Չե որ հենց 1906 թվի գարնանը նորից ծայր առավ գյուղացիական շարժման ուժեղ ալիքը, իսկ ապրիլին, բանվորական գործադուլային շարժման վերելք սկսվեց։

Փետրվար ու մարտ ամիսների 109 քաղաքական գործադուլների (32.622 մասնակիցների) փոխարեն, ապրիլին մենք ունենք 1.026 գործադուլ (152.476 մասնակիցներ)։ Նույնպես և տնտեսական գործադուլների մասնակիցները 1906 թ. յերկրորդ յեռամսյակին կազմում են 222 հազար մարդ՝ նույն թվի առաջին յեռամսյակի 73 հազարի դիմաց։

Այսպիսի պայմաններում, հեղափոխականի համար ընդունելի յեր միայն հեղափոխության վրա բռնած կուրսը և Դուման բոյկոտի յենթարկելու տակտիկայից հրաժարվելը չեր կարող արտահայտվել վոչ մի այլ բանով, բայց յեթե խաղաղ պարլամենտական պայքարի շրջանը վորքան կարելի յե շուտ սկսելու ցանկությամբ։

Մենշևիկների տակտիկան պայմանավորվում եր նրանց հիմնական խոշոր սխալով, այն, որ նրանք ռուսական հեղափոխությունը վերջացած եյին համարում։

Առաջին Դումաև.—Առաջին դուման յերկար կյանք չունեցավ։ Զինված ապստամբությունը ճնշելուց հետո կառավարությունն ինքը դեռ համոզված չեր իր հաղթանակի մեջ և սիրտ չեր անում բացահայտորեն հրաժարվելու հոկտեմբերի 17-ի մանիֆեստով խոստացածներից։ Այդ իսկ պատճառով Դուման դումաբրվեց։ Բայց կառավարությունն ուզում եր այն վերածել մանր-մունր հարցերով զբաղվող, կամ ինչպես այն ժամանակ եյին արտահայտվում՝ «վերմիշելով» զբաղվող դատարկախոսության վայրի։

Այդ նպատակով նա Դումա մտցրեց յերկու «շտապ» որինագիծ. առաջինը—Յուրևսկի համալսարանին կից լվացատուն և ծաղկանոց հիմնելու համար վարկ բաց թողնելու մասին և յերկրորդը—կանացի մանավոր կուրսեր բանալու իրավունքի մասին։

Իսկ Դուման իր ժամանակի համարյա $^{9}/_{10}$ մասը գործադրեց ագրարային հարցի քննության վրա, այսինքն ամենավտանգավոր և կառավարության անդուրեկան հարցի

վրա։ Դուման դումարելիս— կառավարությունը վորոշել եր այդ հարցում և վոչ մի դիջում չանել, և յեթե Դուման պնդի, ապա անմիջապես ցրել այն։

1906 թ. հուլիսին ցարի ուկազով Դուման ցրվեց։

«Սահմանադրական պատրանքներին» շուտով վերջ տրվեց.— Դյուղացիական պատգամավորներից դումայում կազմվեց մի խմբակ, 90-ից ավելի մարդուց, «տրուդովիկների» խմբակ անվան տակ։ Դումայում ագրարային հարցի քննությունը «տրուդովիկների» և ընդհանրապես բոլոր դյուղացիների աչքը բաց արավ իրերի իսկական դրության վրա, և ուժեղ կերպով դգեց նրանց հավատը, վոր իրը հնարավոր է Դումայի կարգով հող ձեռք բերել։

Ժողովրդական մասսաների «սահմանադրական պատրանքներին» ուժեղ հարված է հասցվում Առաջին Դումայի փորձով և նրա անփառունակ վախճանով։

Բանվորական ու գյուղացիական շարժման վարելքը.— Բացի այդ, 1906 թվի յերկրորդ կեսից բանվորական գործադուլային շարժման անընդհատ վարելք սկսվեց։ Այդ թվի վերջին յերեք ամիսներում անտեսական գործադուլներին մասնակցողների թիվը հասնում եր միայն 37.000-ի, մինչդեռ ապրիլ, մայիս և հունիս ամիսներում, ինչպես մենք տեսանք, նրանց թիվը 222 հազար եր։

Նույն կերպ նվազում եր նաև գյուղացիական խլըրտումների ալիքը։

Յերկրորդ Դումայի ընտրությունները.—Այդպիսի պայմաններում Յերկրորդ Դումային (վորը գումարվեց 1907 թվի փետրվարին) մասնակցելու հարցը տարաձայնությունների տեղիք չտվեց, բայց ընտրությունների անցկացման հարցի շուրջը միասնական տակտիկա ունենալ

չհաջողվեց։ Բոլշևիկներն ընտրությունների առաջին շրջանում վոչ մի համաձայնություն չեյին թույլ տալիս, իսկ հետագա —բարձր աստիճաններում— համաձայնվում եյին միայն տրուդովիկների ու սոցիալիստ-հեղափոխականների հետ։ Իսկ մենշևիկները պնդում և իրականում բլոկ ու համաձայնություն եյին կայացնում կադետների հետ, նույնիսկ ընտրությունների առաջին շրջանում։

Դումայի սոցիալ դեմոկրատական ֆրակցիան բաղկացած եր 54 անդամից, կային Դումայի 11 անդամ ևս, հորոնք հարում եյին ֆրակցիային։ Բոլշևիկների ու մենշևիկների միջև տարաձայնությունները շարունակվում եյին, բայց և այնպես գործը մինչև պառակտման չհասավ։

Հինգերորդ համագումարը: Նրա կազմն ու աշխատանքը.—1907 թ. մայիսին Լոնդոնում կայացավ կուսակցության հինգերորդ համագումարը։ Այդ համագումարին մասնակցում եյին չորրորդ համագումարի վորոշման հիման վրա Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության մեջ մտած հրեական (Բունդը), լեհական և լատիշական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները։

Ընդհամենը կային 336 պատգամավոր, վորոնցից բոլշևիկներ՝ 150, մենշևիկներ՝ 97, իսկ մնացածները պատկանում եյին ազգային կազմակերպություններին (Լեհաստանի սոցիալ-դեմոկրատները, լատիշական սոցիալ-դեմոկրատները և Բունդը), վորոնք մեծամասնությամբ, տակտիկայի հիմնական հարցերում, քվեյարկեցին բոլշևիկների հետ, բացի բունդականներից, վորոնք պաշտպանում եյին մենշևիկներին։

Բոլշևիկները գերակշռում եյին միայն մի քանի ձայնով, յերբեմն այդ տարբերությունը լինում եր յերկու-յերեք ձայնով։ Ձայների այդպիսի չնչին գերակշռությամբ բոլշ-

շևիկները չհաջողվեց պնդել այն բանի վրա, որ համագումարն արտահայտվի այնպիսի կարևոր հարցի առթիվ, ինչպիսին է ընթացիկ մոմենտի զնահատականը։ Այդ հարցը հանվեց օրակարգից, քանի որ բոլշևիկների մի մասը մենշևիկների հետ միասին այդ հարցի դրման դեմ արտահայտվեց, որպեսզի դրանով հնարավոր պառակտումը կանխի։

Բայց այնպիսի բանաձևերը, ինչպիսին են՝ Պետական Դումայի մասին, լիբերալ բուրժուազիայի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին,—ընդունվեցին բոլշևիկյան ձոզով։

Այդ բանաձևերի մեջ պայքար է հայտարարվում ոչ միայն լինքնակալության դեմ, այլև լիբերալիզմի դեմ՝ որպես հակահեղափոխական հոսանքի, և հաստատվում է— անհրաժեշտ համարել պայքարը կադետական կուսակցության դեմ, որը ձգտում է ղեկավարել մանր-բուրժուական շարժումը։

Դատապարտվեց նաև անկուսակցական բանվորական համագումարի մենշևիկյան իդեայն։

Լայն բանվորական կուսակցություն ստեղծել էին ձգտում մենշևիկները ավելի էին զարգացնում իրենց այն իդեյաները, որ նրանք արտահայտել էին կուսակցության յերկրորդ համագումարում՝ կանոնադրության առաջին կետի շուրջը վիճելիս (տես 5-րդ գրույցը), և նույնիսկ այնտեղը հասան, որ առաջարկում էին հիմնել նոր բանվորական կուսակցություն, որի հիմքը պիտի դրվեր անկուսակցական բանվորական համագումարում։

Լոնդոնի համագումարը որոշեց վերջ դնել այդ վտանգավոր խաղին։

Վերջին յերեք զրույցների յնզրակացությունը.—Յեվ այսպես, մեր քննած վերջին յերեք զրույցներում, 1905 թվից մինչև 1907 թիվը ընկած ժամանակաշրջանում, մենշևիկների դեմ մղած իրենց պայքարում բոլշևիկները պաշտպանում էին յերեք հիմնական իդեյա.

1) կուսակցության կառուցման հարցերում՝ դեմոկրատական ցենտրալիզմ,

2) տակտիկայի հարցերում՝ պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրա,

3) ծրագրի հարցերում՝ հողի ազգայնացում։

Դեմոկրատական ցենտրալիզմն իր լրիվ զարգացման ձևով յենթադրում է, նախ, կուսակցության բարձրագույն մարմինների ընտրություն՝ ստորին կազմակերպությունների կողմից. յերկրորդ, ստորին բջիջների անպայման յենթարկումը՝ բարձրագույն մարմինների վորոշումներին, և կուսակցության ամբողջ գործնեության միասնական ղեկավարություն՝ կուսակցական կենտրոնական հիմնարկի կողմից։

«Դեմոկրատիզմից» շեղվելը, այսինքն բարձրագույն մարմինները ստորին կազմակերպությունների կողմից ընտրելու սիստեմից շեղվելը թույլատրելի յե և կուսակցության պոդպոլյ աշխատանքի ժիջոցին նույնիսկ անհրաժեշտ է։ Բարձրագույն մարմինների կազմը վորքան կարելի յե ավելի լավ պիտի կոնսպերացիայի յենթարկվի, թագցվի իշխանություններից, իսկ լայն ընտրություններն միջոցին այդ հնարավոր չե անել։ Ուստի նման պայմաններում կուսակցության բարձրագույն հիմնարկներին կոոպտացիայի իրավունք է տրվում, այսինքն իրավունք է տրվում, վոր իրենք հիմնարկները իրենց կազմի մեջ առնեն նոր անդամներ։

Իսկ ցենտրալիզմից շեղվելը, այսինքն կուսակցության բարձրագույն որգաններին յենթարկվելու պարտականությունից և կուսակցական կյանքի ամբողջ ղեկավարությունը միասնական ղեկավար մարմնում կենտրոնացնելուց

շեղվելը բոլշևիկները համարում էին անթույլատրելի։ Կուսակցությունը կարող է բանվոր դասակարգին հաղթանակի հասցնել միայն այդպիսի խիստ կենտրոնացումով, որը յենթադրում է նաև ընկերական փոխադարձ վստահության վրա հիմնված յերկաթյա դիսցիպլինա։

Յերկրորդ համագումարում և նրանից հետո կազմակերպչական հարցերի շուրջը ծագած վեճերի ամբողջ խմաստը հանգում էր կենտրոնացման այդպիսի պրինցիպը բոլշևիկների կողմից պաշտպանելուն և այնպիսի պայմաններ ստեղծելուն, որոնց մեջ հնարավոր լիներ նրա հետևողական կիրառումը։

Բոլշևիկների հռչակած՝ պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի լոզունգն իրագործվել սկսվեց 1905 թվին։

Այդ թվի Մորհուրդները հենց այդպիսի դիկտատուրայի սաղմնային ձևերն էին։

Տարերայնորեն ծայր առնելով, որպես գործադուլային պայքարի մարմիններ, նրանք պայքարի իսկ ընթացքում դարձան ապստամբության և հեղափոխական իշխանության որգաններ։ Այդ իշխանությունը հենվում էր միայն ժողովրդական ապստամբության ուժի վրա։ Հետևաբար նա իրենից ներկայացնում էր դիկտատուրա, այսինքն և վոչ մի որենքով չսահմանափակված իշխանություն։

Մորհուրդները հանդիսացան պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի բոլշևիկյան իդեայի՝ կյանքում մարմնանալու սկիզբը, իսկ 1905 թվի ամբողջ հեղափոխությունը «գլխավոր ռեպետիցիան» (փորձն) էր այն դեպքերի, որ տեղի ունեցան 12 տարի հետո։

Մենշևիկները պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի լոզունգի դեմ դուրս գալով, ստիպված էին յերևելու նաև Մորհուրդների բոլշևիկյան իդեայի դեմ՝ որպես հեղափոխական իշխանության որգանների դեմ, և

գինված ապստամբությանը վերաբերվելու իբրև պայքարի այնպիսի մեթոդի, որից կարելի յե և պետք է աշխատել խուսափել, որպեսզի հեղափոխությունից չհեռացվի, նրանց կարծիքով, նրա անհրաժեշտ շարժիչ ուժը—լիբերալ բուրժուազիան։

Այդ հարկադրեց մենշևիկներին նախ պրակտիկայում և ապա թեորիայում պրոլետարական հեգեմոնիայի իդեայի հակառակորդներ դառնալու, ինչը նրանց ուղիղ ճանապարհով 1917 թվին նետեց բանվոր դասակարգի բացահայտ թշնամիների բանակը։

Հողի ազգայնացման բոլշևիկյան լոզունգը մենշևիկների կողմից մունիցիպալիզացիայով փոխարինելը հայտնաբերեց նրանց հակահեղափոխական էությունը, քանի որ նման փոխարինումը խեղաթյուրում էր այդ լոզունգի իսկական իդեյան, լոզունգի, որն ունում էր անհրաժեշտ՝ բուրժուական հեղափոխությունը (գյուղացիական ապստամբությունները ծայր աստիճանի զարգացնելու միջոցով) մինչև վերջ հասցնելու։

Այդ յերեք իդեաները 1) դեմոկրատական ցենտրալիզմ, 2) պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրա և 3) հողի ազգայնացում—ըստ էության վոչ այլ ինչ էին, քան կուսակցության հիմնական իդեայի՝ պրոլետարիատի հեգեմոնիայի արտահայտությունը կանոնադրության մեջ, տակտիկայում ու ծրագրում։

Հողի ազգայնացման լոզունգով պրոլետարիատը կոչ էր անում գյուղացիությանը կես ճանապարհին կանգ չառնել, հողի վերաբերյալ իր պահանջը դեմոկրատական հանրապետության գրավման խնդրի հետ կապել և իր հետ միասին իշխանությունը խլել։

Հետևաբար այդ—պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան իրագործելու կոչ էր։ Այդ դիկտատուրայի իրագործումը ցույց

կաար, վոր պրոլետարիատին հաջողվեց դուրս բերել գյուղացիությանը բուրժուազիայի ազդեցության տակից և նրան տանել իր (պրոլետարիատի) ճանապարհով։ Այդ կնշանակեր պրոլետարիատի հեգեմոնիայի իրագործումը՝ բուրժուական հեղափոխության մեջ։

Բայց հեղափոխության հեգեմոնիայի այդ դերը բանվոր դասակարգը կարող եր կատարել միայն այն դեպքում, յեթե նրա առաջավոր գունդը, նրա քաղաքական կուսակցությունը կառուցված լիներ այնպիսի կազմակերպչական սկզբունքների վրա, վորոնք զորեղ արգելակներով թույլ չտային համաձայնական - բուրժուական ազդեցությունները կուսակցության մեջ անցնելու, ազդեցություններ, վոր խեղաթյուրում եյին պրոլետարիատի հեգեմոնիայի իդեյան։ Հետևաբար դեմոկրատական ցենտրալիզմն իրմով այդ իդեյան անդրադարձնում եր կանոնադրության մեջ։

ՊԱՅՔԱՐ՝ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.

I. 1907—1910 Թ. Թ., ՌԵԱԿՑԻԱՅԻ ՇՐՋԱՆԸ.

Յերկրորդ Դումայի ցրումը յեվ ընտրական նոր որենքը.— Շուտով, Լոնդոնի համագումարից հետո, կառավարությունը ցրեց Պետական Դուման։ Սոցիալ-դեմոկրատական պատգամավորները տաժանակիր աշխատանքի ուղարկվեցին։

Հայտարարվեց գումարել Յերրորդ Դուման, բայց բոլորովին նոր ընտրական որենքի հիման վրա. ըստ այդ որենքի, կառավարությունն ապահովված եր, վոր Դուման ցանկալի կազմ կունենա։ Մեծ փոփոխությունների յեր յենթարկվել մանավանդ գյուղացիների ընտրական իրավունքը։ Հիմա նրանց միայն մի փոքր մասը կարող եր Դումա ընկնել, ըստ վորում այնպես եր սարքված, վոր գյուղացիները միայն ընտրողներ եյին տալիս ավելի ունևոր գյուղացիներից, իսկ հետագայում կալվածատերերն արդեն իրենք եյին վորոշում, թե այդ ընտրողներից ումն ուղարկել Դումա։

Ընտրական իրավունքի այդպիսի լպիրշ կեղծումը ուղղակի ծաղր եր ժողովրդի հասցեյին։ Կառավարության կողմից կատարված իսկական պետական հեղաշրջում եր այդ, բայց ժողովրդի մեջ նա վոչ մի դիմադրության չհանդիպեց։

Կուսակցության առաջ նորից ծառանում է այն հարցը, թե ինչ վերաբերմունք պետք է ունենալ դեպի Պետական Դուման.— Կուսակցության առաջ նորից ծառացավ այն

հարցը, թե ինչ վերաբերմունք պիտի ունենար դեպի Պետական Դուման։ Պե՞տք է արդյոք մասնակցել նրա աշխատանքներին, թե բոյկոտի ենթարկել այն։

Այդ հարցին ճիշտ պատասխանելու համար, անհրաժեշտ էր լավ հասկանալ ստեղծված դրությունը, իսկ 1907 թվին այդ անել չափազանց դժվար էր։

Վերջացե՞լ է արդյոք ռուսական հեղափոխությունը թե՞ վոչ,—ահա թե ինչպես էր դրվում հարցը։ Մենշևիկները այդ հարցին այսպես էին պատասխանում. այո, հեղափոխությունը վերջացել է։ Հիմա սկսվել է խաղաղ պարլամենտական պայքարի ժամանակը, ինչպես դա Եվրոպայի մյուս երկրներում է։ Պիտի գնալ Դուման։

Բոլշևիկների պատասխանը բոլորովին այլ էր. իշխանությունը ճնշել է նույն մարդկանց ձեռքերում։ Հեղափոխության խնդիրը—իշխանությունը կալվածատեր-ճորտատերերից բուրժուազիային անցնելը չհաջողվեց։ Այդպիսի փոխանցում չի կարող կատարվել առանց հեղափոխության, մինչդեռ երկրի արտադրական ուժերի հետագա զարգացումը կտրականապես պահանջում է իշխանության այդպիսի փոխանցում։ Հետևաբար հեղափոխությունը չի վերջացել։

Այստեղից բազմաթիվ բոլշևիկներ հետևյալ եզրակացությունն էին անում. իր ուժի մեջ է ճնում կուսակցության առաջվա տակտիկան, և Յերրորդ Դուման էլ հարկավոր է բոյկոտի ենթարկել ճիշտ այնպես, ինչպես Բուլիգինյան Դուման, որից նա համարյա վոչնչով չի տարբերվում։

Ինչպես էր գնահատում ստեղծված դրությունը Վ. Ի. Լենինը, ըստ ինչում նա դեմ էր բոյկոտին.—Բայց ընկ. Լենինն, իր կողմնակիցների փոքրաթիվ խմբակի հետ, արդենային ժամանակ, 1907 թվին, ճիշտ գնահատեց նոր սկսված շրջանը։

Դումային մասնակցելու կամ դա բոյկոտի ենթարկելու հարցը վճռելու համար—ասում էր նա—բավական չէ ճիշտ վճռել այն հարցը, թե արդյո՞ք վերջացել է ռուսական հեղափոխությունը թե վոչ։

Ճիշտ է, որ հեղափոխության խնդիրը չի լուծված և, հետևաբար, հեղափոխությունը չի վերջացել։ Ճիշտ է, որ կուսակցության տակտիկայի հիմունքները ճնում են առաջվանը,—պիտի բռնել հեղափոխության ուղին։

Բայց այստեղից չի հետևում, որ պետք է Յերրորդ Դուման բոյկոտի ենթարկել։

Հեղափոխության խնդիրը չի լուծված, բայց և այնպես մի քայլ արված է դեպի այդ լուծումը։ Իշխանության առյուծային բաժինը ճնաց նախկին ձեռքերում, բայց նրա մի մասը համենայն դեպս անցել է արդյունաբերական բուրժուազիային։

Հենց այդ Յերրորդ Դուման մի այնպիսի հիմնարկ է, որի միջոցով բուրժուազիայի վերին խավերը կանչված են պետական իշխանության մասնակցելու գործի մեջ։

Չի կարելի աչք փակել այն բանի վրա, որ Ռուսաստանը հեղափոխության ազդեցության տակ մի քայլ ևս արեց՝ վերածվելու բուրժուական-միապետության։

Այդ ուղղությամբ արված առաջին խոշոր քայլը, անցյալ դարի 60-ական թվականներին, Ալեքսանդր II-ի թագավորության որոք մտցված ռեֆորմներն էին, որոնցից ամենակարևորը ճորտատիրական իրավունքի վերացումն էր։

Հիմա արված է յերկրորդ քայլը և դրանով յերկաբացված է ինքնակալության կյանքը։

Հեղափոխական շարժումը թևակոխել է դադարի շրջան։ Նոր պայթյունն անխուսափելի չէ, բայց վոչ մոտիկ ժամանակում։

Նոր պայմանները պայքարի նոր պրիյոմներ ու միջոցներ են պահանջում։ Մենք հիմա պիտի անցնենք մաս-

ամներին նոր վճռական պայքարի պատրաստելու տեսական աշխատանքին։ Դրա համար ցարական կառավարության անդուլ քմահաճույքի շրջանում անհրաժեշտ է ոգտագործել ամեն մի հնարավորություն՝ պրոլետարիատին լսելի դարձնելու հեղափոխության կայտառ խոսքը և այդպիսով ոգնելու նրան նորից միաձուլելու իր շարքերը։

Յեվ Դուման հիմա հանդիսանում է պրոպագանդայի ու ագիտացիայի այդ լեգալ հնարավորություններից ամենակարևորը։ Ահա թե ինչու մենք՝ բոլշևիկներս էլ պիտի Դումա գնանք։

Յերրորդ Դումայի նկատմամբ բռնելիք վերաբերմունքի հարցը վճռվում էր կուսակցության կոնֆերենցիայում, Ֆինլյանդիայում, 1907 թ. հուլիսին։ Բոլշևիկների գլխավոր մասսան դեռ կողմնակից էր բոյկոտին։

Սակայն այդ կոնֆերենցիայում ընկ. Լենինին բայց և այնպես հաջողվեց անցկացնելու իր տեսակետը՝ Դումային մասնակցելու անհրաժեշտության մասին։

Իրականությունը շուտով արդարացրեց ընկ. Լենինի հայացքները.—Շուտով ընկ. Լենինի տեսակետի ճշտությունն ընդունեցին համարյա բոլոր բոյշևիկները, քանի որ ինքը կյանքը ակնհայտնի ցույց տվեց, թե ինչպես Լենինը ճիշտ էր գնահատել 1905 թ. հեղափոխության պարտությունից հետո ստեղծված դրությունը։

Պարզվեց, որ իսկապես, Յերկրորդ Դումայի ցրման միջոցին հեղափոխական վերելքի շրջանը վերջացել է և վրա է հասել ռեակցիայի շրջանը, այսինքն հակահեղափոխության թևավորման շրջանը։ Հասել էր այնպիսի ժամանակ, երբ կառավարությունն անպատիժ կերպով կարող էր անել այն ամենը, ինչ ցանկալի էր իրեն։

Ինչպես ոգտագործեց կառավարությունը ռեակցիայի այդ թևավորման շրջանը։

Ստոլիպինի ագրարային հաղթականությունը.—Կառավարությունը շատ խելոք ոգտագործեց այդ ժամանակը ցարի ու կալվածատերերի շահերի տեսակետից։ Նա այնպիսի քաղաքականություն տարավ, որ յերկարացրեց ինքնակալության կյանքն ելի մի ամբողջ տասը տարով։

Կառավարության գլուխն էր կանգնած Ստոլիպինը, որը հասկացավ, որ մենակ կախաղաններն ու գնդակահարությունները բավական չեն, որ պետք է հենց ժողովրդի մի որևէ մասի մեջ իր համար հենարան ստեղծել։

Այդպիսի հենարան նա գտավ ունևոր գյուղացիության, մանավանդ «ուժեղ» կուլակ-գյուղացու մեջ։

Մի շարք որենքների և ուկազների միջոցով կառավարությունը գյուղացիներին հնարավորություն տվեց համայքներից անջատվելու և ամեն կերպ խրախուսում էր նրանց՝ համայնական հողերը իրենց անձնական սեփականություն դարձնելու։

1906 թ. ուկազից հետո, առաջին յերկու տարիներում արդեն միլիոնից ավելի ծխատերերը համայնքներից անջատվելու հայտարարություն արեցին։

1915 թվի մայիսի 1-ին արդեն անջատված եյին բոլոր ծխատերերի հինգերորդ մասից ավելին (21,8 տոկոս), ըստ որում ամբողջ նադելնի հողի վեցերորդ մասը այդպիսով անցավ գյուղացիների անձնական սեփականություն։

Մի կողմից՝ առանձնանում եյին «ուժեղ» գյուղացիները, այսինքն կուլակները և նրանց մոտ կանգնած գյուղացիական խավերը, մյուս կողմից—սակավազոր գյուղացիները ու չքավորները, որոնք համայնքից անջատվում եյին այն միակ նպատակով, որպեսզի թանգ ծախեն իրենց տրված հողը, կտրեն իրենց կապը գյուղի հետ և վաստակի համար քաղաք գնան։ Իհարկե, նրանց հողերը գնում եյին «ուժեղ» գյուղացիները, որոնք կլո-

բացնում էին իրենց, հողամասը նաև բանկային հողերի գնումով։

25 տարվա ընթացքում, մինչև 1907 թիվը, միայն առանձին ծխատերերը գնել էին 207.000 դեսյատին հող, մինչդեռ ամբողջ համայնքներով կատարած գնումները 9½ միլիոն դեսյատին էր, իսկ 4 տարվա ընթացքում, 1909 թ. մինչև 1912 թիվը, առանձին ծխատերերը գնել էին 3 միլիոն դեսյատին, իսկ համայնքներով՝ միայն 2.350.000 դեսյատին։

Այդ շատ լավ ցույց է տալիս, որ արդեն 1909 թ. ունևոր գյուղացիների մի զգալի խավ էր ստեղծվել։ Ընտեսապես ուժեղ այդ գյուղացիները կարող էին հողը գնել իրենց սեփական միջոցներով, և գնումներ անելու համար համայնքներով միանալու կարիք չունեյին։

Ինչպես անդրադարձավ արդյունաբերության զարգացման վրա Ստալիպինի ագրարային բաղաքականությունը.— Գյուղական այդ նոր բուրժուազիան սկսեց ուժեղ թափով գյուղատնտեսական մեքենաներ և կատարելագործված գործիքներ մտցնել գյուղատնտեսության մեջ։ Իր շինությունները նա սկսեց կառուցել կրակին դիմացող նյութերից— աղյուսից, կղմինդրից և տանիքը՝ յերկաթածածկ։ Նա նույնպես պահանջ առաջադրեց չքի ու եժան կտորեղենի այլ տեսակների, ինչպես նաև կոշիկի, շաքարի ու այլ ապրանքների։

Մի խոսքով, ռուսական արդյունաբերության համար հսկայական ներքին շուկա ստեղծվեց, որը 1909 թ. վերջից, կանոնաւման յերկար շրջանից հետո բուռն վերելքի շրջան է մտնում։ Մյուս կողմից, համայքների քայքայումն այն հետևանքն ունեցավ, որ սակավահող ու միջակ գյուղացին արագ կերպով պրոլետարիզացիայի յե յենթարկվում։ Նա ուղևորվում է քաղաք և արդյունաբե-

րությանը անհրաժեշտ եժան բանվորական ուժ է տրամադրում։

Հետևաբար, 1905 թվի հեղափոխությունից հետո ինքնակալությունը վոչ միայն իր իշխանությունը բաժանեց բուրժուազիայի հետ, այլև իր ագրարային քաղաքականությամբ յերկրի արդյունաբերական զարգացման համար ժամանակավոր յելք բաց արեց։

Կուսակցության խնդիրները ռեակցիայի շրջանում.— 1907 թ. մինչև 1910 թիվը կուսակցության համարամենածանր ժամանակն եր. արագ կերպով նոսրանում էին նրա շարքերը։ Կազմակերպություններ մնացել էին միայն մի քանի մեծ քաղաքներում, սակայն նրանք էլ շատ թույլ էին ու սակավաթիվ։ Նրանց մեջ պրովակացիան իր համար ամուր բուն եր դրել։

Այդ կազմակերպությունները պահպանել վերջնական քայքայումից, սերտորեն միաձուլել հեղափոխականների փոքրաթիվ շարքերը, դրանով ընդհանուր ճնշված տրամադրության ու ամոթալից փոքրոգության մթնոլորտում վառ պահել հեղափոխական էներգիայի հնոցը և սրանց միջոցով ղեկավարել բոլոր տեսակի հնարավոր լեգալ կազմակերպությունների ամբողջ աշխատանքը, այլ կերպ ասած, անլեգալ աշխատանքը պատրաստել կազմակերպության ղեկավարությամբ միացնել լեգալ աշխատանքի հետ—ահա թե վորպիսին եր կուսակցության անելիքն այդ ծանր ժամանակը։

Այդ խնդրի իրագործմանը ձեռնարկելիս կուսակցությունն իր իսկ շարքերում արգելքների հանդիպեց, և այն էլ յերկու կողմից։

Կուսակցության լիկվիդատորները.—Նախ և առաջ՝ մենշևիկները, վորոնք հեղափոխությունը վերջացած էին հա-

մարում, հայտարարեցին, որ այժմ պետք է բոլոր ուժերը մասնակի պահանջների համար պայքարելու վրա կենտրոնացնել, և առաջին հերթին առաջադրում էին կոալիցիայի ազատության, այսինքն միությունների և ընդհանրապես բանվորական համախմբումների ազատության պահանջ։

Այդ լոզունգի տակ պետք էր աշխատել լեգալ կազմակերպություններում։ Անլեգալ կազմակերպություններին միայն ոժանդակիչ դեր էր թողնվում։

Վորովհետև բոլշևիկները կուսակցության անելիքների այդպիսի ըմբռնումին յեռանդուն հակահարված էին տալիս, ուստի և մենշևիկները իրենց բոլոր ջանքերը ուղղեցին նրա վրա, վորպեսզի ցերուցան անեն, վերացնեն անլեգալ կազմակերպության վերջին մնացորդները, ուր ամրացել էին բոլշևիկները։

Մենշևիկների հիմնած լեգալ հանդեսներում բացահայտ կերպով այն միտքն էր արծարծվում, վոր պատպոյլ աշխատանքն արդեն ապրել է իր դարը և այն պետք է լիկվիդացիայի յենթարկել, այսինքն դրան վերջ տալ։

Կուսակցության «լիկվիդատորների» այդ անվան տակ էլ մենշևիկները պատմության գիրկն անցան։

«Մենշևիկ—կուսակցականներ».—Միայն մենշևիկների մի փոքրաթիվ խմբակ Պլեխանովի գլխավորությամբ անջատվեց մենշևիկ-լիկվիդատորներից և միացավ բոլշևիկների մղած պայքարին՝ բանվոր դասակարգի նկատմամբ կատարված նոր դավաճանության դեմ։ Այդ խմբակի անդամները «մենշևիկ-կուսակցականներ» կոչվեցին։

«Ձախակողմյան լիկվիդատորներ».—Մյուս կողմից, բոլշևիկների միջև դեռ մնացել էին խմբակներ, վորոնք չէին գիտակցում Յերրորդ Դուման բոյկոտի յենթարկելու

տակտիկայի սխալ լինելը։ Նրանց մի մասը պահանջում էր յետ կանչել (отзыв) Դումայի ֆրակցիան և այդ պատճառով «ոտզովիստներ» անունը ստացավ։ Մյուս մասը պնդում էր, վոր Դումայի պատգամավորներին ուլտիմատում (այսինքն վճռական պահանջ) ներկայացվի—կամ վոխել իրենց վարքը և կամ հեռանալ Դումայից։ Ըստ էության, դա Դումայի ֆրակցիան յետ կանչելու քողարկված ձգտում էր, քանի վոր նրա վարքը բարելավելու համար պետք էր աշխատել ոգնե՛լ նրան և վո՛չ թե ուլտիմատումներով սպառնալ։

«Ուլտիմատիստներն» ու «ոտզովիստները» կոչվում էին նաև «Վպերյոդովցիներ», քանի վոր հրատարակում էին «Վպերյոդ» (հառաջ) անվան տակ հոդվածների ժողովածուներ, վորոնց մեջ իրենց հայացքներն էին շարադրում։ «Վպերյոդովցիների» հայացքները հանգում էին նրան, վոր բանվորական լեգալ կազմակերպություններում աշխատելը համարվում էր ոպպորտունիզմ, հեղափոխության հանդեպ դավաճանություն։

Նրանց կարծիքով—կուսակցությունը, նույնիսկ այն ժամանակ, տևական դադարի շրջանում, պիտի առաջադրեր նույն լոզունգները, ինչ վոր 1905 թվին։ Ահա թե ինչու նրանք իրենց հանդեսը «Վպերյոդ» կոչեցին։ Այդպես էր կոչվում, ինչպես մենք գիտենք, 1905 թվի առաջին կեսին լույս տեսնող բոլշևիկյան թերթը։

Բոյշևիկները նրանց «ձախակողմյան լիկվիդատորներ» կոչեցին, քանի վոր առանց լեգալ հնարավորություններն ոգտագործելու կուսակցությունը ըստ էության կդադարեր գոյություն ունենալուց և կվերածվեր «սեկտայի», այսինքն նեղ ու իր մեջ պարփակված խմբակի, առանց վորևե ազդեցություն ունենալու բանվորական մասսաների վրա[1])։

[1]) Այդ ժամանակվա սոցիալ-դեմոկրատների մեջ գոյություն ուներ մի

Բոլշևիկ-«հաշտվողականները» ևս նրանց սպառազինվելու միասնականության հնարավորության վերաբերյալ.— Այդից ու ձախից «լիկվիդատորների» դեմ համառ պայքար մղելով անցավ կուսակցության պատմության այդ ծանր շրջանը, սկսած 1907 թ. մինչև 1910 թիվը, բայց գործը բացահայտ անջատման դեռ չհասավ։ Բոլշևիկների միջև ուժեղ էր այսպես կոչված «հաշտվողական հոսանքը»։ Այդ հոսանքի կողմնակիցները հույս էին դնում այն բանի վրա, որ «լիկվիդատորները» շուտով կգիտակցեն իրենց սխալները և կվերադառնան կուսակցության գիրկը։

Ուստի և՛ թե Պարիզի կոնֆերենցիայում 1910 թ. վերջին և թե կենտրոնական կոմիտեյի պլենումին 1910 թ. սկզբին յերկու տեսակի լիկվիդատորությունն էլ միայն դատապարտվեց, բայց վերջնականապես չանջատվեց։

2. 1911—1914 Թ. Թ. ՎԵՐԵԼՔԻ ՇՐՋԱՆԸ.

Բանվորական շարժման աշխուժացումը.—Ռուսական արդյունաբերության բուռն վերելքը 1909 թ. վերջերից, չէր կարող չաշխուժացնել գործադուլային շարժումը։ Ար-

հոսանք ևս, որը քննադատում էր մարքսիստական աշխարհայացքի խնդրական հիմունքները։ Թեպետ այդ հոսանքն անմիջապես կապված չէր տակտիկայի հարցերի հետ, բայց նա տարածվում էր գլխավորապես «վպերյոդովցիների» շրջանում, որոնց դեկավարները գլխավորում էին այդ հոսանքը։ Կանդ չառնելով համլերիս-կրիտիցիզմի ուսմունքի հարցի վրա, որը նրանք մասամբ մաքուր ձևով (Լունաչարսկի), մասամբ էլ փոփոխված ձևով (Ա. Ա. Բոգդանովը իր եմպիրիոմոնիզմով) հակադրում էին Մարքսի ու Ենգելսի դիալեկտիկական մատերիալիզմին, շեշտենք միայն, որ այն ժամանակվա այդ նորելուկ փիլիսոփայությանը Լենինի տված բնորոշումը, որպես իդեալիստական, կրոնի առաջ ճանապարհ բաց անող փիլիսոփայության, փայլուն կերպով արդարացվեց իրականում.— Լունաչարսկին, Բոգդկն և ուրիշները շուտով խոսեցին այն մասին, որ սոցիալիզմի պայքարի ու շինարարության մեջ անհրաժեշտ է կրոնական տրամադրություն և աջակից մացնել, որի համար, նրանց կարծիքով, անհրաժեշտ էր ստեղծել՝ ինչպես նրանք էին արտահայտվում՝ «կառուցել» նոր աստված, բայց վոչ այնպիսի անմիտ, որպիսին պատկերացնում են արդեն գոյություն ունեցող կրոնները։ Ցավ այսպես, աստվածարարներ, «աստվածկառուցողներ» („богостроители„) անվան տակ էլ նրանք մեր կուսակցության պատմության մեջ անցան

դեն 1910 թ. վերջերից այդպիսի աշխուժացման նշանները են յերևում, իսկ 1911 թվին պարզորեն նկատվում է գործադուլների հարձակողական բնույթը, ըստ վորում նրանց կեսից ավելին վերջանում են բանվորների լիակատար կամ մասնակի հաղթանակով։

1912 թվի սկզբից սկսվում են բանվոր դասակարգի քաղաքական յելույթները. գործադուլներ հունվարի 9-ի «Արյունոտ կիրակի»-ի տարեդարձի առթիվ, և միևնույնը, ուր պահանջում էին վերանայել տաժանակիր աշխատանքի աքսորված՝ Յերկրորդ Դումայի սոցիալ-դեմոկրատական պատգամավորների գործը և այլն։

Լենայի գնդակոծումը.— Փետրվարի վերջերից սկսվեց Սիբիրի վոսկու հանքերի բանվորների գործադուլը։ Հանքերը պատկանում էին «Լենայի վոսկեարդյունաբերության ընկերության» մեջ համախմբված կապիտալիստների կամպանիային։

Այդ հանքերը գտնվում էին մոտակա յերկաթուղագծային կայարան Իրկուտսկից համարյա 2000 վերստ հեռավորության վրա։

Գործադուլի հետևանքով անխիղճ կերպով գնդակահոծվեցին խաղաղ և անզեն բանվորները, որոնք ապրիլի 4-ին դատախազի մոտ էին գնացել բանակցելու գործադուլավորների շրջանում կատարված ձերբակալությունների, ինչպես և իրենց զուտ տնտեսական պահանջները բավարարելու համար։ Ամբոխի քայլած տեղում կրակ բանալուց հետո սպանված ծնացին մի քանի հարյուր սպանված և վիրավոր. կրակողները կիբենսկուց կանչված վինվորներն էին։

Լենայի դեպքերի ազդեցությունը բանվորական շարժման ամման վրա.—Սիբիրի հեռավոր տայգայում (մայ-

բաքաղաքից 7000 վերստ) բանվորներին դնդակահարելու լուրը Պետերբուրգ հասավ յերեք որից հետո։ Սկսվեցին բանվորների բողոքները։

Ներքին գործերի մինիստր Մակարովը Դումայում Լենայի դեպքերի մասին տրված հարցումին պատասխանեց լսիրշ ֆրազայով՝ «Այդպես յեղել է և այդպես էլ կլինի»։ Այդ իհարկե չէր կարող հանգստացնել բանվորական միջավայրը. բողոքի գործադուլների ալիքն անցավ ամբողջ Ռուսաստանով։ Նման պայմաններում այդ տարվա մայիս 1-ի տոնակատարությունն անցավ չտեսնված խանդավառությամբ։

Պաշտոնական տեղեկությունների համաձայն, միայն Պետերբուրգում գործադուլ եյին արել 100.000 մարդ, մինչդեռ 1911 թվին, ամբողջ տարվա ընթացքում քաղաքական գործադուլներին մասնակիցների թիվը ամբողջ Ռուսաստանում հասնում էր 8.000-ի։

Տարեց-տարի շարժումն արագ կերպով աճում էր։ 1913 թվի մայիս 1-ին ամբողջ Ռուսաստանում գործադուլ արեցին 420.000 բանվոր, որից 250.000-ը Պետերբուրգում։ 1914 թ. մայիս մեկյան տոնին մասնակցում եյին 500.000 գործադուլավորներ, որից Պետերբուրգում—280.000 մարդ։

Սկսված համաշխարհային պատերազմը կասեցրեց բանվորական շարժման աճումը, որն արդեն սկսել էր իսկական հեղափոխության բնույթ ստանալ. 1914 թ. յոթ ամսվա ընթացքում գործադուլավորների թիվը հավասարվում էր 1905 թ. բոլոր գործադուլներին մասնակցողների թվի համարյա կեսին։

Նոր ձեզալ հնարավորություն.—Բանվորական շարժման վերելքն ու նրա անընդհատ աճումը կուսակցությանը ընձեռեց լեգալ աշխատանքի նոր հնարավորություն—մամուլը, որ նա ոգտագործեց ամենալայն կերպով։

«Ձվեզդա»-ն.—Արդեն 1910 թ. դեկտեմբերին լույս է տեսնում «Ձվեզդա» լեգալ լրագիրը (շաբաթը մեկ անգամ)։ Սկզբում նա դեռ բավական ուժեղ աջակցություն չգտավ բանվոր դասակարգի կողմից, և 25 համար լույս տեսնելուց հետո 1911 թ. հունիսին սուիզված եր ժամանակավորապես դադարել։

Յերեք ամիս անց նա վերահրատարակվում է իբրև դուտ բոյշևիկյան որդան (առաջ նա բոյշևիկների և մենշևիկ-կուսակցականների՝ Պլեխանովի համախոհների՝ որդանն եր) և գնալով ավելի ու ավելի յե գրավում բանվորների համակրանքը։ 1911 թ. վերջից նա լույս է տեսնում արդեն շաբաթական յերկու անգամ, իսկ 1912 թ. մարտին—շաբաթական յերեք անգամ։

«Պրավդա»-ն.—Բանվոր դասակարգի կողմից «Ձվեզդային» ցույց տրված այդպիսի համակիր ընդունելությունը բանվորական ամենօրյա թերթ հրատարակելու միտք հղացրեց։ 1912 թ. հունվար ամսից սկսվեցին ժողովարարություններ՝ անհրաժեշտ դրամական ֆոնդ ստեղծելու համար։

Լենայի դեպքերն այստեղ էլ բանվորական մասսաների ինքնագործնեյությունն արթնացնելու ուժեղ շարժիչի դերը խաղացին.—մարտ ամսին թերթի ֆոնդի ուժեղացման համար գումարներ ստացվել եյին 76 բանվորական խմբակներից, իսկ ապրիլին—դրամական նման մուծումներ արվեցին արդեն 227 խմբակներից։

1912 թվի ապրիլի 22-ին լույս տեսավ ամենօրյա բանվորական թերթ «Պրավդայի» առաջին համարը։ Այդ մի իսկական տոն եր նոր պայքարի արթնացող պրոլետարիատի ու նրա կուսակցության համար։ «Պրավդայի» ստեղծման գործի հաջողությունը, չերմ արձագանքը, որ նա գտավ բանվորական մասսայի լայն խավերում, չթուլացող տնտեսական ոժանդակությունը թերթին ամբողջ

Ռուսաստանի պրոլետարիատի կողմից—այդ ամենն ապացուցում եր, վոր բոլոր այն ուղղություններից, վորոնք կուսակցության մեջ յերևան եյին յեկել սև ռեակցիայի շրջանում, 1907—1910 թվերին, միայն բոլշևիկ-լենինիստների գուտ ուղին եր ճիշտ։ Չհրաժարվելով իրենց հեղափոխական տակտիկայից, չպակասեցնելով իրենց ծրագրային պահանջները, այնուամենայնիվ, շնորհիվ աշխատանքի նոր մեթոդների, նրանք խուսափեցին մասսաներից կտրվելու վտանգից։

«Պրավդան» աճում եր բանվորական շարժման հետ միասին։ Իր յերևան գալովը ու զարգացումով նա ցույց տվեց, վոր ճիշտ եյին բոլշևիկ-լենինիստները, վորոնք վճռել եյին հետևողին անջատվել «լիկվիդատորներից» ու «վպերյոդովցիներից»։

Պրագայի կոնֆերենցիան.— 1912 թ. սկզբին, անհաշտ բոլշևիկների խմբակը Լենինի գլխավորությամբ դրա նելով, վոր «լիկվիդատորներից» ամբողջապես բաժանվելու մոմենտն արդեն հասել է, Պրագայում գումարեց կոնֆերենցիա, վորին ներկա եյին 20 բոլշևիկ, և 2—3 պատգամավոր էլ՝ մենշևիկ-կուսակցականների կողմից։

Կոնֆերենցիան «լիկվիդատորներին» հայտարարեց կուսակցությունից դուրս և գուտ բոլշևիկյան կուսակցական կազմակերպության հիմքը դրեց։

Նա ընտրեց նոր կենտրոնական կոմիտե, վորի ակտիվ անդամներն եյին ընկ. ընկ. Լենինը, Ստալինը, Զինովյեվը, իսկ թեկնածուների թվում՝ Կալինինը։

Չորրորդ Դումայի ընտրությունները.— 1912 թվին պիտի կայանային Չորրորդ Պետական Դումայի ընտրությունները, քանի վոր Յերրորդ Դումայի լիազորության ժամկետը լրացել եր։

Պրագայի կոնֆերենցիան նշել եր կուսակցության հիմնական դիծը ընտրական կամպանիայում։

Նրա պլատֆորմը հանդում եր յերեք գլխավոր լոզունգների, կամ՝ ինչպես այն ժամանակ նրանց կոչում եյին՝ «յերեք կետերի» («три кита»), այսինքն—

1) Դեմոկրատական հանրապետություն։

2) 8-ժամյա բանվորական որ։

3) Կալվածատիրական բոլոր հողերը գյուղացիներին հանձնելը՝ առանց վճարի։

Այլ կերպ ասած, ընտրական կամպանիան պիտի անցկացվեր կուսակցության ծրագիր-մինիմումի հիմունքներով, վորի գլխավոր պահանջներն եյին այդ «յերեք կետերը»։

«Մենշևիկ-լիկվիդատորները» ծաղրում եյին բոլշևիկների այդ անհաշտվողականությունը և նրանց «յերեք կետերին» հակադրում եյին իրենց պլատֆորմը, վոր մասնակի պահանջ եր անում, գլխավորապես կոալիցիայի ազատություն եր պահանջում։

Նրանք բոլշևիկներին մեղադրում եյին նրա մեջ, վոր բոլշևիկները իրենց և վոչ մի լոզունգից չհրաժարվելով, պրոլետարիատին մենակ են թողնում (մեկուսացնում են) պայքարի մեջ, մինչդեռ համաձայն նրանց սիրեցյալ թեորիայի, պետք եր ձգտել պրոլետարիատին մերձեցնելու լիբերալ-բուրժուազիային, վորպեսզի այդպիսով մեկուսացվեր ռեակցիան։

Մենշևիկների այդպիսի տակտիկան միայն դյուրացնում եր բանվորներին ըմբռնելու մենշևիզմի իսկական եությունը՝ վորպես մանր-բուրժուական հոսանքի, և նպաստում եր բոլշևիկներին մեկը մյուսի յետևից խլելու «լիկվիդատորներից» այն լեգալ դիրքերը, վորտեղ նրանք ամրացել եյին ռեակցիայի ժամանակամիջոցում։

Դումայի ընտրակիրճ ու նրա պատմությունը.— Չորրորդ Դումայի ընտրությունները բոլոր վեց բանվորական կուրիաներով էլ բոլշևիկները անցան։

Յեվ ընդհանուրակը, այնտեղ, ուր սոցիալ-դեմոկրատական պատգամավորները ընտրվել էին այն ժողովներում, ուր վճռական նշանակություն ունեին ընտրողները մանր-բուրժուական միջավայրից, ընտրվեցին մենշևիկները։

Այդպիսով, Չորրորդ Դուման անցան 6 բոլշևիկ և 7 մենշևիկ։ Սկզբում նրանք միասնական սոցիալ-դեմոկրատական ֆրակցիա էին կազմում, բայց շուտով տեղի ունեցավ նրա բաժանումն յերկու ինքնուրույն ֆրակցիաների—բոլշևիկյան և լիկվիդատորական։

Կուսակցության համար մղվող պայքարի սրումը.— Ընդհանրապես 1912 թիվը հանդիսանում է բոլշևիզմի՝ կուսակցության ներսում գոյություն ունեցող բոլոր ոպորտունիստական հոսանքներից անջատվելու տարի։ Պայքարն տարվում էր բոլոր գծերով։

Պայքարի սրմանը սկիզբ դրեց Պրագայի մեր հիշատակած բոլշևիկյան կոնֆերենցիան։ Նա էր դեմ հարուցեց բոլոր ոպորտունիստների անբավականությունն ու գայրույթը։

Բոլոր բուրժուական և մանր-բուրժուական ազդեցությունների զրկած իսկական հեղափոխական պրոլետարական կուսակցության վերածնման այդ նախաձեռնությունը բոլոր դուրսի ոպորտունիստները. բացատրեցին իբրև բոլշևիկների կողմից կուսակցական իշխանության և կուսակցության անունից բանվորներին դիմելու իրավունքի ուզուրպատորություն (անորեն բռնագրավում)։

«Ոգոստոսյան բլոկը».— 1912 թ. ոգոստոսին դուրս մղվեց Պրագայի կոնֆերենցիայի վորոշումներից անբավական մնացած բոլոր խմբակների ու հոսանքների կոնֆերենցիան, բոլշևիզմի դեմ պայքարելու համար միանալու նպատակով։

Կազմվեց այսպես կոչված «Ոգոստոսյան Բլոկը», հակաբոլշևիկյան միասնական ֆրոնտը, վորն ընդգրկում էր մենշևիզմի բոլոր դունավորումները, սկսած ամենածայրահեղ «լիկվիդատորներից» և վերջացրած պերմանենտ (չընդհատվող) հեղափոխության կողմնակիցներով, Տրոցկու գլխավորությամբ։

Այդ բլոկը կազմվեց սոցիալ-դեմոկրատական բոլոր խմբակների, դրանց թվում և լիկվիդատորների միացման դրոշի տակ։

Իսկ ըստ էության, դա լիկվիդատորների՝ բոլշևիզմի դեմ պայքարելու միջոցներից մեկն էր. դրանք միասնականության դրոշի տակ ուզում էին անլեգալ կուսակցությանը վճռական հարված հասցնել։

Բլոկը յերկար չապրեց։ Շուտով նրանից հեռացան լատիշները, ապա Տրոցկու խմբակը, վորը հիմնել էր իր «Բայրբա» (պայքար) հանդեսը։

Պայմարի բորբ Ժողովուրդներում պրոլետարիատը պաշտպանում է բոլշևիկներին.—Իսկ բոլշևիկյան կուսակցությունն աճում ու ամրանում էր և լիկվիդատորների հանդեպ նորանոր հաղթանակներ տանում։

Մենշևիկների հիմնած «Լուչ» (ճառագայթ) լեգալ լրագիրը չսաացավ անգամ մի հիշատակության ու համակրանքի, վորը բանվոր դասակարգը ցույց տվեց դեպի «Պրավդան»։

Այդ մասին ամենից լավ վկայում են բանվորների կողմից՝ բոլշևիկյան ու լիկվիդատորական լրագրների բաժանորդությունները մուծած դրամական հատկացումների հաշվառումը։

Բանվորական խմբակների 80 տոկոսից ավելին պաշտպանում էին «ալբավիստներին» և հազիվ 20 տոկոսն էր ոգնություն ցույց տալիս նրանց հակառակորդներին։

Բացի այդ, բանվոր դասակարգը իր վստահությունը բոլշևիկներին հայտնում էր նրանով, որ իր բոլոր լեգալ կազմակերպություններում, պրոֆմիություններում, հիվանդանոցային ապահովագրական դրամարկղներում, կոոպերատիվներում և լուսավորական ընկերություններում մենշևիկներին պատասխանատու պաշտոններից հանում էր և նրանց փոխարինում բոլշևիկյան տակտիկայի կողմնակիցներով։

Լիկվիդատորները կատաղած պաշտպանվում էին և աշխատում էին ամեն կերպ անվանարկել պայքարի հեղափոխական մեթոդները։ Լայն թափ առած քաղաքական գործադուլները նրանք անվանում էին «գործադուլային ազարտ», իսկ բանվորական միջավայրում պատպոլիայի նկատմամբ գոյություն ունեցող աճող և ամրացող համակրանքի մեջ նրանք «վշտալից փաստ» էին տեսնում։

Այդ «վշտալի փաստը», որի գոյությունը լիկվիդատորները ստիպված էին ընդունելու դեռ 1913 թ. սկզբին, նրանք բացատրում էին նրանով, որ պրոլետարիատը «ծուլանում է մտածել, ծուլանում է նոր ուղիներ վորոնել»։ Իսկ այդ նոր ուղիներից մեկն էր, նրանց կարծիքով, այսպես կոչված «պետիցիայի կամպանիան», այսինքն Պետական Դումային ուղղված խնդիրների տակ բանվորների ստորագրությունների հավաքումն, այն մասին, որ Դուման պրոլետարիատին կոալիցիաների ազատություն շնորհի։

Պայքարի հին մեթոդներին («գործադուլային ազարտին» և դեպի պադպոլիան ունեցած «վշտալից» հարգանքին) «նոր ուղի»-ի (պետիցիաների կամպանիան) այդպիսի հակադրումով լիկվիդատորները միայն արդարացրին այն

կոչումը, որ բոլշևիկները տվել էին նրանց, այն է՝ «ստալիպինյան բանվորական կուսակցություն» կոչումը, և ավելի ու ավելի էին կորցնում բանվորների վստահությունը։

Պրոլետարիատի դասակարգային պայքարի խիստ լարված մոմենտին, 1914 թ. ամռանը, վոչ մի կասկած չէր կարող լինել այն մասին, որ պրոլետարիատի գերազանցող մեծամասնությունը գտնվում էր լենինյան կուսակցության կողմը և պատրաստ էր նրա ղեկավարությամբ վճռական պայքարի դուրս գալու։

Հուլիսի սկզբին, շարժումը մայրաքաղաքի բանվոր դասակարգին հասցնում է այն աստիճանի, որ նա բարրիկադներ է սարքում փողոցներում և բաղխումներ ունենում վոստիկանության ու կոզակների հետ։ Այդ ընդհարումներին մասնակցող գործադուլավորների թիվը հավասար էր մայիսմեկյան գործադուլին մասնակցողների թվին։

Վրա հասած համաշխարհային սպանդանոցը թուլացրեց շարժումը։

Պատերազմի առաջին չորս ամիսներում—և վոչ մի քաղաքական գործադուլ։ Տնտեսական գործադուլների թիվը նույնպես զերոյի չէր հավասար։

Յեզրակացություն.—Ցարական ինքնակալությունը, իր իշխանության մի փոքր մասը արդյունաբերական բուրժուազիային զիջելով և արդյունաբերական զարգացման շահերին համապատասխանող տնտեսական քաղաքականություն տանելով, հետաձգեց հեղափոխության նոր անխուսափելի պայթյունը։

Կուսակցությունը ծանր կրիզիս էր ապրում։ Բոլշևիկները ճիշտ գնահատեցին ընթացիկ մոմենտը, վորպես հեղափոխության տևական դադար, և պատպոյլ կազմակերպության ղեկավարությամբ՝ անլեգալ աշխատանքը լե-

գալ աշխատանքի հետ համակերպելու լոզունգ առաջադրեցին։

Յեվ այդ շրջանի յերկրորդ կեսին սկսված բանվորական շարժման վերելքը ցույց տվեց այդպիսի տակտիկայի ճշտությունը։

Կուսակցության համար ստեղծված այդ ծանր շրջանում մենշևիկները վոչ միայն բացահայտ կերպով պրոլետարիատի հեգեմոնիայի իդեայի դեմ դուրս յեկան, այլ և այդ իդեայի կրողի՝ անլեգալ կազմակերպության դեմ։

Նրանք իրենց նպատակ էին դրել վոչնչացնել, լիկվիդացիայի յենթարկել կուսակցության հեղափոխական պատգամները պահպանող պատրաստ կազմակերպություններ։ Եյապես այդ նշանակում եր լիկվիդացիայի յենթարկել հեղափոխական պրոլետարիատի կուսակցությունը։

Անջատումն ու կատաղի պայքարը անխուսափելի դարձան ոպորտյունիզմի այդ նոր ձևի դեմ, վոր ընդունել եր մենշևիզմը՝ վատասերվելով։

«Լիկվիդատորների» դեմ մղած՝ հանուն լենինյան կուսակցության այդ պայքարում, «Պրավդա» լրագրի ղեկավարությամբ դաստիարակվում եր բանվոր-հեղափոխականների նոր կադր, վորի մեջ կուսակցությունն այժմ տեսնում է «Իսկրայի» կողմից դաստիարակված հին մարտիկների արժանավոր փոխարինողներին։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՐՋԱՆԸ ՅԵՎ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ. (1914 – 1918 Թ. Թ.)

Թե ինչպես մարդկության ավելի քան չորս տարի ինքնասպանության մեջ եր գցած,—համաշխարհային պատերազմն սկսվեց 1914 թվի հուլիսին։ 4 տարուց ավելի տևեց այդ սարսափելի սպանդանոցը։ Ամբողջ աշխարհը բաժանվեց յերկու թշնամի բանակների, մի կողմից, այսպես կոչված՝ կենտրոնական պետությունները—Գերմանիան և Ավստրո-Վենգրիան իրենց դաշնակիցների—Թյուրքիայի և Բուլղարիայի հետ, մյուս կողմից—Անտանտայի պետությունները, այսինքն՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Բելգիայի ու Սերբիայի համաձայնությունը, վորին շուտով միացան Իտալիան, Ռումինիան, Յապոնիան, Հունաստանը և Փորթուգալիան։ Վերջապես 1917 թ. Անտանտայի կողմից բացահայտ կռվի յեն յելնում Հյուսիսային Ամերիկայի Միացյալ-Նահանգները, վորոնք մինչ այդ ուժեղ կերպով պաշտպանում էին (իհարկե, իրենց ոգտին խոշոր շահով) Անտանտայի յերկրները դրամով, զենքով և ընդհանրապես այն ամենով, ինչ անհրաժեշտ է պատերազմ մղելու համար։

Յերկու կողմերն էլ արյունոտ ընդհարման մեջ նետեցին հսկայական բազմամիլիոն բանակներ։ Պատերազմական գործողությունների ամբողջ ընթացքում զենքի

տակ կանչվեցին համարյա 70 միլիոն մարդ. 23 1/2 միլիոնը—կենտրոնական պետությունների ու նրանց դաշնակիցների կողմից և 46 միլիոնից ավելի—Անտանտայի կողմից։

Ավելի քան չորս տարիների ընթացքում, կռվի դաշտում միջին հաշվով որեկան ընկնում եր 19.000 մարդ—սպանված և վիրավոր։

Յեթե այդ թվին գումարենք նաև գերի ընկածներին, ապա պատերազմի ամբողջ ընթացքում բոլոր յերկրների կորուստը հավասարվում է 37 միլիոնի։ Այս հաշվի մեջ չեն մտնում ռմբակոծումներից, ոդային հարձակումներից, համաճարակներից ու սովից խաղաղ բնակչության շրջանում վոչնչացած միլիոնները, մասնավորապես Ֆրոնտին մոտ ընկած կամ հակառակորդի գինվորների կողմից գրավված վայրերում։

Բոլոր յերկրներից շատ ավելի տուժեց Ռուսաստանը. մենակ նա 2 ու կես միլիոն սպանված տվեց, նույն չափ էլ գերի և 5 միլիոն 700 հազար վիրավոր, այսինքն նրա կրած մարդկային ընդհանուր կորուստը հասնում է համարյա 11 միլիոնի։

Այդ պատերազմում Ռուսաստանը կորցրեց իր ամբողջ ժողովրդական կարողության 3/5 մասը, Ավստրո-Հունգարիան՝ 2/5, Գերմանիան ու Ֆրանսիան՝ 1/3, և այլն։ Միայն Հյուսիսային Ամերիկայի Միացյալ-Նահանգները շահեցին համաշխարհային չարիքից, ավելացնելով իրենց հարստությունը համարյա մեկ ու կես անգամ։

Միջազգային սոցիալիստական կոնգրեսների վորոշումները պատերազմի մասին՝ մինչեվ պատերազմի սկսվելը.—Ինչպես վերաբերվեցին այդ պատերազմին զանազան յերկրների սոցիալիստական կուսակցությունները։ Պատերազմը նրանց հանկարծակիի չբերեց։ Զե վոր դեռ 1907 թ., գերմանական Շտուտգարտ քաղաքում տեղի ունեցած միջազգային կոնգրեսում ընդունվել եր մի վորոշում, վորը պարտավորեցնում եր յուրաքանչյուր յերկրի սոցիալիստներին պատերազմ ծագելու դեպքում «ամեն ջանք գործ դնել հնարավորին չափ այն շուտափույթ դադարեցնելու համար և պատերազմի առաջացրած տնտեսական ու քաղաքական կրիզիսն ոգտագործել՝ ժողովրդական ստորին խավերը ցնցելու և շտապեցնելու կապիտալի իշխանության տապալումը»։ Պատերազմից առաջ տեղի ունեցած վերջին միջազգային կոնգրեսը, վոր գումարվել եր Շվեյցարիայի Բազել քաղաքում 1912 թ. վերջին, հիշեցրեց, վոր ֆրանսո-գերմանական պատերազմը հանգեց Պարիզի Կոմունային, այսինքն՝ պրոլետարիատի առաջին փորձին՝ իր դիկտատուրան սահմանելու, իսկ ռուս-յապոնական պատերազմը հեղափոխություն առաջ բերեց Ռուսաստանում։ Այդ հիշեցումին նա ավելացրեց. «բանվորները վոճրագործություն են համարում կապիտալիստների շահերի, տոհմերի փառասիրության կամ խորամանկորեն գաղտնի համաձայնություններ հյուսելու համար միմյանց վրա կրակելը»։

Սոցիալիստները պատերազմի ժամանակ.—Թվում եր թե այդպիսի վորոշումներից հետո սոցիալիստները միասնական ֆրոնտով պատերազմի դեմ դուրս կգան։ Մինչդեռ բոլորովին այլ բան պատահեց։ Միասնական ֆրոնտի փոխարեն սոցիալիստների մեջ առաջ յեկան յերեք հոսանք։

«*Ոբորոնցիները*».—Այդ հոսանքներից ամենաուժեղը նա յեր, վորը հրաժարվեց միջազգային կոնգրեսների վորոշումներից և բանվորներին կոչ արեց իր յերկրի բուրժուազիայի հետ «սրբազան միություն» կնքելու և պատերազմը մինչև հաղթական վախճանը շարունակելու։

Ռուս սոցիալ-դեմոկրատների մեջ այդպիսի հայրենասիրական դիրք բռնեցին համարյա բոլոր մենշևիկները՝ Պլեխանովի գլխավորությամբ։ Նրանց «օբորոնեցները» (պաշտպանողականները) ու «սոցիալ-հայրենասերները» եյին անվանում, քանի որ նրանք իրենց տեսակետը պաշտպանում եյին հայրենիքի պաշտպանության անհրաժեշտությամբ։

«Ցիմերվալդականները».—Ցիմերվալդ, շատ ավելի թույլ և նվազ միատարը՝ այսպես կոչված «ցենտրիստների» հոսանքը դեմ եր պատերազմին և առաջադրում եր հետևյալ պայքարի լոզունգը— «հաշտություն կնքել առանց անեքսիայի և կոնտրիբուցիայի», այսինքն՝ հաշտություն, առանց ուրիշների ունեցվածքը գրավելու և հաղթվածների կողմից հոգուտ հաղթողների գրամ տալու։

Նրանք հնարավոր եյին համարում այդպիսի հաշտություն ձեռք բերել՝ յուրաքանչյուր իրկրի պրոլետարիատի կողմից իր կառավարության վրա ճնշում գործ դնելու միջոցով։

Թեև «ցենտրիստները» շատ եյ միաձույլ չեյին և նրանցում կարելի յեր տարբերել ձախ ու աջ թևեր, այնուամենայնիվ նրանք համամիտ եյին՝ «օբորոնեցներից» վերջնականապես չանջատվելու իրենց ցանկության մեջ, քանի որ վերջինների դավաճանությունը սոցիալիզմի նկատմամբ նրանք ժամանակավոր մոլորություն եյին համարում։ Ռուս ցենտրիստներին գլխավորում եյին Տրոցկին և Մարտովը։

Նրանց այդպես եյին կոչում, որովհետև նրանք դրա-նվում եյին «օբորոնեցների» և Լենինի կողմից ղեկավարվող յերրորդ հոսանքի միջում (կենտրոնում)։

Բոլշևիկ-լենինյանները.—Այդ յերրորդ հոսանքը սկզբում «պորոժենչեստվո» (պարտվողականություն) կոչումը ստացավ, քանի որ հակառակ «օբորոնեցների» (պաշտպանողականների), բոլշևիկ-լենինյանները յուրաքանչյուր յերկրի պրոլետարիատին պայքարի եյին կոչում իր կառավարության դեմ, կանգ չառնելով այն բանի առաջ, որ նման պայքարը կարող է պատերազմում պարտություն բերել. պատերազմի ճակատում որևե յերկրի կրած պարտությունը թուլացնում է այդ նույն յերկրի կառավարությունը և դրանով հեշտացնում է պրոլետարական հեղափոխության հաղթանակը։

Այդ հոսանքի գլխավոր լոզունգն եր՝ համաշխարհային իմպերիալիստական (այսինքն՝ հափշտակող, կողոպտող) պատերազմը վերածել համաշխարհային քաղաքացիական կռվի՝ կապիտալիզմը խորտակելու նպատակով։

Իմպերիալիզմի լենինյան թեորիան.—Ձախ «ցենտրիստների» մեջ մի քանի աչքի ընկնող բոլշևիկներ կային։ Նրանք չեյին ընդունում Լենինի՝ պարտվողականության լոզունգը և չեյին հավատում իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու հնարավորությանը։ Այդ տեղի ունեցավ այն պատճառով, որ նրանք չեյին ըմբռնել կապիտալիստական այն նոր շրջանի եությունը, որը համաշխարհային պատերազմի պատճառ դարձավ։

Միայն 1916 թվին լույս տեսավ ընկեր Լենինի նշանավոր գիրքը—«Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի նորագույն ետապ»,—որտեղ զարմանալի պարզությամբ ի հայտ և բերված կապիտալի տիրապետության այդ վերջին շրջանի եությունը։

Կապիտալիզմը սոցիալիզմի համար հասունացել է.—Այդ շրջանի եությունն այն է, որ կապիտալիզմն արդեն հասունացել է՝ դա սոցիալիզմով փոխարինելու հա-

մար, քանի որ իր հիմնական հատկությունների բնական զարգացման միջոցով նա նախապատրաստել է այն բոլոր նյութական պայմանները, որոնք անհրաժեշտ են հասարակության սոցիալիստական վերակառուցման համար։

Նա ընդհանրացրել է արտադրությունը, որն արդեն տարվում է ըստ ճիշտ սահմանած, նախորոք մշակած պլանի, և որը սպասարկում է տանտյակ և յերբեմն հարյուրավոր միլիոն ազգաբնակչության։

Այդպիսի պլանային ղեկավարությունը կենտրոնից, արդյունաբերության ամբողջ ճյուղերի նկատմամբ, հնարավոր դարձավ միայն արդյունաբերական ձեռնարկությունների միջև յեղած մրցության վերացումով։

Մրցումն ինքն իրեն վերացրեց նրանով, որ ստեղծեց հսկայական հիանալի կահավորված ձեռնարկություններ, որոնք միմյանց հետ կապվեցին զանազան ձևի միություններում—կարտելներ, սինդիկատներ, տրեստներ. համաշխարհային արտադրության ամբողջ ճյուղեր նրանց մենաշնորհային (մոնոպոլիստական—այսինքն մրցումն չդիտեցող) տիրապետությանն անցան։

Կապիտալիզմի փրոմը.—Բայց մրցումը կազմում եր կապիտալիզմի կենդանի վոգին, քանի որ հենց նա յեր ձեռնարկատերերին դրդում շտապել արտադրության մեջ զանազան տեխնիկական կատարելագործություններ մտցնելու։ Իսկ մենաշնորհի ժամանակ հսկայական շահույթներ ապահովված են և հետևաբար, դրդող պատճառները չկան՝ ձեռնարկության կահավորումն շտապ բարելավելու համար։ Արտադրողական ուժերի աճումը դանդաղում է։ Մենաշնորհային կապիտալիզմը փթող կապիտալիզմ է։

Պրոլետարական հեղափոխության շրջանը հասել է.—Կապիտալիզմի նոր շրջանը, որ կոչվում է իմպերիալիզմ,

դեպի սոցիալիզմն անցման շրջան է։ Սակայն բուրժուական հասարակակարգը չի կարող մեռնել բնական մահով։ Սոցիալիզմին անցնելու համար, բացի արտադրության ընդհանրացումից, անհրաժեշտ է իրագործել և մյուս կարևորագույն պայմանը. արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականությունը փոխարինել հասարակական ընդհանուր սեփականությամբ։

Այդպիսի փոխարինում կարող է կատարվել միայն բռնի կերպով, սոցիալիստական հեղափոխության միջոցով։

Կապիտալիզմի թևակոխումն իմպերիալիստական շրջանը՝ ցույց է տալիս, որ այդպիսի հեղափոխության ժամանակը հասել է։

Կապիտալիզմը չի կարող այլևս գոյություն ունենալ առանց պատերազմի.—Բայց քանի դեռ համաշխարհային պրոլետարիատի կողմից այդ փոխարինումը չի կատարված, կապիտալիզմը փթած դրությամբ կշարունակի իր գոյությունը և իր քայքայման թուլնով կթունավորի մարդկության կյանքը։

Նման պայմաններում պատերազմը մեռնող կապիտալիզմի նորմալ, անխուսափելի յերևույթն է։

Չե որ կապիտալիստական յերկրներում ամբողջ տնտեսական կյանքը և նրա հետ միասին ամբողջ պետական իշխանությունը գտնվում է մի բուռն խոշորագույն բանկիրների ձեռքին։

Արտադրության մեջ մտած բանկային կապիտալը, որ խոշոր արդյունաբերական կապիտալի հետ ձուլվելու միջոցով տիրացել է նրան—կոչվում է ֆինանսական կապիտալ։ Այդ պատճառով էլ իմպերիալիզմի շրջանն անվանում են նաև ֆինանսական կապիտալիզմի շրջան։

Ֆինանսական կապիտալի տիրապետությունն այն հետևանքն է ունենում, որ առաջավոր յերկրները իրենց կա-

պիտալների արտածման միջոցով շահագործում են ծնացած վողջ աշխարհը։ Արտասահմանում գործի դրած Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի կապիտալը, որինակի համար, դեռ 1910 թվին հավասարվում եր 60 միլյարդ վոսկի ռուբլու և նրանց տալիս եր տարեկան մինչև չորս միլյարդ յեկամուտ։

Գաղութներից ու կապիտալներով աղքատ յերկրներից մենաշնորհային կողոպտման միջոցով այդպիսի հսկայական շահույթներ դուրս քաշելը այն հեռանկարն ունեցավ, վոր ներկայումս վողջ աշխարհն արդեն բաժանված է կապիտալիստական գլխավոր յերկրների միջև։

Նոր յերկրների գրավումը արդեն անհնարին է դառնում խաղաղ համաձայնություններ կնքելու միջոցով (դեռ չբռնված հողերի բաժանման վերաբերյալ)։

Հիմա հնարավոր է աշխարհի միայն արյունալի վերաբաժանումը հզոր պետությունների միջև, վորոնք չեն կարող այլևս չպատերազմել։

Խաղաղ ժամանակ լարված կերպով նոր պատերազմի պատրաստություններ են տեսնում, դաշնակիցներ են փընտրվում, գաղտնի պայմանագրեր են կնքվում։

Ապա արյունալի ընդհարման մեջ վճռվում է այն հարցը, թե պետությունների ստեղծված խմբավորումներից վորը հնարավորություն կստանա շահագործելու ամբողջ յերկրագնդի ժողովրդներին՝ իր ֆինանսական բուրժուազիայի հարստացման համար։

Նման խմբավորումներից մեկին չարդ ու փշուր անելուց հետո հաղթողների մեջ սկսվում է կողոպուտի բաժանումն ու աշխարհի նոր արյունալի վերաբաժանման նոր պատրաստություններ։

1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմի եությունը.— 1914—1918 թվերի պատերազմը վեճ եր

հենց այն մասին, թե համաշխարհային մենաշնորհային շահագործման բարիքներով անգլո-ֆրանսական թե՞ գերմանական կապիտալը պիտի ոգտվի։

Պրոլետարիատը վոչինչ չուներ պաշտպանելու այդ պատերազմում։ Նա միայն պիտի ձգտեր ոգտագործելու համաշխարհային պատերազմի ստեղծած դրությունը՝ կապիտալիզմին վճռական հարված տալու և նրա լծից ազատագրվելու համար։

«Որտոդոքսալ» սոցիալական արմատները. բանվորական շարժման մասնակի փրկումը.—Իսկ ի՞նչպես պատահեց, վոր ականավոր սոցիալիստների և պրոֆեսիոնալ շարժման հայտնի առաջնորդների մեծամասնությունը բանվորներին կոչ եյին անում դասակարգային պայքարից հրաժարվելու և իրենց կառավարությանն ու իրենց բուրժուազիային պաշտպանելու։ Այդ ի՞նչպես պատահեց, վոր նրանք հանկարծ մոռացան սոցիալիզմի մեծ լոզունգը՝ «պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք», և իրենց բոլոր ջանքերը գործ դրին զանազան ազգությունների բանվորների միջև փոխադարձ ատելություն հրահրելու վրա։

Արդյո՞ք նրանք իրենց վարմունքով անդրադարձնում եյին պրոլետարիատի կամ թեկուզ նրա մի մասի տրամադրությունը, թե՞ դա—առաջնորդների վոչնչով չբացատրվող սոսկ անջատումն եր ամբողջ բանվորական մասսայից։

Պլեխանովը, վոր, ինչպես մենք արդեն դիտենք, թունդ ոբորոնեց՝եր դարձել, գերմանական սոց.-դեմոկրատիայի նկատմամբ շատ լավ պատասխանեց այդ հարցին։ Նա գերմանական սոցիալ-դեմոկրատիայի վարմունքը նրանով բացատրեց, վոր «գերմանական պրոլետարիատը... գտավ, վոր իր համար անոգուտ չի լինի պաշտպանել գերմանա,

կան իմպերիալիստների հափշտակիչ քաղաքականությունը»։ Նրա կարծիքով, գերմանական բանվորները նրա՛ համար տարվեցին իմպերիալիզմով, որ կարծում էին թե «բարձր դասակարգերը հաղթանակի տնտեսական ոգուտը կբաժանեն նրանց հետ»։

Այդ ճիշտ է, միայն վերապահումով։ Գերմանական սոցիալ-դեմոկրատիան անդրադարձնում էր ոչ ամբողջ գերմանական պրոլետարիատի տրամադրությունը, այլ միայն նրա մի մասի, ճիշտ է, շատ զգալի ու ավելի քան ազդեցիկ մասի։

Բայց այդ նույն չափով ճիշտ է նաև Ֆրանսիայի, Անգլիայի և Ամերիկայի սոցիալիստների ու պրոլետարիատի մի մասի նկատմամբ։

Կապիտալիզմի փթումն ուղեկցվում է նաև բանվորական շարժման մանրակի այլասերումով։

Ցեվ այդ այլասերումը բացատրվում է նրանով, որ գլխավոր յերկրների բուրժուազիայի կողմից գաղութներում ու տնտեսական զարգացմամբ յետամնաց յերկրներում կատարած անողոք շահագործման միջոցով կողոպտած միլյարդները բուրժուազիային հնարավորություն են տալիս բարձր աշխատավարձով ու զանազան արտոնություններով կուշտ կերակրելու բանվոր դասակարգի վերին խավին, ել չենք խոսում արդեն սրա առաջնորդների մի մասին դրամով ու մինիստրությունների, պարլամենտների և այլ հիմնարկների մեջ տաքուկ տեղերով ուղղակի կաշառելու մասին։

Բուրժուազիան իր շահի մի մասն այդ կերպ բաժանելով, պրոլետարիատի մեջ «բանվորական արիստոկրատիա» յե ստեղծում։ Բանվոր դասակարգի այդ արտոնյալ, լավ վարձատրվող մասը համաձայնորեն և տրամադրված դեպի բուրժուազիան և սրա ազդեցությունը բանվորական ամբողջ մասսայի վրա տարածողն ե հանդիսանում։

Այդ «բանվորական արիստոկրատիայի» միջոցով, ոպպորտյունիզմն առաջավոր կապիտալիստական յերկրների սոցիալիստական կուսակցություններին դարձրել ե «բուրժուական բանվորական կուսակցություններ», այսինքն՝ իրենց կազմով բանվորական և իրենց վոգով՝ բուրժուական։

Առանց այդ «բուրժուական բանվորական կուսակցություններին» կշտացնելու հնարավոր չեյին լինի պատերազմները, հետևաբար անհնարին կլիներ կապիտալիզմի գոյությունը՝ նրա զարգացման իմպերիալիստական շրջանում։

Ոպպորտյունիզմի անհաջողության պատճառները Ռուսաստանում.—Ռուս բանվոր դասակարգն ամենից քիչ եր յենթարկվել իմպերիալիստական բուրժուազիայի այգալիսի կազմալուծիչ ազդեցությանը, վորովհետև Ռուսաստանը մի յերկիր եր, ուր ոտարյերկրյա կապիտալները եյին ներմուծվում և հետևաբար ռուս պրոլետարիատն արտաստահմանի կապիտալիստների համար ինքն եր արտադրում այն գերշահը, վորը ֆրանսիական ու անգլիական բանվորների վերին խավերին չաղացնելու գործին եր ծառայում։

Ահա թե ինչու նրա մեջ սոցիալիզմի հեղափոխական ուղղությունն ավելի ուժեղ եր ոպպորտյունիստականից։

Դումայի բոլշևիկյան ֆրակցիայի ձերբակալումը յեվ Կենտրոնական Կոմիտեյի մանիֆեստը.—Պատերազմական գործողությունների սկսվելուց Ռուսաստանի ներսում յեղած կուսակցական կազմակերպությունների կապն արտասահմանյան Կենտրոնի հետ կտրվեց և վոստիկանությունը այդ կազմակերպություններն սոսկալի կերպով ավերեց, ցրեց։ Վերացվեցին նաև պրոպագանդի լեգալ հնարավորությունները, չկար լեգալ մամուլ, շուտով դադարեց գոյություն ունենալ և Դումայի բոլշևիկյան ֆրակցիան։

Վոստիկանության ղարդից դերծ մնացած կուսակցական գործիչները Դումայի բոլշևիկյան պատգամավորների հետ միասին 1914 թ. հոկտեմբերի վերջին խորհրդակցության գումարեցին քննելու համար Կենտկոմի մանիֆեստը, որի տեքստը կազմել էր Լենինը և արտասահմանից ուղարկել։

Խորհրդակցության հաստատած այդ մանիֆեստը Արևմտյան Եվրոպայի սոցիալիստական առաջնորդների դավաճանությունը պախարակելով, հավատ էր հայտնում, որ «բանվորական մասսաները բոլոր խոչնդոտների վրայով նոր ինտերնացիոնալ կստեղծեն»։ Նա «միակ ճիշտ պրոլետարական լոզունգ» հայտարարեց՝ «ժամանակակից իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելը» և պարզաբանեց, որ բանվոր դասակարգի տեսակետից «չարիքներից փոքրագույնը կլիներ» «ցարական միապետության պարտվիլը» պատերազմական ֆրոնտում։

Բայց արդեն նոյեմբերը 4-ին կայացած յերկրորդ խորհրդակցությանը, նրա մասնակիցները, դրանց թվում բոլոր բոլշևիկ պատգամավորները, ձերբակալվեցին և ապա Սիբիր աքսորվեցին։

Դրությունը պատերազմական ժրոնտում.— Մինչդեռ ֆրոնտից սկսեցին անհանգստացնող տեղեկություններ ստացվել։ Դուրս յեկավ, որ Ռուսաստանի պատրաստած ռազմամթերքի խոշոր պաշարը, որը զինվորական վարչության հաշիվների համաձայն պիտի բավականանար մինչև պատերազմի վերջը, արդեն սկսեց նվազել, և ռուս զորքերը ստիպված եյին կրճատելու իրենց հրետանիի կրակը։ Դրա հետևանքով 1915 թ. ամրանը ռուսական բանակը սարսափելի ջարդ կրեց։ Անմատչելի համարվող ռուսական բերդերն ընկնում եյին մեկը մյուսի յետևից, մարդկային կորուստը միլիոններով էր հաշվվում, հաղթական կերպով

դեպի Բերլին արշավելու փոխարեն, շտապ նահանջ սկսվեց. Համարյա ամբողջ Լեհաստանը, Լիտվան և Կուրլյանդիան գերմանացիների ձեռքն անցան։

Պարզվեց, որ գերմանական հրետանու արձակած յուրաքանչյուր 30 գնդակին ռուսական զորքը կարող էր պատասխանել միայն մեկ թնդանոթային կրակով։

Ռազմա-արդյունաբերական կոմիտեներ.—Միայն դրլխավոր հրամանատարին փոխելով, գործին չէր կարելի ոգնել. ինչ եվ որ լիներ պետք էր կանոնավորել ռազմամթերքի արտադրության գործը։ Այդ նպատակով եվ կազմակերպվեցին այսպես կոչված ռազմա-արդյունաբերական կոմիտեները։

«Հակառակորդի արշավից հայենիքը փրկելու», յերկրի պաշտպանության համար աշխատելու դրոշի տակ—այդ կոմիտեների աշխատանքին մասնակից դարձրին բանվորներին։

Այդ մի փորձ էր՝ Ռուսաստանում բուրժուազիայի և պրոլետարիատի միջև ամուր շաղկապ ստեղծելու, լավ հիմքերի վրա դրված ռազմական արդյունաբերության գործի խոստացած շահի մի մասը բանվոր դասակարգի վերնախավի հետ կիսելու միջոցով։

Մենշևիկները, իհարկե, ընդառաջեցին այդ նոր խաղին։ Բոլշևիկներին չհաջողվեց բոլորովին քանդել բուրժուազիայի պլանները, բայց և այնպես ռազմա-արդյունաբերական կոմիտեների ընտրական կամպանիան ցույց տվեց, որ Ռուսաստանում «բուրժուական բանվորական կուսակցության» ստեղծումն այն հաջողությունը չի ունենա, ինչպես Արևմուտքում։

Յերե 1914 թ. ոգոստոսին մենշևիկները ուրախացան այն բանի համար, որ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով բանվորական շարժումը խան-

գարվեց (քանի վոր նրանց կարծիքով բանվորները հասկացել էին, վոր հիմա «ներքին պայքարը սրելու ժամանակը չէ»), ապա ռազմա-արդյունաբերական կոմիտեների շուրջը թրև գալուց հետո, նրանց գրածներում սկսում էին ուրիշ նոտաներ հնչել։ «Ռուսաստանում դեռևս չկա պատրիոտիզմ՝ իբրև մասսայական յերևույթ»,—գրում եր Թունդ լիկվիդատոր-ոբորոնեց Պոտրեսովը, իսկ մյուսներն ուղղակի ամաչեցնում էին ռուս բանվորներին, վոր նրանք զուրկ են հայրենասիրական զգացմունքներից, և որինակ էին բերում գերմանական բանվորներին, վորոնք պաշտպանում էին իրենց հայրենյաց սոցիալ-դեմոկրատիային։

Առաջին հայրերը՝ Յերորդ Ինտերնացիոնալ ստեղծելու.— Պատերազմը ձգձգվում եր։ Կամաց-կամաց ցրվում եր պրոլետարիատի աչքերը ծածկող հայրենասիրական մառախուղը։ Բոլշևիկ-լենինյանների կենտկոմի 1914 թ. մանիֆեստում արտահայտած իդեյաները տարածելու համար ավելի նպաստավոր պայմաններ էին ստեղծվում։ Դանդաղ, բայց անշեղ, իր համար ճանապարհ եր հարթում այն միտքը, վոր անհրաժեշտ և ամբողջովին անջատվել ինքն իրեն խայտառակած II Ինտերնացիոնալից և բանվոր դասակարգի հեղափոխական, միջազգային նոր միություն ստեղծել։

1915 թ. Յեմմերվալդի կոնֆերենցիան.— Միջազգային նոր միության ստեղծման ճանապարհին արված առաջին քայլը միջազգային սոցիալիստական կոնֆերենցիայի գումարումն եր Շվեյցարիայի Յեմմերվալդ քաղաքում։ Կոնֆերենցիան յերեք որ տևեց (1915 թ. սեպտեմբերի 5-ից մինչև 8-ը). ներկա էին 35 պատգամավոր՝ 11 յերկրից։

Կոնֆերենցիայում մեծամասնություն էին կազմում «ցենտրիստները», բայց այնտեղ կազմվեց մի փոքրաթիվ խմբակ, վորը սերտ համախմբվեց լենինյան դրոշակի շուրջը։ 7—8 հոգուց բաղկացած այդ խմբակը ձախ ցիմմերվալդականների անունը ստացավ և III-րդ Ինտերնացիոնալի կառուցման առաջին քարը հանդիսացավ։

Այդ կոնֆերենցիայի արդյունքն այն յեղավ, վոր ընդունվեց «Յեվրոպայի պրոլետարիատին» ուղղված մանիֆեստը և այդ մանիֆեստի հիման վրա կազմվեց միջազգային սոցիալիստական մի կոմիսիա։

Մանիֆեստը պատերազմի պատճառը տեսնում է մեծ պետությունների հավասարիչ ախորժակների մեջ, պետությունների, վորոնք «ձգտում են արյունով ու յերկաթով վերաձևելու Յեվրոպայի քարտեզը». մանիֆեստը հայտարարում է բուրժուազիայի հավատիացումները «սուտ», վոր իբր թե պատերազմը տարվում է հայրենիքի պաշտպանության և հարստահարված ժողովուրդների ազատագրության համար։ Նա գիմակազերծ է անում «սոցիալիստական կուսակցություններին ու բանվորական կազմակերպություններին» նրա՛ համար, վոր նրանք վոտնատակ տալով միջազգային կոնգրեսների վորոշումները, քվեարկել են հոգուտ պատերազմական վարկերի, կառավարությունների կազմի մեջ ավել են իրենց մինիստրներին և պատերազմի մեջ են քաշում չեզոք (պատերազմին չմասնակցող) պետություններին։ Մանիֆեստն առհասարակ մերկացնում է նրանց դավաճանությունները միջազգային կոնգրեսների վորոշումների նկատմամբ։ Մանիֆեստը կոչ է անում բոլոր յերկրների բանվորներին պայքարելու՝ «աւանց աննեկսիայի ու կոնտրիբուցիայի հաշտություն» կնքելու համար։

«Ցենտրիստները» չէին ուզում վերջնականապես կտրվել «ոբորոնցիներից», դրա համար էլ նրանք խիստ արտահայտվում էին միայն կապիտալիստների սուտի մասին և լռում էին «սոցիալ-դեմոկրատների» նույն «սուտի» մասին, ուստի և նրանք խոսում էին սոցիալիստական մի-

ջազգային կոնգրեսների վորոշումներին վոչ թե դավաճանելու, այլ դրանք վոտնակոխ անելու մասին և լուրթյուն եյին պահպանում՝ դավաճաններից անջատվելու անհրաժեշտության վերաբերյալ։

«Ցենտրիստներն» իրենք վարակված եյին բուրժուական ազդեցությամբ, նրանք իրենք ոպպորտունիստներ եյին և «ոբորոնցիներից» տարբերվում եյին նրանով, վոր հիմա հասկացել եյին, թե պատերազմի ձգձգման դեպքում ինչ ուղղությամբ պիտի զարգանա բանվորական մասսաների տրամադրությունը, և վորպեսզի չկտրվեն նրանցից, հաշտության համար պայքարելու լոզունգ եյին առաջադրել, բայց նրանք չեյին կարող վոչ պրոլետարական հեղափոխության հավատալ և վոչ էլ նրա սկսումը ցանկանալ, ուստի և հրաժարվեցին մանիֆեստում շեշտել, վոր կապիտալիզմն արդեն նախապատրաստել է պրոլետարական հեղափոխության համար անհրաժեշտ բոլոր նյութական պայմանները և չցանկացան ասել, վոր հաշտությունն առանց անեկսիայի ու կոնտրիբուցիաների հնարավոր է միայն այդ հեղափոխության հաղթանակելու դեպքում։

Այնուամենայնիվ նման մանիֆեստը, «ցենտրիստների» կամքից անկախ, պիտի ոգներ պրոլետարիատի հեղափոխական մասն անջատելու ոպպորտունիստականից, ուստի և այդ ստորագրվեց նաև բոլշևիկ-լենինյանների կողմից, թեև դա չեր արտահայտում նրանց բոլոր հիմնական հայացքները։

Միջազգային սոցիալիստական կոմիսիայի կազմումը կարող եր սկիզբ դնել սոցիալիստական շարժման կազմակերպչական պատակումանը և այդպիսով հեշտացնել III-րդ Ինտերնացիոնալի ծնունդը։

Ձախ ցիմմերվալդականները այնքան էլ մեծ հաջողություն չունեցան, բայց և արդեն ձեռք բերած արդյունքներն էլ պակաս կարևոր չեյին, և պետք եր դրանք

ամրապնդել, վորը և արվեց Լենինի ու նրա կողմնակիցների ստորագրությամբ մանիֆեստի տակ։

Միջազգային սոցիալիստական կոմիսիայի ընդլայնած նիստը.—1916 թ. փետրվարին տեղի ունեցավ Ցիմմերվալդի կոնֆերենցիայում հիմնված միջազգային սոցիալիստական կոմիսիայի ընդլայնած նիստը, վորը վորոշեց հրավիրել յերկրորդ միջազգային կոնֆերենցիան՝ ավելի լայն կազմով, քան առաջինը։

Միջազգային սոցիալիստական կոմիսիայի այդ ընդլայնած նիստի՝ բոլոր յերկրների բանվորներին ուղղած ծրագրային դիմումի մեջ արդեն խոսվում եր բանվոր դասակարգի «հեղափոխական միջամտության» անհրաժեշտության, «դիրքերում յեղբայրանալու» և այլն մասին։ Ընդհանրապես այդ դիմումը զգալիորեն մոտեցավ ձախ ցիմմերվալդականների հայացքներին։

1916 թ. Կինտալի կոնֆերենցիան.—Ապրիլի վերջին Շվեյցարիայի Կինտալ գյուղում տեղի ունեցավ միջազգային յերկրորդ կոնֆերենցիան։

Դա հաճախ անվանում են Ցիմմերվալդյան յերկրորդ կոնֆերենցիա, վորպեսզի այդ կերպ ընդգծվի նրա կապն առաջինի հետ։

Պատերազմող յերկրների կառավարությունների կողմից կոնֆերենցիայի գումարմանը հարուցած արգելքների հետևանքով, մոտ 20 պատգամավոր, գլխավորապես ձախերի կողմնակիցներից, չկարողացան կոնֆերենցիա գալ։ Հավաքվեցին ուր յերկրների 40 ներկայացուցիչ։ Անգլիան, Բուլղարիան, Ռումինիան, Շվեդիան և Նորվեգիան չկարողացան ուղարկել իրենց պատգամավորները։

Այդ յերկրորդ կոնֆերենցիան մի քայլ ևս արեց դեպի առաջ։ Ձախերի ազդեցությունն այստեղ ավելի ուժեղ

յեղավ, քան առաջին՝ Ցիմմերվալդի կոնֆերենցիայում։ Ցեվ այդ զարմանալի չէ։ Շատ յերկրներում սոցիալիստական կուսակցությունների մեջ արդեն պառակտում եր սկսվել։ Մի շարք յերկրներում այդ պառակտումն արդեն վերջնականապես կատարվել եր։

Կինտալում ընդունված վորոշումներն աչքի եյին ընկնում մեծ խստությամբ՝ «ոբորոնցիների» ու նրանց առաջնորդների նկատմամբ, վորոնք «Ինտերնացիոնալի կենտրոնական որգանը ստորացրել եյին» և դրան դրել եյին Անտանտայի կապիտալիստներին «հնազանդ գործիքի ու պատանդի անարժան դերում»։

«Բայքայվող ու մահացվող ժողովուրդներին» ուղղած մանիֆեստի մեջ դարձյալ կրկնվում է «անհապաղ հաշտություն, առանց անեկսիայի» լոզունգը, բայց հաշտության հարցի մասին ընդունված բանաձևում պայքարը հանուն հաշտության կապվում է սոցիալիզմի համար մղվող ընդհանուր պայքարին։

«Հաստատ հաշտության համար պայքարել կարելի յե միայն սոցիալիզմի իրականացման համար մղվող կռվում»—հայտարարում է բանաձևը և բանվորներին նախազգուշացնում է պացիֆիզմի ցնորքներից, այսինքն այն խաբուսիկ հույսերից, վոր իբր կապիտալիզմի որոք կարելի յե հաստատ հաշտություն ձեռք բերել միջազգային միջնորդ դատարանների, սպառազինման ընդհանուր սահմանափակման և այլ խաղաղ միջոցների ճանապարհով։

Այդ ցնորքները բուրժուազիայի ու սոցիալ-դեմոկրատների ձեռքին միայն միջոց են ծառայում՝ պրոլետարիատին մոլորեցնելու և նրան հեղափոխական դասակարգային պայքարից շեղելու համար։

Մի քայլ ևս արվեց դեպի առաջ՝ ցենտրիստներից դեպի ձախ-ցիմմերվալդականների հայացքները, բայց և այնպես կինտալի կոնֆերենցիան դեռևս վճռականություն

չի հայտնաբերում հռչակելու բոլշևիկ-լենինյանների գլխավոր լոզունգները—ստեղծել Յերրորդ Ինտերնացիոնալ և իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիականի։

Փետրվարյան հեղափոխությունը զորեղ խթան և հանդիսանում Յերրորդ Ինտերնացիոնալ ստեղծելու իդեայի իրագործմանը.—Բայց այն, ինչ վճռականություն չունեցավ անելու Ցիմմերվալդի «ցենտրիստական» մեծամասնությունը, 10 ամիս անց իրագործել սկսեց ինքը կյանքը։

Ռուսաստանում բռնկեց Փետրվարյան հեղափոխությունը։ Իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելը սկսված է—գրում է ընկ. Լենինը։ «Չի կարելի այլևս հանդուրժել Ցիմմերվալդյան ճահիճը,—ավելացնում է նա մի ամիս անց,—մենք հենց հիմա, առանց հապաղելու պետք է հիմնենք հեղափոխական պրոլետարական նոր Ինտերնացիոնալ»։

«Պրոլետարիատի անելիքները մեր հեղափոխության մեջ» իր հոդվածում Իլյիչը կուսակցության անունը փոխելու հարց է դնում։ Հին անունը չափազանց կեղտոտվել է՝ իրենց սոցիալիստական կոչող կուսակցությունների դավաճանության համար։ «Ժամանակ է դեն գցելու կեղտոտ շապիկը, ժամանակ է մաքուր սպիտակեղեն հագնելու»։ «Մենք պիտի կոչվենք Կոմունիստական Կուսակցություն»։

Յեզրակացություն.—Ցևնելով կապիտալիզմի իմպերիալիստական շրջանի (վորպես անցման շրջանի— կապիտալիզմից դեպի սոցիալիզմ) դնահատականից, բոլշևիկները իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու լոզունգ առաջադրեցին, այսինքն համաշխարհային պրոլետարական հեղափոխությունը դրին օրակարգի մեջ։

Ամբողջ աշխարհի սոցիալիստական կուսակցությունների խոշոր մեծամասնությունը ոպպորտյունիզմով այնքան ուժեղ վարակված դուրս եկավ, որ պրոլետարական հեղափոխության նվիրված լինելու քննությունը չբռնեց և հայրենիքը պաշտպանելու լոզունգի տակ իր դերկրի բուրժուազիայի հետ սերտ միություն ստեղծեց։

Ռուսական ոպպորտյունիզմը ևս «օբորոնչեստվոյի» (պաշտպանողականության) այդ նոր ձևն ընդունեց։

Քանի որ այդ յերևույթը միջազգային եր, բոլշևիզմը հիմա արդեն միջազգային մասշտաբով պայքար տարավ՝ ոպպորտյունիզմից կազմակերպչորեն բոլորովին կտրվելու։

Դա առաջադրեց նոր լոզունգ— ստեղծել III-րդ Ինտերնացիոնալ։

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ.

Ինքնակալության անկումը։ Ժողովրդական մասսաների ասպստամբությունը.— Պատերազմը ցարական միապետության կործանումը պատրաստում եր յերկու կողմից։

Նախ, նա շարժեց ժողովրդական լայն մասսաները, վորոնց վրա յեր ընկնում իր ամբողջ ծանրությամբ պատերազմի առաջ բերած տնտեսական քայքայումը։

Սոսկալի պարտությունները ու ֆրոնտում զինվորների կրած անասելի տանջանքը կազմալուծում եյին բանակը և հին կարգերի դեմ գրգռում քնակչության բոլոր խավերին։

Բանվոր դասակարգը վերսկսում է իր պայքարը։ Արդեն 1915 թվի ամռանը և աշնանը տեղի եյին ունենում տնտեսական ու քաղաքական խոշոր գործադուլներ։ Այդ տարվա բոլոր գործադուլներին մասնակցողների թիվը հասնում եր մինչև 540.000-ի։ Հետևյալ՝ 1916 թվին գործադուլավորների թիվը հասնում է արդեն 950.000-ի, ըստ վորում քաղաքական գործադուլներն յերկու անգամ ավելի եյին, քան տնտեսականը։

1917 թվի սկզբին շարժումը հասնում է իր վերադույն թափին։ «Արյունոտ կիրակի»-ի տասներկուերորդ տարեդարձը՝ հունվարի 9-ը հավերժացվեց հսկայական գործադուլներով։ Պետրոգրադում գործադուլ արին մինչև 300.000 բանվոր։

Փետրվարի կեսից մայրաքաղաքում շարժումը սկսում է ծավալվել անդուսպ ուժով, իսկ փետրվարի 23-ից մինչև մարտի 2-ը կատարվում են այնպիսի դեպքեր, որոնք վճռում են ինքնակալության բախտը։

Արդեն փետրվարի 25-ը շեշտվում է ընդհանուր գործադուլներով և փողոցային ցույցերով, որոնք փոխվում են իսկական կռվի՝ կոզակների և վոստիկանության հետ։ Հաջորդ որը ապստամբությունը ավելի յե ծավալվում և այն ճնշելու համար զորք է դուրս բերվում։

Փետրվարի 27-ին Վոլինսկի, Պրեոբրաժենսկի և Լիտովսկի գնդերը միանում են ապստամբներին։ Կռվով են վերցվում զորանոցները Մոսկվայի գնդի, որը հրաժարվել եր միանալ հեղափոխությանը։

Հենց այդ որը կազմվեց Պետրոգրադի Բանվորական Պատգամավորների Խորհուրդը։

Մոսկվայում ևս ընդհանուր գործադուլի ու փողոցային «անկարգությունների» հետևանքով, մարտի 1-ին ստեղծվում է Մոսկվայի Բանվորական ու Զինվորական Պատգամավորների Խորհուրդը։

Մարտի 2-ին ցար Նիկոլա II-ը հրաժարվում է գահից։

Անտանտայի կապիտալիստները ռուս բուրժուազիայի հետ դաշնակցած՝ ձնշում են գործ դնում.—Սակայն միայն ժողովրդական ստորին խավերը չեյին, որ մասնակցում եյին ցարիզմի տապալմանը։ Ինքնակալության տապալմանը նպաստեցին նաև մի շարք դեպքեր, որ նույնպես պատերազմի հետևանքով եյին առաջացել, սակայն որոնցում ղեկավարող դեր եյին խաղում բուրժուազիայի բարձր խավերը։

Անչափ շահելով պատերազմից, նրանք պատճառ չունեյին կողմնակից լինել նրա շուտափույթ դադարեցմանը։ Նրանց շահերի տեսակետից ձեռնտու յեր շարունակել պատերազմը մինչև «հաղթական վախճանը», քանի որ այդպիսի վախճանը նրան խոստանում եր համեղ պատառներ, ինչպես Կոստանդնուպոլը, Հայաստանը, Գալիցիան և այլն։

Մինչդեռ ֆրոնտում կրած պարտությունները ապացուցում եյին ինքնակալության անընդունակությունը պատերազմ վարելու։ Դրանում ըստ յերևույթին համոզվեց և ինքը ցարական կառավարությունը և սկսեց սեպարատ, (այսինքն՝ դաշնակիցներից անջատ) հաշտություն նախապատրաստել Գերմանիայի հետ։

Անգլիան և Ֆրանսիան, իհարկե, չեյին կարող թույլ տալ, որ գործը մինչև այդտեղ հասնի, և նրանց հյուպատոսարանները շտապեցին ռուս բուրժուազիայի առաջնորդների հետ համաձայնության գալ ցարի դեմ դավադրություն կազմակերպելու համար։

Ռուսական բուրժուազիան հասկանում եր, որ նման քայլը իր կողմից մեծ ռիսկ է, և միայն կարող եր նպաստել հեղափոխական շարժման զարգացմանը, իսկ հեղափոխությունից նա ավելի յեր վախենում, քան պարտությունից։

Բայց, առաջին, նա ամբողջապես կախում ուներ Անտանտայի կապիտալից, իսկ յերկրորդ՝ պայմաններն այնպես եյին դասավորվում, որ հին իշխանությունը պահպանելու դեպքում, պետք եր սպասել և՛ պարտություն և՛ հեղափոխություն։

Նման պայմաններում, ռուսական բուրժուազիային միայն մի բան եր մնում անելու.—ընդունել Նիկոլայի տապալման լոզունգը և աշխատել իր ձեռքը գրավել հեղափոխական շարժման ղեկավարությունը, որպեսզի այդպիսով կրճատել նրա թափը, թույլ չտալ, որ նա զարգանա ավելի՝ քան ինքնակալությունը սահմանադրական միապետությունով փոխարինելը, և շարժումը տանել պատերազմը շարունակելու ուղղությամբ։ Դրա համար բուր-

ժուռգիան ձգտում եր Պետական Դուման ինքնակալության դեմ մղվող պայքարի կենտրոն դարձնել։

Մենշևիկները, ինչպես և միշտ, այս անգամ ել բուրժուազիային ծառայելու համար պատրաստ եյին։ Նրանք Դուման պաշտպանելու լոզունգ առաջադրեցին։

Բուրժուական կուսակցությունների ու մենշևիկների կողմից իր դեմ միություն կազմելուն կառավարությունը պատասխանեց կենտրոնական ռազմա-արդյունաբերական կոմիտեյին կից «Բանվորական Խմբակի» անդամների ձերբակալումով, 1917 թ. հունվարի վերջին։

Մենք արդեն գիտենք, թե ինչ նշանակություն ուներ բանվորներին մասնակից անելը ռազմաարդյունաբերական կոմիտեների մեջ. այդ մի փորձ եր՝ բուրժուազիայի և բանվոր դասակարգի միջև սերտ կապ ստեղծելու, պատերազմի միջոցին դասակարգային պայքարը թուլացնելու համար։

Հիշյալ կոմիտեյում «Բանվորական Խմբակը» բուրժուազիային կարող եր լավ ծառայություն մատուցել և հեղափոխության միջոցին նրա ծավալման առաջն առնել։

Ահա թե ինչու «Բանվորական Խմբակը» պաշտպանելու և նրա անդամների ձերբակալության դեմ բողոքելու դուբս յեկան և բուրժուական մամուլը, և կենտրոնական ռազմա-արդյունաբերական կոմիտեն և թե Պետական Դուման։

Կառավարությունը սկսեց վճռական միջոցների պատրաստվել հենց Դումայի դեմ, և փետրվարի 25-ին նրա ցրման մասին հրաման արձակեց։

Դուման հետևյալ օրն իմանալով այդ հրամանի մասին, վորոշեց չցրվել։

«Կարգ ու կանոն և հանգստություն մտցնելու համար» Դուման փետրվարի 27-ին իր կազմից ընտրեց ժամանակավոր կոմիտե։ Նրա մեջ մտան 13 պատգամավոր,

վորոնց թվում կերենսկին՝ տրուդովիկների (աշխատավորականների) կողմից և Դումայի մենշևիկյան ֆրակցիայի պարագլուխ Չխեիձեն։ Մնացած տասնմեկը—կադետների և ոկտյաբրիստների կողմից եյին։

Մարտի 2-ին, այդ ժամանակավոր կոմիտեն տասը մինիստրից կազմված «ժամանակավոր կառավարություն» նշանակեց, իշխան Գ. Ե. Լվովի գլխավորությամբ։

Նույն որը, մարտի 2-ին, ինչպես մենք արդեն ասացինք, ցար Նիկոլայը ստորագրեց իր հրաժարումը գահից։

Յեվ այդպես, յերկու կարգի դեպքերի հետևանքով ընկավ ցարական գահը։

Գահը տապալող գլխավոր ուժը բանվորների յեվ զինվորների ապստամբություն եր.—Անշուշտ, յերկրորդ կարգի դեպքերը—անգլո-ֆրանսիական կապիտալի ինտրիգները, ռուսական բուրժուազիային դրդելը (իշխանությունը վերցնելու՝ պատերազմը շարունակելու նպատակով), նպաստում եյին հին կարգերի խորտակմանը, բայց կասկած անգամ չի կարող լինել այն մասին, վոր դրանք ամբողջապես կախում ունեյին առաջին կարգի դեպքերից, վորոնք իրենցից ներկայացնում յեն հեղափոխության գլխավոր ուժի զարգացումը, բանվորների և գյուղացիների (զինվորական շինելների մեջ) ապստամբությունները։ Պետական Դուման միայն նրա համար կարող եր չյենթարկվել ցրման հրամանին, վոր Պետրոգրադի փողոցներում այն ժամանակ բարրիկադներ եյին բարձրացվում և հաջողությամբ զարգանում եր բանվորների ու զինվորների ապստամբությունը։ Միայն այդ ապստամբության հաղթանակի շնորհիվ եր, վոր Դումայի կողմից ցարի մոտ ուղարկված պատգամավորները Գուչկովին ու Շուլգինին հաջողվեց ստանալ ցարի ստորագրությունը հրաժարման ակտի տակ։

Մյուս կողմից, փետրվարյան հեղափոխության հիմ-

նական ուժի ազդեցությունը արտահայտվեց նրանում, որ միապետությունը փրկելու համար բուրժուազիայի արած փորձերը միանգամայն ջարդ ու փշուր յեղան։

Մեծ իշխան Միխայիլ Ռոմանովը հրաժարվեց մարտի 3-ին իրեն առաջարկած թագից, չնայած կադետական առաջնորդների այն հավաստիացումներին, որ գահը պաշտպանելու համար պրովինցիայում դեռ կարելի յե բավարար զինվորական ուժ հավաքել։

Իշխանության յերկու որգանների առաջ գալը.—Դուման ամբողջ շարժման կենտրոնը դարձնելու բուրժուազիայի փորձերը նույնպես չհաջողվեցին. ապստամբած ժողովրդական մասսաները ստեղծեցին իրենց կենտրոնը—Պետրոգրադի Բանվորական և Զինվորական Պատգամավորների Խորհուրդը։ Դեպքերի ընթացքով իշխանությունը անցավ այդ Խորհրդին։

Բայց բուրժուազիան ինքը համառ կերպով ձգտում էր դեպի իշխանությունը և ուներ իր որգանը—Պետական Դումայի Ժամանակավոր Կոմիտեն.—սրա առաջ գալու արդեն իսկ հաջորդ որը ռուսական բուրժուազիայի ականավոր առաջնորդներից մեկը, Պ. Ն. Միլյուկովը, իր ճառերից մեկում պարզ հայտարարեց. «Ներկայումս միայն մի իշխանություն կա, որին բոլորը պետք է լսեն, դա՝ Պետական Դումայի Ժամանակավոր Կոմիտեն և։ Յերկիշխանություն չպետք է լինի»։

Ճիշ այդպես, ցարիզմի տապալմանը մասնակցող այդ յերկու ուժերից յուրաքանչյուրը իր իշխանության որգանը ստեղծեց։

Այդ յերկու որգանների ուժերը շատ անհավասար էին։ Բացարձակ գերակշռությունը—ժողովրդական մասսաների ապստամբության վրա հենվող Պետրոգրադի Խորհրդի կողմն էր։ Այնուամենայնիվ բուրժուազիան չսխալվեց իշխանությունը ձեռք բերելու իր հաշիվների մեջ։

Բանվորական յեվ Զինվորական Պատգամավորների Խորհուրդը իշխանությունը կամավոր կերպով հանձնում է բուրժուազիային.—Մարտի 3-ին, Պետրոգրադի Բանվորական և Զինվորական Պատգամավորների Խորհրդի թերթում քաղաքացիներին ուղղված յերկու դիմում լույս տեսան. մեկը—«Ժամանակավոր կառավարության» կողմից, մյուսը—Խորհրդի Գործկոմի կողմից։ Առաջինը քաղաքացիներին տեղեկացնում էր այն մասին, որ կազմվել է «Ժամանակավոր կառավարություն» տասը մինիստրներից, որոնց նշանակել է Պետական Դումայի Ժամանակավոր Կոմիտեն. բոլոր մինիստրները, բացի «տրուդովիկներից» խմբակի անդամ կերենսկուց, բուրժուական կուսակցությունների—ոկտյաբրիստների և կադետների ներկայացուցիչներ էին։ Մինիստրների Խորհրդի կազմի մեջ փայլում էին այնպիսի անուններ, որպիսիք են՝ Գուչկով, Միլյուկով, Կոնովալով և ուրիշները։ Կառավարության գլուխ է նշանակվում իշխան Լվովը։ Դիմումի մեջ թված էր ծրագրի հիմնական կետերը, որով պիտի ղեկավարվեին մինիստրները։ Ընդհամենը ութ կետ կար, բայց նրանցից և վոչ մեկում մի խոսք անգամ չկար վոչ հաշտության, վոչ հողի, և վոչ էլ 8 ժամյա բանվորական որվա մասին։

Յերկրորդ դիմումը՝ Բանվ. և Զինվ. Պատգամավորների Խորհրդի Գործադիր Կոմիտեյի կողմից՝ «ընկերներին և քաղաքացիներին» կոչ էր անում այդ իշխանությունը պաշտպանելու այն չափով, ինչ չափով վոր նա կգործի իր իսկ հայտարարած ծրագրի համաձայն։ Զինվորներն առանձնապես հրավիրվում էին սպաների հետ «համերաշխ աշխատանքի» և ժողովրդի հանդեպ այդ սպաների կատարած վոչ «եյական հանցագործությունների մոռացության»։

Այդ նշանակում էր, վոր բուրժուական ժամանակա-

վոր կառավարության և Բանվորական և Զինվորական Պատգամավորների Սորհրդի միջև համաձայնություն եր կայացել։ Այդ համաձայնությամբ, բուրժուազիան իր ձեռքն առավ իշխանությունը այնպիսի պայմաններով, ուր բացակայում եյին ժողովրդական մասսաների հիմնական պահանջները—հաշտություն կնքելու ու հացի պահանջը։

Մենշևիկների յեվ եսերների դերը՝ իշխանությունը Ժամանակ. Կառավարությանը հանձնելու գործում.—Ինչո՞ւ այդ տեղի ունեցավ։

Նախ սան այդ հարցին ճիշտ պատասխան տալը, տեսնենք թե ինչ կազմ ուներ Պետրոգրադի Սորհուրդը։

Սորհրդում բոլշևիկները չնչին թիվ եյին կազմում, Գործադիր Կոմիտեյում—ընդհամենը յերեք հոգի։

Սորհրդի նախագահ եր ընտրված Չխեյձեն, Դումայի մենշևիկյան ֆրակցիայի առաջնորդը։ Փոխնախագահներն եյին Սկոբելևը, նույնպես ականավոր մենշևիկ և Դումայի պատգամավոր, և Կերենսկին, տրուդովիկների խմբակի անդամ, վորը փետրվարյան հեղափոխությունից հետո անցել եր եսերների կուսակցության մեջ։

Հետևաբար, Սորհրդի գլուխ եյին կանգնած և այն ղեկավարում եյին մենշևիկներն ու եսերները։

Մենշևիկների համաձայնական տակտիկայի հետ մենք շատ լավ ծանոթ ենք։ Պրոլետարական կուսակցության պատմության բոլոր շրջաններում մենշևիկները բուրժուազիայի ազդեցությունը բանվոր դասակարգի վրա տարածողների դերն են կատարել։

1905 թ. նրանք դեմ եյին, վոր իշխանությունը գրավվեն պրոլետարիատը և գյուղացիությունը, և այդ հայացքներին էլ հավատարիմ մնացին 1917 թ.։

Յեվ ահա հիմա, յերբ հեղափոխության ընթացքի շնորհիվ իշխանությունն անցնում եր Սորհուրդների ձեռքը, հետևաբար, յերբ իրագործվում եր պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի բոլշևիկյան լոզունգը, մենշևիկները շտապեցին ոգտագործելու բանվոր դասակարգի վրա իրենց ունեցած ազդեցությունը՝ իշխանությունը բուրժուազիային հանձնելու համար։

Այդ բանում նրանց յեռանդուն կերպով ոգնում եյին եսերները։

Մենք արդեն գիտենք, վոր այդ —մանր-բուրժուազիայի կուսակցություն եր, քանի վոր նա արտահայտում եր շահերը մանր-սեփականատերերի, մանր-արտադրողների, վորոնք կապիտալիստական կարգերի պայմաններում ձգտում են բարելավել իրենց դրությունը։

Մեր կուսակցությունն եսերների մասին առաջին անգամ այդպիսի կարծիք հայտնեց դեռ 1903 թվին, յերկրորդ համագումարում, և հետագայում դա հաստատեց յերրորդ և հինգերորդ համագումարներում։ Իրենց վարմունքով փետրվարյան հեղափոխության միջոցին և նրանից հետո, եսերները պարզապես ապացուցեցին մեր հայացքի ճշտությունը իրենց մասին, վորպես բուրժուական բանակի ձախ թևի։

Եսերներն ապատամբած մասսաների վոչ պրոլետարական խավերի մեջ տարածում եյին իմպերիալիստական բուրժուազիայի ազդեցությունը։

Այդ կուսակցության Պետրոգրադի շրջանային կոնֆերենցիան մարտի 4-ի նիստում հայտարարեց իր բանաձևի մեջ, վոր ինքը «Ժամանակավոր Կառավարության պաշտպանությունը միանգամայն անհրաժեշտ և համարում»։

Իսկ եսերական «Դելո Նարոդա» (Ժողովրդի գործ) լրագիրը իր առաջին համարի առաջնորդողում ավելացնում եր՝ «Մեր կուսակցությունը պաշտպանում է պատերազմը շարունակող և լայն դեմոկրատական ռեֆորմների ծրագիրը զարգացնող «Ժամանակավոր Կառավարությանը»։

Ցեվ այդպես, խորհուրդներում մեծամասնություն ունեցող եսերների ու մենշևիկների դավաճանության շնորհիվ բուրժուազիան իշխանությունն իր ձեռքն առավ։

Բուրժուազիայի կողմից իշխանության գրավելու հիմնական պատճառը.—Բայց այդ կուսակցությունների դավաճանությունը — իշխանությունը բուրժուազիային հանձնելու մոտավոր պատճառն եր միայն։

Հիմնական պատճառը, անկասկած, եսերներին և մենշևիկներին վստահացող ժողովրդական մասսաների անբավարար կազմակերպությունը և նվազ գիտակցությունն եր։

Այդ մասսաների խոշոր մեծամասնությունը կազմում եյին գյուղացիները։ Նրանց տրամադրությունն եր արտահայտում և բանակը, որն իր կազմով գյուղացիական եր։

Գյուղացիությունը միշտ էլ տատանվել և բուրժուազիայի և պրոլետարիատի միջև։ Պայքարի ուղիները ընտրելու նրա նվազ գիտակցությունը և անվճռականությունը 1905 թվի հեղափոխության պարտության գլխավոր պատճառ դարձան։ Այն ժամանակ պրոլետարիատին չհաջողվեց գյուղացիությունը ամբողջությամբ դուրս բերել բուրժուազիայի ազդեցության տակից և նրան իր ճանապարհով տանել։

1917 թվի սկզբին, ինքը պրոլետարիատը դեռ պարզ կերպով չեր տեսնում իր ուղին։ Նա իր համար դեռ չեր պարզել ստեղծված դրությունը, որը չափազանց խճճվել եր պատերազմի հետևանքով։

Փոքրաքանակ և անկազմակերպ լինելով, նա ինքը յենթարկվեց իրեն շրջապատող մանր-բուրժուական տարերքի ազդեցությանը։

Բոլշևիկյան կազմակերպություններն, ինչպես մենք գիտենք, ցիրուցան արվեցին հենց պատերազմի սկզբին։ Բոլշևիկյան պատգամավորները Սիբիր աքսորվեցին։ Դա-

ժան պրոլետարիատից միայն նոր դուրս յեկած մեր կուսակցության ուժերը դեռ չափազանց թույլ եյին։ Մեր ազդեցությունը պրոլետարիատի վրա դեռ չեր կարող բավական չափով մեծ լինել։

Պայքարի լեգալ ֆրոնտում գերակշռում եյին մենշևիկները, որոնք պահպանել եյին Դումայի իրենց ֆրակցիան և բանվորական մասսաների հետ կապված եյին ռազմա-արդյունաբերական կոմիտեների միջոցով։

Իրենց դրության այդպիսի առավելություններով, նրանք կարող եյին բավական հեշտությամբ կատարել բուրժուական միջնորդների իրենց դերը։

Սակայն փետրվարյան հեղափոխության նվաճած ազատության հետևանքով, բոլշևիկյան կազմակերպությունների աստիճանական աճումով, մանավանդ ընկ. Լենինի արտասահմանից գալուց հետո, պրոլետարիատին գործի եյությունը լուսաբանելու և նրան գիտակցության բերելու աշխատանքը արագությա՛մբ կատարվեց։

Լենինը պրոլետարիատի առնելիքների մասին.—Ապրիլի 4-ին Լենինը հրապարակում է իր նշանավոր թեզիսները, այսինքն առանձին կետերով համառոտ շարադրում է իր հայացքները պրոլետարիատի անելիքների մասին այդ հեղափոխության մեջ։

Այդ հայացքները ավելի մանրամասնորեն լուսաբանվեցին ընկ. Լենինի հետագա հոդվածներում (մանավանդ՝ «Յերկիշխանության մասին» և «Պրոլետարիատի անելիքները մեր հեղափոխության մեջ» հոդվածում), որը տպագրվեցին յերեք տարվա ընդհատումից հետո վերահրատարակվող «Պրավդա» թերթում։

Այդ հայացքների եյությունը հանգում եր հետևյալին.

1) Մենք պետք է ձգտենք վոչ թե պարլամենտական հանրապետության, այլ Խորհուրդների հանրապետության,

վորպես նոր, բարձրագույն տիպի պետություն, վորի նախատիպն եր Պարիզի Կոմունան։

2) Ներկա մոմենտում Խորհուրդները պետք է իրենց ձեռքը վերցնեն ամբողջ իշխանությունը և լիագոր հեղափոխական կառավարություն դառնան.

3) Ներկայումս գոյություն ունեցող բուրժուական ժամանակավոր կառավարությունը պետք է տապալվի։ Միայն այդ կերպ պետք է լուծվի յերկիշխանության հակասությունը։

4) Այդպիսի լուծումը դեռ հնարավոր է խաղաղ ճանապարհով, քանի վոր իսկական իշխանությունը դեռ զըտնվում է բանվորների և զինվորների ձեռքը և նրանց վրա բուրժուական ժամանակավոր կառավարությունը վոչ մի բռնություն դեռ չի կարող գործ դնել։

5) Բայց այդ ձևի լուծումը հնարավոր չէ անմիջապես, քանի վոր իշխանությունը կամավոր կերպով բուրժուական ժամանակավոր կառավարությանը հանձնած խորհուրդների մեծամասնությունը դեռ չի զիտակցել իր սխալը և շարունակում է պաշտպանել այդ կառավարությանը։

6) Հետևաբար, մեր կուսակցության անելիքը պիտի լինի— Խորհուրդների մեծամասնությունը մեր կողմը զրավել՝ նրանց տակտիկայի սխալները և այդ սխալները շտկելու անհրաժեշտությունը հասկացնելու միջոցով։ Մոմենտի լոզունգներն են հանդիսանում. «Վոչ մի պաշտպանություն ժամանակավոր կառավարությանը», «Ամբողջ իշխանությունը Խորհուրդներին»։

7) Հատուկ ուշադրություն և զգուշություն պիտի հայտնաբերել այսպես կոչված «հեղափոխական օբորոնչեստվոյի» դեմ մղվող պայքարում։

Մասսաները մոլորվել են, կարծելով, վոր իսկապես իշխանությունը ցարից Լվովի կառավարությանը անցնելով, պատերազմը կորցրել է իր հափշտակիչ բնույթը և դարձել է հեղափոխություն պաշտպանելու համար մղվող պատերազմ։

Այդ վտանգավոր պատրանքները պետք է անողոքաբար ցրել, բայց պետք է հմտորեն մոտենալ մասսաներին, պարզաբանելով, վոր առանց կապիտալի տապալման՝ արդար հաշտությամբ պատերազմն ավարտել հնարավոր չէ։

8) Կուսակցությունը պետք է վորոշակի հայտնաբերի իր տեսակետը հեղափոխության ապրած շրջանի նկատմամբ, իր հայացքների շուրջը համախմբի պրոլետարիատին և դրանով ազատագրի նրան մանր-բուրժուական կուսակցությունների, մենշևիկների ու եսերների ազդեցությունից։ Միայն այդ կերպ իրեն լիովին անջատելով բոլոր մանր-բուրժուական ոպորտունիստական հոսանքներից, պրոլետարիատը ընդունակ կլինի հեղափոխության հեգեմոնիայի իր խնդիրը իրագործել, իմպերիալիստական բուրժուազիայի ազդեցությունից գյուղացիական մասսաներին ազատելով, նրանց դեպի խորհուրդների հանրապետության համար մղվող պայքարն առաջնորդելով։

Այստեղից բղխում են կուսակցության հետևյալ անելիքները.

1) Կուսակցական համագումարի հրավիրումը։

2) Ծրագրի փոփոխումն այն ձևով, վոր նրա ակրոբունքային մասում բացատրվի եյությունը իմպերիալիզմի և խորհրդային տիպի պետության, վորպես կապիտալիզմից կոմունիզմի անցմանշրջանի, ինչպես նաև շտկվի լինքնակալության տապալումից հետո հնացած ծրագիր-մինիմումը։

3) Կուսակցության անունը փոխելը։

4) Նոր հեղափոխական ինտերնացիոնալ ստեղծելու աշխատանքը։

Ոպորտունիզմ՝ ընդդեմ կուսակցության նոր ստրատեգիական պլանի— Ընկ. Լենինի այդ խոսքերը կուսակցության *ո՛չ* բոլոր անդամները իսկույն ըմբռնեցին։ Նրանց մի փոքր մասը՝ ընկեր Կամենևի գլխավորությամբ, գտնում էր, որ ընկեր Լենինի ապրիլյան թեզիսներում հրապարակված՝ կուսակցության ստրատեգիական նոր կուրսը սխալ է, ռուսական հեղափոխության զարգացման մասին բոլշևիզմի ունեցած հիմնական հայացքներին հակասական։

Ընկ. Կամենևը հիշեցնում էր այն մասին, ինչ բոլշևիկներն էին միշտ ասում,— թե ինքնակալության դեմ ուղղված հեղափոխությունից սոցիալիստական հեղափոխությանն անցնելը հնարավոր է միայն առաջինի ավարտումից հետո։ Այդպիսի ավարտումն հանդիսանում է պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի հաստատումը։

Քանի դեռ մենք չենք հասնի այդ հիմնական բոլշևիկյան լոզունգի իրականացմանը, մինչ այն, մենք չենք կարող, մեզ չդավաճանելով, փոխել մեր ստրատեգիական պլանը, մեր իսկ թեորիայի համաձայն չպետք է ցատկենք հեղափոխության զարգացման անհրաժեշտ ետապի վրայով, պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի վրայով դեպի մի այնպիսի ստրատեգիա, որի նպատակն է անմիջական հարված տալ բուրժուազիային և կապիտալիզմին։

Այսպիսի անցումն (անմիջապես սոցիալիստական հեղափոխություն սկսելը) վաղաժամ է, քանի որ մեզ մոտ դեռ չկա պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրա, որ յենթադրում է բանվորների և գյուղացիների վոչնչով չսահմանափակված իշխանություն։ Իսկ իրականում այդ իշխանությունը գտնվում է վոչ թե նրանց ձեռքը, այլ բուրժուական ժամանակ. կառավարության։

Իլյիչն իրեն հատուկ յեռանդով նման հայացքների

դեմ դուրս յեկավ, նշելով այն, որ ընկեր Կամենևը միայն յերևույթների ձևն է տեսնում, բայց չի տեսնում նրանց սոցիալական էությունը։ Նա չի տեսնում, որ ըստ էության պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան արդեն իրագործվել է, թեև յուրահատուկ ձևով, որը խանգարում է ճանաչել նրա բովանդակությունը։

Քանի որ Սորհուրդները կարող գտնվեցին իշխանությունը կամավոր կերպով հանձնել բուրժուազիային, ուրեմն և նրանք ուժ ունեն իշխանության նկատմամբ կարգադրություններ անելու։ Ժամանակավոր կառավարությունը, որ իշխանությունը ստացավ Սորհուրդների ձեռքից, չէ կարող առանց նրանց անմիջական համաձայնության վոչ մի՝ քիչ թե շատ նշանակություն ունեցող միջոց ձեռք առնել, չի կարող ստանձնած իշխանության նկատմամբ կարգադրություններ անել իր հայեցողությամբ։

Այդ նշանակում է, որ ռեալ իշխանությունը, ուժը գտնվում է Սորհուրդների, բանվորների ու գյուղացիների որգանների ձեռքին։ Այդ նշանակում է, որ դասակարգային ուժերի փոխհարաբերության իմաստով պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրան արդեն իրագործվել է, և այդ իսկ իմաստով կարելի չէ և պետք է խոսել բուրժուական հեղափոխության ավարտման մասին։

Իսկ դասակարգային ուժերի փոխհարաբերությունը հենց այն է, ինչով վորոշվում է մի ստրատեգիական պլանից մյուսին անցնելու հնարավորությունը։

Իհարկե, բուրժուական հեղափոխությունը, արդյունքների իմաստով, ավարտված չեր, թեկուզ հենց այն պատճառով, որ չեր վճռվել նրա հիմնական հարցը՝ հողի հարցը, բայց բուրժուական հեղափոխության այդ անավարտ վիճակը միայն հեշտացնում եր սոցիալիստական հեղափոխության հաջողությունը, քանի որ ստեղծում եր այնպիսի

բարենպաստ դրությունն, որի միջոցին պրոլետարիատը անցնում եր իշխանությունը գրավելուն և ամբողջ գյուղացիության հետ միասին իր դիկտատուրան հաստատելուն։

Բոլշևիկյան ագիտացիայի ազդեցությունը մասսաների վրա.— Ժամանակավոր կառավարության իր իսկ վարմունքը հեշտացնում եր բոլշևիկների պրոպագանդը ու ագիտացիան, որը տեղի յեր ունենում ըստ Իլյիչի ձևակերպած լոզունգների։

Իր գոյության մեկ և կես ամսվա ընթացքում ժամ. կառ.-ը վոչինչ չարեց հեղափոխության զարգացման համար։ Բայց դրա փոխարեն նա հաստատեց ցարական կառավարության գաղտնի պայմանագրերը և անգլիական ու ֆրանսիական իմպերիալիստների հետ նոր գաղտնի բանակցություններ մեջ մտավ։

Ապրիլի 18-ին, արտաքին գործերի մինիստր Միլյուկովը դաշնակից պետություններին ուղղած դիվանագիտական իր հայտագրում (նոտայում) հայտնեց, որ պատերազմի նպատակները միևնույնը, նախկինը, և որ Ռուսաստանը շարունակելու յե պատերազմը մինչև «հաղթական վախճանը»։

Ապրիլի 20—21-ի զինված ցույցերը.—Ապրիլի 20-ին հրապարակված այդ նոտան Պետրոգրադի բանվորների և զինվորների մեջ հակայական ցասում առաջ բերեց։ Նույնը սկսվեցին բողոքի ցույցերը։ Դրանք առանձնապես ուժեղացան ապրիլի 21-ի յերեկոյան, յերբ քաղաքի զանազան մասերում գործը մինչև զինված ընդհարումների հասավ։

Զինված ցույցերի լոզունգներն եյին «Կորչի՛ ժամանակավոր կառավարությունը», «Ամբողջ իշխանությունը Խորհուրդներին»։

Ժողովրդական ուժեղ ցասումի ճնշման տակ մինիստրներ Գուչկովը և Միլյուկովը վերջապես պետք և հրաժարական տային։

Կոալիցիոն մինիստրություն.—Բուրժուազիան զգաց, որ իշխանությունը իր ձեռքից գնում և։ Իր նկատմամբ յեղած վստահությունը պահպանելու համար ժամանակավոր կառավարությունը մտածում և կոալիցիոն մինիստրություն ստեղծելու, այսինքն խառը կազմով մի այնպիսի մինիստրություն, որի մեջ մտնեյին, բացի բուրժուական քաղաքական գործիչներից, նաև Խորհուրդները ղեկավարող կուսակցությունների ներկայացուցիչները, այլ կերպ ասած՝ մենշևիկներն ու եսերները։

Այդ միտքը հավանություն գտավ մայիսի 1-ին Խորհրդի Գործկոմի կողմից՝ 2/3 ձայների մեծամասնությամբ. մայիսի 5-ին բուրժուական կուսակցությունների ներկայացուցիչներից և իրենց սոցիալիստական կոչող եսերներից ու մենշևիկներից կազմվեց մինիստրություն։ Նոր կառավարության 15 անդամից 9-ը բուրժուական մինիստրներ եյին, 4-ը եսերական ուղղության (յերկու եսեր—Կերենսկին ու Չերնովը ու նրանց չափազանց մոտ կանգնած յերկու «ժողովրդական սոցիալիստ»). և 2 մենշևիկներ—Ծերեթելին ու Սկոբելևը։

Յեվ այսպես, մենշևիկներն ու եսերները մի անգամ ել բուրժուազիային ոգնության յեկան և պաշտպանեցին նրան դժվար րոպեին՝ յերբ քիչ եր մնացել, որ իշխանությունը Խորհուրդների ձեռքն անցնի։ Իսկ այն ժամանակ իշխանությունը կարող եր բոլորովին անարգել կերպով Խորհուրդների ձեռքն անցնել։

Ապրիլյան կոնֆերենցիան.—Կոալիցիոն մինիստրության նկատմամբ մեր կուսակցության ունեցած հայացքը և մոմենտի մասին նրա ունած գնահատականը իր արտահայտությունը գտան ապրիլի 24—29 տեղի ունեցած հա-

մառուսական կոնֆերենցիայի բանաձևերի մեջ։ Կոնֆերենցիայում ներկայացված էին կուսակցության 79.000 անդամ։

Ապրիլյան կոնֆերենցիան ընդունեց ընկ. Լենինի հայացքները փետրվարյան հեղափոխության մասին, այս հրաչակելով «պատերազմի առաջ բերած պրոլետարական հեղափոխություններից առաջինի սկզբնական ետապ»։

Ներկայումս, այդ հեղափոխության ապրած առաջին ետապում պրոլետարիատը պետք է ձգտի սոցիալիզմին անցնելու առաջին քայլերի իրագործմանը, որոնցից գլխավորներն հանդիսանում են հողի ազգայնացումը և պետական հսկողությունը բանկերի վրա, այդ բանկերը միացնելով մեկ կենտրոնական բանկի մեջ, ինչպես նաև հսկողությունը ապահովագրական հիմնարկների և խոշոր արդյունաբերական միությունների վրա։

Կոնֆերենցիան դեմ արտահայտվեց այն մասին, որ Պորհուրդների կողմից ներկայացուցիչներ ուղարկվեն կոալիցիոն մինիստրության մեջ։ Պորհուրդները պետք է փոխեն բուրժուազիային պաշտպանելու իրենց քաղաքականությունը և ամբողջ իշխանությունն իրենց ձեռքը վերցնեն։ Ընտրվեց տասը հոգուց կազմված կենտրոնական կոմիտե, որի մեջ մտան Լենինը, Ստալինը, Կամենևը, Զինովյեվը և ուրիշները, ընտրվեց նաև կենտրոնական որգանի («Պրավդայի») խմբագրությունը՝ 5 հոգուց։

Յեղբայրացում.—Նոր կառավարության քաղաքականությունը ամենևին չփոխվեց նրանից, որ Պորհուրդների կողմից իրրև պատանդ նրա մեջ մտան վեց «սոցիալիստ մինիստրներ»։ Այդ քաղաքականության և ժողովրդական մասսաների ձգտումների միջև եղած հակադրությունը պատերազմի հարցում ավելի սրվեց։

Հեղափոխության ժամանակամիջոցին Փրոնտում կատարել եր փաստական դինադադար, այսինքն առանց մի

վորևե նախնական համաձայնության՝ երկու կողմից էլ ռազմական գործողությունները դադարեցրել էին։ Հակառակորդ կողմերի զինվորների միջև յեղբայրացում եր սկսվել։

Դրանում մեր կուսակցությունը պատերազմող բանակների մեջ համերաշխության զգացմունքի արթնացման սկիզբն եր տեսնում, անհրաժեշտ եր համարում պաշտպանել և զարգացնել յեղբայրացումը, դրանում տեսնելով Իլյիչի արտահայտությամբ՝ «դեպի սոցիալիստական պրոլետարական հեղափոխությունը դիմող քայլերի շղթայի մի ողակը»։ Յեղբայրացումն ու զինադադարը մի ֆրոնտում՝ կարող եր նույնն առաջ բերել նաև մնացած ֆրոնտներում։

Հարձակման նախապատրաստություն.—Իհարկե, միջազգային բուրժուազիան դրան այլ կերպ եր նայում։

Անտանտայի կառավարությունները կոալիցիոն մինիստրությունից համառորեն պահանջում էին, որ նա վերջապես ֆրոնտի այդպիսի դրությանը և անցներ հարձակման։

Դաշնակիցների այդպիսի պահանջը ամբողջովին համապատասխանում եր ժամանակավոր կառավարության մտադրություններին։ Նրա նախագահ իշխան Լվովը կոալիցիոն մինիստրություն կազմվելու հենց առաջին որը թերթերի թղթակիցներին հայտնեց—«Յերկիրը պետք է իր հեղինակավոր խոսքը ասի և իր բանակը կռվի ուղարկի»։ Սկսվեց հարձակման նախապատրաստությունը։

Հունիսի 18 յեվ 19-ի մանիֆեստացիաները.—Հունիսի 3-ին բացվեց Պորհուրդների Համառուսական Առաջին Համագումարը։ Ներկայում բոլշևիկները կազմում էին ամբողջ համագումարի $^1/_{10}$-ից վոչ ավելին։

Մեր կուսակցության կենտկոմը խաղաղ ցույց նշանակեց հունիսի 10-ին հետևյալ լոզունգներով. «Կորչին

կապիտալիստ մինիստրները», «Ամբողջ իշխանությունը Խորհուրդներին»։

Մենշևիկների ու եսերների ազդեցության տակ, Խորհուրդների Համագումարը մանիֆեստացիայի դեմ արտահայտվեց։ Բոլշևիկների կուսակցության կենտկոմը դրան չենթարկվելով՝ փոխեց իր որոշումը։

Այն ժամանակ Համագումարն ինքը հունիսի 18-ին նշանակեց մանիֆեստացիա՝ համաձայնական իր լոզունգների տակ։

Այդ մանիֆեստացիան իրականում վերածվեց Պետրոգրադի բանվորների և զինվորների հոյակապ ելույթի՝ ընդդեմ ժամանակավոր Կառավարության։ Նա ցույց տվեց, որ Խորհուրդների համագումարը արդեն չէր արտահայտում Պետրոգրադի մասսաների տրամադրությունը։

Իսկ հունիսի 18-ին ֆրոնտում սկսվեց հարձակումը, որի մասին հեռագրով տեղեկացրեց Կերենսկին, իբրև ռուսական հեղափոխության մեծ հաղթանակի մասին։

Հունիսի 19-ի նիստում Համագումարը հավանություն տվեց ռուսական բանակի հարձակման անցնելուն և այդ առթիվ հայրենասիրական մանիֆեստացիա կազմակերպեց։

Հունիսի 18-ի և 19-ի օրերը հեղափոխության բեկման մոմենտն էր.—պատերազմի վերսկսումը և հարձակման անցնելը պահանջում էին ունենալ կայուն իշխանություն, որը պատերազմի հակառակորդների դեմ անողոք պայքար տաներ։ Փաստորեն իշխանությունն անցած էր բուրժուազիայի կամքը կատարող վոյենշչինայի (զինվորականության) ձեռքը։

Հուլիսյան որերը.—Դա անհերքելի կերպով ապացուցեցին հետագա դեպքերը։

Պատերազմի վերսկսման ցասումով լցված, Պետրոգրադի բանվորներն ու զինվորները հուլիսի 3-ին նորից փողոց դուրս եկան։ Մեր կուսակցությունն աշխատում էր մասսաներին չետ պահել, նախազուշակելով այդպիսի ելույթի անխուսափելի պարտությունը՝ անբավարար ուժի և անբավարար կազմակերպվածության պատճառով։

Սակայն ժամանակավոր Կառավարության դեմ չեղած զայրույթը այնքան մեծ էր, որ բոլշևիկների փորձերը վաղաժամ ելույթի առաջն առնելու հաջողություն չունեցան. մասսաները վճռեցին դուրս գալ։

Այն ժամանակ կուսակցությունն ընդունեց մասսաների շարժման ղեկավարությունը, որոնք պահանջում էին, որ Խորհուրդների Գործադիր Կոմիտեն իշխանությունն իր ձեռքը վերցնի։

Ժամանակավոր Կառավարությունը զինված ուժով ճնշեց շարժումը։

Խորհուրդների չորս ամսվա համաձայնական քաղաքականությունը այնտեղ հասցրեց, որ բուրժուական ժամանակավոր Կառավարության ձեռքում հանդիսացավ իրական իշխանությունը, որը հիմնված էր ժողովրդից առանձնացրած զինված ուժի, վոստիկանության, բանտերի վրա և այլն։

Ապստամբությունը ճնշելուց անմիջապես հետո ապստամբած բանվորների և զինվորների հետ սկսվեց հաշիվ տեռնվել—ավերի ենթարկվեցին «Պրավդայի» խմբագրությունն ու տպարանը. հուլիս 3—5-ի ապստամբության գործը քննելու համար հանձնաժողով նշանակվեց, ըստ որում ժամանակավոր Կառավարությունը վորոշեց՝ «զինված ապստամբության կազմակերպման ու ղեկավարման բոլոր մասնակիցներին, ինչպես և այդ ապստամբությանը բոլոր կոչ անողներին ձերբակալել և դատական պատասխանատվության ենթարկել, իբրև հայրենիքին և հեղափոխությանը դավաճանած հանցավորների»։

Ձերբակալվեցին Կամենևը, Տրոցկին, Լունաչարսկին

և ուրիշ ընկերները. միաժամանակ խիստ հրաման տրվեց ձերբակալել Լենինին ու Զինովյևին։

Հեղափոխության նոր շրջանը.—Մի խոսքով, հուլիսի դեպքերից հետո պարզվեց, որ հեղափոխությունը թևակոխել է նոր շրջան, որի միջոցին այլևս «անհնար էին դարձել խաղաղ զարգացումը և իշխանության՝ անցավաղին անցումը Խորհուրդներին, քանի որ իշխանությունն արդեն անցել էր հակահեղափոխական բուրժուազիայի ձեռքը։

Նրա առաջ Խորհուրդները անոգնական էին։ Հեղափոխության այդ նոր շրջանում պրոլետարիատի խնդիրն էր—նախապատրաստվել՝ իշխանությունը բռնի կերպով գրավելու համար։

Այլ կերպ ասած, սկսվեց Հոկտեմբերի նախապատրաստման շրջանը։

Վեցերորդ համագումարը.—Այդպես էր գնահատում ստեղծված դրությունն Իլյիչը, այդպես էլ գնահատեց այն նաև կուսակցության 6-րդ համագումարը, որ կայացավ հուլիսի վերջին (1917 թ. հուլ. 26-ից մինչև օգոստոսի 3-ը)։

Համագումարը պրոլետարիատի անելիքը բնորոշեց այսպես—«լիովին վերացնել հակահեղափոխական բուրժուազիայի դիկտատուրան»։ Այդ խնդիրը բանվոր դասակարգը կարող է իրագործել միայն «չքավոր գյուղացիության կողմից պաշտպանություն գտնելու պայմանով»։

Իշխանությունն իրենց ձեռքը վերցնելով, այդ հեղափոխական դասակարգերը, առաջավոր շերտերի հեղափոխական պրոլետարիատի հետ միացած, իշխանությունը կոգտագործեն հաշտություն կնքելու և հասարակության սոցիալիստական վերակառուցման համար։

Վեցերորդ համագումարում կուսակցության մեջ մտան այսպես կոչված միջրայոնականները (межрайонцы—այդպես էր կոչվում այն ժամանակ ընկ. Տրոցկու կողմնակիցների խմբակը), որոնցից յերկուսը (Տրոցկին և Ուրիցկին) մտան 14 մարդուց ընտրված նոր կենտկոմի կազմի մեջ։

Վեցերորդ համագումարի միջոցին կուսակցության անդամների թիվը աճել էր մինչև 177.000։

Մոսկվայի խորհրդակցությունը.—Կառավարությունը, որն ավելի ու ավելի կորցնում էր ժողովրդական մասսաների վստահությունը, աշխատում էր ավելի ու ավելի իր շուրջը համախմբել բոլոր հակահեղափոխական ուժերին։ Դրա համար օգոստոսի 12-ին նա Մոսկվայում գումարեց այսպես կոչված «Պետական Խորհրդակցություն», մասնակցությամբ բոլոր չորս Պետական Դումաների անդամների, սպայության, ֆաբրիկանտների, առևտրականների ներկայացուցիչների, ինչպես նաև մենշևիկների ու եսերների, որպես պրոֆմիությունների ու Խորհուրդների համաձայնական ներկայացուցիչների։

Հակահեղափոխական ուժերի այդպիսի ցույցին Մոսկվայի բանվորները համերաշխ պատասխանեցին ընդհանուր գործադուլով։

Կորնիլովշչինա.—Շուտով, հեղափոխությանը թշնամի ելեմենտների այդ միաձուլումից հետո, համարձակ դարձած ռեակցիան վճռեց հեղափոխության հետ գինված ձեռքով հաշիվ տեսնելու փորձ անել։

Գեներալ Կորնիլովը, որը դեռ հուլիսին առաջարկում էր գործող բանակում մահվան պատիժ մտցնել, Մոսկվայի Խորհրդակցությանը պնդում էր, որ Թիկունքի նկատմամբ ևս նույնպիսի միջոցներ գործ դրվեն, ինչպես ֆրոնտում էր։

Այդ խորհրդակցությանը, բուրժուազիայի հորդորներից քաջալերված, նա որոշեց գործել յեռանդագին, և օգոստոսի 27-ին իր զորքերը Պետերի վրա տարավ։

Կորնիլովի դավադրության մեջ կերևնակու և ընկերների մասը խառն եր։ Այնուամենայնիվ, հեղափոխության դեմ ուղղված այդ բացահայտ խռովության փորձը վերջացավ լրիվ պարտությամբ։

Ահարկու վտանգի հանդեպ տարերային կերպով կազմվեց բանվորների ու զինվորների միացյալ ճակատ, որ ստիպեց բոլոր դումայի մենշևիկներին և եսերներին միասին գործելու բոլշևիկների հետ։

Մասսաների տրամադրության բեկումը դեպի բոլշևիկները.—Կորնիլովի ապստամբությունն ակնհայտնի ցույց տվեց, թե ուր է տանում համաձայնականների քաղաքականությունը։ Նրա վրա տարած հաղթանակը մասսաների առաջ ի հայտ բերեց իրենց սեփական ուժի հզորությունը և դյուրացրեց մեր կուսակցության տակտիկան հաստատելու։ Այդ մասին վկայում են քաղաքային դումաների և Խորհուրդների վերընտրությունների արդյունքները։

Պետրոսում, դեռ մինչև Կորնիլովշչինան, քաղաքային դումայի ընտրություններին բոլշևիկները յերկու անգամ ավելի տեղեր շահեցին, քան առաջ։

Մոսկվայում, ուր ռայոնական դումաների ընտրությունները տեղի ունեցան սեպտեմբերին, բոլշևիկները ստացան բոլոր տեղերի կեսը, իսկ եսերներն ու մենշևիկները առաջվա (հունիսին, համաքաղաքային դումայի ընտրություններին ստացած) տեղերի—70 տոկոսի—փոխարեն միայն 18 տոկոս։

Պրովինցիայում ևս բոլշևիկները կամ բացարձակ մեծամասնություն էին ստանում, ինչպես, որինակ՝ Որեխով-Զուևսում (75 տոկոս) և կամ բավական ավելացնում էին իրենց տեղերի թիվը։

Քաղաքային դումաների այդօրինակ ընտրություն-

ներից հետո իրենց կուսակցական կազմը ի հարկե փոխում են նաև Խորհուրդները։

Պետրոգրադում՝ ոգոստոսի 31-ին, և Մոսկվայում, սեպտեմբերի 6-ին Խորհուրդներում ընդունվում են բոլշևիկյան բանաձևեր։

Պրովինցիայի համար չափազանց բնորոշ են Սարատովի Խորհուրդների ընտրությունները, վորտեղ բանվորական և զինվորական պատգամավորների 530 տեղից բոլշևիկները սեպտեմբերին ստացան 320 տեղ, մինչդեռ նախորդ Խորհրդում նրանք միայն 90 տեղ ունեյին։

Բանակի տրամադրությունը.— Գործող բանակում նույնպես կորնիլովշչինան խորը հետք եր թողել։ Նրա հրամանատարական կազմը, խռովարար գեներալին տածած իր համակրությամբ, իր դեմ ավելի ևս զայրացրեց զինվորական մասսաները.—հաճախակի դարձան ինքնագատաստանի դեպքերը սպաների նկատմամբ, ուժեղացավ զինալքությունը, ծավալվեց յեղբայրացումը։ Բանակում բոլշևիկյան ազդեցության աճման մասին պաշտոնապես վկայեց ինքը զինվորական մինիստրը՝ նախապարլամենտում արած իր զեկուցման մեջ։

Գյուղացիական շարժումը.—Հողի հարցում կառավարության հանդես բերած անգործնեությունը գյուղացիության դժգոհությունն այնտեղը հասցրեց, վոր աշնանը ամբողջ յերկիրը ագրարային խլրտուքներով բռնվեց։ Զսպասելով Հիմնադիր ժողովին,—վորի քննությանը այդ հարցը դնել եր պատրաստվում ժամանակավոր կառավարությունը,—գյուղացիները սկսեցին տանել կալվածատիրական ինվենտարն ու անասունը, բաժանել հողը, քանդել ագարակները։ Կառավարությունը սկզբում գործում եր համոզելով և խորհուրդներով՝ մի քիչ էլ սպասելու

մինչև Հիմնադիր ժողովը, բայց շուտով դիմեց ազդելու այլ միջոցների,—ապստամբություններ զինված ուժով ճնշելուն, պատժիչ եքսպեդիցիաների և այլն։

1917 թ. սեպտեմբերին ու հոկտեմբերին գյուղացիության և ժամանակավոր կառավարության միջև զինված պայքար էր տեղի ունենում։

Բոլշևիկներն ոտակարգի մեջ են դնում իշխանությունը բռնագրավելու հարցը.—Այդպիսի պայմաններում, բոլշևիկների կողմից իշխանությունը բռնագրավելու հարցը որվա խնդիր դարձավ։ Մենշևիկներն ու էսերները ապարդյուն կերպով աշխատում էին ուժեղացնել իրենց դիրքերը՝ այսպես կոչված «դեմոկրատական խորհրդակցության» (14—22 սեպտեմբերի) դումարումով և նրա կազմից ընտրելով հատուկ միայն հիմնարկ, որը «նախապարլամենտ» անունը ստացավ։

Բոլշևիկները հաշվի առան ստեղծված դրությունը,—հիմա նրանք իրենց թիկունքում ունեցին բանվորների և գյուղացիների բացարձակ մեծամասնությունը. այլ կերպ ասած՝ իշխանության համար մղվող պայքարի հաղթանակի անհրաժեշտ պայմաններն արդեն գոյություն ունեցին։

Կար նաև հեղափոխական նկատելի վերելքը. և ազբարային շարժման ալիքը ավելի ու ավելի վեր էր բարձրանում։ Գյուղացիական ապստամբությունը ձուլվում էր բանվորականի հետ։

«Մեր առաջ է—բացառիկ շահեկան դրություն»,—գրում էր Իլյիչը սեպտեմբերի վերջին։

«Բոլշևիկները կարող են և պետք է իրենց ձեռքը վերցնեն պետական իշխանությունը»,—հայտարարում էր նա միաժամանակ կուսակցության կենտրոնական, Պետրոգրադի և Մոսկվայի կոմիտեներին ուղղած իր նամակում։ Պետք է «որվա հերթական խնդիրը դարձնել Պետրում և

Մոսկվայում (շրջանով) զինված ապստամբությունը, իշխանության բռնագրավումը, կառավարության տապալումը»։

Հոկտեմբերին Իլյիչը ավելի ևս կտրուկ կերպով կուսակցությանը շտապեցնում է վճռական յելույթների և իշխանության բռնագրավման։

Պարտադիր չե սպասել Խորհուրդների յերկրորդ Համագումարի հրավիրմանը, վորտեղ ապահովաբար մեր կողմը կլիներ մեծամասնությունը։ Հաղթանակ տանելու համար անհրաժեշտ է թիկունքում ունենալ ժողովրդի իսկական մեծամասնությունը, և վոչ թե նրա ձևական արտահայտությունը։

Չեր կարելի, այդ ձևական մեծամասնությանը սպասելով, մինչև այնտեղ թուլ տալ, վորպեսզի այդ միջոցին կերենսկու ժամանակավոր Կառավարությունը (այդ միջոցին կերենսկին նոր կոալիցիոն մինիստերություն եր կազմել) ձնշի ապստամբությունը և դեմանացիներին տա Պիտերը, ինչպես վոր նա արդեն նրանց տվել եր Ռիգան։

Նոյեմբերի 10-ին կենտկոմն իր նիստում ընդունեց, վոր «զինված ապստամբությունն անխուսափելի է և բոլորովին հասունացել է», և առաջարկեց կուսակցության բոլոր կազմակերպություններին, վորպեսզի բոլոր գործնական հարցերը քննելիս և լուծելիս յելնեն այդ հիմնական դրությունից։

Ոպպոզիցիա՝ ընդդեմ կենտկոմի հեղափոխական տակտիկայի.—Ժամանակը, կենտկոմի այդ կարևորագույն պատմական վորոշումը միանգամայն չնդունվեց։

Կենտկոմի յերկու անդամները՝ ընկ. Կամենևն ու Զինովյևը վոչ միայն ապստամբության դեմ արտահայտվեցին, այլև հաջորդ որը, կենտկոմի վորոշումն ընդունելուց հետո, իրենց ստորագրությամբ մի ամբողջ շարք կուսակցական կազմակերպություններին ուղղված թերթիկ բաց թողին,

վորի մեջ նախազգուշացնում էին Կենտկոմի «կործանաբար քաղաքականությունից»։

Այդ թերթիկում հիշյալ ընկերները հայտնում էին իրենց «խարագույն» համոզմունքը, վոր ապստամբությունը վաղաժամ է, և վորպեսզի ջարդված չլինել, նրանք կուսակցությանը խորհուրդ էին տալիս «սահմանափակվել պաշտպանողական դիրքով» և բավարարվել նրանով, վոր կուսակցությունը Հիմնադիր Ժողովում կունենա բոլոր տեղերից մոտ 1/3-ը, իսկ բուրժուազիան չի համարձակվի Հիմնադիր Ժողովը չգումարել։

Ընկ. Լենինը չափազանց սուր կերպով հանդես յեկավ «իրենց պրինցիպները կորցրած» և վճռական կռվի նախորյակին կուսակցության շարքերը շփոթ մտցնել աշխատող այդ յերկու ընկերների դեմ։

Ընկերներին ուղղած իր նամակում Իլյիչը կամենևի և Զինովյևի տատանումները բնորոշեց վորպես «շփոթվածության ու վախի հայտնաբերում և բոլշևիզմի բոլոր հիմնական իդեյաների անկում»։

Այն ժամանակ ապստամբությունից հրաժարվելը, ընկ. Լենինի կարծիքով, իշխանությունը Սորհուրդներին հանձնելուց հրաժարվել էր նշանակում, և նա պահանջում էր վճռական հակահարված տալ կուսակցության կողմից։

Կյանքը շատ շուտով հաստատեց Կենտկոմի բռնած դիրքի ճշտությունը ապստամբության հարցում, ստիպելով կամենևին ու Զինովյևին խոստովանելու իրենց սխալը։

Ռազմա-հեղափոխական կոմիտեի կազմումը.— Կերենսկու կառավարությունը փորձեց Պիտերից հեռացնել ավելի հեղափոխական դնդերը, հայտնելով, վոր նրանց Ֆրոնտ ուղարկելը պատերազմի շահերն են պահանջում։

Պետրոգրադի Սորհրդի Գործադիր Կոմիտեն, ի պատասխան այդ պահանջի, հատուկ հիմնարկություն կազմակերպեց՝ ստուգելու համար, թե իսկապե՞ս այդ դնդերին Ֆրոնտ ուղարկելը պատերազմական նկատառումներով են։

Այսպես, հոկտեմբերի 16-ին կազմվեց Ռազմա-Հեղափոխական Կոմիտեն, վոր դարձավ ապստամբության որգանը. նրա առաջին նիստը կայացավ հոկտեմբերի 19-ին։

Պետրոգրադի զինվորական շրջանի շտաբը հրաժարվեց ճանաչել նրան։ Այն ժամանակ Ռազմա-Հեղափոխական Կոմիտեն իր հոկտեմբեր 23-ի նիստում դիմեց Պետրոգրադի զինվորներին մի կոչով, վորի մեջ նա իրենից հեռացնում էր ամեն տեսակի պատասխանատվությունը Պետրոգրադի զինվորական շրջանի շտաբի արարքների համար և հայտարարում, վոր այսուհետև «Ռազմա-Հեղափոխական Կոմիտեի կողմից չստորագրված, կայազորին վերաբերող և վոչ մի կարգադրություն ուժ չունի»։

Հոկտեմբերի 25-ը.— Իշխանության համար մղվող վճռական պայքարի սկիզբն էր այդ։ Կերենսկու փորձին՝ դեպի Պիտերը քաշելու հակահեղափոխական զորքերը, Ռազմա-Հեղափոխական Կոմիտեն պատասխանեց հոկտեմբեր 24-ին Պետրոգրադի կայազորին տված հրամանով՝ դնդերը կռվի համար պատրաստ դարձնելու մասին։ Տեղեկանալով բոլշևիկյան թերթերի փակման մասին, Ռազմա-Հեղափոխական Կոմիտեն տպարան ուղարկեց իր պահակը և թերթերը լույս տեսան։

Հոկտեմբերի 25-ին համարյա առանց վորևե դիմադրության գրավվեցին կառավարական հիմնարկությունները,—հեռախոսային կայարանը, հեռագիրը, պոստը, պետական բանկը, ինչպես և կամուրջներն ու յերկաթուղադծային կայարանները։ Ձերեկոյան դեմ վերցվեց Ձմեռային պալատը, ուր նիստի յեր հավաքվել ժամանակավոր Կառավարությունը։ Կերենսկուն հաջողվեց թաղնվել, ձեռացած մինիստրները ձերբակալվեցին։

Խորհուրդների յերկրորդ համագումարը.— Հոկտեմբերի 25-ի յերեկոյան, ժամի մոտ 11-ին բացվեց Խորհուրդների յերկրորդ Համագումարի առաջին նիստը։ Նրա-նում ներկա եյին 626 պատգամավոր, վորոնցից 382-ը բոլշևիկ։ Հետևաբար, բացարձակ մեծամասնությունը մեր կուսակցության կողմն եր։ Բացի այդ, ելի մոտ յերեք տասնյակ անկուսակցականներ կային, վորոնք բոլշևիկներին եյին համակրում։ Պատգամավորների թվով, համագումարում մյուս կուսակցությունը ձախ եսերներն եյին կազմում (70 մարդ), վորոնք նույնպես դեռ մեզ հետ եյին գնում։ Մնացած 143 պատգամավորները կազմում եյին զանազան գույնի մենշևիկները, կենտրոնի և աջ եսերները, անարխիստները և այլն։ Համագումարի նախագահությունը կազմվեց 14 բոլշևիկից և 7 ձախ եսերից[1])։ Համագումարում նախագահում եր ընկ. Կամենևը։

Մենշևիկներն ու եսերները կատարված հեղաշրջման դեմ իրենց բողոքը հայտնեցին ու հեռացան։

Խորհուրդների համագումարի այդ առաջին նիստը իր աշխատանքները վերջացրեց, վորոշում հանելով դիմել Ռուսաստանի բոլոր քաղաքացիներին մի կոչով, վորի մեջ հայտարարվում եր, վոր «հենվելով բանվորների, զինվորների և գյուղացիների հսկայական մեծամասնության վրա, հենվելով Պետրոգրադում կատարած բանվորների և կայազորի հաղթական ապստամբության վրա, Համագումարն իր ձեռքն է վերցնում իշխանությունը»։

Համագումարն իր գլխավոր անելիքն է համարում—

1) Կնքել հաշտություն, վորի համար նա անմիջապես բոլոր ժողովուրդներին կառաջարկի դեմոկրատական հաշտություն (այսինքն հաշտություն՝ առանց աննեկսիայի ու կոնտրիբուցիայի, ազգությունների ինքնորոշման հիմունքներով), ինչպես նաև անմիջական զինադադար՝ մինչև

1) Ձախ եսերների մասին տես էջ 202, ծանոթությունը։

վոր կվշակվեն հաշտության վերջնական պայմանները։ 2) Առանց փրկանքի (выкуп) հողը հանձնել գյուղացիներին։ 3) Արտադրության վրա բանվորակ. հսկողություն սահմանել։

Հոկտեմբերը Մոսկվայում յեվ պրովինցիայում.— Պետերբուրգում պրոլետարիատի կատարած հաղթանակից հետո ամբողջ Ռուսաստանում իշխանությունը սկսում է անցնել Խորհուրդների ձեռքը։

Մոսկվայում, Խորհուրդների իշխանության համար մղվող պայքարը ձգձգվող բնույթ ընդունեց։ Միայն նոյեմբերի 2-ի յերեկոյան դեմ, Ռազմա-Հեղափոխական կոմիտեյի՝ ամբողջ զորքին ուղած հրամանով հեղափոխության վերջնական հաղթանակն է հայտարարվում։

Ամբողջ յերկրում իշխանության անցումը Խորհուրդներին կատարվում է 1917 թ. վերջին յերկու ամսվա ընթացքում, իսկ մի քանի տեղերում դա վերջանում է 1918 թ. սկզբին միայն։

Հին սիստեմի նոր արտահայտությունը.—Իշխանությունը Խորհուրդներին անցնելու այդ ժամանակամիջոցի ընթացքում, կուսակցությունն իր պատասխանատու անդամների շրջանում կրկին դիմադրության և հանդիպում իր հեղափոխական տակտիկայի նկատմամբ։

Կենտկոմի մեծամասնությունն, ընկ. Լենինի դլխավորությամբ, կառավարության կազմի հարցում հնարավոր եր գտնում կոալիցիա միայն «ձախ եսերների» հետ, բայց Կենտկոմի փոքրամասնությունը, հինգ անդամից կազմված, պնդում եր, վոր մենշևիկներին ու եսերներին ևս մի շարք զիջումներ արվեն, վորպեսզի նրանք նույնպես կարողանային մտնել կառավարության մեջ։

Այդ հարցում Կենտկոմի մեծամասնության ընդդիմադրությունից դժգոհ, նրա հինգ անդամները՝ Զի-

նովյեի և Կամենևի դլխավորությամբ՝ նոյեմբերի չորսին հրաժարական տվին, անհնարին համարելով իշխանությունը պահել՝ յեթե մենշևիկները և եսերները կառավարության մեջ չլինեն, քանի վոր, նրանց կարծիքով, այդ կուսակցությունները մասսաների, մանավանդ դյուղացիության մեջ դեռևս հենարան ունեյին։

Կյանքը այս անգամ ևս շատ շուտով ի հայտ բերեց կուսակցության մեծամասնությանը յենթարկվել չցանկացող ընկերների սխալը։

Նոյեմբերի 10-ին հավաքվեց Սորհուրդների դյուղացիական Պատգամավորների Յերկրորդ Համագումարը, վորը ցնծագին ընդունեց ընկ. Լենինին, ճանաչեց Սորհրդային Իշխանությունը և նրա հրատարակած բոլոր դեկրետները ու հանդիսավոր ցույցով վողջունեց Ժողովրդական Կոմիսարների Սորհրդին։

Պարզվեց, վոր մենշևիկները, աջ և կենտրոնի եսերները հանդիսանում են շտաբներ՝ առանց բանակի։

Այդ Համագումարից հետո, «ձախ եսերները», վոր մինչ այդ հրաժարվում եյին կառավարության մեջ մտնել, այլևս չեյին պնդում մենշևիկների ու եսերների հետ կոալիցիա կազմելու վրա և հանձինս իրենց 3 ներկայացուցիչների մտան Ժողովրդական Կոմիսարների Սորհուրդը։

Ճիշտ նույնպես, դեմոնստրատիվ կերպով իրենց դիրքերը թողած ը. ը. Կամենևն ու Զինովյևը, այլևս չեյին կարող պնդել իրենց սխալի վրա (վոր արդյունք եր մասսաների հեղափոխականության նկատմամբ իրենց ունեցած թերահավատության), և վերադարձան կենտկոմ։

Ցեզրակացություն.—Ռուսական հեղափոխության զարգացման մեջ, փետրվարից մինչև հոկտեմբեր, յերկու շրջան պիտի տարբերել. առաջինը՝ փետրվարի 27-ից, այսինքն իշխանության յերկու որգանների (այն յերկու ուժերի,

վորոնք ինքնակալության տապալման գործում մասնակցություն ունեցան) կազմակերպման ժամանակից մինչև հուլիսի սկիզբը։ Յերկրորդը—հուլիսյան օրերից մինչև հոկտեմբերի 25-ը, այսինքն՝ մինչև պրոլետարիատի կողմից ամբողջ պետական իշխանությունը բռնագրավելու օրը։

Առաջին շրջանի եյությունը կայանում է յերկիշխանության հակասությունների զարգացման և այդ յերկիշխանության խնդիրը լուծելու յերկու մեթոդների բաղխման մեջ, այն է՝ բոլշևիկյան մեթոդի (իշխանությունը պրոլետարիատին անցնելու և Սորհրդային պետություն հիմնելու) և մենշևիկ-եսերական մեթոդի (իշխանությունը բուրժուազիային հանձնելու և դեմոկրատական հանրապետություն հիմնելու)։

Դա—հեղափոխության խաղաղ զարգացման շրջանն եր, և յերկիշխանության խնդիրը լուծելու բոլշևիկյան մեթոդն այն եր, վոր մասսաներին պարզաբանվի, թե նրանք ինչպես պիտի ոգտագործեն իրենց ձեռքում ունեցած ուժը, վորպեսզի ապատագրվեն մի[illegible]յին ու հայրենի իմպերիալիզմի լծից։

Հուլիս 3—5-ի դեպքերը ցույց տվին, վոր յերկիշխանության հարցը արդեն վճռվել է ոգուտ բուրժուազիայի և այդ դեպքերն իրենք սկիզբ են դրել յերկրորդ շրջանին,—իշխանությունը բռնի կերպով գրավելու նախապատրաստման շրջանին։

Հոկտեմբերը պատրաստող այդ շրջանը վերջանում է բոլշևիկյան կուսակցության կողմից ղեկավարվող պրոլետարիատի հաղթանակով, ըստ վորում, բուրժուազիայի հետ բռնված նրա կռվում մենշևիկներն ու եսերները բացահայտորեն անցնում են կապիտալիստների կողմը։

Պրոլետարիատի և դյուղացիության հեղափոխական դեմոկրատական դիկտատուրան իրագործվեց (թեև, վերին

աստիճանի որիգինել՝ այն պատճառով, որ պատերազմի ու հեղափոխության հետևանքով ստեղծված արտակարգ խառը դրությունից պրոլետարիատը միանգամից գլուխ չհանեց և չենթարկվեց իրեն ընձեռող մանր-բուրժուական տարերքի ազդեցությանը) դեռևս այդ շրջանի սկզբում, և պրոլետարիատի հեգեմոնիայի իդեյան այդ ֆորմուլայից, որպես արդեն անցած աստիճանից, դիմում է իր բարձրագույն արտահայտությանը, ամբողջապես ձուլվելով պրոլետարիատի դիկտատուրայի իեայինն։

Այդ նոր ֆորմուլիրովկան ասում էր՝ «Ամբողջ իշխանությունը Խորհուրդներին»։

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽ.

I. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ.

Դեկրետ՝ հաշտության մասին. — Հոկտեմբերի 26-ին, Խորհուրդների Յերկրորդ Համագումարի նիստում ընդունվեց ընկ. Լենինի առաջարկած «դեկրետը հաշտության մասին»։ Այդ դեկրետում, «հոկտեմբեր 24—25-ի հեղափոխությամբ ստեղծված բանվորական և գյուղացիական կառավարությունը» դիմում էր բոլոր պատերազմող ժողովուրդներին ու կառավարություններին անմիջապես զինադադար կնքելու և «արդար դեմոկրատական հաշտության» մասին բանակցություններ սկսելու առաջարկով, այնպիսի հաշտություն, որ տեղի չունենա վոչ ուրիշի հողերի գրավում, վոչ ոտար ժողովուրդների բռնի միացում և վոչ էլ կոնտրիբուցիայի վճարում։

Դեկրետը հայտարարում է նաև, որ կառավարությունը վերացնում է գաղտնի դիվանագիտությունը և ձեռնարկում է նախկին կառավարությունների կնքած գաղտնի պայմանագրերի հրապարակմանը։ Ի չիք է համարում նաև այդ պայմանագրերի բովանդակությունը։

Դեկրետ՝ հողի մասին. — Այնուհետև ընդունվեց նույնպես ընկ. Լենինի առաջարկած «դեկրետը հողի մասին», ըստ որի առանց վորևե վրկանքի անմիջապես վոչնչա-

ցվում եր հողի սեփականությունը, և բոլոր հողերը—թե կալվածատիրական և թե վանքապատկան, յեկեղեցական և ուզենի (կայսերական տանը պատկանող)—նրանց «ամբողջ կենդանի ու մեռյալ ինվենտարով, ագարակային շենքերով և բոլոր պիտույքներով» անցնում եյին գյուղացիների տրամադրության տակ։ Այդ ամենը իրագործելու համար պետք և դեկավարվեյին գյուղացիական այն նակազով, վորը մշակված եր գյուղացիական տեղական 242 նակազների հիման վրա։

Այդ դեկրետով ամուր զոդում եր ստեղծվում պրոլետարիատի և գյուղացիության միջև։

Դեկրետ՝ Ժողկոմխորհի հիմնադրման մասին.—Այնուհետև, իշխանության կազմակերպման մասին ընդունվեց «դեկրետ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի (Ժողկոմխորհի) հիմնադրման մասին». այդ Ժողկոմխորհին եր հանձնվում կառավարական իշխանությունը։ Ըստ այդ դեկրետի, Ժողկոմխորհի գործնեության վրա հրակելու և կոմիսարներին փոխելու իրավունքը պատկանում և Խորհուրդների Համագումարին և կենտրոնական Գործադիր Կոմիտեյին։ Ժողկոմխորհի նախագահ և նշանակվում ընկ. Լենինը։

Դասերի վերացումը.—Նոյեմբերի 10-ին, Ժողկոմխորհը հրատարակեց մի դեկրետ՝ դասերի վոչնչացման մասին, հետևաբար և այդ դասերի հետ կապված՝ քաղաքացիների անհավասարության ու քաղաքացիաքան ասաիճանների վոչնչացման մասին։

Դեկրետ՝ բանվորական հսկողության մասին.—Նոյեմբերի 14-ին հրատարակվեց մի դեկրետ, վորով բանվորական հսկողությունն եր սահմանվում «արտադրության վրա,

ձեռքների և հում նյութերի առ ու ծախսի, նրանց պահպանման, ինչպես նաև ձեռնարկության գործնեության ֆինանսական կողմի վրա», ըստ վորում բանվորների կողմից ընտրված հսկիչ մարմինները իրավունք եյին ստանում հսկելու վոչ միայն արտադրության վրա, այլև «ձեռնարկության արտադրանքի մինիմումը սահմանելու և միջոցներ ձեռք առնելու՝ արտադրած ձեռքների ինքնարժեքը ստուգելու», նմանապես իրավունք՝ ամբողջ գործառնական գրագրությունն ու հաշվետվությունը քննելու։ Առևտրական գաղտնիքը վերացվում եր։

Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդը.—Դեկտեմբերի 1-ին Ժողկոմխորհին կից հիմնվում և Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդը (Ժ.Տ.Գ.Խ.)՝ ժողովրդական տնտեսության ու պետական ֆինանսների գործը կազմակերպելու համար։

Բանկերի ազգայնացումը.—Դեկտեմբերի 14-ին Համառուս. կ. Գ. կ. (Համառուսական կենտրոնական Գործադիր Կոմիտեյի)՝ բանկերի ազգայնացման մասին հրատարակած դեկրետով «1) բանկային գործը հայտարարվում և պետական մենաշնորհի, 2) ներկայումս գոյություն ունեցող բոլոր մասնավոր ակցիոներական բանկերը և բանկիրների կանտորները միացվում են պետական բանկին»։

Այդ արվում և «ժողովրդական տնտեսության գործը ուղիղ կազմակերպելու», աշխատավոր մասսաները «բանկային կապիտալիստների շահագործումից» պաշտպանելու համար։

«Աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիան».—Վերջապես Համառուս. կ. Գ. կոմի-

տեն մշակվեց «աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիան»։ Այդ դեկլարացիան առաջարկվեց 1918 թ. հունվարի 5-ին գումարված Հիմնադիր ժողովին, որը հրաժարվեց այն քննել։

Հիմնադիր ժողովի ցրումից հետո այդ դեկլարացիան հաստատվեց հունվարի կեսերին, Խորհուրդների յերրորդ Համագումարի կողմից։

Նրա առաջին մասն ասում է.

1) Ռուսաստանը հայտարարվում է Բանվորական, Զինվորական և Գյուղացիական Պատգամավորական Խորհուրդների Հանրապետություն։ Ամբողջ իշխանությունը կենտրոնում և տեղերում պատկանում է այդ Խորհուրդներին։

2) Ռուսաստանի Խորհրդային Հանրապետությունը հիմնադրվում է ազատ ազգությունների ազատ դաշնակցության հիման վրա, վորպես ազգային խորհրդային հանրապետությունների ֆեդերացիա։

Դեկլարացիայի յերկրորդ մասը վավերացնում է Խորհրդային Իշխանության հրատարակած և վերև թվարկված դեկրետները, դիտելով դրանք՝ բոլոր «ֆաբրիկանները, գործարանները, հանքերը, յերկաթուղին և արտադրության այլ միջոցներն ու տրանսպորտը» ամբողջովին Խորհրդային պետությանը վորպես սեփականություն անցնելու առաջին քայլ։

Խորհրդային Իշխանության հիմնական նպատակը հայտարարվում է «հասարակության սոցիալիստական կազմակերպության սահմանումը և սոցիալիզմի հաղթանակումը բոլոր յերկրներում»։

Դեկրետով հայտարարվում է «բանվորների և գյուղացիների սոցիալիստական կարմիր բանակի կազմակերպումը»։

Յերրորդ մասում դեկլարացիան «ամբողջապես միանում և Խորհրդային Իշխանության կիրառած քաղաքակա-

նությանը», վորն ապացուցում է՝ «ֆինանսական կապիտալի ճիրաններից մարդկությունն ազատելու անհոդողդող վճռականություն» և վորն արտահայտվել է գաղտնի պայմանագրերը վերացնելու մեջ, փոխառությունների վոչնչացման, դեմոկրատական հաշտությանը ձգտելու մեջ և այլն։

Չորրորդ մասը հայտարարում է, վոր «շահագործողները տեղ չեն կարող ունենալ իշխանության որգաններից և վոչ մեկում։ Իշխանությունն ամբողջովին և բացառապես պիտի պատկանի աշխատավոր մասսաներին»։

Խորհրդային իշխանության ձեռնարկած միջոցների յերկակի բնույթը.—Բոլոր այդ ձեռնարկումներն ապացուցում են, վոր իշխանության գլուխ անցած պրոլետարիատի առաջ յերկու տեսակի խնդիրներ ծառացան, մի կողմից՝ ճորտատիրական կարգերի մնացորդների կատարյալ վոչնչացումը—դասերի, կալվածատիրական հողատիրության և այլն վերացումը, ուրիշ կերպ ասած՝ բուրժուական հեղափոխության ավարտումը, իսկ մյուս կողմից՝ առաջին քայլերը դեպի սոցիալիզմ—բանվորական հսկողություն, բանկերի ազգայնացում, արտադրության բոլոր միջոցների, տրանսպորտի և այլն ազգայնացման նախապատրաստություն։

Հիմնադիր ժողովը դեմ նրա ցրումը.—Յեթե տապալված ժամանակավոր կառավարությունը, յերբ իշխանությունը գտնվում եր իր ձեռքին, սիրտ չեր անում կիրառելու այնպիսի միջոցներ, վորոնք ուղղած լինեին ճորտատիրության մնացորդների վերացմանը՝ բոլորովին ձեռք չտալով կապիտալիստական հասարակակարգի հիմքերին, ապա պարզ է, վոր Հիմնադիր ժողովը, ուր մեծամասնություն եյին կազմում կապիտալիզմի կողմնակից եսեր-

ները, մենշևիկներն ու կադետները, ամենևին չեր կարող ընդունել այնպիսի դեկլարացիա, որը հավանություն տար կապիտալիստական հասարակակարգը վոչնչացնել հետապնդող դեկրետներին. և բոլշևիկյան ֆրակցիային ստիպում եր նշել մի շարք ավելի վճռական միջոցներ՝ հասարակության սոցիալիստական վերակառուցման ուղղությամբ։

Դեռ Հիմնադիր ժողովի մասին գրած իր թեզիսներում (տպված «Պրավդա»-ում դեկտեմբերի 26-ին), ընկ. Լենինն այն միտքն եր հայտնում, որ ընդհարումն Ժորհրդային Իշխանության և Հիմնադիր ժողովի միջև համարյա անխուսափելի յե, և որ նման ընդհարումը կանխել կարող են միայն «Հիմնադիր ժողովի անվերապահ հայտարարությունը՝ Ժորհրդային Իշխանությունը, խորհրդային հեղափոխությունը, նրա քաղաքականությունը հաշտության, հողային և բանվորական հսկողության հարցերում ճանաչելու մասին, և յեթե այդ տեղի չունենա, Հիմնադիր ժողովը վճռականապես միանալու յե կադետա-կալեդինյան հակահեղափոխության թշնամիների բանակին»։

Յեթե չկատարվի առաջինը, և յեթե Հիմնադիր ժողովը Հոկտեմբերյան հեղափոխության թշնամիների կողմն անցնի, ապա վեճը նրա հետ կարող է լուծվել միայն «Ժորհրդային Իշխանության շատ ավելի յեռանդուն, արագ, հաստատ ու վճռական ձեռնարկությունների միջոցով»։

Այդ պատճառով էլ, յերբ Հիմնադիր ժողովը հրաժարվեց քննել Համառուս. կ. Գ. կ. դեկլարացիան «աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքների» մասին, բոլշևիկյան ֆրակցիան հրապարակեց նոր դեկլարացիա, վորտեղ Հիմնադիր ժողովի մեծամասնության հակահեղափոխականությունն ի հայտ բերեց հետևյալ խոսքերով.

«Հիմնադիր ժողովը իր ներկա կազմով հանդիսացավ արդյունքը ուժերի այն փոխհարաբերության, որը ձևավորվեց մինչ Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը։ Հիմնադիր ժողովի ներկա հակահեղափոխական մեծամասնությունը, որ ընտրված է կուսակցությունների հնացած ցուցակներով[1]), արտահայտում է հեղափոխության յերեկվա որը և փորձում է կանգնել բանվորական ու գյուղացիական շարժման ճանապարհի առաջ»։

Դեկլարացիայի վերջում բոլշևիկյան ֆրակցիան հայտարարում է. «Մենք թողնումենք Հիմնադիր ժողովը այն նպատակով, վորպեսզի Ժորհրդային Իշխանությանը հանձնենք այն հարցի վերջնական վորոշումն, թե ինչպես պետք է վերաբերվել Հիմնադիր ժողովի հակահեղափոխական մասի հետ»։

Բոլշևիկների հետ նիստից հեռացան նաև ձախ-եսերները։

Ժորհրդային Իշխանության պատասխանը շատ շո՛ւտ ստացվեց։

Հունվարի 7-ին, Համառուս. կ. Գ. կ. ընդունեց դեկրետ, վորի յեզրափակիչ մասում ասվում եր.

«Պարզ է, վոր Հիմնադիր ժողովի ինացյալ մասը կարող է կատարել միայն բուրժուական հակահեղափոխության պայքարը թագցնողի դեր՝ Ժորհրդային Իշխանությունը տապալելու համար։

Այդ պատճառով և Համառուս. կ. Գ. կ. վորոշում է— Հիմնադիր ժողովը ցրել։

Այդպիսով, Համառուս. կ. Գ. կ. հաստատեց Հիմնադիր ժողովի ցրումը, որը տեղի ունեցավ դեռ հունվարի 5-ին, նրա բացման որը, բոլշևիկների ու «ձախ» եսերների հեռանալուց հետո։

---

1) Ցուցակները կազմված եյին հոկտեմբերի կեսերին, հետևաբար՝ մինչ Հոկտեմբերյան հեղաշրջումը։ Մյուս կողմից, ընտրությունները տեղի եյին ունեցել կամ մինչ այդ հեղաշրջումը, և կամ նրանից անմիջապես հետո, յերբ Ժորհրդային Իշխանության քաղաքականության բնույթն ու նշանակությունը ժողովրդի մեծամասնությունը դեռ չեր կարող վորոշակի ու պարզ կերպով ըմբռնել։

Վո՛չ բանվորները, վո՛չ զինվորները, վո՛չ գյուղացիները դուրս չեկան ցրած Հիմնադիր ժողովի պաշտպանության համար, որով ապացուցեցին Իլյիչի պնդումի ճշտությունը, «վոր ընտրողների կամքի (մասսաների) և Հիմնադիր ժողով ընտրվածների կազմի միջև» չկար և չեր էլ կարող լինել և վոչ մի համապատասխանություն։

Ժողովրդական մասսաների կամքը արտահայտվում եր Սորհուրդներով, վորոնց յերրորդ Համագումարը, վոր գումարվեց Ուչրեդիլկայի (Հիմնադիր ժողովի) ցրումից մի քանի որ անց, դրեց Սորհրդային սահմանադրության հիմքերը, ընդունելով վերև հիշատակած «աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիան»։

2. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ՑԵԼԸ։

Խնդրի դժվարությունը.—Իմպերիալիստական պատերազմից դուրս գալու խնդիրը վորոշելիս Սորհրդային Իշխանությունն անասելի դժվարությունների հանդիպեց։

Սորհուրդների յերկրորդ համագումարի ընդունած հաշտության դեկրետը իրագործելու համար, ընկ. Տրոցկին (վոր նշանակված եր արտաքին գործերի ժողովրդական կոմիսար) համապատասխան առաջարկությամբ դիմեց Անտանտայի պետությունների հյուպատոսներին, և ապա չեզոք յերկրների հյուպատոսներին, առաջարկելով միջնորդել կենտրոնական պետությունների հետ բանակցելու գործում։

Գերմանիան (վորին միացան և նրա դաշնակիցները) նոյեմբերի 14-ին իր համաձայնությունը հայտնեց՝ հաշտության բանակցություններ սկսելու։

Անտանտայի յերկիրները «դավաճանություն» հայտարարեցին Սորհրդային Իշխանության առաջարկը և հրաժարվեցին հաշտության բանակցություններից, համարե-

ով, վոր այդպիսին կարող են սկսել իրենց թշամիներին ռազմական ջարդ տալուց հետո միայն։

Գերմանիայի ռազմական դրությունն ընդհանրապես շատ վատ չեր, իսկ Ռուսաստանի նկատմամբ՝ փայլուն եր, բայց չափից դուրս ձգձգված պատերազմը մոտիկ ապագայում նրան սպառնում եր ուժերի կատարյալ հյուծումով։ Ռուսաստանի հետ անջատ հաշտությունը նրան ցանկալի յեր յերկու պատճառով. առաջինը՝ կազատվեին ռուսական ֆրոնտում զբաղված նրա զորքերը, վոր նրան հնարավորություն կտար ուժեղացնելու իր արևմտյան ֆրոնտը՝ ընդդեմ Ֆրանսիայի և Անգլիայի, յերկրորդը՝ պայմանավորվող այդ յերկու կողմերից նա ուժերի հսկայական գերակշռություն ուներ, վորի հետևանքով նա կարող եր իր համար չափազանց ձեռնտու հաշտություն կնքել։

Ցավ իրոք, դեկտեմբերի 2-ին Բրեստ-Լիտովսկում կնքված զինադադարից հետո, հաշտության պայմանների մասին սկսված բանակցությունները ռուսական պատգամավորությանը (վորին գլխավորում եր ընկ. Տրոցկին) չափազանց դժվար դրության մեջ դրին. գերմանական պայմանները չափազանց ծանր եյին, բայց պատերազմը շարունակել անհնարին եր. ժողովրդական մասսաները հյուծվել եյին և հաշտություն եյին տենչում, հին բանակը քայքայվում եր, նորը դեռ չկար։

Տրոցկու ղոգունգը—վո՛չ հաշտություն յեվ վո՛չ էլ պատերազմ.—Տրոցկին հասկանում եր, վոր ռուսական բանակին այլևս պատերազմել չի կարող և վոր գեմանացիներին զինված ուժով դիմադրել հնարավոր չե։ Բայց, մյուս կողմից, նա հույս ուներ, վոր Գերմանիան, վորտեղ արդեն լսվում եյին սկսված հեղափոխության առաջին ձայները, չի համարձակվի հարձակում գործել։ Հակառակ

դեպքում՝ գերմանական բանակը, վոր իր կառավարության հանցանքով ձգձգված պատերազմից զրգռված եր, ինքը կհրաժարվի պատերազմը շարունակել հեղափոխական Ռուսաստանի դեմ։

Ցնծալով այդպիսի նկատառումներից, ընկ. Տրոցկին լոզունգ տվեց. «Բռնի հաշտություն չստորագրել, պատերազմը չշարունակել»։

Հրաման արձակվեց զորացրման մասին։ Միևնույն ե—բանակը չեր կարելի ֆրոնտում պահել, նա ամբողջապես բարոյալքված եր։

Իրականությունը շուտով ցույց տվեց «վո՛չ հաշտություն և վոչ էլ պատերազմ» պոզիցիայի սխալ լինելը։ Գերմանական զորքերը փետրվարի 5-ին սկսեցին հարձակումը և գրավելով Մինսկը, Պսկովը և այլ կետեր, մոտենում էին Պետրոգրադին։ Դրությունը կրիտիկական դարձավ։ Պարզվեց, ինչպես հետագայում արտահայտվեց Իլյիչը, վոր՝ «միակողմանի հրամանի միջոցով սվինը հողը խրելով պատերազմը վերջացնել չի կարելի»։

Հարկ յեղավ ընդունել գերմանական ուլտիմատումը և մարտի 3-ին ստորագրվեցին հաշտության ավելի ևս ծանր պայմանները։

Կուսակցության յոթերորդ համագումարը. — Ձերբեք որից բացվեց կուսակցության յոթերորդ համագումարը (1918 թ. մարտի 6—8-ը), վորտեղ դրվեց ստորագրված հաշտությունը հաստատելու հարցը։

Հաշտության անհրաժեշտությունն ապացուցում եր ընկ. Լենինը՝ խստորեն քննադատելով ընկ. Տրոցկու պոզիցիան։

Մենք ավելի լավ կհասկանանք այդ պոզիցիան, յեթե վերհիշենք «պերմանենտ հեղափոխության» տրոցկիստական թեորիան, վորի մասին մենք խոսեցինք յոթերորդ

գրույցում։ Նրա հիմնական բացը—գյուղացիության թերագնահատելն ե՝ վորպես հեղափոխական ուժի։ Իշխանությունը պրոլետարիատի ձեռքում պահելու հնարավորությունը ընկ. Տրոցկին կապում եր արեւմտա-յեվրոպական հեղափոխության միայն արագընթաց հաջողությունների հետ և առաջին հերթին, գերմանական հեղափոխության հետ, և հնարավոր չեր գտնում բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի միջոցով դիմանալու, գոյություն պահպանելու, յեթե նույնիսկ այդ հեղափոխությունը ուշանա։ «Ավելի լավ ե,—ասում եր նա կենտկոմի նիստերից մեկում,—վոր մենք մի քանի որից կործանվենք գերմանական սվիններից, քան թե մի քանի շաբաթից հետո ընկնենք «մեշչնիկների» հարվածներից»։

Այդ նշանակում եր, վոր յեթե գերմանական բանակի հարձակումը հեղափոխություն առաջ չբերի Գերմանիայում, ապա մենք կկործանվենք, և հաշտության կնքումը մեզ չի փրկի կործանումից, քանի վոր կործանման այդ վտանգն անխուսափելիորեն յերկրի ներսից ե գալու, ուր պրոլետարիատը հուսալի դաշնակիցները չունի։

Միանգամայն անվիճելի յե,—հայտարարում եր իր ճառում ընկ. Լենինը,—վոր մեր հեղափոխության բոլոր դժվարությունները կհաղթահարվեն միայն այն ժամանակ, յերբ լիովին կհաստատվի համաշխարհային սոցիալիստական հեղափոխությունը, վորն այժմ ամենօրեք հասունանում ե, բայց այդ չի նշանակում, վոր այդ հեղափոխությունը մեզ կփրկի, միշտ ամեն դժվար դեպքում։ Մենք պիտի հարմարվենք գերմանական հեղափոխության ընթացքին և վոչ թե նա իր զարգացման ընթացքը հարմարեցնի մեր կարիքներին։

Գերմանիայում դեռևս հեղափոխություն չկա, մեզ անհրաժեշտ ե ստորագրել «ստորացուցիչ» հաշտությունն և այդ գնով գտնել ժամանակ, վորպեսզի այդ ժամանակա-

միջոցում ամրացնենք դաշինքը գյուղացիության հետ և նոր բանակ ստեղծենք։

«Պետք է կարողանալ նահանջել», յերբ այդ անհրաժեշտ է հեղափոխության շահերի համար։

«Ձախ կոմունիստները» (այդպես էին իրենց անվանում հաշտության ստորագրելու հակառակորդները) առաջարկում էին առ վոչինչ համարել հաշտության պայմանագրերը և հայտարարել «հեղափոխական պատերազմ»։

Նրանք, իհարկե, չէին կարող չհասկանալ, վոր անմիջապես պատերազմը վերսկսել, անգամ դա «հեղափոխական» անվանելով, նշանակում եր մահացու հարվածների տակ դնել ռուսական հաղափոխությունը։

Բայց նրանք հաշտությունը ստորագրելը համարում էին անթույլատրելի կոմպրոմիս, վորը միջազգային պրոլետարիատի աչքում կխախտեր դեպի սոցիալիստական հեղափոխության լուծյան ունեցած վստահությունը, ուստի և կուսակցության Մոսկվայի Շրջանային Բյուրոյի բանաձևում «ձախ կոմունիստներն» պարզ հայտարարում էին. «Հանուն միջազգային հեղափոխության շահերի, մենք նպատակահարմար ենք գտնում հաշվելու այն մոքի հետ, վոր կարող է պատահել կորցնենք Խորհրդային Իշխանությունը»։

Համագումարի մեծամասնությունն ընդունեց ընկ. Լենինի տեսակետը, անհրաժեշտ համարելով «հաստատել Խորհրդային Իշխանության՝ Գերմանիայի հետ կնքած ծանրագույն, ստորացուցիչ հաշտության պայմանագիրը» և ոգտագործել «դադարի այդ հնարավորությունը՝ մինչև վոր իմպերիալիզմը կհարձակվի Խորհ. Սոց. Հանր. վրա»։

Յոթերորդ համագումարում վորոշվեց փոխել՝ կուսակցության անունը։ Այդ ժամանակվանից նա սկսվեց կոչվել Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցություն (բոլշևիկների)։

Այդ նույն համագումարում կոմիսիա ընտրվեց՝ կուսակցության ծրագիրը վերանայելու համար։

3. ՌԱՂԱՐԱՅԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԶՄԸ

Ինչ տվեց մեզ դադարը.—Կյանքը շուտով ապացուցեց ընկ. Լենինի և կուսակցության յոթերորդ համագումարի տակտիկայի ճշտությունը Գերմանիայի հետ կնքած հաշտության հարցում։ Ռուսական հեղափոխությունը փրկված եր, իսկ մի քանի ամիս անց Գերմանիայում բռնկված Նոյեմբերյան հեղափոխությունը ի չիք դարձրեց «ստորացուցիչ» հաշտությունը։ Դադարը մեզ հնարավորություն տվեց ստեղծելու կարմիր բանակ, վորի ոգնությամբ մենք հաղթանակով դուրս յեկանք քաղաքացիական պատերազմից։

Քաղաքացիական պատերազմը ի չիք դարձնելու հակահեղափոխության առաջին փորձերը կատարվում են Հոկտեմբերյան ապստամբության հաղթանակի առաջին իսկ որերին, բայց նրանք այնպես հեշտ ու արագ լիկվիդացիայի յենթարկվեցին Խորհրդային Իշխանության կողմից, վոր պայքարը նրանց հետ՝ Իլյիչի արտահայտությամբ՝ «հեղափոխության հաղթական հանդիսավոր յերթի» փոխվեց։

Քաղաքացիական պատերազմի սկիզբը.—Այդ պատճառով, քաղաքացիական պատերազմի սկիզբը սովորաբար համարում են 1918 թ. գարնանից, յերբ Ուկրաինան կողոպտող ու այնտեղ Խորհրդային Իշխանությունը տապալող գերմանական զորքի հովանավորության ու նրա թևի տակ նորից հարձակում սկսեցին արդեն մի անգամ ջարդված գեներալներ Կրասնով, Դուտով և ուրիշները։

Չեխո-սլավակների ապստամբությունը յեվ «տյրեղիկայի» կողմնակիցները.—Մայիսին սկսվեց ֆրանսիական

ու անգլիական գործակալների կազմակերպած և ռուսական հակահեղափոխության կողմից աժանդակություն գտած չեխո-սլավակյան ռազմագերիների ապստամբությունը։

Չեխո-սլովակները, որ դեպի Ռուսաստանն ու Անտանտայի յերկրներն էյին ճգտում, չէյին ուզում պատերազմել Գերմանիայի ու Ավստրիայի կողմից (նրանք ավստրո-հունգարական հպատակներ էյին) և մասամներով գերի էյին հանձնվում ռուսներին։ Յարական կառավարությունը նրանցից մի ամբողջ կորպուս կազմեց, 40.000 մարդուց բաղկացած։

Ապստամբած չեխո-սլավակներն ամառվա ընթացքում հաջորդաբար գրավեցին Սամարան, Ուֆան, Սիմբիրսկը, Յեկատերինբուրգը, Կազանը և ուրիշ քաղաքներ։ Այդ տեղերում չեխո-սլովակյան զորքերի պաշտպանության ներքո ամրացան եսերները, մենշևիկները և կադետները ու Հիմնադիր Ժողովի դրոշակի տակ կատաղի պայքար տարան Խորհրդային Իշխանության դեմ։

Անտանտայի ռազմական ոգնությունը ռուսական հակահեղափոխությանը. — Ոդոստոսի սկզբին Արխանգելսկ ափ հանվեցին անգլիական զորքերը և այնտեղ Խորհուրդների հակառակորդների կառավարություն կազմվեց՝ Զայկովսկու գլխավորությամբ։

Հեռավոր Արևելքում դեռ մարտի վերջերին ափ իջան յապոնական զորքերը և գրավեցին Վլադիվոստոկը։

Հարավում սպիտակ-գվարդիականներին ոգնում եր անգլո-ֆրանսիական նավատորմը, որը դեռ աշնանից յերևացել եր Սև ծովում։

Եսերների կազմակերպած տեռորն ու ապստամբությունները. — Բացի այդ ամենից, եսերները տեռորիստական անողոք կռիվ մղեցին Խորհրդային Իշխանության կենտրոնում։ Նրանց ձեռքով սպանվեցին ընկերներ Վոլոդարսկին և Ուրիցկին ու ծանր վիրավորվեց Իլյիչը։

Եսեր Սավինկովին հաջողվեց 1918 թ. հուլիսին Յարոսլավլում խռովություն բարձրացնել։

Չախ-եսերները, որոնք Բրեստ-Լիտովսկի հաշտությունից հետո նույնպես անցել էյին սլոլետարական պետության թշնամիների կողմը, հուլիսի սկզբին խռովություն կազմակերպեցին Մոսկվայում[1]։

Ամեն կողմից ողակված Խորհրդային Իշխանության դրությունը կրիտիկական դարձավ։

Կարմիր բանակի առաջին հաղթանակները.—Սակայն կարմիր բանակը, որ սկսել եր կազմակերպվել մարտ ամսից, աշնանն արդեն բավականին ամրացել եր՝ թշնամուն հակահարված տալու համար։ Սեպտեմբերին նա չեխո-սլովակներից յետ ե խլում մի շարք քաղաքներ—սկզբում Սամարան, այնուհետև Կազանը, Սիմբիրսկը և նրանց քշում Ուրալի այն կողմը։

Գերմանիայի Նոյեմբերյան հեղափոխության հետևանքով, գերմանական զորքերի հեռանալովը կարմիր բանակը 1918 թ. վերջերը և 1919 թ. առաջին ամիսներում հեռագնեաե գրավում է մի շարք քաղաքներ՝ Պսկովից մինչև Սևաստոպոլ, և Խորհրդային Իշխանությունը նորից հաստատվում է Ուկրաինայում։

Կոլչակի հարձակումը Ուրալի վրա.—Մինչ այդ՝ Սիբիրում, ուր քշված էյին «Ուչրեդիլկայի» կողմնակիցները, ադմիրալ Կոլչակը տապալում է եսերական կառավարությունը։ Նա Անտանտայի յերկրների ոգնությամբ ավելի քան 300.000 հազար մարդուց բաղկացած բանակ համա-

[1]) Չախ-եսերների մասին տես—էջ 202, ծանոթությունը։

խմբեց և գինեց։ Այդ բանակով 1919 թ. մարտի սկզբին Կոլչակը շարժվեց Ուրդրդային իշխանության դեմ։ Նեղելով կարմիր բանակին նա շուտով գրավեց համարյա ամբողջ Ուրալը։

Նրա բանակի մի մասը Բուգուլմայի վրայով շարժվեց Մոսկվայի ուղղությամբ. մյուսը՝ Պերմի վրայով—Պետրոգրադի ուղղությամբ։

Յուդենիչը գնում է Պետրոգրադի վրա.—Այդ նույն ժամանակ, ցարական մի ուրիշ գեներալ—Յուդենիչ—Անգլիայի ոգնությամբ Եստոնիայում համախմբեց և գինեց սպիտակ-գվարդիական զորք, ու մայիսի կեսերին, անգլիական նավատորմի պաշտպանությամբ, Պետրոգրադի վրա շարժվեց։

Դենիկինը հարձակվում է հարավից.—Նույն տարվա գարնանը, ցարական մի յերրորդ գեներալ, Դենիկինը, սկսեց հարձակում նախապատրաստել հարավից։ Կուբանում իր կազմակերպած մեծ բանակով նա արշավում էր լայն ձգված ֆրոնտով, որի աջ թևը Յարիցինի վրայով պիտի գնար Կոլչակի հետ միանալու, իսկ ձախ թևը Խարկովի վրայով հարձակվում էր Մոսկվայի ուղղությամբ։

Կարմիր բանակը նահանջում էր նրա գրոհից, քանի որ ստիպված էր իր բոլոր ուժերը կենտրոնացնել Կոլչակի ու Յուդենիչի դեմ։

Կարմիր բանակի հաղթանակները Կոլչակի ու Յուդենիչի վրա.—Մայիսի կեսերին Կոլչակից յետ խլելով Բուգուլման, հունիս և հուլիս ամիսների ընթացքում կարմիր բանակը հաջորդաբար գրավեց Ուֆան, Յեկատերինբուրգը, Չելյաբինսկը։

Այդ նույն ժամանակ յետ մղվեց հարձակումը Յուդենիչի, որը ոգոստոսին ստիպված էր նահանջել և վերադառնալ Եստոնիա։

Դենիկինի հաջողությունները յեվ Յուդենիչի յերկրորդ արշավը.—Կոլչակի և Յուդենիչի վրա տարած այդ հաջողություններից հետո՛ միայն կարմիր բանակը կարող էր յետ մղել Դենիկինին, որն ամառվա ընթացքում արդեն գրավել էր Յարիցինը, Խարկովը, Պոլտավան, Յեկատերինոսլավը, Ոդեսան, Կիևը, իսկ հիմա Կոլչակի պարտությունից հետո, փոխելով իր ֆրոնտը, իր բոլոր ուժերը նետեց Մոսկվայի վրա։ Հոկտեմբերին գրավելով Վորոնեժն ու Որյոլը, նա արդեն մոտենում էր Տուլային։

Հոկտեմբերին նորից Պետրոգրադի վրա նետվեցին Յուդենիչի զորքերը և գրավեցին Կրասնոյե Սելոն։

Դենիկինի ու Կոլչակի սպիտակ-բանակների ջարդվելը.—Այս անգամ ևս սպիտակ գեներալների հաջողությունները յերկար չտևեցին։ Դեռ հոկտեմբերին կարմիր բանակը Դենիկինից յետ վերցրեց Որյոլն ու Վորոնեժը և հետո նրան այնպես արագ քշեց դեպի հարավ, որ 1920 թ. հունվարի սկզբին նա ստիպված էր արդեն մաքրելու իր գլխավոր հենակետները—Նովոչերկասկն ու Ռոստովը (Դոնի վրա). մայիսին սպիտակ-գվարդիականների ձեռքին մնաց միայն Ղրիմը։

Իսկ ինչ վերաբերում է Յուդենիչին, նա դեռ նոյեմբերին (1919 թ.) յետ վռնդվեց Եստոնիա։

Պատերազմ Լեհաստանի դեմ.—Բայց այդ հաղթանակից հետո յել մեր պրոլետարական պետությունը յերկար հանգիստ չունեցավ։ 1920 թ. ապրիլի վերջին սկսվեց լեհական պանների հարձակումը. դրանց զորախմբերը նեռա խուժեցին Ուկրայինա, գրավելով Կիևը։

Յեվ նորից կարմիր բանակը, լարելով իր ուժերը, վռնդում է թշնամուն, որին նա հետապնդում է մինչև Վարշավա, ոգոստոսի 13-ին գրավելով Նովոմինսկը (լեհական մայրաքաղաքից 30 վերստի վրա)։

Վրանգելի հարձակումը.—Ոգոստոսի 19-ին հարավում հարձակման անցավ բարոն Վրանգելը, որը Ղրիմ վռնդված Դենիկինյան բանակի մնացորդների գլուխն էր անցել։

Վրանգելի արշավը դեպի մեր զորքերի թիկունքը, այլև Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից իր ժամանակին լեհական բուրժուազիային ոգնության ցույց տալը, հարկադրեցին կարմիր բանակին ոգոստոսի 21-ին Լեհաստանից նահանջ սկսելու։

Վրանգելի ջարդվելը յեվ հաղաղագիական պատերազմի վախճանը.—Լեհաստանի հետ հաշտության նախնական պայմանագիրը կնքելուց (հոկտեմբերի 12-ին) անմիջապես հետո խորհրդային զորքերը հարձակվեցին Վրանգելի վրա, որն ուղիղ մեկ ամսից ստիպած էր ծովով փախչելու Ղրիմից, քանի որ նոյեմբերի 15-ին վերցվեց նրա վերջին հենակետը—Սեւաստոպոլը։

Այդպես, 1920 թ. վերջին, քաղաքացիական պատերազմը վերջացավ՝ Խորհրդային հանրապետության բոլոր թշնամիների վրա կարմիր բանակի տարած հաղթանակով։

«Ռազմական կոմունիզմ».—Քաղաքացիական պատերազմի միջոցին ամբողջ տնտեսական կյանքը յենթակա էր հեղափոխության պաշտպանության շահերին։ Կարմիր բանակի և ռազմական արդյունաբերության մեջ զբաղված բանվորների համար անհրաժեշտ հացը կարելի էր ստանալ միայն գյուղացիներից, բայց որովհետև, արդյունաբերության համարյա ամբողջական քայքայման հետևանքով, կառավարությունը հացի փոխարեն գյուղացիությանը վոչինչ չէր կարող տալ, ուստի և այդ հացը հավաքվում էր հարկադրման միջոցով։ Մտցված էր այսպես կոչված պարենամանատրում, որի համաձայն գյուղացիներից վերցնում էին նրանց ամբողջ ավելցուկը, այսինքն—մի մարդու համար տարեկան սահմանված էր 12 փութ հացի նորմա, որից ավելին վերցվում էր։

Պարենամանատրման միջոցով հավաքված պարենը բաշխում էր ինքը պետությունը, որը ամբողջ պաշարի հաշվառումը կատարում էր իր խանութների ու պահեստների միջոցով, որտեղից մթերքները ստացվում էին միայն քարտերով։ Այդպիսով, վոչնչացված էր փոխանակությունը։ Մասնավոր առևտուրն արգելված էր։ Ամբողջ բնակչությանը մատակարարում էր պետությունը. մտցված էր ընդհանուր աշխատանքային պարտակ (պարտադիր աշխատանք)։

Ածուխը, միջին և մանր արդյունաբերությունը համարյա ամբողջապես ազգայնացված էր։

1918, 1919 և 1920 թվերին մեզանում հաստատված այդպիսի տնտեսական կարգը «Ռազմական Կոմունիզմ» անունն ստացավ։

Սխա՞լ էր արդյոք «ռազմական կոմունիզմը».—Նպատա՞կ էր արդյոք այդպիսի տնտեսական քաղաքականությունը պատերազմի հետևանքով քայքայված մեր ժողովրդական տնտեսության վերելքին։

Վոչ, ընդհակառակը, նա ավելի էր քայքայում այն. գյուղացին սկսեց կրճատել վար ու ցանքը, քանի որ նա շահագրգռված չէր ավելացնելու արտադրությունը նրանից ավելի, ինչը նրան անպայման անհրաժեշտ էր՝ իր անձնական գործածության համար։

Ոգնե՞ց արդյոք «ռազմական կոմունիզմը» Խորհրդային Իշխանությանն՝ սպիտակների դեմ մղած կռվին։

Այո, միայն պարտադիր պարենամատակարարումի, և գյուղացիական ավելցուկն ուրիշ վորևե նպատակի (բացի կարմիր բանակին և բանվորներին կերակրելուց) համար գործածելու բոլոր փորձերի դեմ վճռական պայքար մղելու ոգնությամբ, Խորհրդային Իշխանությունը հաղթանակ տարավ իր թշնամիների վրա։

Քաղաքացիական կատաղի պատերազմի պայմաններում «ռազմական կոմունիզմը» տնտեսական խնդիրները վճռելու միակ հնարավոր միջոցն էր։

Բայց այն չափով, ինչ չափով աչքաթող էր արվում «ռազմական կոմունիզմի» ժամանակավոր ու հարկադրական բնույթը, ինչ չափով վոր ձգտում էր առաջանում կերկարացնելու նրա գոյությունը քաղաքացիական պատերազմի շահերի պահանջած սահմաններից այն կողմը, այն չափով նա անպայման սխալ էր դառնում, քանի վոր, ավելի ևս քայքայելով կերկրի արտադրական ուժերը, նա մեզ հեռացնում էր սոցիալիզմից, փոխանակ մոտեցնելու։

Կուսակցության ութերորդ համագումարը.—Քաղաքացիական պատերազմի և «ռազմական կոմունիզմի» այդ տարիների ընթացքում տեղի ունեցան կուսակցական կերկու համագումար։

Ութերորդ համագումարում (1919 թվի մարտի 18-ից մինչև 23-ը) պատգամավորները կային կուսակցության 314.000 անդամի կողմից։

Այդ համագումարի գլխավոր աշխատանքն էր՝ քննել և ընդունել նոր ծրագիրը։

Քանի վոր կերկրորդ համագումարի ընդունած ծրագրում նկարագրված կապիտալիզմի կերևույթները դեռ շարունակում էին արտացոլել ռուսական իրականության

մի մասը, վորտեղ կրար հետ շաղկապված կյին տնտեսական կյանքի զարգացման ամենատարբեր աստիճանների կերևույթներ, ապա, Իլյիչի պնդումով, նախորդի հետ կապը պահպանելու համար, հին ծրագրի սկզբունքային մասը մացվեց նորի մեջ, բայց ծրագրի այդ թեորետիք մասը լրացվեց իմպերիալիզմի բնութագրությամբ։ Մեր ապրած շրջանի կյությունը մեկնաբանվեց վորպես միջազգային պրոլետարական հեղափոխության շրջան, և խորհրդային տիպի պետության կյությունը՝ վորպես պրոլետարական դիկտատուրայի ձև, վոր անհրաժեշտ է՝ դեպի սոցիալիզմը տանող անցողական շրջանում։

Ծրագիրը պարզեց նաև Խորհրդային Իշխանության կիրառած հիմնական ձեռնարկումների իմաստն ու նպատակը և նշեց պրոլետարական պետության մոտակա մի շարք անելիքները կյանքի բոլոր բնագավառներում։

Բացի այդ, ութերորդ համագումարը զբաղվեց ռազմական շինարարության և կարմիր բանակի կազմակերպման, ինչպես և դեպի միջակ գյուղացիությունը ունենալիք վերաբերմունքի ու գյուղում տանելիք աշխատանքի հարցերով։

«Բանվորա-գյուղացիական կառավարության և կոմունիստական կուսակցության քաղաքականությունը առաջիկայում էլ պիտի տարվի պրոլետարիատի ու չքավոր գյուղացիության՝ միջակ գյուղացիության հետ համաձայնվելու վոգով»—ազդարարում է համագումարի համապատասխան բանաձևը, խստորեն դատապարտելով միջակին կուլակի հետ շփոթելը։

Նրանից հետո, կերբ մենք—ասում էր Իլյիչը իր ճառում՝ գյուղում տանելիք աշխատանքի մասին—չքավորական կոմիտեների միջոցով իրագործեցինք պրոլետարական և կիսապրոլետարական տարրերի զատումը գյուղում և այդ տարրերին շաղկապեցինք քաղաքային պրոլետարիատի

հետ՝ գյուղական բուրժուազիայի դեմ պայքարելու համար, մենք հիմա պիտի դաշինք ստեղծենք միջակ գյուղացիության հետ։

Բուրժուազիայի նկատմամբ մենք կիրառում ենք սեվիականազրկումն, իսկ միջակի նկատմամբ, նրա տնտեսական հարաբերությունների ասպարիզում, թույլատրելի չե և վոչ մի բռնություն. «չհամարձակվել հրամայել»։

Ինչերորդ հանձնարար.—Իններորդ համագումարը (1920 թ. մարտի 29-ից մինչև ապրիլի 4-ը. կուսակցության անդամների թիվը արդեն 611.000 եր), վոր գումարվել եր Կոլչակի, Յուդենիչի և Դենիկինի վրա տարած լիակատար հաղթանակից հետո ու սպիտակ-լեհերի և Վրանգելի հարձակման հենց սկզբում, տնտեսական շինարարության հարցեր քննեց։ Նա յերկրի էկոնոմիական վերածննման միասնական տնտեսական պլան մշակեց, ընդունելով էլեկտրոֆիկացիան վորպես հիմք նրա տեխնիկական կիրառման։

Յեզրակացություն.—Պրոլետարիատի դիկտատուրայի իղեյան դարձավ իրականություն։ Ամբողջ գյուղացիության հետ միասին (գյուղացիության, վոր կալվածատիրական հողատիրության դեմ մղած իր պայքարով ավարտեց բուրժուական հեղափոխությունը) բանվոր դասակարգը հակահեղափոխությունը։

Այնուհետև խնդիր առաջացավ գյուղացիության պրոլետարական և կիսապրոլետարական խավերը շաղկապելու և այդ խավերի ու քաղաքի պրոլետարիատի միջև սերտ դաշինք ստեղծելու՝ բուրժուազիայի դեմ ընդհանուր պայքար մղելու համար։ Այդ խնդիրն իրագործելու կոչված եյին չքավորական կոմիտեները [1])։

1) Հենց այդ ժամանակ բոլշևիկներից հեռացան ձախ-եսերները, վորոնք 1917 թ. վերջին և 1918 թ. սկզբին, այնինքն գյուղում բուրժուական հեղափոխությունն ավարտելու ժամանակաընթացքում ձեռք ձեռքի գնում եյին մեղ հետ։ Գյուղում բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի փոխվելու միջոցին բոլշևիկների դեմ դուրս գալով, ձախ եսերները դրանով անհերքելիորեն ապացուցեցին իրենց մանր-բուրժուական եյությունը։ Նրանք յերբեք սոցիալիստներ չեն յեղել, այլ միայն ավելի հետադիմական բուրժուական դեմոկրատներ, վորոնք 1917 թ. վերջին հրաժարվեցին հետևել եսերական կուսակցության մեծամասնությանը, կուսակցության, վոր դավաճանել եր մանր-բուրժուական դեմոկրատիզմի իր սեփական պրինցիպներին։

Վերջապես, մեր քննած առաջին քառամյակի վերջում, յերբ հակահեղափոխության վերջնական ջարդվելն ու պարտությունը պրոլետարիատին հնարավորություն տվին ավելի ևս զբաղվելու տնտեսական շինարարության խընդիրներով, բանվոր դասակարգի առաջ ծառացավ այս կենսական խնդիրը.—միջակ գյուղացիության հետ կնքել տնտեսական դաշինք։ Այդ հարցը անհնարին եր լուծել «ռազմական կոմունիզմի» հիման վրա։ Նոր տնտեսական քաղաքականության անցնելու անհրաժեշտությունը հասունացել եր։

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽ

(Շարունակություն)

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ «ՆԵՊ»-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ.

Տնտեսական նոր խաղախականության անցնելու պատճառներն ու պայմանները.—Մենք արդեն տեսանք, որ դեռ ութերորդ համագումարում, այսինքն 1919 թ. գարնան սկզբին կուսակցությունը հատկապես շեշտեց մերա դաշինքի անհրաժեշտությունը միջակ գյուղացիության հետ։ Բայց հոկտեմբերյան հեղափոխության տարիներին գյուղացիության խավերը մի քիչ հարթվել էին, կուլակությանը մեծ հարված էր հասցված, նրանց հողի զգալի մասը խլված էր և ընդհանրապես հողը գյուղացիության մեջ վերաբաժանված էր ավելի համաչափ կերպով, քան առաջ էր, այլ կերպ ասած՝ ամբողջ գյուղացիությունը դարձել էր համարյա միջակ։

Նման պայմաններում դաշինքը միջակի հետ, նշանակում էր դաշինք ողջ գյուղացիության հետ ընդհանրապես, և քաղաքացիական կռիվներին այդ դաշինքն իրագործվեց լիուլի ու հեղափոխությունը վերկեց։ Սակայն այդ դաշինքը ռազմա-քաղաքական էր և ոչ անտեսական։

Ընդամենը ապրուստի ու գոյության ծանր պայմաններին, գյուղացիությունը հաշտվում էր պարենամատնաորումի հետ, գիտակցելով, որ Խորհրդային Իշխանությունը պայքարում է հողի համար և որ գյուղացիությունը հողն իր ձեռքում պահել չի կարող, չեթե չաջակցի պրոլետարական իշխանությանը։

Բայց քաղաքացիական պատերազմի վախճանից հետո գյուղացիությունն ավելի ևս ձգտեց կալվածատերերից խլած հողը ոգտագործել իր սեփական դրությունը բարելավելու համար. այդ ձգտումներն հետզհետե ուժեղանում էին։ Գյուղացիությունն այլևս չէր կարող և չէր ուզում հաշտվել պարենամատնաորման հետ։ Եվ այդ հողի վրա սկսվեցին գյուղացիական շարժումներ Սիբիրում, Ուկրաինայում և այլ վայրերում։ Դժգոհությունն անդրադարձավ նաև բանակի ու բանվորների մի մասի վրա, մի բան, որին նպաստում էր ագիտացիան մենշևիկների ու եսերների, որոնք հակահեղափոխական նպատակներով չէին հապաղում ոգտագործելու ժողովրդական մասսաների անտանելի ծանր դրությունը։ Գյուղացիության դժգոհությունը «ռազմական կոմունիզմից» և այդ դժգոհության տարածվելը բնակչության այլ խավերի վրա, պարզ արտահայտվեց մանավանդ Կրոնշտադտի ապստամբության ժամանակ (1921 թ. մարտ), որ անցավ՝ «Խորհուրդներ, առանց կոմունիստների» լոզունգի տակ։

Ապստամբությունը ղեկավարող մենշևիկներն ու եսերները դեռևս համարձակություն չունեին բացայայտ կերպով Խորհրդային Իշխանության դեմ դուրս գալու։ Նախ և առաջ պետք էր տապալել պրոլետարիատի դիկտատուրան, որն իր մեջ էր մարմնավորում կոմունիստական կուսակցությունը։

Գյուղացիների դժգոհությունը պարենամատնաորումից՝ անբավականություն էր առաջացնում ընդդեմ կոմունիստների, որոնք կիրառում էին պարենամատնաորումը և փորձում էին նրա հիման վրա կոմունիստական հասարակություն կառուցել։

Պրոլետարիատի և գյուղացիության դաշինքը թուլատնում էր։

Կրոնշտադտի անցքերի ժամանակ գումարված կուսակցության տասերորդ համագումարում Լենինը «Պարենհարկի մասին» իր զեկուցման մեջ հայտարարեց.

«Մենք գիտենք, որ գյուղացիության հետ համաձայնության գալը միայն կարող է փրկել սոցիալիստական հեղափոխությունը Ռուսաստանում... Մենք պետք պարզ ասենք, որ գյուղացիությունը դժգոհ է հարաբերությունների այն ձևից, որ հաստատվել է մեզանում, հարաբերությունների այդ ձևը նա չի ցանկանում և այլևս այդպես չի ապրի... Դա—աշխատավոր բնակչության հրակայական մասսաների կամքն է։ Մենք դա պիտի հաշվի առնենք»։

Համագումարը որոշեց պարենամատնատրումը փոխել պարենհարկով. այդ որոշման ուղեկցող կետն ասում էր, որ «հարկը տալուց հետո բոլոր ավելցուկները ամբողջապես մնալու են գյուղացիների տրամադրության տակ և կարող են ոգտագործվել՝ ֆաբրիկ-գործարանային և տնայնագործական արդյունաբերական ու գյուղատնտեսական արտադրության պրոդուկտների հետ փոխանակելու համար»։

Այդպես սկսվեց անցումն «ռազմական կոմունիզմից» դեպի նոր տնտեսական քաղաքականություն, (կրճատ՝ ՆԵՊ—«НЭП»—новая экономическая политика)։

Նեպի էությունը.— Պարենամատնատրումը պարենհարկով փոխելը գյուղացուն հնարավորություն տվեց իր ավելցուկների տնօրենը լինելու։ Իսկ այդ իր հերթին նշանակում էր թուլյատրել ազատ առևտուր, քանի որ պետությունը հայի փոխարեն գյուղացիներին չէր կարող արդյունաբերության պրոդուկտներով բավարարել՝ արդյունաբերության համարյա ամբողջական քայքայման հետևանքով։ Արդյունաբերության և գյուղատնտեսության պրոդուկտների անմիջական փոխանակությունը գլուխ չեկավ և առևտուրի ձև ընդունեց։

Այդպիսի պայմաններում իհարկե, ազատ առևտուրը նշանակում էր—վորոշ չափով թուլլ տալ կապիտալիզմի զարգացումը։ Բայց դա անհրաժեշտ էր։

Կուսակցության տասնըմեկերորդ համագումարում Լենինը ասում էր—կապիտալիզմ՝ մենք թուլլատրում ենք, բայց այն սահմաններում, որ անհրաժեշտ է գյուղացիության։ Այդ—պե՛տքե։ Առանց դրան՝ գյուղացին չի կարող ապրել և տնտեսություն վարել։

Բայց այդ նույն գյուղացու շահերի տեսակետից անհրաժեշտ էր վորչափ կարելի չե շտապ և ինչ էլ վոր լիներ բարձրացնել արդյունաբերությունը, վորի պրոդուկտների հետ գյուղացին կարողանար փոխանակել իր ավելցուկները։

Իսկ դա դուռ կբանար թուլլատրելու և խրախուսելու մանր մասնավոր արդյունաբերությունը, նույնպես և տեղական ու արտասահմանյան կապիտալներ ներդրավելու (վորոշ ձեռնարկություններ կապալով և կոնցեսիաներով տալու միջոցով, այնպիսի ձեռնարկություններ, վորոնք Սորհրդային Իշխանությունն իր ուժերով չէր կարող դործի դնել և ոգտագործել)։

Այդ ձևով թուլլատրելով կապիտալիզմը, յերկիրը շատ բան կշահեր, քանի վոր այդ կապիտալի ոգնությամբ նա ավելի շո՛ւտ կարող էր վերականգնել իր արտադրական ուժերը։ Բայց այդ թուլլատրված կապիտալիզմը պիտի յենթակա լինի պետության ուժեղ հսկողության։

Այլ՝ կերպ ասած, մեր թուլլատրած կապիտալիզմը մենք ուղղում ենք «պետական կապիտալիզմի» հունի մեջ, այսինքն այնպիսի կապիտալիզմի, վորին մենք պահում

ենք կապի վրա, որին պրոլետարական պետությունն ինքն է գործնեության խիստ սահմանափակ շրջանակների մեջ դնում։

Ա.դպիսի կապիտալիզմը—բազմիցս հայտարարում էր Լենինը—սարսափելի չէ Խորհրդային Իշխանության համար, քանի որ այդ իշխանությունն իր ձեռքումն է պահում տնտեսության այսպես կոչված հրամանատարական բարձունքները — խոշոր արդյունաբերությունը, տրանսպորտը և արտաքին առևտուրը։

Ահա, որինակ, ինչ էր ասում Իլյիչը նեպին անցնելու հենց սկզբում, «Պարենահարկի մասին» իր զեկուցման մեջ. «Յեվ թող մանր արդյունաբերությունը զարգանա մինչ որոշ աստիճանի, թող զարգանա պետական կապիտալիզմը—այդ սարսափելի չէ Խորհրդային Իշխանությանը։ Խորհրդային Իշխանությունը պետք է ուղղակի նայի իրերի դրությանը, դրանց իրենց անունով կոչի, բայց նա պիտի դրա վրա հսկողություն ունենա, որոշի դրա չափը։ Կոնցեսիաները սարսափելի չեն, յեթե մենք կոնցեսիոներներին տալիս ենք մի քանի գործարան, մեծամասնությունը պահելով մեր ձեռքում, այդ սարսափելի չե։ Իհարկե, բոլորովին անհեթեթ կլիներ, յեթե Խորհրդային Իշխանությունը իր ունեցածի մեծ մասը տար կոնցեսիայով,—այն ժամանակ վո՛չ թե կոնցեսիա դուրս կգար, այլ վերադարձ դեպի կապիտալիզմ»։

Մեր թույլատրած կապիտալիզմի ոգնությամբ բարձրացնելով յերկրի արտադրական ուժերը, մենք արագությամբ վոտքի կկանգնեցնենք և կզարգացնենք մեր սոցիալիստական արդյունաբերությունը մինչ այն աստիճան, յերբ նա հնարավորություն կունենա դյուղացուն, նրա պրոդուկտների փոխարեն, տալ այն ամենը, ինչ անհրաժեշտ է նրան ապրուստի ու տնտեսությունը վարելու համար։

Հետևաբար, կապիտալիզմի թույլատրումն ու ոգտագործումը, գլխավորապես՝ պետական կապիտալիզմի ձևով, միայն միջոց է հանդիսանում սոցիալիստական խոշոր արդյունաբերության և դյուղացիական մանր տնտեսության միջև շուտափույթ դաշինք հաստատելու համար, վոր համապող է պրոլետարիատի և դյուղացիության միջև տնտեսական սերտ միություն ստեղծելուն՝ նրանց միասնական սոցիալիստական շինարարության համար։

Մենք պետք է,—ասում էր Լենինը—«կապվենք դյուղացիական մասսայի հետ, շարքային աշխատավոր գյուղացու հետ և սկսենք անչափ առաջ շարժվել, շատ ավելի դանդաղ, քան մենք տենչում էինք, սակայն այնպես, վոր իսկապես ամբողջ մասսան մեզ հետ շարժվի։ Այս դեպքում իր ժամանակին այդ շարժումն այնպիսի արագ տեմպ կստանա, վորի մասին մենք հիմա տենչալ էլ չենք կարող։ Դա, իմ կարծիքով, նոր տնտեսական քաղաքականության առաջին հիմնական քաղաքական դասն է»։

Յեվ այդպես, վոչ թե «ռազմական կոմունիզմի» միջոցով (վոր վտանգ էր սպառնում պրոլետարիատին ամբողջապես անջատելու գյուղացիությունից), այլ գյուղացիության հետ սերտ կապ ստեղծող «նեպ»-ի միջոցով պետք է անցնել սոցիալիզմին։

Հետևաբար, նեպի եությունը կայանում է պրոլետարիատի և գյուղացիության միջև սերտ դաշինք ստեղծելու մեջ՝ շուկայական հարաբերությունների հիման վրա և մասնավոր կապիտալի մասնակի (խստորեն սահմանված շրջանակներով) թույլատրման ու ոգտագործման ոգնությամբ։

Նեպի զարգացման ուղիները.—Նոր տնտեսական քաղաքականության մեջ 3 գլխավոր ետապ պիտի տարբերել։

Առաջին ետապը 1921 թ. գարնանից մինչև 1922 թ.

գարունը, այսինքն տասերորդից մինչև տասնմեկերորդ համագումարը։

Այդ ետապում, նեպը դլխավորապես նահանջի տակտիկա էր։

Մենք նահանջում էյինք՝ տնտեսական ֆրոնտում մերկրած պարտությունից հետո։ «Ռազմական կոմունիզմի» մեթոդներով անմիջապես սոցիալիզմին անցնելու փորձերը մեզ կրոնշտադտի անցքերի առաջ կանգնեցրին։

Անհրաժեշտ եր նահանջել դեպի նոր դիրքերը, որպեսզի վերակազմեյինք շարքերը՝ հետագա հարձակման համար։

Նոր դիրքերը—դա հենց կապիտալիզմ թույլատրելն և դա ոգտագործելն եր, որպես մի միջոց՝ սոցիալիզմին անցնելու համար։

Նահանջելով, մենք միաժամանակ անհրաժեշտ պայմաններ էյինք նախապատրաստում՝ լուծելու համար ուժերի վերադասավորման խնդիրը։

Կոմինտերնի չորրորդ կոնգրեսում իր զեկուցման մեջ ընկ. Լենինն ասում եր.

«1921 թ. մենք ականատես էյինք դյուղացիության հակայական մասի դժգոհության։ Իսկ հիմա, մեր նկատմամբ դյուղացիության կողմից վորևե լուրջ դժգոհության հնարավորությունը համենայն դեպս բոլորովին վերացած է։ Այդ ձեռք է բերված մեկ տարվա ընթացքում»։

Ահա թե ինչու, դեռ տասնմեկերորդ համագումարում Իլյիչը աղդարարեց—Նահանջը վերջացել է, հիմա խնդիրը ուժերի վերադասավորման մեջ է։

Այդ նշանակում եր, վոր կապիտալիզմի շրջանակների հետագա լայնացման թույլատրում տեղի չի ունենա։ Իսկ հիմա, նեպի յերկրորդ ետապում, մեր անելիքն այն է, վոր դաշինք հաստատենք հանդստացած դյուղացիության եկոնոմիկայի հետ. դրա համար հարկավոր է սովորել հարաված մեր իսկ թույլատրած կապիտալիզմը, վոր փորձում է սերտ մերձենալ դյուղացիական տնտեսությանը։ Բայց կապիտալիզմը հարվածել մենք պիտի սովորենք վոչ թե վարչական ճնշումների միջոցով, այլ տնտեսական յեղանակներով։

Միայն այդ խնդրի իրագործումով, այսինքն տնտեսական հողի վրա կապիտալիստների հետ մրցել սովորելով և այդպիսով դյուղացիության հետ տնտեսական միություն ստեղծելու ուղին հարթելով, մենք կարող ենք հետագայում սկսել հոդալ «սոցիալիզմի իսկական շինարարության» մասին, այլ կերպ ասած՝ անցնել նեպի յերրորդ ետապին, հարձակման—նեպի հիման վրա։

Այդ յերրորդ ետապին մենք մոտեցանք մոտավորապես 1923 թ. ամառը։

«Կոոպերացիայի մասին» հոդվածում (գրված 1923 թ. մայիսի վերջին) Իլյիչն արդեն հետևյալ խնդիրն և դնում կուսակցության առաջ.

«Այլ բան է յերազել ամեն տեսակի բանվորական միությունների վերաբերյալ՝ սոցիալիզմի կառուցման համար, այլ բան է սովորել պրակտիկ կերպով այդ սոցիալիզմը կառուցել այնպես, վորպեսզի յուրաքանչյուր մանր դյուղացի կարողանա մասնակցել այդ կառուցմանը։ Հենց այդ աստիճանին մենք հասել ենք հիմա»։

Այդ խնդիրն իրագործելու համար, անհրաժեշտ է զարգացնել և պատշաճ բարձրության վրա դնել կոոպերացիան, վորը դյուղացիական մասսաներին ներգրավում է սոցիալիստական շինարարության մեջ՝ նրա տնտեսավարության կենսական պահանջները բավարարելու միջոցով։

«Հիմա մենք իրավունք ունենք ասելու—գրում է այդ հոդվածում ընկ. Լենինը—վոր մեզ համար կոոպերացիայի փոքրիկ աճումը համապոր է սոցիալիզմի աճմանը»։

Կյանքն արդարացրեց նեպի տակտիկան և մեր կուսակցությունը յուրաքանչյուր տարի, իր համագումարներում, նոր տնտեսական քաղաքականության արդյունքները հաշվի առնելով, խոշոր նվաճումներ և նշում ժողովրդական տնտեսության բարձրացման և աշխատավոր մասսաների տնտեսական դրության բարելավման ասպարիզում։

Մինչև հիմա, նեպի ժամանակաշրջանում տեղի չեն ունեցել հինգ համագումար։

Տասներորդ համագումարը.—Տասերորդ համագումարը, որ գումարվեց 1921 թ. մարտին, պարենամատնատրումը պարենհարկով փոխելու մասին հանած իր որոշումով, ինչպես մենք արդեն ասացինք, նեպի սկիզբը դրեց։

Այդ ժամանակ կուսակցությունն ուներ ավելի քան 700,000 անդամ։

Բացի «ռազմական կոմունիզմից» նեպին անցնելու հարցից, տասերորդ համագումարը համապատասխան բանաձևում ընորոշեց, թե ինչպիսին պիտի լինեն պրոֆմիությունների դերն ու անելիքները պրոլետարական դիկտատուրայի եպոխայում և, ըստ Լենինի հայացքների՝ ընդունեց, որ նրանց գլխավորագույն խնդիրն է՝ կատարել «կոմունիզմի դպրոցի» դերը։

Նրանք կոմունիզմի վոդով պիտի վերադաստիարակեն իրենց մասսաներին (այն ժամանակ նրանց թիվը 7,000,000 եր), նրանց մերձեցնեն պրոլետարիատի առաջավոր խավերին և նրանց «նախապատրաստեն կոմունիստական հասարակակարգի շինարարության գործին»։

«Համայն ժողովրդական տնտեսության, որպես միասնական տնտեսական ամբողջության, լրիվ ղեկարարությունը» պրոֆմիությունների ձեռքում կենտրոնացնելը, որի մասին ասում է մեր կուսակցության ծրագիրը, ապագայի գործ է, յերբ պրոֆմիություններն իրենց կազմակերպության մեջ կընդգրկեն բոլոր աշխատավորներին։

Այդ պատճառով, հակառակ ընկ. Տրոցկու հայացքներին, համագումարը քաղաքական խոշոր սխալ համարեց «պրոֆմիությունների շուտափույթ պետականացումը»։

Մերժելով ընկ. Տրոցկու տեսակետը, համագումարը չափազանց խիստ դատապարտեց այսպես կոչված «բանվորական ոպոզիցիայի» (որին գլխավորում եր ընկ. Շլյապնիկով) հայացքները պրոֆմիությունների դերի մասին։

«Բանվորական ոպոզիցիան» առաջարկում եր ժողովրդական տնտեսության ղեկավարությունը հանձնել պրոֆեսիոնալ արտադրողական միությունների մեջ համախմբված արտադրողների համառուսաստանյան համագումարին։

Համագումարը դատապարտեց պրոպագանդը այդ հայացքների, ընդունելով, որ դա արտահայտություն է մանր-բուրժուական, անարխիստական թեքման և ուրեմն խորթ է Ռ. Կ. Կ. հայացքներին։

Չե որ արտադրողների հսկայական մեծամասնությունը մանր-ապրանքարտադրողներ են հանդիսանում, հետևաբար, ժողովրդական տնտեսության ղեկավարությունը նրանց հանձնելը եյականում կնշանակեր քողարկյալ հրաժարիմք պրոլետարիատի դիկտատուրայից։

«Կուսակցության միասնականության մասին» բանաձևում, տասերորդ համագումարը, կուսակցությունից անմիջապես վտարելու սպառնալիքով, արգելեց կուսակցության ներսում վերևե ֆրակցիա և խմբավորում կազմակերպելը։

Պրոֆմիութենական դիսկուսիայի եյությունը.—Իսկապես այդ դիսկուսիան պրոֆմիությունների մասին, որ սկսվեց 1920 թ. վերջին, վոչ այլ ինչ եր, յեթե վոչ մի

յելքի վորոնում՝ այն ժամանակ Խորհրդային Իշխանության ապրած ծանր դրությունից դուրս գալու համար։

Յերկիրը հիվանդեր, բայց դեռ չեր հասկացվել հիվանդության պատճառը (անհրաժեշտ չափից ավելի ձգձգված «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը), դեռ չեյին նշմարվում նրա առողջացման ուղիները (նեպի ուղիները)։

Յենթադրում եյին յելք գտնել պրոֆմիությունները վերակազմակերպելու և նրանց վրա նոր՝ զարգացման տվյալ շրջանին անհամանասլատասխան խնդիրներ դնելու ոգնությամբ, ըստ վորում կուսակցության անդամների մի մասը, բռնելով այդ սխալ ճանապարհը, հանդում եր այնպիսի յեզրակացությունների, վորոնք սպառնում եյին պրոլետարական դիկտատուրայի հենց հիմքերին։

Այլ կերպ ասած, առաջարկում եյին փոխել այն, ինչը ճիշտ եր, բայց դեռ չգիտեյին թե ինչը պետք եր փոխել։

Ըստ էության, քննում եյին յերկրի տնտեսական քաղաքականությունը փոփոխելու անհրաժեշտությունը, բայց այդ հարցի քննությունը տարվում եր այլ ուղղությամբ և ուրիշ տերմիններով, քան անհրաժեշտ եր. փոխանակ «ռազմական կոմունիզմի» և նեպի մասին խոսելու, վիճում եյին պրոֆմիությունների անելիքների մասին։

Տասներմեկերորդ համագումարը.— Կուսակցության տասներմեկերորդ համագումարը (1922 թ. մարտի 27—ապրիլի 2-ը) ժողովրդական տնտեսության բարձրացման գործում դեռ չեր կարող խոշոր հաջողություններ նշել. նեպը դեռ նոր եր մտցվում և աստիճանաբար զարգանում եր տասերորդ և տասներմեկերորդ համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում (մեկ տարի). տասերորդ համագումարում միայն առաջին քայլն եր արված այդ ուղղությամբ։

Հիմա շեշտվեց, վոր նեպին անցնելու բոլոր անհրաժեշտ քայլերն արդեն արված են և վոր ժամանակ է նահանջը դադարեցնելու։

Գյուղացիությունը հանգստացել եր, բայց պետական խորհրդային տնտեսության և գյուղացիական եկոնոմիկայի միջև սմիչկա դեռ չեր ստեղծվել։ Այդ արձանագրեց ընկ. Լենինը համագումարում (իր զեկուցման մեջ) և ընդգծեց շտապելու անհրաժեշտությունը— արդյարացնել գյուղացիության՝ կանխատես մեզ ցույց տված վստահությունը։

Այնուհետև տասներմեկերորդ համագումարը պարզաբանեց պրոֆմիությունների անելիքները նեպի պայմաններում բանվորների տնտեսական դրությունը բարելավելու գործում։

Վերջապես համագումարը կարևոր վորոշումներ հաներ կուսակցության սոցիալական կազմը բարելավելու մասին. նա անհրաժեշտ գտավ ուժեղացնել նրանում բանվորական ելեմենտը և դժվարացնել վոչ-պրոլետարական ելեմենտների մուտքը։

Նա հավանություն տվեց 1921 թվին կատարված կուսակցության զտմանը, վորի արդյունքն եր 170.000 անդամների վտարումը (գլխավորապես ուրիշ կուսակցություններից և բնակչության վոչ պրոլետարական խավերից դուրս յեկածները)։

Այդպիսով, զտման և կամավոր կերպով կուսակցությունից դուրս գալու հետևանքով (նեպի հետ կապված) նրա անդամների թիվը պակասելով, տասներմեկերորդ համագումարին կազմում եր միայն 500.000 (հաշվելով նաև մոտ 100.000 թեկնածու)։

Տասներկուերորդ համագումարը. — Տասներկուերորդ համագումարին, վոր կայացավ 1923 թ. ապրիլին (17-ից—25-ը), կուսակցության մեջ կար ընդամենը 485

հազար անդամ և թեկնածու։ Անդամների թվի վորոշ նվազումը բացատրվում է՝ ընդունելությունն կուսակցության մեջ դժվարացնելով և ընդհանրապես վողջ քաղաքականությամբ, վոր ձգտում եր կուսակցության քանակական աճումը ժամանակավորապես կանգնեցնելու, վորպեսզի շահվի նրա վորակական կազմը։

Համագումարը հաստատեց պրոլետարիատի և գյուղացիության, մեր հեղափոխության բախտը վորոշող յերկու դասակարգերի միջև դաշինքն ամրապնդելու անհրաժեշտությունը և արտահայտվեց գյուղացիության վրա ընկնող զանազան հարկերը թեթևացնելու ու դրանք միասնական գյուղատնտեսական հարկով փոխելու ոգտին։

Այնուհետև, համագումարը վճռական հակահարված տվեց պրոլետարիատի դիկտատուրայի հարցը և Խորհրդային կառավարության մեջ կուսակցության դերը վերանայելու փորձերին։ Կուսակցությունը պիտի մնա այնպիսին, վորպիսին նա յեղել է մինչև այսոր, այսինքն՝ «բանվորներին անմիջականապես դեկավարող ավանգարդ», ինչպես այդ բնորոշեց ընկ. Լենինը։

Տասներկուերորդ համագումարն առաջինն եր, վոր աշխատանքները տարավ իր մեծ առաջնորդի բացակայությամբ։ Իլյիչն արդեն ծանր հիվանդ եր և չեր կարող մասնակցել համագումարի աշխատանքներին։

Իլյիչի մահը յեվ Լենինյան կոչը.—1924 թ. հունվարի 21-ին Լենինը մեռավ։

Նրա մահը բոլոր աշխատավորների սրտում խորը վիշտ առաջացրեց։

1924 թիվը մի տարի յեր, յերբ Իլյիչի նշած տնտեսական ճիշտ քաղաքականության արդյունքները սկսեցին ավելի պարզորեն յերևան գալ։

«Հիմա,—ասում եր ընկ. Զինովյևը կուսակցության տասներեքերորդ համագումարին,—մենք գտնվում ենք այնպիսի վիճակում, վոր յեթե իրագործվի յերկրի տնտեսական վերականգնումը, ապա անմիջապես մեր շարքերը կլցվի վողջ բանվոր դասակարգը»։

Յեվ ահա այդ նախագուշակումը, սիրելի առաջնորդի մահից հետո, սկսվեց իրագործվել. կուսակցության ստացած սարսափելի հարվածին պրոլետարիատը պատասխանեց նրանով, վոր մասսայորեն մտավ վորբացած կուսակցության մեջ։

Յերկու հարյուր հազարից ավելի բանվորներ կուսակցության մեջ մտան։

Տասներեքերորդ համագումարը.—Այդ՝ այսպես կոչված Լենինյան կոչը բարձրացրեց կուսակցության անդամների ու թեկնածուների թիվը։ Տասներեքերորդ համագումարին, վոր կայացավ 1924 թ. մայիսի վերջին (25—31-ը)—այդ թիվը հասել եր մինչև 600 հազարի, ըստ վորում նրա սոցիալական կազմը զգալիորեն բարելավվել եր. մոտ 80 տոկոսը կազմում եյին բանվորներն ու գյուղացիները (55,4 տոկոսը բանվորները և 23 տոկոսը գյուղացիները)։

Լենինյան կոչն ապացույց եր այն բանի, վոր բանվոր դասակարգը մասսայորեն հավանություն տվեց նեպի տակտիկային՝ այն արդյունքների հիման վրա, վորոնց հասցրել եր նեպը և վորոնք պրոլետարիատը ինքն իր վրա զգաց։

Բանվորների ընդհանուր թիվը ավելացել եր, աշխատավարձը հասել եր նախապատերազմյանի 65 տոկոսին, մինչդեռ մեկ տարի առաջ դա հազիվ հասել եր 50 տոկոսին, աշխատանքի արտադրողականությունը հավասարվել եր նախապատերազմյանի 75 տոկոսին։ Մենակ այդ արդեն ապացուցում եր, վոր տնտեսական վերականգնումը սկսվել է։

Գյուղական տնտեսության ասպարիզում ցանքսերի տարածությունը հասել էր 1916 թվի տարածության 90 տոկոսին, արդյունաբերության ասպարիզում արտադրությունը կազմում էր նախապատերազմյանի 45 տոկոսը, մինչդեռ 1923 թ. սկզբին դա 25 տոկոսից չէր անցնում։ Տրանսպորտը արագ վերականգնվում էր, վառելիքի հարցը միանգամայն բավարար էր։

«Մկրատը».—1923 թ. հոկտեմբերին առանձնապես ուժեղ զգացվեց ճգնաժամը, որ «մկրատ» անունն ստացավ։ Նրա էությունը հացի գների ու արդյունաբերության պրոդուկտների գների անհամաչափության մեջ էր։ Առաջինները շատ ցածր էին և ավելի ու ավելի էին ընկնում, յերկրորդները, ընդհակառակը, անչափ բարձրանում էին։

Այդպիսի գների պայմաններում, գյուղացին իր տնտեսության պրոդուկտների դիմաց քաղաքային արդյունաբերության շատ ավելի քիչ պրոդուկտներ կարող էր ստանալ։ Գյուղացին քայքայվում էր։ Մյուս կողմից՝ արդյունաբերությունը չէր կարողանում սպառել իր ապրանքները, քանի որ նրա հիմնական շուկան կազմում է գյուղացիությունը։

Պրոլետարիատի և գյուղացիության դաշինքին նորից լուրջ վտանգ էր սպառնում.—նման այն բանի, ինչպես մկրատի ողակների իրարից հեռացումը համապատասխանում է նրա ծայրերի բաժանմանը, այնպես էլ քաղաքային արդյունաբերության և գյուղատնտեսության պրոդուկտների գների միջև հետզհետե մեծացող անհամաչափությունը սպառնում էր պրոլետարիատի և գյուղացիության դաշինքին։

Կոոպերացիան բոլոր ջանքերը գործ դրեց՝ կանխելու համար այդ հնարավոր անջատումը։

Հացի գները բարձրացնելու և արդյունաբերական պրոդուկտների գները իջեցնելու համար յեռանդուն միջոցներ գործ դնելով, կոոպերացիան ու Խորհրդային Իշխանությունը հասան այն աստիճանի, որ տասներեքերորդ համագումարն արդեն կարող էր այդ ասպարիզում գոյալի նվաճումներ նշել։

Փողային ռեֆորմը.—Տնտեսության վերականգնման լավագույն ապացույցներից մեկը փողային ռեֆորմի կիրառման հաջողությունն էր, որն իր հերթին—համագումարի կարծիքով—«հիմք կծառայի տնտեսական ամբողջ կյանքը առողջացնելու համար»։

Թե ինչ նշանակություն էր տալիս ընկ. Լենինը այդ ռեֆորմին, դա յերևում է Կոմինտերնի չորրորդ կոնգրեսին նրա տված զեկուցումից. «Յեթե մեզ հաջողվի յերկար ժամանակով, իսկ հետագայում մշտապես, կայունացնել այդ ռուբլին, նշանակում է՝ մենք տարանք»։

Նեպ-ի վտանգները յեվ նրանց դեմ կռվելու միջոցները.— Տնտեսական նվաճումները հաշվի առնելով, տասներեքերորդ համագումարը կարող էր միայն հայտարարել, որ նա «ոչ մի հիմք չի տեսնում՝ նոր տնտեսական քաղաքականությունը վերաքննելու»։

Բայց համագումարը չէր կարող, իհարկե, ուշադրություն չդարձնել նեպի վտանգների վրա, այն է՝ նոր բուրժուազիայի աճմանը և այն հանգամանքին, որ շուկան գրավել է մասնավոր առևտրական կապիտալը, խցկվելով պետական արդյունաբերության ու գյուղացիական շուկայի միջև։

Այդ միջնորդին վերացնելու և, հետևաբար, գյուղացիական տնտեսության ու սոցիալիստական արդյունաբերության միջև լիակատար կապ ստեղծելու համար, համա-

գումարը անհրաժեշտ գտավ հատուկ ուշադրություն դարձնել պետական առևտրի և կոոպերացիայի կազմակերպման վրա ու հավանություն տվեց Ներքին Առևտրի ժողովրդական կոմիսարիատ կազմելուն։ Համագումարը կոոպերացիան դիտում է որպես պրոլետարիատի ձեռքին յեղած հիմնական զենքերից մեկը՝ սոցիալիստական շինարարության համար։

Ոպպոզիցիային դատապարտելը. — Տասներեքերորդ համագումարը տվեց նաև 1923 թ. վերջի (աշնանը) դիսկուսիայի հաշվեկշիռը։

Այսպես կոչված «ոպպոզիցիան», որի գլուխն եր կանգնած ընկ. Տրոցկին, կուսակցության ղեկավար մարմնին՝ նրա կենտրոնական կոմիտեին մեղադրում եր նրանում, որ նա սխալ, յերկրի համար համարյա թե կործանարար տնտեսական քաղաքականություն է տանում, նամանավանդ և սխալ գիծ է տանում կուսակցական շինարարության հարցերում։

Համագումարը միաձայն հավանություն տվեց «կենտկոմի ուղիղ քաղաքական գծին ու կազմակերպչական աշխատանքին», ընդունելով, որ դիսկուսիայի մեջ կենտկոմը պաշտպանել է «լենինիզմի հիմունքները՝ ընդդեմ մանր-բուրժուական թեքումների»։

Դիսկուսիա՝ «Հոկտեմբերի դասերի» առթիվ.— 1924 թվին ընկ Տրոցկու և նրա փոքրաթիվ կողմնակիցների հետ նորից դիսկուսիա ծավալվեց «Հոկտեմբերի դասերի» առթիվ։

Հոկտեմբերյան հեղափոխության պատմությունից ընկ. Տրոցկին հետևյալ դատն եր հետևցնում.—պերմանենտ հեղափոխության թեորիան իրեն արդարացրեց և ապացուցեց իր առավելությունը մինչ-հոկտեմբերյան բոլշևիզմի հանդեպ։

Ընկ. Տրոցկու կարծիքով, 1917 թ. հեղափոխության պատմությունից այդպիսի յեզրակացություն հանելու ոգին խոսող փաստ և հանդիսանում—1) այն, որ այդ հեղափոխությունը, սկսվելով որպես բուրժուական, իր ութ ամսյա զարգացման պրոցեսից հետո հանգեց այն վիճակին, որ բանվոր դասակարգը գրավեց իշխանությունը և հաստատեց պրոլետարիատի դիկտատուրա, հետևաբար իրագործվեց 1905 թ. տրոցկիստական լոզունգը—«առանց ցարի, իսկ կառավարությունը բանվորական». 2) այն փաստը, որ բոլշևիզմը, որ միշտ հարձակվում եր տրոցկիզմի ու նրա պերմանենտ հեղափոխության թեորիայի վրա, 1917 թ. ապրիլին ինքը «վերաստապատազինվեց».—նա ընկ. Լենինի թեզիսների ազդեցության տակ դեն քցեց իր առաջվա հայացքը ռուսական հեղափոխության մասին, որպես բուրժուական հեղափոխության, և հակառակ ընկ. Կամենևի ու մի քանի ուրիշների, որոնք հավատարիմ եյին մնացել բոլշևիկյան հին տրադիցիաներին, ուղիղ համարեց պերմանենտ հեղափոխության թեորիան, տալով սոցիալիստական հեղափոխության լոզունգ։

Բոլշևիզմի այդպիսի «վերաստապատազինումը» հնարավոր դարձրեց բոլշևիկների ու տրոցկիստների միացումը մի կուսակցության մեջ—1917 թ. հուլիսին, վեցերորդ համագումարում։

«Հոկտեմբերյան դասերի» նման ըմբռնումը միահամուռ հուզմունք առաջացրեց կուսակցության մեջ, ըստ վորում ընկերների մի մասը, Զինովյևի և Կամենևի գլխավորությամբ, պայքարի մեջ այնքան հեռու գնացին, որ պահանջում եյին ընկ. Տրոցկուն անմիջապես վտարել Քաղբյուրոյից, կենկոմից և նույնիսկ կուսակցությունից։

Կենտկոմի մեծամասնությունը նպատակահարմար չգտավ կուսակցությունը զրկել այնպիսի արժեքավոր գործչից, որպիսին ընկ. Տրոցկին է, բայց իհարկե անհրաժեշտ

գտավ վճռական հակահարված տալ «Հոկտեմբերի դասերի» նրա աղավաղումին։

Բոլշևիզմը յերբեք դեմ չի յեղել պերմանենտ հեղափոխությանը՝ բուրժուական հեղափոխությունը սոցիալիստականի վերածվելու իմաստով։ «Մենք կողմնակից ենք պերմանենտ հեղափոխությանը»,—գրում եր Իլյիչը դեռ 1905 թվին։ Բայց նա միշտ պայքարում եր ընկ. Տրոցկու «պերմանենտ հեղափոխության» թեորիայի դեմ, քանի վոր այդ թեորիան իր եյությամբ կտրատում եր՝ բուրժուական հեղափոխությունը սոցիալիստականի վերածվելու պրոցեսը, ցատկելով այդ հասունացման անհրաժեշտ ետապի վրայով,—պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի վրայով։

Հեղափոխությունը, ցարիզմի տապալումից հետո, մեզ մի անգամից պրոլետարիատի սոցիալիստական դիկտատուրայի կամ բանվորական կառավարության չհասցրեց, այլ սկզբում՝ պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի, վորը (ինչպես մենք ասացինք տասերորդ գրույցում) որիգինել արտահայտություն գտավ Խորհուրդներում, վորոնք իշխանությունը կամովին հանձնեցին բուրժուազիային։

Յեվ միայն այդ ետապին հասնելուց հետո, բոլշևիզմը սոցիալիստական հեղափոխության լոզունգ առաջադրեց, բայց վոչ թե «բանվորական կառավարության» ձևով, այլ «Բանվորների, Զինվորների և Գյուղացիների Պատգամավորների Խորհուրդների» ձևով, այսինքն այնպիսի ձևով, վորն ամենից շատ եր նպաստում բուրժուական հեղափոխությունը սոցիալիստականի վերածվելուն։

Դա—անգամ չնչին չափով բոլշևիզմի «վերաստատագրինում» չեր, այլ միայն անցումն եր դեպի ստրատեգիական նոր՝ բոլշևիզմի հեղափոխական թեորիային միանգամայն համապատասխան պլանի։

Բոլշևիզմը յերբեք մտադրություն չե ունեցել պերմանենտ հեղափոխության տրոցկիստական թեորիայով սպառազինվելու, քանի վոր այդպիսի զենքով կարելի չեր միայն կործանել հեղափոխությունը, վորը հաղթանականորեն զարգանում եր հենց միայն նրա համար և այն պատճառով, վոր նրան ղեկավարող կուսակցությունը չեր տառապում գյուղացիության դերը թերագնահատելու մեղքով, տրոցկիզմի ու պերմանենտ հեղափոխության նրա թեորիայի այդ հիմնական մեղքով։

———

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽ

(Շարունակություն)

5. ՏԱՍՉՈՐՍԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Կուսակցության տասչորսերորդ համագումարը հրավիրվեց 1925 թ. վերջին։ Նրա նիստերը տևեցին յերկու շաբաթ (դեկտ. 18-ից մինչև 31-ը)։

Համագումարին կուսակցության անդամների թիվը (թեկնածուների հետ միասին) հասնում եր 1,025,000, ըստ վորում 82,4 տոկոսը կազմում եյին բանվորներն ու գյուղացիները (բանվորները 57,4 տոկոս,—իսկ գյուղացիները 25 տոկոս)։ Մնացած 17,6 տոկոսը ծառայողները։

Դաղդյահի բանվորները կազում եյին 38 տոկոսը։

Կուսակցության համագումարում լիովին հաշվի առնվեցին՝ տասներեքերորդ համագումարից հետո ունեցած մեր տնտեսական հաջողությունները։

Նշվեց, վոր յերկրի տնտեսության վերականգնման գործում մենք բացառիկ հաջողություններ ենք ձեռք բերել։

Արդյունաբերության ուժեղ աճումը.—Մեր արդյունաբերության արտադրանքը՝ ըստ առանձին տարիների, տոկոսներով՝ համեմատելով նախապատերազմյան ժամանակի հետ, մենք անմիջապես կնկատենք, թե ինչ մեծ թռիչք ենք կատարել վերջին մեկ և կես տարվա ընթացքում։ Ահա մեր արտադրանքի մի փոքր աղյուսակ.

1921—22	*արտ. տարում՝*	*23*	*տոկոս մինչ պատերազմ.*		
1922—23	*,,*	*31,7*	*,,*	*,,*	*,,*
1923—24	*,,*	*40*	*,,*	*,,*	*,,*
1924—25	*,,*	*72—75*	*,,*	*,,*	*,,*
1925—26	*,,*	*95*	*,,*	*,,*	*,,*

Արդյունաբերության ուժեղ աճման լավագույն որինակ են տալիս մետաղի և ելեքտրոարդյունաբերությունը։ Դրանց համար հարկ յեղավ մի քանի անգամ ընդարձակելու արտադրական ծրագրերը, քանի վոր, ելեքտրոարդյունաբերությունը դեռ 1924—25 թվին անցել եր նախապատերազմյան մակարդակից։

Աշխատանքի արտադրողականությունը հասել եր նախապատերազմյանի 85 տոկոսին, իսկ աշխատավարձը 1925 թ, նոյեմբերին արդեն կազմում եր նախապատերազմյան մակարդակի 96 տոկոս։

Պետական բյուդջեն.—Մեր տնտեսության առողջացման լավագույն ցուցանիշ և հանդիսանում պետական բյուդջեյի արագ աճումը։ Նա կազմում եր.

1921—22	*թվին . . . .*	*1 միլյարդ,*
1922—23	*,, ...*	*1 միլյարդ 333 միլյոն,*
1923—24	*,, ...*	*1 միլյարդ 917 միլյոն,*
1924—25	*,, ...*	*2 միլյարդ 875 միլյոն,*
1925—26	*,, ...*	*4 միլյարդ 039 միլյոն,* [1]

ըստ վորում պետական յեկամուտների ընդհանուր ավելացումը ամբողջ ժամանակ ուղեկցվում եր հարկի ծանրության թեթևացումով՝ գյուղացիության համար։ Այսպես, 1924—25 արտադրական տարում միասնական գյուղատնտեսական հարկն իջեցվեց մինչև 300 միլյոնի՝ փոխարեն 470—միլյոնի, վորը գյուղացիները 1923—24 տարում վճարեցին։

[1] *Մեր բյուջեն կազմում և 5.350.000.000 ռուբ.։*

Գյուղատնտեսության աճումը.—1924—1925 տարում գյուղատնտեսության արտադրողականությունը հասավ նախապատերազմյան չափի 70—75 տոկոսին, իսկ 1925—26 արտադրական տարում նա հասավ 89 տոկոսին։

Տնտեսական զարգացման տեմպի ուժեղացումն անհրաժեշտ է մեր վերջնական հաղթանակի համար.—Մեր տնտեսական վերածննդի տեմպի ուժեղացումը ներկա մոմենտում հատուկ նշանակություն է ստանում։ Պրոլետարիատի հաղթանակը բուրժուազիայի վրա միայն մի երկրում՝ երբեք չի կարող վերջնական համարվել։ Նման երկիրը միշտ էլ գտնվում է իրեն շրջապատող կապիտալիստական պետությունների ռազմական ինտերվենցիայի (միջամտության) վտանգի տակ։ Այդ վտանգը կարող է վոչնչանալ միայն այն դեպքում, երբ այդ երկրների պրոլետարիատը հաղթանակ կտանի իրենց բուրժուազիայի վրա։

Այլ կերպ ասած, նույնիսկ մեր՝ տնտեսապես յետամնաց երկրում մենք կարող էինք (թեև դանդաղորեն) մեր սկսած սոցիալիզմի կառուցումը սեփական ուժերով մինչև վերջը հասցնել (ավարտել), եթե միջազգային բուրժուազիան կարողանար հաշտվել պրոլետարական պետության գոյության հետ և չփորձեր դա ուժով վոչնչացնել։

Մինչև հիմա նրա փորձերը հաջողությամբ չեն պսակվել. դրան խանգարել են այդ երկրներում՝ պատերազմի առաջացրած տնտեսական կյանքի փլուզումը և պրոլետարիատի՝ դրանով պայմանավորված դասակարգային պայքարի սրումը, վոր շատ երկրներում իսկական հեղափոխության ձև ընդունեց։

Բայց արդեն 1920 թվից հեղափոխական շարժման վորոշ թուլացում սկսվեց։ Հեղափոխական շարժման վերջին բռնկումը տեղի ունեցավ 1923 թ. աշնանը՝ Գերմանիայում։

Յերկու ստաբիլիզացիա.—Դրան զուգնթաց, կապիտալիզմին հաջողվեց վոտքի կանգնել պատերազմի ամենածանր հետևանքներից և վորոշ չափով ամրացնել իր դրությունը։

Կապիտալիզմի ստաբիլիզացիայի այդ վերականգնումը կարող է միայն ժամանակավոր ու մասնակի լինել։ Ինեբորդ գրույցում մենք բացատրեցինք, թե ինչու ընկ. Լենինը իմպերիալիզմը մեռնող կապիտալիզմ անվանեց։ Կապիտալիստական հասարակակարգի անխուսափելի կործանման պատճառներից և վոչ մեկը չի վերացել։ Կապիտալիզմի այսպես կոչված ներկա «ստաբիլիզացիան», այսինքն նրա վորոշ ամրացումը, հանդիսանում է անհուսալի հիվանդ որգանիզմի դրության միայն ժամանակավոր բարելավում։

Այնուամենայնիվ խոշոր սխալ կլիներ, եթե մենք, կոմիունիստներս, հարկավոր չափով հաշվի չառնեյինք այդ «ստաբիլիզացիան»։ Չե վոր դա հաճենայն դեպս կապիտալիզմի համար դադար է նշանակում, նրա կործանման հետաձգումն է, և հետևաբար յերկարացնում է այն ժամանակամիջոցը, վորի ընթացքում մեր խորհրդային հանրապետությունը պիտի ապրի կապիտալիստական ողակման մեջ։

Յև եթե մեր թշնամիները կարգի չեն բերել իրենց տնտեսությունը և սկսել են այն զարգացնել, ապա մենք պիտի աշխատենք մեր տնտեսությունը ավելի ևս արագությամբ զարգացնել, մենք պիտի նրանց կապիտալիստական «ստաբիլիզացիային» հակադրենք մեր խորհրդային տնտեսության ստաբիլիզացիան, ուժեղացնենք մեր տնտեսական և, սրա հետ միասին, քաղաքական կարողությունը։

Դրա համար անհրաժեշտ է, վոր մեր սոցիալիստական խոշոր արդյունաբերությունը նոր տեխնիկական հիմքերի վրա դարձյալ։ Մենք համարյա հասել ենք նախա-

պատերազմյան աստիճանին։ Արդյունաբերության հետագա ընդարձակման համար, ներկայումս անհրաժեշտ է նոր գործարաններ և ֆաբրիկաներ կառուցել, նոր կատարելագործված մեքենաներ և դյազգահներ ունենալ, արդյունաբերական ձեռնարկությունների մաշված հին կահավորությունը փոխել նորով։

Այստեղ դրա համար պետք են խոշոր դումարներ. այդ դումարները փոխառության միջոցով ստանալ մենք չենք կարող. հետևաբար անհրաժեշտ է այդ դումարները յերկրի ներսում գտնել, այն ձեռք բերել՝ ազգային տնտեսության յեկամուտն ավելացնելու միջոցով։

Իսկ ավելացնել յերկրի յեկամուտը—այդ նշանակում է ավելացնել գյուղական տնտեսության յեկամուտը, վորի համար անհրաժեշտ է վերացնել այն արգելակները, վորոնք վորպես «ռազմական կոմունիզմի» մնացորդներ, խանգարում են նրա զարգացմանը։

Գյուղական տնտեսության ամրացման ուժեղացման միջոցներ.—Ահա թե ինչու 1925 թ. գարնանը գումարված տասչորսերորդ կուսակոնֆերենցիան արտահայտվեց հօգուտ հողը կապալով տալու և գյուղատնտեսության մեջ վարձու աշխատանք գործադրելու իրավունքների լայնացման, իսկ խորհուրդների համագումարն այդ ձեռնարկումները անցկացրեց որենսդրական կարգով։

Առաջին հայացքից կարող է թվալ, վոր այդ ձեռնարկումներից կոգովեն միայն գյուղական կուլակները, քանի վոր հենց նրանք են կազմում գյուղացիների՝ տնտեսապես ուժեղ խավը, վորը շահագրգռված է կապալի ու աշխատավորներ վարձելու հարցերում։

Վոր կուլակը դրանից կոգովի, այդ ճիշտ է։ Բայց բոլորովին ճիշտ չե, վոր դրանից միմիայն կուլակը կոգովի։

Դրանից կոգովի և այն սակավագոր ու լծկան չունեղոց գյուղացին, վորը առաջ էլ եր իր հողը կապալով տալիս, քանի վոր հիմա, հողը կապալով տալու արգելքների վերացումով, նա իր հողը շատ ավելի ձեռնտու պայմաններով կապալով կտա, քան առաջ։

Կոգովի նաև բատրակը կամ կիսաբատրակը, վորը առաջ էլ եր բանվորական ուժը ծախում, քանի վոր հիմա, վարձու աշխատանքից ոգտվելու արգելանքի վերացումով նա կարող է իր բանվորական ուժը թանգ ծախել և անչափ շահագործումից պաշտպանված կլինի աշխատանքի պաշտպանության որենադրություններով։

Բայց ամենագլխավորը—այդ այն է, վոր այդ ձեռնարկումներից կոգովի ամբողջ յերկիրն, քանի վոր գյուղական տնտեսության արագ աճումից ու նրա ապրանքայնացման զարգացումից է կախված կուտակման աճումը և մեր սոցիալիստական խոշոր արդյունաբերության կարողության ուժեղացումը, արդյունաբերության, վորն արագությամբ կսկսի գյուղացիությանը մատակարարել տնտեսավարության համար բոլոր անհրաժեշտ ապրանքները։

Հետևաբար, XIV կոնֆերենցիան իր ձեռնարկումներով (վորոնք «ռազմական կոմունիզմի» մնացորդների վերացման և ապրանքաշրջանառության ծավալման նպատակն են հետապնդում գյուղում) վերջին հաշվով նպատակ ուներ տնտեսական միության ամրացումը միջակ գյուղացիության հետ։

«Դասակարգերի տեսակետից,—ընկ. Բուխարինի ճիշտ նկատումով,—այդ միջակի հետ դաշնակցելը հաշիվ եր»։ Պարզ է վոր այդ նպատակին հասնելու համար մենք չպիտի կանգ առնենք այն բանի առաջ, վոր մեր ձեռնարկումներից ժամանակավորապես ոգտել կարող են գյուղական կուլակները, ինչպես 1921 թ. նեպը մտցնելիս, մենք կանգ չառանք այն նկատառումների առաջ, վոր յերկրի

տնտեսական վերածնունդից կոդավեն վոչ միայն բանվորները ու դյուղացիները, այլև նեպմանները։

Ամման դժվարություններ.—Կուսակցության կիրառած միջոցները՝ մեր տնտեսության աճումն ուժեղացնելու համար՝ ուղեկցվում են մի շարք խոշոր դժվարություններով.—մեր կենտրոնական տնտեսական որգաններբ խոշոր սխալներ են կատարել, վորի հետևանքով նախանցյալ բերքին դյուղացիությունից շատ ավելի քիչ հաց գնեցինք, քան մենք յենթադրում էյինք։ Դա այն հետևանքն ունեցավ վոր 1924—25 արտադրական տարին պասսիվ բալանսով վերջացավ, այսինքն այդ տարի արտասահմանում մենք ավելի մեծ գումարի ապրանք գնեցինք, քան ծախեցինք այնտեղ։ Դրա հետևանքով, մեր կանխիկ վոսկին զգալիորեն պակասեց և վտանգի տակ դրեց մեր չերվոնեցի կայունությունը։ Յերկրորդ՝ դա մեզ ստիպեց վերանայելու արդյունաբերության ծավալման նախնական մեր պլանները և մեծ չափով կրճատել դրանք։

Յեթե մենք այդ բոլորին ավելացնենք, վոր դյուղում մեր սոցիալիստական կուտակումն ուժեղացնելու համար անհրաժեշտ ապրանքաշրջանառության ծավալումն չեր կարող դյուղի շերտավորման վորոշ ուժեղացում և կուլակության ժամանակավոր ամրացում առաջ չբերել, ապա մեզ համար պարզ կդառնա, վոր այդ դժվարությունները չեյին կարող վորոշ իրարանցում չառաջացնել մեր բանվորության ավելի անկայուն խավերում։

Յեվ դա իր հերթին, մեր կուսակցության շարքերում, թեքումներ առաջ բերեց։ Նրանում առաջացավ մի թեքում, վոր թերագնահատում էր սոցիալիստական շինարարության հաջողությունները մեր յերկրում և դրանով իսկ խախտում պրոլետարիատի հավատը դեպի այդ շինարարության հետագա հաջողությունները։

Տասնորսերորդ համագումարը, հասկանալով այդ թեքման վտանգը, վճռական պայքար տարավ նրա դեմ։ Այդ անհրաժեշտ էր անել, վորպեսզի սխալ ճանապարհի վրա վոտք դրած ընկերներին խիստ դատապարտելով, հենց իր սաղմում վոչնչացներ վտանգը։

Ոպպոզիցիան՝ տասնորսերորդ համագումարում.—Համագումարի ժամանակի մեծ մասը խլեց դիսկուսիան, ոպպոզիցիայի հետ ունեցած վեճը. ոպպոզիցիային գլխավորում էյին Զինովյևն ու Կամենյևը։

Անդամների թվով, ոպպոզիցիան կազմում էր համագումարի մոտավորապես տասերորդ մասը և ներկայացնում էր համարյա բացառապես Լենինգրադի պատգամավորությունը։

Բայց համագումարի այդ տասերորդ մասն իրենից չէր ներկայացնում կուսակցության տասերորդ մասը, քանի վոր համագումարից հետո Լենինգրադի կազմակերպությունը միաձայն դատապարտեց իր պատգամավորության վարքագիծը և անվերապահորեն միացավ համագումարի վորոշումներին։

Հետևաբար, ոպպոզիցիան արտահայտվում էր Լենինգրադի ղեկավար աշխատողների չափազանց նոսր շերտի կարծիքը, այնպիսի ընկերների, վորոնք իրենց ղեկավարության հատուկ մեթոդների հետևանքով կտրվել էյին Լենինգրադի կազմակերպության կուսակցականների ընդհանուր մասսայից։

Համագումարը վճռականորեն դատապարտեց ոպպոզիցիայի հայացքները, նրանում իրավացիորեն նկատելով «մեր յերկրի սոցիալիստական շինարարության գործին հավատ չընծայելը» և գտավ, վոր «անհրաժեշտ է դատապարտական լայն աշխատանք» տանել՝ հաղթահարելու համար այդ հայացքները, վորոնք խեղաթյուրում էյին Լենինի ուսմունքը։

Մեր յերկրում սոցիալիզմի կառուցումն ավարտելու հնարավորության մասին.—Մեր յերկրում սոցիալիզմի կառուցումն ավարտելու հարցի ճիշտ վորոշումը դժվարանում եր, վորովհետև ոպպոզիցիան դա խառնում եր։

Ոպպոզիցիան այդ հարցը սովորաբար այս կերպ եր դնում. հնարավո՞ր և արդյոք սոցիալիզմի վերջնական հաղթանակը մեր յերկրում։

Քիչ վերև մենք արդեն տեսանք, վոր վոչ մի դեպքում չի կարելի մեր հաղթանակը բուրժուազիայի վրա վերջնական համարել, քանի վոր միջազգային բուրժուազիան նորից կփորձի ռազմական ինտերվենցիայի միջոցով տապալել Խորհրդային Իշխանությունը և մենք պատրաստ պիտի լինենք բուրժուազիայի այդպիսի փորձին հակահարված տալու և վոչ թե մեզ որորենք մեր անհաղթելիության հավատով։

Բայց հարցի էությունը դրա մեջ չե, և վորպեսզի պարզենք այդ, հարցը պիտի հետևյալ ձևով դնել. հնարավո՞ր և արդյոք սոցիալիզմի կառուցման ավարտումը մեր յերկրում, չնայած մեր յերկրի անտեսական ու տեխնիքական յետամնացությանը։

Կենտրոնական Կոմիտեի Քաղբյուրոյի նիստերից մեկում այդ ձևով դրված հարցին ընկ. Զինովյևը և Կամենևը բացասական պատասխան տվին։

Նման պատասխանը ամենավճռական կերպով հակասում է Իլյիչի պատգամներին. Իլյիչն «Կոոպերացիայի մասին» իր վերջին հոդվածում գրում է, վոր յեթե մենք մի կողմ թողնենք միջազգային հարաբերությունները, այսինքն համաշխարհային բուրժուազիայի հետ ընդհարվելու անխուսափելիությունը, ապա մենք մեր հիմնական անելիքը պիտի համարենք բնակչության կոոպերացման աշխատանքը նրա՛ համար, վորպեսզի լիովին սոցիալիստական յերկիր դառնանք»։ Բայց դրա համար, հասկանալի

և ինարկե, անհրաժեշտ և պատշաճ բարձրության վրա դնել մեր սոցիալիստական արդյունաբերությունը։

Այլ կերպ ասած, մենք չունենք և չենք էլ կարող անհողդողդ հավատ ունենալ, վոր գալիք ռազմական ընդհարմանը կապիտալիստական պետությունների հետ, մենք հաղթող կհանդիսանանք, բայց, մյուս կողմից, մենք չունենք և չենք էլ կարող կասկած ունենալ այն մասին, վոր մենք սոցիալիզմ կառուցում ենք և այդ կառուցումը կավարտենք, հաղթահարելով բոլոր այն դժվարությունները, վոր բղխում են մեր յետամնացությունից։

Մեր տնտեսական կառուցվածքի մասին.—Յեթե մենք, ոպպոզիցիայի կարծիքով, չենք կարող ավարտել սոցիալիզմի կառուցումը, ապա ել ինչո՞վ ենք զբաղված մենք հիմա։

Այդ դեպքում պատասխանն ինքնին պարզ է. մենք կառուցում ենք պետական սոցիալիզմ, վորից՝ միջազգային պրոլետարական հեղափոխության հաղթանակից հետո՝ մենք կանցնենք սոցիալիզմի շինարարությանը։

Ցավ իսկապես, ոպպոզիցիան ձգտում հայտնաբերեց մեր եկոնոմիական կառուցվածքն՝ ամբողջությամբ վերցրած՝ բնորոշելու իբրև պետական կապիտալիստական կառուցվածք։

Նեպի էությունը լուսաբանելով, մենք ասացինք, թե ինչ նպատակով և ինչ չափով կուսակցությունը թույլատրեց կապիտալիզմի զարգացումը մեր յերկրում։

«Պարենահարկի մասին» իր բրոշյուրում ընկ. Լենինը հիշատակում է այն, ինչ նա գրել եր դեռ 1918 թ. մեր տնտեսական կառուցվածքի մասին. նա դեռ այն ժամանակ այդ կառուցվածքում տարբերում եր հասարակական-տնտեսական հարաբերությունների հինգ յեղանակներ, այն է՝

1) Նահապետական, այսինքն մեծ մասամբ նատուրալ, գյուղացիական տնտեսություն։

2) Մանր-ապրանքային արտադրություն (սրան են վերաբերում գյուղացիության մեծ մասը, որոնք հացահատիկ են վաճառում)։

3) Մանավոր-տնտեսական կապիտալիզմ։

4) Պետական կապիտալիզմ։

5) Սոցիալիզմ։

Այդ կառուցվածքը, ուր իրար հետ հյուսվում են հաբաբերությունների այստեղ թված հինգ յեղանակները, Իլյիչը անվանեց դեպի սոցիալիզմը տանող կառուցվածք։

Մեր եկոնոմիական կառուցվածքը ամբողջությամբ համարել պետական-կապիտալիստական, այդ նշանակում է չորրորդ յեղանակին բացառիկ նշանակություն տալ։

Վորովհետև այդ յեղանակը գերակշռող չի հանդիսանում, քանի վոր թե զբաղված մարդկանց թվով և թե արտադրանքի քանակով գերակշռող և հանդիսանում յերկրորդը, ուստի և ոպոզիցիան վերջինս համարում է դեկավարող և այդ պատճառով էլ իրմով բոլոր հինգ յեղանակներն էլ ընդհանուր առմամբ գունավորող։

Բայց այդ հակասում է այն ամենին, ինչ գրում եր Իլյիչը վոչ միայն իր կյանքի վերջում, այլ և նույնիսկ նեպի կիրառման հենց սկզբում։ Նա միշտ շեշտում եր, վոր հրամանատարական բարձունքները, այսինքն խոշոր ձեռնարկությունների մեծամասնությունը, տրանսպորտը և արտաքին առևտուրը, մենք պահում ենք մեր ձեռքում։

«Կոնցեսիաները սարսափելի չեն,—ասում եր Լենինը «Պարենհարկի մասին» ված իր դեկուցման մեջ 1921 թ. ապրիլին,—յեթե մենք կոնցեսիոներներին տալիս ենք մի քանի գործարան, մեծամասնությունը պահելով մեր ձեռքում, այդ սարսափելի չե։ Իհարկե, բոլորովին անհեթեթ կլիներ, յեթե խորհրդային իշխանությունը կոնցեսիայով բաշխեր մեծամասնությունն այն ամենի, ինչը իրեն է պատկանում»։

Մեր պետական արդյունաբերությունը. — Այդպիսով, ոպոզիցիայի համար միայն մի յելք է մնում. հայտարարել պետական-կապիտալիստական և այն հրամանատարական բարձունքները, վոր մնում են պրոլետարական պետության ձեռքում։

Բայց ամեն տեսակի կապիտալիզմ, դրանց թվում և պետականը, իր իսկ բնորոշումով յենթադրում է յերկու դասակարգերի ներկայություն—կապիտալիստների և վարձու բանվորների։

Կուսակցության տասնըմեկերորդ համագումարում պրոֆմիությունների դերի ու անելիքների առթիվ ընդունված բանաձևում ընկ. Լենինը խոսելով կապիտալիզմի պետական կարգավորման մասին, շեշտում է, վոր անգամ այդպիսի կարգավորման նույնիսկ ամբողջական հաջողության դեպքում աշխատանքի ու կապիտալի դասակարգային հակադրությունը անպայման մնում է։

Հետևաբար մեր պետական ձեռնարկությունները համարել պետական կապիտալիստական, նշանակում է հանդել նրան, վոր դասակարգային հակադիր շահեր կան այդ ձեռնարկություններում զբաղված բանվորների և խորհրդային պետության (վորը սեփականատերն է հանդիսանում այդ ձեռնարկությունների) միջև, այլ կերպ ասած, հերքել մեր պետության պրոլետարական բնույթը, և կամ պետական կապիտալիզմի մի ուրիշ տեսակի, վոչ լենինյան ըմբռնման հանգել։

Վերջապես, Իլյիչը միշտ և ամենուրեք մեր պետական արդյունաբերությունը սոցիալիստական եր անվանում և իր սխեմայում մեր այդ արդյունաբերության մեջ տեսնում եր հինգերորդ (սոցիալիստական) ձևը (յեղանակը), իսկ «Կոոպերացիայի մասին» իր հոդվածում, նա մեր պետական ձեռնարկությունները բնորոշեց իբրև «հետևողական-սոցիալիստական տիպի» ձեռնարկություններ։

Կոոպերացիա. — Պետական արդյունաբերությունն իբրև պետական կապիտալիստական արդյունաբերություն բնորոշելու ձգտումը ոպպոզիցիային հասցրեց մինչ այն տեղ, որ նա սկսեց հեռանալ կոոպերացիայի լենինյան ըմբռնումից, որի (կոոպերացիայի) աճումը, Իլյիչի կարծիքով, նույնն է թե սոցիալիզմի աճումը։ Իլյիչը կոոպերացիայի մեջ տեսնում էր սոցիալիստական արդյունաբերության և մանր-գյուղացիական անտեսության միջև դաշինք ստեղծելու և միջակ գյուղացիական մասսան սոցիալիզմի շինարարությանը մասնակից անելու միջոց, այլ կերպ ասած, կոոպերացիան Լենինի կարծիքով հանդիսանում է այն լծակը, որի ոգնությամբ մեր եկոնոմիական կառուցվածքի յերկրորդ յեղանակը — ապրանքային՝ պարզ անտեսությունը—կապիտալիզմը մի կողմ թողնելով անցնում է զարգացման սոցիալիստական ուղիի վրա։

Բայց յեթե պետական ձեռնարկությունները դիտենք որպես պետական կապիտալիստական ձեռնարկություններ, ապա, իհարկե, կոոպերացիայի աճման մեջ (կոոպերացիայի, որ այդ ձեռնարկությունները կապում է գյուղացիական անտեսության հետ) չի կարելի սոցիալիզմի աճում տեսնել, ուստի և ոպպոզիցիան կոոպերացիան ևս դիտում է որպես պետական կապիտալիզմի ձևերից մեկը։

Նեպ.—Ոպպոզիցիայի բոլոր հայացքների հետ սերտորեն կապված է նեպի նրա ըմբռնումը—որպես տևական, մինչև հիմա յել շարունակվող նահանջի։

Ոպպոզիցիան այդ հարցումն էլ շեղվում է Իլյիչի ու կուսակցության հայացքներից, աչքաթող անելով, որ մենք արդեն անցել ենք սոցիալիստական շինարարության, այսինքն անցել ենք հարձակման՝ նեպի հիման վրա, մեր յեռւում թողնելով նոր անտեսական քաղաքականության զարգացման անցած յերկու ետապները։

Այդպես էլ պիտի մտածեր ոպպոզիցիան, որը չի հավատում սոցիալիստական շինարարության հնարավորությանը՝ մինչև պրոլետարիատի համաշխարհային հաղթանակը, և դրա համար էլ նեպը դիտում է իբրև մի տակտիկա, որի նպատակն է, ինչ էլ որ լինի, գոյությունն պահպանել, մինչև մյուս յերկրներում տեղի կունենա հեղափոխություն։

Միջակին թերագնահատելը.—*Ոպպոզիցիայի այս բոլոր հայացքներն ամբողջովին վերցրած, հանգում են նրան, որ կարող է վտանգ սպառնալ՝ շեղվելու Իլյիչի պատգամից—սերտ կապ հաստատել միջակ գյուղացիության հետ՝ սոցիալիզմի շինարարությանը նրան մասնակից անելու համար։ Ով չի հավատում այդպիսի շինարարության հնարավորությանը, նա, բնականաբար, աչքաթող է անում և թերագնահատում է միջակի վրա բռնած կուրսի նշանակությունը։*

Ոպպոզիցիայի կողմից միջակին թերագնահատելը արտահայտվեց նախ նրանում, որ նա փորձ արեց, որ կուսակցությունը «միջակի հետ ամուր դաշինք ունենալու լոզունգից վերադառնա միջակին չեզոքացնելու հնացած լոզունգին», այսինքն 1918 թ. ամրան լոզունգին, յերբ կառավարությունը ձգտում էր հասնել միայն այն վիճակին, որ բուրժուազիայի դեմ մղած իր կռվում միջակը մի կողմը կանգնի և չմասնակցի, յերկրորդ՝ կուլակային վտանգի դերագնահատման մեջ, որի դեմ բարձրացրած աղմուկով մթագնվում էր միջակի հետ սերտ դաշինք ունենալու հիմնական խնդիրը՝ ինչպես սոցիալիզմի շինարարության, նույնպես և նրան կուլակությունից կորելու համար։

Տասչորսերորդ համագումարը դատապարտեց միջակին (որ հողագործության կենտրոնական դեմքն է կազմում) թերագնահատելու այդ թեքումը։ Նա դատապարտեց նաև կուլակային վտանգը թերագնահատելու թեքումը։

Բայց, համագումարի կարծիքով—քանի վոր կուսակցությունն ավելի շատ պատրաստված է կուլակային վտանգը թերագնահատելու վտանգի դեմ պայքարելու, քան թե նրա գերագնահատման և միջակին թերագնահատելու դեմ, ուստի և համագումարը կուսակցությանը կոչ է անում ուշադրությունը կենտրոնացնել այդ երկրորդ (գերագնահատելու) թեքման դեմ պայքարելու վրա։

Ոպպոզիցիայի կազմակերպչական խղեյաները.—Կուսակցության աճման հարցում տասչորսերորդ համագումարը հատատեց կուսակցության կադրերի բանվորականացման գծի շարունակման անհրաժեշտությունը, բայց դատապարտեց ոպպոզիցիայի այն առաջարկը, վոր կուսակցության շարքերը պետք է չափից դուրս լայնացնել պրոլետարիատի նոր այնպիսի խավերի հաշվին, վորոնք դեռ չեն անցել պրոֆմիությունների և այլ անկուսակցական բանվորական կազմակերպությունների անհրաժեշտ դպրոցը։

Համագումարը նույնպես չընդունեց ոպպոզիցիայի լոզունգը՝ բոլոր նախկին խմբավորումների ուժերին աշխատանքի լծելու մասին, նմանապես՝ դիսկուսիաների ազատության պահանջը։

Ոպպոզիցիայի կազմակերպչական հայացքների, ինչպես և նրա ամբողջ վարքագծի մեջ կուսակցության միասնականությանը սպառնացող վտանգ նկատելով, համագումարը հանձնարարեց նորընտիր կենտկոմին «վճռական պայքար տանել կուսակցության միասնականությունը խախտող բոլոր փորձերի դեմ»։

Տասչորսերորդ համագումարի վորոշումները).*—Տնտեսական շինարարության հարցերում համագումարը տվեց

*) Ավելի մանրամասն՝ տես «Ինչ վորոշեց կուսակցության XIV համագումարը» գրքույկը։ (ՄՍՀՄ ԺողՔ կենտր. հրատար. Մոսկվա, 1926.) Համագումարի բանաձևերն ևս հայերեն հրատարակված են (Յերևան, Պետհրատ)։

մի շարք դիրեկտիվներ, վոր վերաբերում են յերկրի արտադրական ուժերի հետագա վերելքին՝ սոցիալիստական ելեմենտների հաղթանակը կապիտալիստականի վրա ապահովելու գծով, ինչպես և Յորհրդային միության անհետ ականի անկախությունը ապահովելու գծով, վորի համար անհրաժեշտ է յերկրի ինդուստրացման կուրս բռնել՝ ագրարային-արդյունաբերական յերկիրը արդյունաբերական-ագրարային յերկիր դարձնելու համար։

Յորհրդային շինարարության հարցերում համագումարը վորոշեց շարունակել խորհուրդների, պրոֆմիությունների և կոոպերացիայի աշխուժացման վրա բռնած կուրսը, իսկ դյուղում, բացի այդ, չքավորական խմբակների կազմակերպման միջոցով, բարձրացնել չքավորական խավերի ակտիվությունը՝ այդ խմբակներին մասնակից անելու կուլակության դեմ կազմակերպված դասակարգային հակահարվածին և չքավորին դարձնելու հենակետը կուսակցության քաղաքականության, վորը նպատակ ունի միջակին պրոլետարիատի շուրջը համախմբելու։

Կուսակցության նոր անունը.—Վերջապես, համագումարը վորոշեց մեր կուսակցությունը վերանվանել Համամիութենական Կոմունիստական Կուսակցություն (բոլշևիկների)։

Նախկին անունը — Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցություն— արդեն հնացել եր, վորովհետև ՌՍՖՍՀ այլևս ամբողջ յերկրի անունը չե, այլ Յորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության միայն մի մասի անունը, թեև կուսակցության ռուսական մասը քանակով գերակշռող և հանդիսանում, այնուամենայնիվ կուսակցությունը «Ռուսաստանի» կոչելը ճիշտ չե, քանի վոր դա հակասում է մեր Միության բոլոր ազգությունների լրիվ իրավահավասարությունների արդեն կենսագործված իդեային։

6. ՏԱՍՆՈՐՍԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ ՀԵՏՈ.

Նոր ոպպոզիցիան եւ կուսակցության միասնականությունը.—Տասնորսերորդ համագումարի կողմից դատապարտված, նոր ոպպոզիցիան համագումարից հետո չդադարեցրեց իր պայքարը կուսակցության մեծամասնության դեմ։

Ամբավորումների և դիսկուսիայի ազատությունն պահանջելով, նա այդ լոզունգի տակ միացավ բոլոր նախկին ոպպոզիցիանների՝ ճնացորդներին, ոպպոզիցիանների, որոնց իդեյաները խստորեն դատապարտված էին կուսակցության կողմից դեռ Իլյիչի կենդանության որով։

Տասնորսերորդ համագումարի վորոշումներին համապատասխան գործող, կուսակցության միասնականությունն ու մոնոլիտությունը պաշտպանող Կենտկոմի դեմ բլոկ կացմվեց բոլոր նրանցից, ովքեր դժգոհ էին կուսակցության մեծամասնության կիրառած լենինյան հաստատուն գծից։

Քանի վոր նոր ոպպոզիցիան մի շարք հարցերում դլորվեց տրոցկիզմի դիրքերը, ապա վոչինչ զարմանալի չկա, վոր այդ բլոկի գլուխը հայտնվեց ընկ Տրոցկին։

Մոտիկ անցյալում, տրոցկիստական ոպպոզիցիայի դեմ պայքարելու միջոցին, ընկ. Զինովյևը հայտարարեց, վոր կուսակցության մեջ ֆրակցիաներ ու խմբավորումներ թույլատրելու ժամանակը դեռ «չի եկել և ընդհանրապես չի գա՝ պրոլետարական դիկտատուրայի շրջանում», իսկ հիմա նոր ոպպոզիցիայի առաջնորդները՝ կուսակցության մոնոլիտության լենինյան հին լոզունգի վոխարեն խմբավորումների ազատության պահանջ առաջադրեցին, այլ կերպ ասած, յուրացրին տրոցկիստական հին ֆորմուլան՝ «կուսակցությունն իբրև ֆրակցիաների ամբողջություն»։

Իսկ նոր-ոպպոզիցիայի անդամների մի մասը նույնիսկ կանգ չառավ կուսակցության դիսցիպլինան ծանր կերպով խախտելու առաջ, փորձելով անլեգալ ֆրակցիա կազմակերպել հին պադպոլյ կազմակերպության ձևով, միայն վոչ թե ցարիզմի դեմ պայքարելու նպատակով, այլ իր իսկ սեփական կուսակցության դեմ։ Իրենց նպատակն իրագործելու համար ոպպոզիցիայի այդ ընկերները ոգտագործեցին Կոմինտերնի Գործկոմի ապարատը, վորի գլուխն եր այդ ժամանակ կանգնած ընկ. Զինովյևը։

Կենտկոմի և Կ. վ. Հ. հուլիսյան պլենումը քննելով այդ գործը, վորոշեց Քաղբյուրոյից հեռացնել ընկ. Զինովյևին, Կենտկոմի թեկնածուությունից հեռացնել և յերկու տարով պատասխանատու աշխատանքի չդնել ընկ. Կամենևին, վորը պադպոլյ ժողովում Կենտկոմի դեմ եր դուրս յեկել, նմանապես զանազան պատժի յենթարկեց կուսակցության մի շարք այլ անդամներին, վորոնք դեկավարում եյին այդ պատպոլյ կազմակերպության աշխատանքը։

Յերկրի ինդուստրացումը.—Միայն կազմակերպչական հարցերում չե, վոր նոր ոպպոզիցիան տրոցկիզմի դիրքը մտավ։

Արդեն տասնորսերորդ համագումարում կուսակցությունը նշեց, վոր հիմնական սխալները, վորոնց հետևանքով ոպպոզիցիան մի շարք հարցերում շեղվել է լենինյան հայացքից, հանդիսանում է միջակ գյուղացու դերի թերագնահատումը սոցիալիզմի շինարարության մեջ, պրոլետարիատի ու միջակ գյուղացիության սերտ միության նշանակության թերագնահատումը՝ պրոլետարիատի դիկտատուրայի պահպանման ու ամրացման գործում։

Յերկրի ինդուստրացումը կիրառելու մեթոդների հարցի շուրջը կուսակցության շարքերում առաջացած տարաձայնությունների մեջ վերին աստիճանի վնասեց

կերպով հայտնաբերվեց, որ նոր ոպպոզիցիան արդեն ընկել է տրոցկիզմի գիրկը և յուրացրել տրոցկիզմի հիմնական, ուրույն հատկությունը, այնե՝ նա թերագնահատում է գյուղացիության՝ որպես պրոլետարիատի դաշնակցի դերը։

Իլյիչը ինդուստրացման մասին.— Ցերկրի ինդուստրացման մասին կենտկոմի ու կուսակցության մեծամասնության տեսակետը միանգամայն համապատասխանում է Իլյիչի հայացքներին, որ նա արտահայտել է 1923 թ. գրած իր հոդվածում— «Լավե քիչ, բայց լավ»։

Այդ հոդվածում Իլյիչն ասում է, առաջինը, որ «մենք պիտի աշխատենք կառուցել մի այնպիսի պետություն, որտեղ բանվորները պահպանեն իրենց դեկավարությունը գյուղացիության նկատմամբ և գյուղացիության վստահությունն իրենց նկատմամբ», իսկ յերկրորդ, որ «յեթե մենք պահպանենք բանվոր դասակարգի դեկավարությունը գյուղացիության նկատմամբ, ապա մենք հնարավորություն կունենանք մեր պետության մեջ տնտեսության մեծագույն ու մեծագույն խնայողության միջոցով հասնել այն վիճակին, որպեսզի ամեն մի չնչին խնայողությունը տրվի մեր խոշոր մեքենայական ինդուստրիայի զարգացման համար, ելեքտրաֆիկացիայի, հիդրոտորֆի զարգացման համար, վալխովստրոյի և այլն կառուցման համար»։

Ընկ. Լենինի այս խոսքերում չափազանց սեղմ ձևով արտահայտված է կենտկոմի ամբողջ ծրագիրը՝ ինդուստրացման կիրառման հարցում. ինդուստրացումը անհրաժեշտ է մեզ նաև նրա համար, որպեսզի բուրժուական յերկրներից տնտեսապես անկախ յերկիր դառնանք, և նրա համար, որպեսզի «լրիվ սոցիալիստական» յերկիր դառնանք. այդ հնարավոր է միայն զարգացած խոշոր մեքենայական արդյունաբերության հիման վրա։

Կուսակցության Կենտկոմի տեսակետը.—Մեր կուսակցության կենտկոմը կանգնած է այն տեսակետի վրա, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը, սեփականազրկելով կալվածատերերին ու կապիտալիստներին, ազգայնացնելով բանկերը, արդյունաբերությունն ու տրանսպորտը, վոչնչացնելով նախկին կառավարությունների պետական հսկայական պարտքերը և արտաքին առևտրի մենաշնորհ հաստատելով, յերկրի ինդուստրացման համար անհրաժեշտ միջոցներ կուտակելու նոր հնարավորություն և ստեղծել սեփական ջանքերով, առանց արտաքին խոշոր փոխառությունների, որ մեզ չեն տալիս և չեն էլ տա։

Պրոլետարական հեղափոխության ստեղծած՝ կուտակման այդ հնարավորությունները ոգտագործելու նպատակով կենտկոմի ապրիլյան (1926 թ.) պլենումը վորոշեց մեր տնտեսության մեջ, խիստ կամ ինչպես մի անգամ արտահայտվեց ընկ. Ստալինը, խնայողության «անխիղճ» ռեժիմ մտցնել, վորն, ինչպես մենք տեսանք, միանգամայն համապատասխանում է Իլյիչի պատգամին— միջոցներ կուտակելու մեր ինդուստրիայի զարգացման համար «տնտեսության մեծագույն ու մեծագույն խնայողության միջոցով», սակայն այն պայմանով, որ պահպանված լինի գյուղացիության մասսաների վստահությունը դեպի պրոլետարիատը և պրոլետարիատի դեկավարությունը՝ գյուղացիական այդ մասսաների նկատմամբ։

Կենտկոմի այդ տեսակետը—կուսակցության մեջ դիմադրության հանդիպեց յերկու կողմից։

Ընկեր Ձանիբեկի տեսակետը.—Մի կողմից՝ նշմարվեց մի հոսանք (ճիշտ է, չափազանց չնչին կողմնակիցներ ունեցող), վորն առաջարկում է մոտակա մի շարք տարիներում վոչ միայն չավելացնել արդյունաբերության զարգացման համար հատկացվող դումարները, այլև ինդուս-

արիային հատկացված միջոցների մի մասը, բոլոր նոր խնայողությունների հետ միասին, գործադրել գյուղատնտեսության զարգացման տեմպն ուժեղացնելու համար, և միայն հետո, երբ այդպիսի միջոցներով գյուղատնտեսությունը պատշաճ բարձրության վրա կդրվի, սկսել գյուղատնտեսության մեջ կուտակված միջոցները խոշոր գումարներով փոխադրել արդյունաբերության մեջ։

Ինդուստրիացման այդպիսի մեթոդի կողմնակիցների գլուխն է կանգնած ընկ. Շանինը, որին շատ մոտ հարում է ընկ. Սոկոլնիկովը։

Այդ մեթոդը ոչ միայն ինդուստրացման տապալում է նշանակում, այլ և անպայման վտանգ է ստեղծում բանվոր դասակարգին՝ գյուղացիության նկատմամբ ունեցած դեկավարությունը կորցնելու, վտանգ է ստեղծում պրոլետարիատի դիկտատուրային։

Իսկապես, ներկա մեր տնտեսական դրության գլխավոր դժվարություններն առաջանում են «ապրանքային սով»-ով։ Մեր արդյունաբերությունը, իր ոչ բավարար զարգացման հետևանքով շատ ավելի քիչ ապրանք է արտադրում, քան այդ պետք է գյուղացուն։ Գյուղացին իր տնտեսության պրոդուկտների փոխարեն արդյունաբերությունից չի կարող ստանալ իրեն անհրաժեշտ բոլոր իրերը, կամ, ինչպես ասում են այլ կերպ, մեր ինդուստրիան չի կարող բավարարել արդյունաբերական ապրանքների վերաբերմամբ գյուղացու ունեցած գնողունակ պահանջը։

Իսկ եթե, ըստ ընկ. Շանինի ու նրա կողմնակիցների առաջարկած դեղատոմսի, դեռ մի քանի տարվա ընթացքում ի հաշիվ ինդուստրիայի աճման ուժեղացնենք գյուղատնտեսության աճումը և հետևաբար ուժեղացնենք յերկրում «ապրանքային սովը», ապա գյուղի պահանջը արդյունաբերական ապրանքների նկատմամբ այնպես կավելանա, որ նրա ճնշման տակ անխուսափելի կդառնա ապրանքային լայն ինտերվենցիան, այսինքն արտասահմանյան արդյունաբերության պրոդուկտների մասսայական ներմուծումը։

ՀՍՀՄ գյուղացիական տնտեսությունը Հոկտեմբերյան իշխանության դեմ վրայով կկապվի Արևմուտքի կապիտալիստական արդյունաբերության հետ, և նախ քան գյուղատնտեսության կուտակումներն ինդուստրիայի մեջ փոխադրելու ժամանակն հասնելը, կքանդվի ոչ միայն արտաքին առևտրի մենաշնորհն (ի տեպ, ընկ. Սոկոլնիկովը դրան այնքան էլ կողմնակից չէ) պատնեշը, այլև վտանգի տակ կդրվի գործ յությունը հենց Հոկտեմբերյան իշխանության, յեթե վերջինս հակառակվի, որ մեր մանր գյուղացիական տնտեսությունը կապվի կապիտալիստական արդյունաբերության հետ։

Իսկ յեթե մեր պետական իշխանությունը չհակառակվի դրան, նա կդադարի պրոլետարական դիկտատուրա լինելուց։ Այդ կնշանակվի—նա կվերածվի մանր-բուրժուական իշխանության։

Այսպես թե այնպես, ընկ. Շանինի առաջարկած մեթոդը, որի իմաստը մանր-բուրժուական տարերքի ուժեղացումն ու միաժամանակ բանվոր դասակարգի կարողության թուլացումն է, այն հետևանքը կունենար, որ լիկվիդացիայի կյանքի կարվեր պրոլետարիատի դեկավարությունը գյուղացիության նկատմամբ, այն դեկավարությունը, որը մենք, համաձայն Լենինի պատգամին, պետք է պահպանենք։

Նոր-ոպպոզիցիայի գեր-ինդուստրիալիզմը.—Ըստ Իլյիչի, մեր տնտեսական ու պետական շինարարության յերկրորդ անհրաժեշտ պայմանը, այսինքն՝ գյուղացիության կողմից դեպի պրոլետարիատն ունեցած վստահությունը վերացնելուն է հանգում այն մեթոդը, որը ոպպոզիցիոն բլոկը հակադրում է կենտկոմի մեթոդին։

Այդ մեթոդի կողմնակիցները, որ «գերինդուստրիալիստներ» են կոչվում, ըստ էության ինդուստրացման ու պրոլետարական դիկտատուրայի լիկվիդատորներ են հանդիսանում «ձախից»։

Նրանք կենտկոմին մեղադրում են նրանում, որ նա ինդուստրացման իր քաղաքականության մեջ բավարար չափով վճռական չէ։ Նրանք գտնում են, որ խնայողության ռեժիմը և այլ միջոցները բավական չեն. արդյունաբերության զարգացման համար միջոցների կուտակման ավելի արագ տեմպ է հարկավոր, իսկ դրա համար անհրաժեշտ է նման միջոցների ինտենսիվ հոսումն գյուղական տնտեսությունից։

Նրանց ասելով, դրա համար անհրաժեշտ է—նախ ղղալիորեն բարձրացնել գյուղացիների վրա դրված հարկերը (գեր-ինդուստրիալիստներից մեկնաբանը նույնիսկ պահանջում են, որ Մորհրդային իշխանության որոք գյուղացիների վրա դրվող հարկերն ավելի շատ լինեն, քան այդ—ցարիզմի ժամանակ եր), իսկ յերկրորդ—արդյունաբերական արդյունքների գների իջեցման քաղաքականության փոխարեն այդ գների բարձրացման քաղաքականություն տանել, քանի որ այդ կերպ պետ-արդյունաբերության ապրանքները գյուղատնտեսության արդյունքների հետ փոխանակելիս գյուղացիական խնայողությունները նույնպես կանցնեն ինդուստրիային։

Այդպիսով նոր-ոպոզիցիայի գեր-ինդուստրիալիստները՝ պրոլետարիատի ու գյուղացիության սերտ դաշինքի լենինյան դիրքից ամբողջովին անցնում են ընկ. Պրեոբրաժենսկու դիրքին, որը գյուղացիությունը դիտում է վորպես գաղութի, վորտեղից պրոլետարիատը սոցիալիստական կուտակման համար հյութեր պիտի քամի։

Գյուղից ավելցուկները վերցնելու համար, գյուղացիությունը յերկուստեք ճնշելու այդպիսի քաղաքականության համար, մենք ճիշտ այնպես, ինչպես որ «ռազմական կոմունիզմի» պարենամատնատրման ժամանակ, նախ կվոչնչացնեյինք գյուղացիների ձգտումները՝ իրենց տնտեսությունը լայնացնելու, յերկրորդ՝ նրանց կհանեյինք պրոլետարական իշխանության դեմ։

Առաջինի արդյունքը կլիներ— ինդուստրացման գործի տապալումը, քանի որ ինդուստրիացիան հնարավոր է միայն գյուղական տնտեսության աճման դեպքում. յերկրորդի արդյունքը կլիներ—պրոլետարական դիկտատուրայի տապալումը, քանի որ կխզեր պրոլետարիատի ու գյուղացիության դաշինքը։

Ինդուստրացման այդպիսի մեթոդի վրա միայն նա կարող է պնդել, ով թերագնահատում է պրոլետարիատի ու գյուղացիության դաշինքի նշանակությունը, ով հակառակ է Լենինին, որը ասում է— «վերջին հաշվով մեր հանրապետության բախտը կախված կլինի նրանից, թե կգնա՞ արդյոք գյուղացիական մասսան բանվոր դասակարգի հետ, սրա հետ ունեցած դաշինքին հավատարիմ մնալով, կամ նա թույլ կտա, որ «նեպմանները», այսինքն նորբուրժուազիան նրան անջատի բանվորներից»։

Ինչպես մեզ հայտնի յե, գյուղացիության այդպիսի թերագնահատումով միշտ տառապում եր ընկ. Տրոցկին, որը հիմա գլխավորում է ամբողջ ոպոզիցիոն բլոկին։

Այսպիսով, ինչպես մեր կուսակցության միասնականության հարցում, այնպես էլ յերկրի ինդուստրացման հարցում՝ ընկ. Զինովյևի և Կամենևի գլխավորած ոպոզիցիան գլորվեց տրոցկիզմի դիրքը։

Նոր ոպոզիցիայի սոցիալական էությունը.—Ընդամենը սրանից յերեք տարի առաջ ընկ. Կամենևը իր «Լենինիզմ թե տրոցկիզմ» հոդվածում գրում եր.

«Ընկ. Տրոցկու եֆեկտավոր ֆորմուլաների տակ դրժ-

վար չե շոշափել նրա որդինել Թեորիայի հետ անխուսափելիորեն կապված հատկությունը—մի կողմից՝ հուսալքություն, պեսսիմիզմ, թերահավատություն, և մյուս կողմից՝ չափազանցված հույսեր դնելը վերակարգադրման մեթոդների վրա, ռեալ եկոնոմիական դժվարությունները իշխանաբար բարձրից հաղթահանելու վրա»։

Նոր-ոսպադիցիայի առաջնորդների մեջ անցյալում ևս ընկ. Լենինը նշել է տրոցկիզմի այդ բնութագրի առանձին էլեմենտները. այսպես 1917 թ. հոկտեմբերին, յերբ ընկ. Կամենևն ու Զինովյևը ապստամբության դեմ դուրս յեկան, Իլյիչը նրանց անվանեց «բուրժուազիայից սարսափած մխրճ պեսսիմիստներ»։ Թերահավատություն դեպի մասսաների հեղափոխականությունը—այդ ընկերները հայտնաբերեցին և 1917 թ. նոյեմբերին, պահանջելով կոալիցիա՝ մենշևիկների ու եսերների հետ. Թերահավատություն դեպի սոցիալիզմի շինարարությունը—նրանց մեջ նշեց և կուսակցության տասչորսերորդ համագումարը։

Այժմ այդ ընկերները, միանալով դեր-ինդուստրիալիստների բանակին, ձեռք բերին հենց Կամենևի կողմից տրոցկիզմին տրված բնութագրի վերջին՝ իրենց պակասող հատկանիշը, այն է՝ «վերակարգադրման» մեթոդների ձրգտումը՝ «եկոնոմիական ռեալ դժվարությունները» հաղթահարելու համար։

Հայտարարելով, վոր ընկ. Տրոցկու գլխավորած բլոկը կազմված է «լուրջ ու յերկար ժամանակով», նոր-ոսպոզիցիան հենց դրանով ինքը ի հայտ է բերում իր դասակարգային էությունը։ Չե վոր հենց նույն այդ՝ «Լենինիզմ թե տրոցկիզմ» հոդվածում ընկ. Կամենևը գրում եր.

«Յես այդ ասում եմ վշտով, և ամբողջ կուսակցությունը այդ կասի վշտով, բայց դա պիտի ասել.—ընկ. Տրոցկին դարձել է այն կանալը, վորով մանր-բուրժուական տարերքը իրեն հայտնաբերում է մեր կուսակցության ներսում»։

Այդ կանալի վտակներից մեկն է այժմ դարձել և նոր ոսպոզիցիան, վորին գլխավորում են ը. ը. Զինովյևն ու Կամենևն։

Յեզրակացություն.—Հակառակ Արևմտյան Յեվրոպայի առաջավոր յերկրների սոցիալիստական կուսակցություններին, Ռուսաստանի պրոլետարիատի կուսակցությունը ծնունդ առավ մի յերկրում, ուր դեռ չեր կատարվել բուրժուական հեղափոխություն։

Այդ պատճառով նրա զարգացման ամբողջ առաջին շրջանը բնորոշվում է հետևյալ ստրատեգիական պլանով.—նրա մոտակա վճռական հարվածի ուղղությունը վորոշվում եր ինքնակալությունը տապալելու և դա դեմոկրատական հանրապետությունով փոխարինելու խնդրով։

Բայց այդ խնդրի լուծումը՝ կապիտալիզմի տապալման և բուրժուական հասարակությունը կոմունիստականով փոխելու հիմնական, գլխավոր խնդրի անհրաժեշտ ետապն եր միայն։

Բոլշևիկների կուսակցությունը իր պատմության առաջին շրջանի վողջ ուղին անցել է՝ պրոլետարիատի այդ վերջնական իդեալի լույսի տակ։

«Մեզ համար,—գրում եր Իլյիչը 1905 թ. հունիսին,—պրոլետարիատի համար, դեմոկրատական հեղաշրջումը—միայն առաջին աստիճանն է՝ աշխատանքն ամբողջովին ազատագրելու ամեն տեսակ շահագործումից և դեպի սոցիալիստական մեծ նպատակը դիմելու»։

Ցարի ու կալվածատերերի դեմ մղած այդ պայքարում պրոլետարիատի դաշնակիցն եր գյուղացիությունը՝ ամբողջովին վերցրած։

Այդ առաջին շրջանում, իր դաշնակցի նկատմամբ

պրոլետարիատի խնդիրն էր—նրան դուրս բերել բուրժուազիայի ազդեցության տակից, իր ղեկավարությամբ նրան գրոհի տանել ինքնակալության վրա և պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա հաստատել։

Այնուհետև, 1917 թ. փետրվար-մարտին, պրոլետարիատի ու գյուղացիության դիկտատուրայի լոզունգի (թեև յուրահատուկ) իրագործումից հետո սկսվում է յերկրորդ ստրատեգիական շրջանը, յերբ մեր մոտակա նպատակն է դառնում բուրժուազիայի տապալումը և պրոլետարիատի սոցիալիստական դիկտատուրայի հաստատումը։

Հատակ ձևով, այդ շրջանը նախորոշում է ուժերի այսպիսի դասավորում.—պրոլետարիատը կռվի յե յելնում ընդդեմ բուրժուազիայի, իր յետևից տանելով, վորպես դաշնակից, չքավոր գյուղացիությունը, և իշխում է իշխանությունը՝ միջակ գյուղացուն մեկուսացնելով կամ լինչպես ասում են, միջակին չեզոքացնելով։

Մեր իրականության մեջ պայմաններն այնպես դասավորվեցին, վոր 1917 թ. փետրվար—մարտին, ինքնակալությունը տապալելիս, և նույնիսկ հոկտեմբերին, յերբ իշխանությունը պրոլետարիատը իր ձեռքը վերցրեց, գյուղում միայն նոր եր ծավալվում հեղափոխությունը ընդդեմ կալվածատեր-հողատիրության, այսինքն գյուղում դեռևս տեղի յեր ունենում բուրժուական հեղափոխություն, այնպես վոր այդ ամբողջ շրջանի ընթացքում, մինչև 1918 թ. ամառը, պրոլետարիատն ընթանում եր վողջ գյուղացիության հետ դաշնակցած։

Բուրժուական հեղափոխությունը գյուղում ավարտելուց հետո միայն, պրոլետարիատն իր դիկտատուրան ամրացնելու համար, չքավորական կոմիտեների կազմակերպման միջոցով դաշինք է կնքում գյուղական չքավորության

հետ՝ կուլակության ցույց տված դիմադրությունը ճնշելու, կուրս բռնելով միջակին չեզոքացնելու վրա։

Իր դիկտատուրան և դաշինքը գյուղի չքավորության հետ ամրացնելուց հետո, պրոլետարիատի կուսակցությունը ամբողջովին մտնում է իր պատմության յերրորդ և վերջին շրջանը։

Այդ շրջանի ստրատեգիական պլանն է— վճռական հարված տալ համաշխարհային բուրժուազիային՝ համաշխարհային պրոլետարական հեղափոխությունը զարգացնելու և ՄՍՀՄ ներսում սոցիալիստական շինարարությունը ուժեղացնելու միջոցով։

Այդ շրջանում, միջակ գյուղացիությանը չեզոքացնելու լոզունգը հանդիսանում է արդեն հնացած, և պիտի փոխվի՝ միջակի հետ տնտեսական սերտ միություն ստեղծելու լոզունգով։

Հենվելով չքավորի վրա, պրոլետարիատը ամրացնում է դաշինքը միջակի հետ, նրան մասնակից անելով սոցիալիստական շինարարությանը՝ կոոպերացիայի միջոցով և ընդհանրապես նրա տնտեսավարության շահերը հմտորեն ոգտագործելու միջոցով։

Առանց միջակին իր կողմը գրավելու, պրոլետարիատը չի կարող լուծել իր առաջ ներկայումս դրված՝ սոցիալիզմի կառուցման հերթական խնդիրը։

Յեվ այդպես, պրոլետարիատի ու գյուղացիության փոխհարաբերությունների լենինյան ուսմունքին հետևելով, մեր յերկրի բանվոր դասակարգը իր կուսակցության ղեկավարությամբ յերեք հեղափոխությունների փշոտ, բայց փառավոր ուղին բոլորեց և թևակոխեց սոցիալիզմի համար մղած իր պայքարի այն շրջանը, վորի մասին Իլյիչը դեռ 1922 թ. նոյեմբերին ասաց.

«Սոցիալիզմը հիմա արդեն հեռավոր ապագայի, կամ մի ինչ վոր վերացական պատկերի, կամ մի ինչ վոր իկո-

նայի հարց չե...Մենք սոցիալիզմը մացրել ենք առօրյա կյանքի մեջ»։

Յեվ Մոսկվայի Խորհրդի պլենումին արտասանած իր այդ ճառը մեծ առաջնորդը վերջացնում է հետևյալ առույգ խոսքերով՝ մեր սոցիալիստական շինարարության հեռանկարների վերաբերյալ.

«Մենք բոլորս միասին՝ վոչ վաղը, սակայն մի քանի տարվա ընթացքում, մենք բոլորս միասին, ինչ էլ վոր լինի, կվճռենք այդ խնդիրն այնպես, վոր նեպական Ռուսաստանը կդառնա սոցիալիստական Ռուսաստան»։

ՅԱՆԿ

ԵՋ

Հեղինակի առաջաբանից 3

Մեթոդական ցուցմունքներ 6

Գրույց I.—*1. Ներածության փոխարեն։ 2. Բանվոր դասակարգի առաջին կազմակերպությունները 70-ական թվականներին* 17

Գրույց II.—*Բանվորական կուսակցության խղեայի ծագումն ու պրոպագանդը* 29

Գրույց III.—*Բանվորական կուսակցության կազմվելը* . . 38

Գրույց IV.—*Բանվորական կուսակցության խղեայի ամբողջական մարմնացումը կյանքում* 49

Գրույց V.—*Պայքար հոգուտ պրոլետարիատի հեգեմոնիայի, ռուսական առաջին հեղափոխության մեջ (1905—1907)* 61

Գրույց VI.—*Պայքար հոգուտ պրոլետարիատի հեգեմոնիայի, ռուսական առաջին հեղափոխության մեջ (շարունակություն)* 77

Գրույց VII.—*Պայքար հոգուտ պրոլետարիատի հեգեմոնիայի, ռուսական առաջին հեղափոխության մեջ (շարունակություն)* 88

Գրույց VIII.—*Պայքար՝ կուսակցության համար* 107

Գրույց IX.—*Համաշխարհային պատերազմի շրջանը և Փետրվարյան հեղափոխությունը* 127

Գրույց X.—*Փետրվարյան Հեղափոխությունը և Հոկտեմբերյան Հեղաշրջումը* 147

Գրույց XI.—*Պրոլետարիատն իշխանության գլուխ* 181

Գրույց XII.—*Պրոլետարիատն իշխանության գլուխ (շարունակություն)* 204

Գրույց XIII.—*Պրոլետարիատն իշխանության գլուխ (շարունակություն)* 224

ԽՈՐՀՐԴ. ՍՈՑ. ՀԱՆ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
— Հայկական սեկցիա —
Մոսկվա, Նիկոլսկի փող. № 10

Լ Ո Ւ Ց Ս Ե Ն Տ Ե Ս Ե Լ

ԳԻՆԸ

Լենինի պատգամները ցերիտասարդության 15 կ.
Լենինի պատգամները ժող.-լուս. մասին. Կազմեց Ն.Կրուպսկայա 20 կ.
Սոցիալիզմի ուղին և բան.-գյուղ. դաշինքը,—Ն.Բուխարին 1ր. 25 կ.
Գյուղատնտեսական հարց, Ի. Ստալին 50 կ.
Աշխատող հարց, Ի. Ստալին (272 էջ) 1 ր. 60 կ.
1905 թ. մեր I բան.-գյուղ. հեղափոխությունը, Ի.Ֆլերովսկի 70 կ.
Ինչ վորոշեց կոմս. XIV համագումարը, Ն. Ելիզարով 30 կ.
Ինչ վորոշեց կոմս. XV կոնֆերենցիան,—Գ. Ռըկլին 20 կ.
Անդրկովկասը 1905-ին,—Ա. Կարինյանի 70 կ.
Ինչպես աշխուժացնել գյուղխորհուրդները,—Զ. Լավբենտև 30 կ.
«Ի. Ստալինն» (համառ. կենսագր.) 7 կ.
Կլարա Ցետկին (կենսագր.), Զ. Բոյարսկայա 15 կ.
Քաղաքական զրույցներ (կոմս. հմբ.), բատվ.Լերզանսկու, պրակ I, 50 կ.
Քաղաքական զրույցներ „ „ պրակ II, 50 կ.
Քաղաքական զրույցներ „ „ պրակ III, 50 կ.
Մարդու և կենդանիների ծագումը,—Դ. Ագոլ 35 կ.
Ինչպես ճ առաջ. և զարգ. կցանքը ցերկրի վրա, Մ.Գրեմյացկիյ 50 կ.
Ինչպես ե սարքված տիեզերքը, Ակադեմիկոս Դ. Գրավե 50 կ.
Վորոց, կացմակ և ելեկտրականություն, Մ. Գրեմյացկիյ 40 կ.
Արեվը, նրա վորդիները և թոռները,—Բ. Սեմեյկին 40 կ.
Մարդու անտեսանելի թշնամիները ու բարեկամները. 15 կ.
Մարդկային բնակարանի պատմությունը,—Վ. Ցապլեցկիյ 15 կ.
Թե ինչպես կարելի ցե գյուղ. ելեկտրականոթ. անցկացնել 20 կ.
Տգիտությունը և սնահավատությունը,—Վ. Դմբոբկիվա 15 կ.
Գել կանգնի—գերան կոտրի (կոոպերացիան գյուղում), Լ. Ի. 30 կ.
Աստծու կամքը, թե գյուղատնտ. գիտությունը,—Ի. Պ. 20 կ.
Գյուղատնտեսական հողաշինարարություն. Ացրությունը 30 կ.
Հողի մշակումը ցերաշտի ժամանակ,—Գ. Վլասով, 40 կ.
Գոմաղբը,—Ի. Տեր-Ներսիսյան 20 կ.
Գյուղատնտեսական հարկը,—Մ. Լիվենսկիյ 20 կ.
Առաջին որդությունը հիվանդ կենդանուն,—Ե. Սկոմորոխով 17 կ.
Ընտանի կենդանիների վարակիչ հիվանդությունները 17 կ.
Ինչպես ընտրել կաթնատու կով,—Բ. Սկոմորոխով 12 կ.
Թե ինչպես գերմ. ստիպեց, վոր կովը տարին 2 անգամ ծնի. 15 կ.

Խոզը գյուղացու կերակրողն ե,—Լիխաչև 18 կ.
Մոր ացբենարանը,—Գ. Սալերանսկիյ 16 կ.
Ցերեհանների վարակիչ հիվանդությունները,—Բ. Գինսբուրգ 30 կ.
Գյուղացի. պահանջները և խորհրդ. դպրոցի ծրագրները 12 կ.
Դեղջկուհին և ցերեհանները 25 կ.
Հասարակագիտությունը I աստիճ. դպրոցում, Բ. Ժավորոնկով 65 կ.
Պատանի պիոներ (ժողովածու) 60 կ.
Պիոներ, պահպանիր առողջությունդ,—Ցե. Ռաղին 10 կ.
Պիոներ, հետեվիր Լենինի պատգամներին 15 կ.
Լինինի առողջ և ուժեղ,—Ն. Ֆայլինկոր. մաս I, 40 կ.
Լինինի առողջ և ուժեղ „ մաս II, 45 կ.
Բոմ, ինչպես կոչել նրա դեմ,—բժ. Նադեյին 20 կ.
Վներարկան ասեցեր,—Վ. Բրոններ 25 կ.
Աշխատին հարցը և դպրոցը 40 կ.
Մեր ազատ ցեղբացրները—կոմցերիտականները 20 կ.
Թե ինչպես սովետն կարմիր բանակին դարձավ—Կրավչենկո 35 կ.
Կարմրամորթները,—Գ. Ալբենեկով 45 կ.
Ցերկրի խորթերորմ,—Ա. Կուպրին 18 կ.
Քիմիկոս կունգան,—Գ. Ոլլովեց 28 կ.
Ճամբորդություն աշերոպլանով,—Գ. Ոլլովեց 22 կ.
Մոծակի և արջի մասին (հեքիաթ)—Դ. Մամին-Սիբիրյակ 15 կ.
Ինչ. եցին պորոսիմ տիկնիկները և ինչ արեց արճիճե ջինվորը 16 կ.
Մինիստր մեկ ժամով,—Ֆր. Ֆոկս 18 կ.
Անջնվեր տղան,—Եդմենդո Դամիչիս 12 կ.
Փոքրիկ հերոսուհին,—Ուլդա 12 կ.
Թռչունները (գունաոտիպ այլբոմ յերեխաների համար) 25 կ.
Ցերիտասարդ դրողը: մարդը,—Մաքսիմ Գորկիյ 15 կ.
Պատմվածքներ,—Ա. Սերաֆիմովիչ 45 կ.
Մերկանալը ցեվ ուրիշ պատմվածքներ,—Մաքսիմ Գորկիյ 15 կ.
Արտասովորը,—Մաքսիմ Գորկիյ 40 կ.

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՑԵՎ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐ. ՀԱՄԱՐ

ՀՄ. ԿՈՄ. ԿԻՍ. (բ) ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (15 մամուլ)
ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻՄՄ (քրեստոմատիա, 15 մամուլ)
ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՌԱՐԻՐ (15 մամուլ)
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՋԵՌՆԱՐԿ, (Ուսուցիչների համար)
ԽՍՀՄ ՑԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ
ԿՈՄՑԵՐԻՏՄՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ (նկարազարդ), 15 գրքույկ.
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ՌՈՒՍ ՆՈՐԱԴՈՒՑ ԴՐՈՂՆԵՐԻՑ, 15 գրքույկ.
ՑԵՎ ՈՒՐԻՇ ԴՐՔԵՐ (պահանջեցեք մեր գրացուցակը):

ՊԱՀԱՆՋԵՑԵՔ

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՐՔԵՐԻ ԼՐԻՎ, ՅՈՒ-
ՅԱՔԸ, ՎՈՐ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՁՐԻ։

ԴԻՄԵԼ՝ Москва, Никольская 10.
ЦЕНТРИЗДАТ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0183214

ԳԻՆԸ 1 Ր. 50 ԿՈՊ.

В. ВОЛОСЕВИЧ.

Самая краткая история ВКП (б).

На армянском яз.

Центральное Издательство Народов Союза С. С. Р.
Москва, Никольская, 10.